



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

COUNTERPART
INTERNATIONAL



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ.
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ
ԸՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ
2012**



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հեղինակային և խմբագրական խումբ

Հիմնադրամի նախագահ, ծրագրի նախաձեռնող, ուղեցույցի գլխավոր խմբագիր՝

Սամվել Աղասու Մխիթարյան

Աշխատանքային և փորձագիտական խումբ՝

Մկրտիչ Ռուբիկի Անուշյան

Ռոման Սեդրակի Մելիքյան

Արմեն Գրիգորիի Գրիգորյան

Մարինե Ռազմիկի Պապյան

Կարինե Սամվելի Մխիթարյան

Ռուբեն Լևոնի Գասպարյան

Սոնյա Հենրիկի Հակոբյան

Սևակ Լևոնի Հակոբյան

Աշոտ Ռոմիկի Միրզոյան

Թամար Ռոբերտի Ազարբայան

Թագուհի Գևորգի Խաչատրյան

Նաիրա Ռաֆայելի Ահարոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ.
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ
ԸՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ
2012**

ԵՐԵՎԱՆ

**Հ 247 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ.
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ. – Եր.:**

«Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ», 2012. – 158 էջ:

Հեղինակային և խմբագրական խումբ՝ Սամվել Աղասու Մխիթարյան, Մկրտիչ Ռուբիկի Անուշյան, Ռոման Մեղրակի Մելիքյան, Արմեն Գրիգորիի Գրիգորյան, Մարինե Ռազմիկի Պապյան, Կարինե Սամվելի Մխիթարյան, Ռուբեն Լևոնի Գասպարյան, Սոնյա Հենրիկի Հակոբյան, Սևակ Լևոնի Հակոբյան, Աշոտ Ռոմիկի Միրզոյան, Թամար Ռոբերտի Ազարբարյան, Թագուհի Գևորգի Խաչատրյան, Նաիրա Ռաֆայելի Ահարոնյան

**ՀՏԴ 329 (479.25) (03)
ԳՄԴ 66.6 (2 Հ) ց²**

Ընտրողի սույն ուղեցույցում ներկայացվում է ամփոփ, անաչառ և համադրելի տեղեկատվություն ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող ՀՀ քաղաքական կուսակցությունների գաղափարախոսական առանձնահատկությունների, գործունեության, խնդիրների, նպատակների և ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ:

Ուղեցույցը կազմվել է «Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպության (Հիմնադրամ) կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունների տեղեկագիր և ընտրողի ուղեցույց» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված հարցաթերթիկին ՀՀ քաղաքական կուսակցությունների կողմից տրված պատասխանների և նրանց պաշտոնական հրապարակային փաստաթղթերում ներառված հիմնադրույթների համադրման հիման վրա:

Ուղեցույցը նախատեսված է հասարակության լայն շրջանակների, քաղաքագետների, հետազոտողների, ուսանողների, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, ուսումնական հաստատությունների, հիմնադրամների և պետական կառավարման մարմինների համար:

Սույն ուղեցույցը մշակվել և հրատարակվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Ուղեցույցի մշակումը և հրատարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ No AID-111-LA-10-00001 գործընկերային պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում՝ «Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամի» միջոցով:

Ուղեցույցի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են ուղեցույցում ներկայացված ՀՀ քաղաքական կուսակցություններին և «Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպությանը, գտնվում են նրանց պատասխանատվության տակ և, հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԱՄՆ կառավարության կամ ԵԱՀԿ տեսակետների և կարծիքների հետ:

Սույն ուղեցույցը նախատեսված չէ վաճառքի համար:

ISBN 978-99941-2-661-3

© ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2012

Հարգելի ընթերցող

Կուսակցությունների գաղափարախոսական առանձնահատկությունների, ծրագրային նպատակների և խնդիրների, ինչպես նաև հանրության ուշադրության կենտրոնում գտնվող և երկրի հետագա զարգացման համար վճռորոշ նշանակություն ունեցող կարևորագույն հիմնախնդիրների նկատմամբ կուսակցությունների ունեցած դիրքորոշումների վերաբերյալ անաչառ, համադրելի, մատչելի և այժմեական տեղեկատվության ապահովումը կարևոր դեր ունի քաղաքացիների գիտակցված քաղաքացիական դիրքորոշման ձևավորման խնդրում:

Սակայն, ՀՀ հանրությունը շարունակում է հիմնականում գրկված մնալ ՀՀ կուսակցությունների և նրանց գործունեության վերաբերյալ անաչառ և համադրելի համեմատական և այժմեական տեղեկատվություն ստանալուց, ինչը խիստ նվազեցնում է քաղաքացիների ինքնուրույն մտածելու, իմաստավորված կարծիք ձևավորելու, կուսակցությունների վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ունենալու և գիտակցված որոշումներ կայացնելու հնարավորությունը: Հանդիսանալով հասարակության լայն շրջանակների քաղաքական անտարբերության պատճառներից մեկը, այս երևույթը խոչընդոտում է նաև քաղաքական կուսակցությունների կայացմանը, նրանց պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացմանը, գաղափարական և ծրագրային մրցակցության մշակույթի ձևավորմանը և, ի վերջո, նաև քաղաքացիական հասարակության զարգացմանը:

Արդյունքում, բազմաթիվ կուսակցությունների դիրքորոշումներում առկա փաստացի տարբերություններում չտեղեկացված, չկողմնորոշված և անձնական գիտակցված վերաբերմունք չձևավորած քաղաքացիների քաղաքական կողմնորոշման վրա առավել հաճախ ազդում են տարաբնույթ գովազդները, կուսակցությունների ու նրանց առաջնորդների հանրաճանաչության և ակտիվության աստիճանը, անգամ՝ անօրինական հորդորներն ու ընտրակաշառքները:

Վերը նշված հիմնախնդիրների լուծման և քաղաքական կուսակցությունների գործունեության, նպատակների, խնդիրների, ինչպես նաև հանրության ու երկրի համար կարևորագույն ու վճռորոշ հիմնախնդիրների վերաբերյալ նրանց ծրագրային հիմնադրույթների մասին հանրությանն անաչառ, համադրելի և մատչելի տեղեկատվության տրամադրման փորձեր էին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան, Քաունթերփարթ ինթերնեշնլի, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամի կողմից 2004 և 2007 թվականներին իրականացված «ՀՀ քաղաքական կուսակցությունները» հետազոտական վերլուծական ծրագրերը, որոնց ընթացքում ստեղծվել էին 01.09.2004թ. և 10.01.2007թ. դրությամբ գործող ՀՀ քաղաքական կուսակցությունների տեղեկատվական բազաներ, ինչպես նաև մշակվել, հրապարակվել և հանրությանն էին ներկայացվել ՀՀ քաղաքական կուսակցությունների համապատասխան տեղեկագրեր և ընտրողի ուղեցույցեր՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Սակայն անընդհատ փոփոխվում են քաղաքական դաշտը և այն կարգավորող օրենսդրությունը, լուծարվում, միավորվում են որոշ քաղաքական կուսակցություններ, կամ հիմնադրվում են նորերը, փոփոխվում են հանրության և պետության համար կարևոր և վճռորոշ հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ կուսակցությունների քաղաքական դիրքորոշումները և այլն: Ուստի, քաղաքական կուսակցություններին վերաբերող տեղեկատվությունը պարբերաբար վերանայման և նորացման կարիք ունի՝ առավել ևս ՀՀ Ազգային Ժողովի և Նախագահական գալիք ընտրությունների նախաշեմին, որոնց ազատ, արդար, թափանցիկ և օրինական անցկացումն ու լեգիտիմության ճանաչումը վճռորոշ նշանակություն ունեն մեր երկրի ժողովրդավարացման և հետագա զարգացման համար:

Այսպիսով, ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող ՀՀ քաղաքական կուսակցությունները ներկայացնող սույն Ուղեցույցի մշակման և հրապարակման, ինչպես նաև ՀՀ բոլոր քաղաքական կուսակցությունների համապատասխան նորացված տեղեկատվական բազայի և համացանցային կայքի ստեղծման գլխավոր նպատակն է՝ համակարգված, համադրելի, անկողմնակալ, մատչելի և այժմեական տեղեկատվության պարբերական տրամադրման միջոցով բարելավել բնակչության իրազեկվածությունը ՀՀ կուսակցությունների վերաբերյալ և ձևավորել վերջիններիս հաշվետվողականության, պատասխանատվության և գաղափարածրագրային մրցակցության մշակույթի զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվական հիմքերը, դրանով իսկ նպաստելով նաև ՀՀ քաղաքացիների քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության բարձրացմանը, իմաստավորված քաղաքական դիրքորոշումների ձևավորմանը և գիտակցված որոշումների կայացմանը:

Սամվել Աղասու Մխիթարյան՝
Քաղաքացիական և Սոցիալական
Զարգացման Հիմնադրամի նախագահ,
Ծրագրի նախաձեռնող և ուղեցույցի գլխավոր խմբագիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ*	7
1. «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԲՀԿ).....	7
2. «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	23
3. «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» (ՀԱԿ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ	36
3.1. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԱԶԿ).....	36
3.2. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺՀԿ)	43
3.3. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺՈԿ).....	49
3.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԺԿ)	57
3.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԲԵՐԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԼԿ).....	64
3.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱԶՆԵՐԻ (ՍՈՑԻԱԼ-ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՍԷԿ).....	73
3.7. «ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀՇ)	77
3.8. «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀայՀԿ)	84
3.9. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	89
3.10. ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊԿ)	94
4. «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՅԴ).....	102
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԴԿ)	111
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԿԿ).....	116
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԿ)	122
8. «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՄՀԿ).....	133
9. «ՕՐԻՆԱՅ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՕԵԿ)	141
ՈՒՂԵՑՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՐՑԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	148
ՉԼՐԱՑՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ.....	149

* Ուղեցույցից օգտվելու պարզության ապահովման նպատակով ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող քաղաքական կուսակցությունները և «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների ընտրական դաշինքը ներկայացվում են հայերեն անվանումների այբբենական կարգով:

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպությունը (ՔՄԶՀ, Հիմնադրամ), շարունակելով իր կողմից 2004թ-ին սկսած և 2007թ-ին զարգացրած՝ ՀՀ կուսակցությունների գաղափարախոսության, ծրագրային նպատակների և խնդիրների, ինչպես նաև մեր երկրի առջև ծառացած և հանրությանը հուզող կարևորագույն հիմնախնդիրների նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշումների վերաբերյալ հանրությանն անաչառ, համադրելի և այժմեական տեղեկատվության տրամադրման աշխատանքները, ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրությունների նախաշեմին ընտրողների լայն զանգվածների ուշադրությանն է ներկայացնում սույն ուղեցույցը՝ ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցությունների վերաբերյալ:

Ուղեցույցը մշակվել է Հիմնադրամի կողմից կազմված հարցաթերթիկին կուսակցությունների կողմից տրված պատասխանների և նրանց պաշտոնական հրապարակային փաստաթղթերում ներառված հիմնադրությունների համադրման հիման վրա: Այն հանդիսանում է Հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ քաղաքական կուսակցությունների գաղափարական առանձնահատկությունների վերաբերյալ հանրությանն անաչառ, համադրելի և մատչելի տեղեկատվության տրամադրման շարունակական ծրագրի հերթական արդյունքներից մեկը, որի շրջանակներում նորացվում են նաև ՀՀ բոլոր քաղաքական կուսակցություններին ներկայացնող Հիմնադրամի տեղեկատվական բազան և կայքէջը:

ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրություններին մասնակցող կուսակցությունների վերաբերյալ սույն ուղեցույցի մշակման և հրապարակման գլխավոր նպատակն է՝ համակարգված, համադրելի, անկողմնակալ, մատչելի և այժմեական տեղեկատվության պարբերական տրամադրման միջոցով կուսակցությունների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության և իրազեկվածության բարելավումը, ինչպես նաև կուսակցությունների հաշվետվողականության և պատասխանատվության բարձրացման և գաղափարական-ծրագրային հենքի վրա նրանց մրցակցության մշակույթի ձևավորման համար տեղեկատվական հիմքերի ապահովումը, դրանով իսկ նպաստելով նաև քաղաքացիների քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության բարձրացմանը, իմաստավորված դիրքորոշումների ձևավորմանը և գիտակցված որոշումների կայացմանը:

Գաղտնիք չէ, որ Հայաստանում կուսակցություններից շատերին ընտրողները, որպես կանոն, ճանաչում են վերջիններիս առաջին դեմքերով՝ երբեմն պատկերացում անգամ չունենալով այդ քաղաքական ուժերի գաղափարախոսության և ծրագրային հիմնադրությունների ու նպատակների մասին: Լավագույն դեպքում ընտրողների լայն շերտերի համար կուսակցությունները տարբերվում են իրենց քաղաքական կողմնորոշվածությամբ՝ իշխանություն - ընդդիմություն: Այսպիսով, կուսակցությունների ծրագրային մոտեցումներն ու գաղափարախոսական տարբերությունները ոչ միայն մղվում են ետին պլան, այլև շատ դեպքերում ընդհանրապես անտեսվում են: Դրան մեծապես նպաստում է նաև այն հանգամանքը, որ ՀՀ ընտրողների լայն շերտերը հիմնականում զրկված է ՀՀ կուսակցությունների և նրանց գործունեության վերաբերյալ անաչառ, համադրելի և այժմեական տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, ինչն իր հերթին նվազեցնում է նաև քաղաքացիների անկախ մտածելու, իմաստավորված կարծիք կազմելու և գիտակցված ընտրություն կատարելու հնարավորությունը:

Հենց այս բացը փորձեց լրացնել Հիմնադրամը 2004թ-ին՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան օժանդակությամբ առաջին անգամ մշակելով և հրատարակելով «ՀՀ Քաղաքական Կուսակցություններ» խորագրով տեղեկագիրը և ստեղծելով համապատասխան էլեկտրոնային տեղեկատվական բազան և կայքէջը:

Սակայն, քաղաքական և օրենսդրական դաշտերի մշտական փոփոխման, բեմահարթակից առանձին ուժերի հեռանալու և նորերի ի հայտ գալու, պետության առջև ծառացած ու հանրությանը հուզող խնդիրների ու գերակայությունների փոփոխման, դրանց վերաբերյալ կուսակցությունների դիրքորոշումների տեղաշարժերի պատճառով կուսակցությունների գործունեության, նպատակների և մոտեցումների վերաբերյալ առանց այն էլ սուղ տեղեկատվությունը պարբերաբար վերանայման և թարմացման կարիք ունի: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Քաունթերփարթ ինթերնեշնլի, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ Հիմնադրամի կողմից 2007 թվականին իրականացվեց «ՀՀ քաղաքական կուսակցությունները» հետազոտական վերլուծական ծրագիրը, որի ընթացքում ստեղծվեց 10.01.2007թ. դրությամբ գործող ՀՀ քաղաքական կուսակցությունների նորացված տեղեկատվական բազան, մշակվեց, հրապարակվեց և հանրությանը ներկայացվեց ՀՀ քաղաքական կուսակցությունների համապատասխան տեղեկագիրը և ՀՀ Ազգային ժողովի 2007թ. ընտրություններին մասնացող կուսակցությունները ներկայացնող ընտրողի ուղեցույցը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ այժմ Հիմնադրամը՝ շարունակելով իր ստանձնած առաքելությունը, հանրությանն է ներկայացնում ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցությունների վերաբերյալ սույն «Ընտրողի Ուղեցույցը»:

ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցությունները ներկայացնող սույն ուղեցույցի, հրապարակվելիք էլեկտրոնային տեղեկագրում և նորացվող կայքէջում ներկայացված կուսակցությունների ցանկը և նրանց վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները համապատասխանում են ՀՀ Արդարադատության նախարարության Պետական ռեգիստրի պաշտոնական էլեկտրոնային կայքէջում (www.e-register.am) ներկայացված տեղեկատվությանը:

Հիմնադրամը վերոհիշյալ ցանկի և նրանում ներառված տվյալների հիման վրա կուսակցությունների պաշտոնական ներկայացուցիչներին փոխանցել է իր կողմից մշակված հարցաթերթիկը, որում ներառված հարցերը կազմվել են հաշվի առնելով ՀՀ զարգացման ներկա հանգրվանին առնչվող մի շարք հրատապ և կարևոր նշանակության հիմնախնդիրներ՝ ըստ դրանց կարևորության, որոնց պատասխանների համադրումը այլ կուսակցությունների դիրքորոշումների հետ հնարավորություն է տալիս տարբերակել կուսակցություններին առանձին հիմնահարցերի վերաբերյալ իրենց ունեցած պաշտոնական դիրքորոշումներով:

Կուսակցությունների պատասխանատու ներկայացուցիչների կողմից, կամ Հիմնադրամի փորձագետների հետ համատեղ լրացված հարցաթերթիկների պատասխանները համեմատվել են համապատասխան կուսակցությունների կանոնադրություններում, ծրագրերում և պաշտոնական այլ փաստաթղթերում ամրագրված դրույթների հետ: Համեմատության արդյունքում ցանկացած բնույթի անհամապատասխանության հայտնաբերման դեպքում (տվյալ հարցին տրված այլ մեկնաբանություն, բացակայություն, իմաստային տարբերություն, անավարտ միտք և այլն) լրացված հարցաթերթիկները խմբագրվել և լրամշակվել են, Հիմնադրամի կողմից նախապես մշակված չափանիշների և տարբերանշանների միջոցով նշվել են անհամապատասխանություն պարունակող առանձին դրույթներն ու հատվածները և խմբագրված տարբերակները ներկայացվել են համապատասխան կուսակցություններին՝ վերստուգման և հաստատման, հարկ եղած դեպքում նաև՝ լրացուցիչ լրամշակման, հրապարակվելիք վերջնական տեսքի ճշգրտման և անաչառության ապահովման համար: Հրապարակվող հարցաթերթիկներում ներառված վերջնական պատասխանների և համապատասխան կուսակցությունների պաշտոնական փաստաթղթերում ամրագրված դիրքորոշումների միջև պահպանված բոլոր անհամապատասխանությունները դասակարգված և համապատասխան մեկնաբանություններով ու բացատրություններով ներկայացված են ինչպես սույն ուղեցույցում, այնպես էլ ամբողջական տեղեկագրում և կայքէջում:

Սույն ուղեցույցում ներկայացված նյութերի ընդհանուր տեսքը և կառուցվածքը՝ համադրման և ծանոթացման համար առավել դյուրին և ընթերցելի դարձնելու նպատակով, տարբերվում են հարցաթերթիկի աշխատանքային տարբերակից, որի չլրացված տարբերակը ևս ներկայացված է ուղեցույցում:

Ուղեցույցի ծավալների նախատեսված սահմանափակության պատճառով, առանձին կուսակցությունների կողմից հարցաթերթիկի այս կամ այն հարցի վերաբերյալ պատասխանների և պաշտոնական փաստաթղթերում համապատասխան դիրքորոշումների բացակայության դեպքում, հարցաթերթիկի չլրացված հատվածները հանվել են՝ պահպանելով հարցաթերթիկի ընդհանուր կառուցվածքը, տրամաբանությունը և համարակալումները: Ուղեցույցի ծավալների նախատեսված սահմանափակումներով է պայմանավորված նաև ներկայացվող հիմնախնդիրների կազմի և տեղեկությունների ծավալի ամփոփ և սեղմ ներկայացված լինելը:

Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամի աշխատակազմն ու սույն Ուղեցույցի հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում իրականացված աշխատանքներին օժանդակած կազմակերպություններին և Ծրագրին մասնակցած բոլոր կուսակցություններին և անձանց՝ համապետական ընտրություններից առաջ սույն Ուղեցույցի և կուսակցությունների ներկայացման տեղեկատվական նյութերի նշանակությունը կարևորելու, արդյունավետ համագործակցության և ցուցաբերած աջակցության համար:

Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ
ԸՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԲՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Դավիթ Անհաղթի 12
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 24-83-96, (+37410) 24-83-97
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ info@bhk.am
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.bhk.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 30.04.2004թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 18.06.2004թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 15.02.2011թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ ընդունված են ԲՀԿ երրորդ համագումարում 15.02.2007թ-ին: Ծրագրում լրացումներ են արված 12.02.2011թ-ին:
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 17.03.2012թ.
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 59
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 29 պատգամավոր:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 209 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Գագիկ Նիկողայի Ծառուկյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող են լինել 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև ընտրական իրավունքով օժտված այն անձինք (առանց Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի), ովքեր ընդունում են կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, չեն հանդիսանում մեկ այլ կուսակցության անդամ: Կուսակցության անդամները վճարում են անդամավճար կամավոր հիմունքներով և առանց սահմանափակումների:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցությունը ստեղծվել է ժողովրդին ծառայելու, նրա համար արժանավայել կյանք ապահովելու և իր հայրենիքի բարգավաճմանն իր նպաստը բերելու նպատակով: Կուսակցության անդամներին միավորում են ազատության, արդարության, համերաշխության և հայրենասիրության գաղափարները: Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն ժողովրդի վստահությունը վայելող, բարձր արժեքներ, ազնիվ նպատակներ ու վեհ գաղափարներ դավանող անհատների և քաղաքական ուժերի համախմբման ու համագործակցության պարագայում: Երկրի քաղաքական համակարգում կուսակցությունն իր առաքելությունը տեսնում է հենց այդ համատեքստում և հանդես է գալիս քաղաքացիական համախմբվածության ու համերաշխության դիրքերից: ԲՀԿ-ն քաղաքացիական համաձայնության կուսակցություն է: Առաջնորդվելով այն հանրահայտ ճշմարտությամբ, որ մարդը բարձրագույն արժեք է, կուսակցությունն իր գործունեությունը նպատակաուղղում է «Մարդու կողքին, մարդու միջոցով և մարդու համար» կարգախոսի իրականացմանը: Կուսակցությունը նպաստել և նպաստելու է երկրում ժողովրդավարական կարգերի ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը: ԲՀԿ-ն կենտրոնամետ քաղաքական ուժ է, որի գործունեությունը խարսխվում է իրատեսության և ողջամտության վրա: Մերժելով ծայրահեղականությունը, քաղաքական արկածախնդրությունն ու դոգմատիզմը՝ կուսակցությունը ձգտում է առարկայական և հիմնավոր կերպով լուծել հասարակության առջև ծառացած հիմնախնդիրները: Կուսակցությունը համոզված է, որ հասարակության զարգացման կարևորագույն երաշխիքը բարոյական և հոգևոր արժեքային համակարգի առկայությունն է:

Ժողովրդավարությանը և ազատականությանը դավանելու, արժեքային նոր համակարգի ձևավորմանը նպաստելու ձգտումով հանդերձ՝ կուսակցությունն ազգային և ավանդական արժեքների պահպանության կողմնակից է՝ արժեքային այդ համակարգում կարևորելով ընտանիքը, եկեղեցին և պետականությունը:

3.2. Նպատակները և խնդիրները

Կուսակցության գործունեության նպատակը հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցությունն է: Իր նպատակին հասնելու ճանապարհին Կուսակցությունն առաջնային է համարում.

- Ժողովրդավարական ընտրությունների միջոցով ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում իր ներկայացուցչության ապահովումը և այդ ճանապարհով պետական իշխանության մարմինների ձևավորմանը, պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակցելը,
- մարդու կողմից իր իրավունքների և ազատությունների լիարժեք իրականացմանն աջակցելը,
- իրավական պետության կայացմանը նպաստելը,
- սոցիալական արդարության համակարգի ձևավորմանն աջակցելը,
- ներքաղաքական կյանքի կայունությունը նպաստելը,
- երկրի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրական բաժանման և դրանց միջև արդյունավետ հավասարակշռման գործընթացին օժանդակելը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Կենտրոնամետ

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ապահովում:
2. Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համակարգված զարգացում:
3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

- Միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր երկրների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների զարգացումը, այդ հիմքի վրա արտաքին քաղաքականության կառուցումը, դիվանագիտական ծառայության կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի ձևավորումը,
- Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, արտաքին քաղաքական ակտիվ կուրսի իրականացումը, երկրի տնտեսական և սոցիալական կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովումը, էներգետիկ անվտանգության ապահովմանն ուղղված պայմանների ստեղծումը, համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական և քաղաքական կառույցներին ինտեգրումը,
- Ահաբեկչության և այլ հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում այլ պետությունների և միջազգային կառույցների հետ համագործակցությունը, անհրաժեշտության դեպքում հակամարտության գոտիներում միջազգային կառույցների խաղաղապահ գործունեությանը մասնակցելը:

ա. Եվրաինտեգրում

Կուսակցությունը շարունակելու է կառուցողական մասնակցություն ունենալ եվրոինտեգրացիոն գործընթացներին: Կուսակցությունը հանդես է գալիս «Արևելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում Հայաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական ենթակառուցվածքները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու օգտին:

բ. ԱՊՀ

Պետք է խորացնել գործակցությունը Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակում՝ ընդհանուր տնտեսական և մշակութային տարածք ձևավորելու նպատակով:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Կուսակցությունը շարունակելու է կառուցողական մասնակցություն ունենալ ՀԱՊԿ շրջանակներում:

դ. ՀԱՄԿ (NATO)

Անհրաժեշտ է նպաստել բոլոր բնագավառներում Եվրոպական Միության երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների զարգացմանը, ընդլայնել և խորացնել համագործակցությունը Եվրոպական անվտանգությունն ապահովող հիմնական կառույցի՝ ՆԱՏՕ-ի հետ:

ե. ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հետագա խորացումը և քաղաքական, տնտեսական, ռազմական, անվտանգության, հոգևոր-մշակութային, սոցիալական և այլ բնագավառներում համագործակցության մակարդակի էական բարձրացումը պետք է նպատակաուղղել այդ երկրի համակողմանի ներգրավմանը Հայաստանում ժողովրդավարական, սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացմանը, տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների լուծմանը, Հարավային Կովկասում կայուն և երկարատև խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը, ԱՄՆ-ի կողմից իրականացվող կամ համակարգվող տարածաշրջանային և միջազգային տարաբնույթ ծրագրերում ու կառույցներում ՀՀ մասնակցության ապահովմանը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Հայ-ռուսական ավանդական, բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացումն իրականացնել՝ ելնելով քաղաքական, սոցիալ-տնտեսական, ռազմական, տարածաշրջանային անվտանգության, հոգևոր-մշակութային և այլ բնագավառներում փոխշահավետ համագործակցության և ռազմավարական գործընկերության սկզբունքներից:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Կուսակցությունը հանդես է գալիս Հայաստանի և Թուրքիայի միջև բնականոն հարաբերությունների հաստատմանն օգտին՝ առանց նախապայմանների առաջադրման: Կուսակցությունը կողմ է երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, սահմանների վերաբացմանը և հաղորդակցության ուղիների վերագործարկմանը: Կուսակցությունը դեմ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը դարաբաղյան հիմնախնդրով պայմանավորելուն, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացում որևէ զիջման՝ հանուն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վերջնական նպատակը ԼՂՀ միջազգային ճանաչումն է: Ղարաբաղյան հիմնախնդիրը պետք է լուծվի խաղաղ բանակցային ճանապարհով՝ փոխհամաձայնության և փոխզիջումների հիման վրա: Առանց ԼՂՀ մասնակցության՝ նրա ճակատագիրը չի կարող որոշվել: ԼՂՀ տնտեսական հզորացումը, նրա պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման համակարգերի զարգացումը, քաղաքական ինստիտուտների կատարելագործումը, ժողովրդավարության խորացումը և բնակչության կենսամակարդակի անշեղ աճի ապահովումը Արցախյան պետության գոյության կարևորագույն կոմպոնենտն են:

թ. Իրան

Տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում հաղորդակցության ուղիների, էներգետիկ համակարգերի ստեղծման համատեղ ծրագրերի իրականացման, մշակութային և այլ բնագավառներում պետք է խորացնել փոխշահավետ, բարիդրացիական և ավանդական հարաբերություններն Իրանի հետ: Պետք է շարունակել «Իրան-Հայաստան» գազատարի և հաղորդակցության այլ ուղիների կառուցումը (մասնավորապես՝ հեռանկարում ձեռնարկել Իրան-Հայաստան երկաթուղու կառուցումը):

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ

Քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տարածաշրջանային անվտանգության, հաղորդակցության ուղիների, հոգևոր-մշակութային, հումանիտար և այլ բնագավառներում անհրաժեշտ է զարգացնել ավանդական, բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները Վրաստանի հետ: Հայ-վրացական հարաբերություններում կարևորում ենք նաև Վրաստանում բնակվող հայերի, մասնավորապես՝ ջավախահայության անվտանգության և ինքնակառավարման իրավունքների ապահովման, Ջավախքի սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային հիմնախնդիրների լուծման հարցում վրացական իշխանությունների առարկայական և ծրագրային մոտեցումները: Այդ համատեքստում, Հայաստանը վրացական իշխանությունների հետ փոխհամաձայնեցված ձևով մշտապես պետք է աջակցի Ջավախքի խնդիրների լուծմանն ուղղված Վրաստանի քայլերին:

ի. Հայաստան-Մփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Կուսակցությունը կարևորում է Հայրենիք-Մփյուռք կապերի հետևողական զարգացումն ու ընդլայնումը՝ որպես հայապահպանության և աշխարհասփյուռ հայության համախմբման գործում արտաքին քաղաքականության գերակա ուղղություն: Կուսակցությունը գտնում է, որ Հայաստան-Մփյուռք հարաբերությունների հիմքում պետք է դրվի այն գաղափարը, որ համահայկական հոգևոր-մշակութային կենտրոնը Հայաստանի Հանրապետությունն է, որը պետք է ստանձնի Մայր Հայրենիքի շուրջ հայության միավորման առաջատարի և ազգապահպանության երաշխավորի դերակատարությունը:

լ. Այլ

Հետխորհրդային մյուս երկրների հետ նույնպես զարգացնել երկկողմ հարաբերություններ: Անցյալում գոյություն ունեցած տնտեսական կապերի, հումքի և սպառման շուկաների վերականգնման, հոգևոր մշակութային բնագավառներում համագործակցության իրականացման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Արդյունավետ տնտեսական և սոցիալական քաղաքականություն, մասնավորապես՝ բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականության հետևողական իրականացում:
2. Իրավական պետության կառուցում:
3. Քաղաքացիական հասարակության զարգացում:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

- Տնտեսական աճի ապահովում:
- Կառուցվածքային վերափոխումների գործընթացի արագացում և արտադրողականության ու մրցունակության հենքի վրա արտադրական հարաբերությունների ձևավորում:
- Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կայունության, համակարգվածության և թափանցիկության ապահովում:

ա. Դրամավարկային քաղաքականություն

Կուսակցությունը դրամավարկային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղություններ է դիտարկում՝

- տնտեսության զարգացմանը նպաստող արդյունավետ ֆինանսավարկային քաղաքականության մշակումը և իրականացումը,
- ոչ կանխիկ դրամաշրջանառության ծավալների ընդլայնումը և դրամի փոխարկելիության ապահովումը,
- բանկային համակարգի նկատմամբ վստահության լիարժեք վերականգնումը և համակարգի կողմից խնայողությունների ներգրավման գործընթացի խթանումը,
- վարկային դրույքաչափերի նվազեցումը, երկարաժամկետ վարկերի ծավալների մեծացումը և վարկային ռեսուրսների մատչելիության ապահովումը,
- վարկերի կամավոր ապահովագրության մեխանիզմների ներդրումը և բնակչության ավանդների անվտանգության երաշխիքների համակարգի կատարելագործումը,
- արժույթային կարգավորման կատարելագործումը և արժույթային օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը,
- գնաճի նպատակադրման ռեժիմում գնաճի կառավարման ճկունության ապահովումը,
- վճարահաշվարկային հարաբերությունների բարելավումը,
- ոլորտի կարգավորման իրավական դաշտի կատարելագործումը:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ են բյուջետային համալիր վերափոխումներ հետևյալ ուղղություններով՝

- պետական ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում,
- բյուջետային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ բյուջետային օրենսգրքի մշակում և ընդունում,
- բյուջետային գործընթացի և միջբյուջետային հարաբերությունների կատարելագործում,
- զանապետական համակարգի զարգացում,
- բյուջեների և բյուջետային ընթացակարգերի կայունության և թափանցիկության ապահովում,
- ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում,
- բյուջետային ծախսերի և պետբյուջեի մակրոտնտեսական համամասնությունների կանխատեսման մեթոդական հիմքերի մշակում և ներդրում,
- բյուջետային հաշվետվության և վերահսկողության ընթացակարգերի կատարելագործում,

- ֆինանսատնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների (մասնավորապես՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների) միջև կոորդինացման մակարդակի բարձրացում,
- ֆինանսական կարգապահության ամրապնդում:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար կուսակցությունը կարևորում է՝

- հարկային վարչարարության արդյունավետության և հարկային մարմիններում (հատկապես դրանց տարածքային ստորաբաժանումներում) ընդգրկված աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացումը,
- օրենսդրության պահանջների պատշաճ կատարման, հարկային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովումը, այդ քաղաքականության արդյունքների կանխատեսման մեթոդական հիմքերի կատարելագործումը,
- հարկային օրենսդրության ու քաղաքականության կայունության ապահովումը և հարկման մեխանիզմների շարունակական կատարելագործումը,
- հարկային քաղաքականության մշակման և իրականացման վրա լոբբիստական գործունեության բացասական ազդեցության բացառումը,
- հարկային ապառքների և հարկային անհիմն գերավճարների կուտակման գործընթացի կանխումը,
- հայրենական արտադրության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար հարկային դաշտի բարենպաստության մակարդակի բարձրացումը,
- օրենսդրական դաշտի պարզեցումը և օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների ներդրումը,
- համապատասխան հնարավորությունների ստեղծումից հետո պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և շահութահարկի նվազագույն պարտադիր վճարների կիրառման պրակտիկայից հրաժարումը,
- հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովումը:

դ. Արդյունաբերության զարգացում⁴

Կուսակցության գլխավոր նպատակը բարգավաճ և բարեկեցիկ երկրի կառուցումն է, որի նյութական հիմքն ազատական հարաբերությունների, արտադրողականության ու մրցունակության վրա հիմնված և դինամիկ զարգացող տնտեսությունն է: Այս առումով, կուսակցությունը կարևորում է ոչ միայն քանակական, այլև որակական այնպիսի տնտեսական աճի ապահովում, որի դրական ազդեցությունն իր վրա կզգա յուրաքանչյուր քաղաքացի՝ դրա մեջ տեսնելով իր հայրենիքում նյութական բարիքներ ստեղծելու և իր ընտանիքի կենսամակարդակը բարձրացնելու երաշխիքը: Այս առումով, կուսակցությունը տնտեսության ճյուղերի միջև էական տարբերակում չի դնում և կոդմ է ազատական տնտեսական հարաբերությունների կառուցմանը, որի արդյունքում առավել արագ կարող են զարգանալ այն ճյուղերը, որոնք ունեն մրցունակության և արտադրողականության իրական ներուժ: Միաժամանակ, տնտեսությունը չպետք է կենտրոնացած լինի մայրաքաղաքում, իսկ դրա զարգացումն էլ պետք է նպաստի հանրապետության տարածքային անհամամասնությունների հնարավորինս կրճատմանը:

ե. Գյուղատնտեսության զարգացում⁴

Կուսակցությունը գտնում է, որ ՀՀ գյուղական համայնքների զարգացման տեսանկյունից առկա են ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ինստիտուցիոնալ, օրենսդրաիրավական, ենթակառուցվածքային, բարոյահոգեբանական և տարաբնույթ մի շարք այլ հիմնախնդիրներ, որոնց հավաքական «բեռի» ծանրությունը ստիպում է խոսել առաջին հերթին ոչ թե գյուղերի զարգացման, այլ գործնականում գյուղական համայնքների վերածննդի մասին:

Այս առումով, որպես ռազմավարական հիմնական նպատակ, կուսակցությունը տեսնում է գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացումը, ոլորտում տնտեսավարման շուկայական մեխանիզմների և պետական աջակցության ժամանակակից մեթոդների լիարժեք արմատավորումը, ինչպես նաև գյուղի սոցիալական հիմնահարցերի լուծումը, որի համար անհրաժեշտ է՝

- մշակել և իրականացնել գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագիր, որի բաղկացուցիչ մասը պետք է կազմի ոլորտի պետական աջակցության ծրագիրը (կիրառելով ինչպես պետական գնումների, այնպես էլ դոտացիաների, վարկավորման և հայտնի մյուս մեխանիզմները), որոնք թույլ կտան նաև անուղղակիորեն կարգավորել գյուղմթերքների գները,

- աջակցել գյուղացիական տնտեսություններին վարկային ռեսուրսների մատչելիության և հասանելիության ապահովման գործում՝ խթանելով հողի գրավադրումը և նպաստելով հողագործության համար վարկային միջոցների «էժանացմանը» (տվյալ հարցում պետք է հասնել այն բանին, որ գյուղացիական տնտեսությունները կարողանան վարկեր վերցնել կամ պայմանագրեր կնքել հիմնականում ապագա բերքի դիմաց),
- իրական գործողության մեջ դնել գյուղատնտեսության բնագավառում ապահովագրության մեխանիզմները և պետական երաշխիքներ տրամադրել առևտրային բանկերին՝ ֆորս-մաժորային իրավիճակներում վարկերի չվերադարձման դեպքում,
- ակտիվացնել ու խրախուսել հողերի վարձակալության գործընթացը՝ նպատակ ունենալով քաղաքացիական շրջանառության և հողօգտագործման շրջանակներում ընդգրկել մասնավորեցված, ինչպես նաև պետական պահուստային այն հողերը, որոնք տարբեր պատճառներով դեռևս չեն օգտագործվում,
- բարձրացնել գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների արտադրության ապրանքայնության մակարդակը և պայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի ապրանքափոխանակության տեսակարար կշիռն աստիճանաբար իջեցնելու և այդ արտադրանքի դրամայնացման մակարդակը բարձրացնելու համար,
- խրախուսել գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացումը և գյուղմթերքների արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների միավորումների ձևավորման գործընթացները,
- պետական աջակցություն ցուցաբերել գյուղարտադրանք արտահանողներին, հնարավորինս կրճատել տարբեր տեսակի «միջնորդների» առկայությունը ոչ միայն ճյուղի արտադրանքի շրջանառության, այլև արտադրության գործընթացներում, ինչպես նաև ձևավորել գյուղմթերքների մեծածախ շուկաներ,
- հատուկ ուշադրություն դարձնել գյուղական համայնքների արտադրական, ինժեներական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը և զարգացմանը,
- համակարգված պայքար մղել գյուղմթերքների արտադրության և շրջանառության ոլորտներում ռեկետի, չինովնիկական ամենաթողության և մենաշնորհացման երևույթների դեմ, որի շնորհիվ կպաշտպանվեն ոչ միայն գյուղմթերք արտադրողների, այլև սպառողների կենսական շահերը:

գ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

Կուսակցությունը կարևորում է աշխարհում ընթացող ժամանակակից այն գործընթացներին և միտումներին Հայաստանի մասնակցությունը, որոնք նպատակաուղղված են համընդհանուր բարեկեցության մակարդակի բարձրացմանը և տարբեր քաղաքակրթությունների ու ժողովուրդների միջև փոխշահավետ կապերի հաստատմանը, խորացմանը և ամրապնդմանը: Այս տեսանկյունից, հաշվի առնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանրապետության ներուժը, Կուսակցությունը հաստատական է Հայաստանում տեղեկատվական կամ այլ կերպ ասած՝ ապագայի հասարակության հիմքերի ձևավորման ուղղությամբ գործնական քայլերի իրականացման հարցում, որի նպատակով առաջիկայում գերակա խնդիրներ է համարում՝

- տեղեկատվական հասարակության զարգացման պայմաններում պետական համալիր ծրագրերի մշակումը, որոնք ուղղված կլինեն գիտելիքի գերակայության վրա հիմնված պետական ու հասարակական կառավարման բարելավմանը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հանրապետության ներուժի բազմապատկումը և դրա արդյունավետ օգտագործումը,
- գիտակրթական և մասնագիտական կարողությունների առավել ամբողջական օգտագործմանն ուղղված ծրագրերի իրականացումը,
- տեղեկատվական համաշխարհային ցանցերին ինտեգրումը և այդ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը,
- տեղեկատվական հասարակության բարիքների մատչելիության մակարդակի բարձրացումը և տեղեկատվական ցանցերից օգտվողների շրջանակի շարունակական ընդլայնումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար ներդրումային, կազմակերպական և ինստիտուցիոնալ բարենպաստ միջավայրի ձևավորումը:

է. Էներգետիկա և Էներգետիկ անվտանգության ապահովում

Կուսակցությունը Էներգետիկ անվտանգությունը դիտարկում է որպես Էներգետիկայի բնագավառում առաջացող սպառնալիքներից պետության, քաղաքացիների, հասարակության և տնտեսության պաշտպանվածությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչներից մեկը: Հետևաբար, կուսակցությունը գտնում է, որ Էներգետիկ անվտանգության ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությունը

պետք է հիմնված լինի էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագրի վրա և ուղղված լինի հետևյալ խնդիրների լուծմանը.

- էներգիայի բոլոր տեսակների գծով հումքի մատակարարման, արտադրության, բաշխման և փոխանցման փուլերում երկրին, հասարակությանը և տնտեսությանը սպառնացող վտանգների կանխատեսում, էներգետիկ կախվածության նվազեցում և ոլորտի ինքնաբավության մակարդակի հնարավորինս բարձրացում, այդ թվում՝ ներկրվող և տեղական էներգետիկ պաշարների դիվերսիֆիկացում և արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործում, ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր ատոմակայանի կառուցում,
- տեղական էներգետիկ պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործում և դրա ապահովման տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառում, արտաքին և ներքին տնտեսական, տեխնոգեն և բնապահպանական սպառնալիքների չեզոքացում, ինչպես նաև ապակայունացնող տարաբնույթ գործոնների բացասական հետևանքների մեղմում,
- էներգետիկ համակարգի կողմից ներքին և արտաքին պահանջարկի ընդունելի արժեքով և համապատասխան որակով բավարարում, էներգառեսուրսների արդյունավետ օգտագործում:

ը. Զբոսաշրջության զարգացում⁴

Կուսակցությունը կարևորում է ազատական տնտեսության արմատավորման և զարգացման քաղաքականությունը և տնտեսության ճյուղերի միջև էական տարբերակում կամ առանձին զարգացման խնդիր չի դնում: ՀՀ-ում պետք է զարգանան տնտեսության այն ճյուղերը, որոնք ունեն մրցունակության և արտադրողականության իրական ներուժ, իսկ զբոսաշրջությունն այդպիսի ճյուղերից մեկն է:

թ. Ներդրումների խթանում

Հանրապետության ներդրումային ոլորտում առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած ձևավորված մակրոտնտեսական և ներքաղաքական հարաբերական կայունությանը, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի և խրախուսող ու պաշտպանող որոշ ենթակառուցվածքների, հարուստ և բավականին հզոր սփյուռքի առկայությանը, ներդրումների առկա ծավալները դեռևս հեռու են բավարար լինելուց:

Կուսակցության համոզմամբ՝ Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը պետք է հանդիսանա տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման, ներդրումային գրավչության մակարդակի բարձրացման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի ապահովումը:

Կուսակցությունը ներդրումային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղություններ է դիտարկում՝

- նորարարական (ինովացիոն) քաղաքականության կատարելագործումը և ինովացիոն նախաձեռնությունների խրախուսումը,
- ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և իրավապայմանագրային դաշտի կայացումն ու կատարելագործումը,
- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության ապահովումը,
- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար պայմանների ապահովումը,
- մեծածավալ ներդրումների համար, ինչպես նաև տնտեսության զարգացման համար որոշիչ, գերակա համարվող ոլորտներում և ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում խստորեն վերահսկելի արտոնությունների տրամադրումը,
- ներդրումային ծրագրերի մշակման և իրականացման հարցում պետական աջակցությունը,
- ներդրումները խթանող ենթակառուցվածքների կայացումը և զարգացումը,
- պետական ներդրումային համալիր ծրագրերի իրականացումը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում⁴

Կուսակցությունը գտնում է, որ ձեռնարկատիրական ունակություններով օժտված յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա իր գործարար ներուժն ազատորեն իրացնելու, իր և այլոց համար աշխատատեղեր ստեղծելու և օրինական գործունեության միջոցով բարեկեցիկ կյանք ապահովելու հնարավորություն: Կուսակցության համոզմամբ՝ նման միջավայրի ձևավորման գրավական կարող է հանդիսանալ տնտեսական առողջ մրցակցության պաշտպանությունը, հակամենաշնորհային գործուն քաղաքականության իրականացումը, ներդրողների օրինական շահերի պաշտպանությունը, հայրենական և օտարերկրյա տնտեսավարողների համար գործունեության

միանման պայմանների ստեղծումը, ինչպես նաև՝ գործարար հանրության և պետական մարմինների միջև իրական գործընկերային հարաբերությունների ձևավորումը: Փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը մեր երկրում պետք է մատչելի լինի բոլոր նրանց համար, ովքեր կարող են և ձգտում են ինքնազբաղվածության միջոցով հոգալ սեփական ընտանիքի նյութական և հոգևոր-մշակութային կարիքները: Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները պետության կողմից պետք է առաջին հերթին դիտարկվեն ոչ թե որպես հարկատուներ, այլ հասարակության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, զբաղվածության ապահովման և ազգային հոգեկերտվածքի ձևավորման բնագավառներում պետության վստահելի գործընկերներ: Հասարակության այս խավի համար ոչ միայն չպետք է լինեն խոչընդոտներ և անհարկի սահմանափակումներ, այլ նաև պետք է ստեղծվեն անհրաժեշտ բոլոր պայմանները, այդ խավի ստեղծագործական, նորարարական մտքի բացահայտման, դրա ներդրման ու պետական պաշտպանության, գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման, վերահսկողության ու պետական միջամտության ոլորտներում առավել մեղմ ռեժիմների սահմանման և կիրառման ուղղությամբ: Այս նպատակով կուսակցությունը գերակա խնդիր է համարում փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության համար յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 0.5-2.0 տոկոսի հատկացումը, ինչպես նաև վարձու աշխատանք չօգտագործող անհատ ձեռնարկատերերին հարկերից ազատումը:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Որպես ստվերային տնտեսության դեմ պայքարի ռազմավարական ուղղություններ՝ կուսակցությունը կարևորում և առաջնային է համարում՝

- ստվերային տնտեսության դեմ պայքարի համալիր ծրագրի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի համալրումն ու կատարելագործումը,
- պայքարի վարչարարական և տնտեսական մեթոդների զուգակցումը՝ առաջնություն տալով ստվերային տնտեսական խթանների վերացմանը,
- ստվերային տնտեսության դեմ պայքարի վարչարարության դիֆերենցումը՝ կիրառելով հասարակությանը հասցվող վնասին համարժեք պատասխանատվության միջոցներ և մեխանիզմներ,
- համապատասխան օրենսդրական, վարչարարական և կազմակերպական միջոցառումների շնորհիվ հարկման բազայի ընդլայնումը, չարաշահումների տեղիք տվող արտոնությունների վերացումը և ստվերային ոլորտում գործունեություն ծավալելու առումով գործարարների տնտեսական շահագրգռության նվազեցումը,
- հարկային և մաքսային վարչարարության պարզեցմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակումն ու իրականացումը,
- տնտեսվարող սուբյեկտների կամ քաղաքացիների կողմից կամավոր, իրենց նախաձեռնությամբ ստվերային դաշտից դուրս գալու դեպքում օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից ազատումը,
- հարկային և մաքսային վարչարարության բնագավառում այլ (հատկապես՝ հիմնական առևտրային գործընկեր հանդիսացող) երկրների հետ փոխադարձ համագործակցության ակտիվացումը, մասնավորապես՝ հարկային և մաքսային տեղեկատվության փոխանակման, տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում,
- ստվերային տնտեսության դեմ պայքարի բոլոր ուժերի կենտրոնացումը և տվյալների ամբողջական, ընդգրկուն տեղեկատվական բազայի ստեղծումը,
- հասարակության համար բացատրական և տեղեկատվական աշխատանքների իրականացումը, այդ թվում նաև բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ներկայացումը,
- «փողերի լվացման» և կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության մշակումը և հետևողական իրականացումը:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի հաղթահարման բնագավառում կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

- բարձրացնել պետական վարչարարության արդյունավետությունը,
- վերացնել պաշտոնատար անձանց և պետական ծառայողների կողմից կամայական որոշումներ ընդունելու հնարավորությունները, հասնել նրան, որ այդ անձինք կատարեն միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով,
- իրականացնել օրենքների և իրավական ակտերի համալիր փորձաքննություն՝ դրանց «կաշառատարության» իմաստով, հանել այդպիսի դրույթները և վերացնել օրենսդրությունում առկա հակասությունները և երկիմաստությունները,

- կոռուպցիայի փաստերի հայտնաբերման դեպքում համապատասխան պաշտոնատար անձանց ենթարկել օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության՝ անկախ նրանց զբաղեցրած դիրքից և պաշտոնից,
- կատարելագործել և խստացնել գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման մեխանիզմը,
- հետևողական և համալիր պայքար մղել կոռուպցիայի հետ սերտաձած այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են դրամանենգությունը, սովերային գործունեությունը, թրաֆիկինգը, կաշառակերությունը և այլն,
- դատական բարեփոխումների շնորհիվ պարզեցնել պաշտոնատար անձանց և պետական ծառայողների գործողությունների դատական բողոքարկման ընթացակարգը,
- ներդնել վարչական դատարանների ինստիտուտ և նպաստել դրանց կայացմանը,
- մշակել և ընդունել հակակոռուպցիոն օրենսդրական փաթեթ:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրությունները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում .

ա. Աղքատության հաղթահարում⁴

Երկրում առկա սոցիալական հիմնախնդիրների գերակշիռ մասը պայմանավորված է աշխատանքի քանակին, որակին ու գների մակարդակին ոչ համարժեք վարձատրությամբ, ինչպես նաև՝ վաստակած հանգստի անցած քաղաքացիների կենսապահովման նորմալ պայմանների ապահովման համար անհրաժեշտ կենսաթոշակի բացակայությամբ: Կուսակցության համոզմամբ՝ դա մեր երկրի՝ որպես սոցիալական պետության, առանցքային և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից մեկն է: Կուսակցությունը հետևողականորեն աշխատելու է այս ոլորտում պետական քաղաքականության կատարելագործման, աշխատավարձերի և կենսաթոշակների մակարդակի շարունակական բարձրացման մեխանիզմների մշակման ու ներդրման, ինչպես նաև՝ այս բնագավառում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ: Մեր երկրում յուրաքանչյուր աշխատող պետք է ստանա արժանապատիվ վարձատրություն, իսկ յուրաքանչյուր թոշակառու՝ արժանապատիվ կենսաթոշակ:

Երկրում իրականացվող սոցիալական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- բնակչության դրամական եկամուտների աճի ապահովումը և դրանց բևեռացման նվազեցումը՝ աշխատավարձերի բարձրացման, համախառն ներքին արդյունքում աշխատավարձի բաժնի մեծացման, կենսաթոշակային ապահովության բարելավման և բնակչության սոցիալական աջակցության հասցեականության բարձրացման միջոցով,
- եկամտային և մարդկային աղքատության հաղթահարումը, քաղաքացիների սոցիալական անվտանգության ապահովումը,
- կարևորագույն սոցիալական բարիքների, առաջին հերթին՝ առողջապահության, սոցիալական սպասարկման և կրթության մատչելիության ապահովումը,
- փախստականների և բռնադատվածների հիմնախնդիրների լուծման պետական քաղաքականության կատարելագործումը և համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- մարդկային կապիտալում ներդրումների գերակայությունը, պետական այլ ծախսերի նկատմամբ սոցիալական զարգացմանն ուղղվող պետական ծախսերի առաջանցիկ աճի տեմպի ապահովումը,
- պետական աջակցության կարիք ունեցող և սոցիալական խնդիրներն ինքնուրույն լուծելու անընդունակ, սոցիալապես խոցելի խավերի արդյունավետ պաշտպանության իրականացումը,
- բնակչության սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքների կիրառումը,
- երկրի աշխատունակ բնակչության համար տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, որը հնարավորություն կտա քաղաքացիներին սեփական միջոցների հաշվին բարձրացնել իրենց կենսամակարդակը,
- բնակչության արդյունավետ զբաղվածության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ապահովումը, աշխատուժի մրցունակության բարձրացումը,
- գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը,
- բնակչության մահացության մակարդակի նվազեցման և ծնելիության ցուցանիշների բարելավման համար նախադրյալների ստեղծմամբ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը,
- սահմանամերձ գոտիների առաջանցիկ զարգացման միտումով՝ տարաբնակեցման արդյունավետ սխեմաների մշակումը:

բ. Հասարակության շերտերի բնեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Կուսակցությունը նպաստելու է հասարակության սոցիալական բնեռացման մակարդակի նվազեցմանը և բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացմանը:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Կուսակցության համոզմամբ՝ աշխատանքի շուկայում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է լինեն՝

- զբաղվածության ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց արդյունավետության գնահատման ընթացակարգերի ներդրումը,
- գործազրկության նպաստների չափի էական բարձրացումը և այդ նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգերի կատարելագործումը,
- կանանց, երիտասարդներին և հաշմանդամներին մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման հարցում աջակցությունը,
- փոքր և միջին բիզնեսի ոլորտում ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման նպատակով վարկավորման ծավալների ընդլայնումը,
- սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիներին աշխատանքի տեղավորման ուղղությամբ հասցեական աջակցության ցուցաբերումը:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Առողջապահության ոլորտում կուսակցության գերակա խնդիրն է բնակչության բոլոր խմբերի համար որակյալ և հասանելի առողջապահական ծառայությունների ապահովումը: Առողջ հասարակությունը մեր երկրի զարգացման գրավականներից է, իսկ դրան հասնելու համար յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա որակյալ բուժսպասարկում ստանալու հնարավորություն: Այս ոլորտում կուսակցությունն առաջնահերթ քայլեր է համարում անվճար բուժօգնությունների ցանկի ընդլայնումը և դրանց որակի բարելավումը, անվճար բուժօգնությունների մատուցման նպատակով պետական երաշխիքների ծավալի և պետության ֆինանսական հնարավորությունների հաշվեկշռվածության ապահովումը, ինչպես նաև պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը:

Կուսակցության դիտարկմամբ առողջապահության և բուժօգնության համակարգի զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու առաջնային խնդիրներն են՝

- «Առողջապահության զարգացման ռազմավարական ծրագրի» մշակումն ու իրականացումը,
- անվճար բուժօգնությունների որակական բարելավումը, բնակչությանը մատուցվող անվճար բուժօգնությունների մատուցման նպատակով պետական երաշխիքների ծավալի և պետության ֆինանսական հնարավորությունների հաշվեկշռվածության ապահովումը, ոլորտում ստվերային շրջանառության ծավալների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը,
- առողջապահության համակարգի կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործումը, բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և դրա փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն և այլն) կիրառումը,
- բնակչությանը մատչելի և որակյալ բժշկական օգնության տրամադրումը, մոր և մանկան առողջության պահպանությունը,
- հաշմանդամների հիմնահարցերի լուծման ուղղությամբ պետական հատուկ քաղաքականության իրականացումը, որը հաշմանդամների համար կստեղծի կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու պայմաններ և կապահովի նրանց իրավունքների իրականացումը և հաշմանդամների սոցիալական պաշտպանության համալիր ծրագրի ընդունումը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց անվճար բժշկական օգնության ցուցաբերումը,
- գյուղական համայնքներում առաջնային բուժօգնության համակարգի դերի ամրապնդումն ու դրա գործունեության բարելավումը,
- դեղերի մատչելիության և անվտանգության մակարդակների բարձրացումը:

Է. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Տնտեսական վերափոխումների հաշվեկշռվածության, կայունության, ժողովրդավարացման գործընթացների անշրջելիության ապահովման, ինչպես նաև ժողովրդագրական իրավիճակի բարելավման, բնակչության արտագաղթի կանխման, ծնելիության մակարդակի բարձրացման և սոցիալական մի շարք այլ հիմնախնդիրների լուծման կարևորագույն պայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում նպատակային, հասցեական և արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացումը:

Կուսակցության համոզմամբ՝ սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներ պետք է հանդիսանան բնակչության կենսամակարդակի հետևողական բարձրացումը, սոցիալական անհավասարության կրճատումը, սոցիալական հիմնական բարիքների և ծառայությունների համընդհանուր մատչելիության ապահովումը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Այս ոլորտում կուսակցության առաջնահերթ նպատակն է որակյալ և հասանելի կրթության ապահովումն ու կրթական համակարգի մրցունակության բարձրացումը: Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ունենա կրթություն ստանալու և իր մասնագիտությանը համապատասխան արժանավայել աշխատավարձով աշխատանք գտնելու հնարավորություն: Կուսակցությունը կարևորում է անապահով ուսանողներին, ծնողագուրկ երեխաներին սոցիալական հասցեական աջակցության ցուցաբերումը՝ ներառյալ ուսման վարձերի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը, ինչպես նաև՝ անտոկոս ուսումնական վարկերի տրամադրումը, և հանդես է գալիս կրթաթոշակների շարունակական բարձրացման օգտին:

Որակյալ կրթություն ստացած, բազմակողմանիորեն զարգացած քաղաքացին մեր երկրի ռազմավարական մտավոր ներուժն է: Կուսակցության համոզմամբ, այս բնագավառում պետական քաղաքականության ռազմավարական նպատակը պետք է հանդիսանա կրթության այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացուն հնարավորություն կտա ստանալ հասարակական պահանջարկ վայելող, որակյալ գիտելիքներ՝ երաշխավորելով հասարակությունում կրթված քաղաքացիների արժանապատիվ տեղը:

Ռազմավարական այս նպատակին հասնելու համար, պետական համալիր և նպատակային ծրագրերի շրջանակներում, առաջնահերթ լուծման ենթակա խնդիրներն են՝

- բարձր որակավորում ունեցող, հայրենասեր, ազգային ոգով դաստիարակված, բազմակողմանի զարգացած և բարոյական արժեքներ դավանող սերունդ ունենալու գերխնդրի լուծումն ապահովող կրթական համակարգի ստեղծումը,
- մանկավարժների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի վարձատրության մակարդակի շարունակական բարձրացումը,
- կրթության որակի էական բարելավումը, անվճար դասագրքերով ապահովման սկզբունքին աստիճանաբար անցումը, կրթության ոլորտի օրենսդրության կատարելագործումը, ինչպես նաև անապահով ուսանողներին, որք և ծնողագուրկ երեխաներին սոցիալական հասցեական աջակցության ցուցաբերումը՝ ներառյալ ուսման վարձերի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը,
- կրթական համակարգում սովորողների օժանդակության նպատակով մասնավոր բարեգործական հիմնադրամների ձևավորման խրախուսումը և մեկենասության տարբեր մեխանիզմների (լրացուցիչ կամ նպատակային կրթաթոշակների տրամադրման, անվճար դասագրքերով ապահովման, արտասահմանում ուսման ծախսերի, ուսման վարձերի փոխհատուցման և այլն) ներդրումը,
- կրթության կառավարման գործընթացին հասարակության մասնակցության և համալսարանական ինքնավարության իրական ապահովումը,
- կրթաթոշակների շարունակական բարձրացումը,
- կրթության բովանդակության նորացումը, համակարգչային գիտելիքների և օտար լեզուների իմացության խթանումը,
- պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների իրավահավասարության, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների իրական ապահովումը:

4.7. Գիտության զարգացում⁴

Որակյալ կրթությունը պետք է հանդիսանա գիտության զարգացման և գիտատեխնիկական առաջընթացի հիմքը, առանց որի անհնար է պատկերացնել կիրթ հասարակության ձևավորումը: Այս ուղղությամբ՝ կուսակցությունն առաջնահերթ է համարում գիտության համար համապատասխան պայմանների ապահովումը և ենթակառուցվածքների զարգացումը, գիտության ոլորտում ներգրավվելու իրական մոտիվացիայի ձևավորումը, տնտեսության հետ գիտության կապի խորացումը,

ուղորտի բյուջետային հատկացումների ավելացումը և գիտության ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործումը:

Կուսակցության առաջնահերթ խնդիրներից մեկը գիտության և գիտատեխնիկական առաջընթացի համար համապատասխան պայմանների ապահովումն ու ենթակառուցվածքների զարգացումն է: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել գիտության զարգացման համալիր ծրագիր, որով կնախատեսվի հետևյալ կարևոր խնդիրների լուծումը.

- գիտության արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում,
- գիտության ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործում և դրանց արդյունավետության բարձրացում,
- պետական գիտատեխնիկական քաղաքականության առաջնահերթությունների և գիտության զարգացման գերակա ուղղությունների հստակ սահմանում, հայազգիտության զարգացում,
- բարձր որակավորում ունեցող գիտական կադրերի պատրաստման մեխանիզմների ներդրում,
- գիտության ոլորտի տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածության մակարդակի բարձրացում,
- ինովացիոն (նորարարական) ակտիվ քաղաքականության իրականացում, այդ թվում՝ տեխնոպարկերի զարգացման գործընթացի արագացում,
- գիտության զարգացման միջազգային ու տարածաշրջանային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներին ակտիվ մասնակցության ապահովում,
- տաղանդավոր երիտասարդ գիտնականների պետական աջակցության համակարգի ձևավորում և զարգացում:

Գիտության բնագավառի զարգացումը, բնականաբար, պահանջում է ոչ միայն պետության կողմից մրցունակ գիտական կազմակերպություններին հնարավոր բոլոր միջոցներով օժանդակության ապահովում, այլև դրանց գործունեությանն անմիջական ֆինանսական մասնակցություն: Այս կապակցությամբ, մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է հասնել գիտության ոլորտին պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 3%-ի հատկացմանը, որը կապահովի ինչպես տնտեսական անվտանգության միջազգայնորեն ընդունված նվազագույն մակարդակը, այնպես էլ հնարավորություն կստեղծի առաջիկայում գիտության զարգացման տեմպերի արագացման համար:

4.8. Մշակույթ և սպորտ

Կուսակցությունը մեծապես կարևորում է մշակույթի ոլորտի հետևողական, դինամիկ և ծրագրային զարգացումը, մշակութային ժառանգության պահպանումը, ինչպես նաև այս ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ներուժի մեծացումը: Կուսակցությունը շարունակելու է արվեստին աջակցելու իր քաղաքականությունը՝ նպատակ ունենալով հանրության շրջանում առավելագույնս բարձրացնել մշակույթի գործչի, մտավորականի, արվեստագետի վարկն ու հեղինակությունը, համալրել և կատարելագործել մշակութային գործունեության օրենսդրական հիմքերը, ինչպես նաև՝ ամրապնդել և ընդլայնել ոլորտի նյութատեխնիկական բազան:

Առողջ հասարակության ձևավորման կարևոր ուղղություններից մեկն էլ կուսակցությունը համարում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, ինչպես նաև այս ոլորտում բնակչության լայն զանգվածների ընդգրկումը, որին հասնելու համար անհրաժեշտ է երկրում ստեղծել մատչելի ենթակառուցվածքներ և առողջ ապրելակերպի արմատավորման համար անհրաժեշտ պայմաններ: Կուսակցությունն առաջնային է համարում հանրակրթական դպրոցներում ժամանակակից պահանջներին համապատասխանող մարզադահլիճների առկայությունը:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Կուսակցության համար Հայաստանի Հանրապետության տարածքային քաղաքականության հիմնական ուղղությունները շարունակում են հանդիսանալ՝

- հիմնավորված սկզբունքներով ու չափանիշներով համայնքների խոշորացումը, հանրապետության վարչատարածքային նոր բաժանման ձևավորումը և պետական կառավարման երկաստիճան համակարգին անցումը,
- հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացումը,
- ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների վերաբնակեցումը:

ա. Համայնքների խոշորացում

Հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարումը քաղաքացիական հասարակության հիմքն է, ինչպես նաև պաշտպանելով տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքները և որպես ռազմավարական նպատակ դիտարկելով Հայաստանում տնտեսապես ուժեղ տեղական ինքնակառավարման կայացումը՝ կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝ օրենսդրորեն ամրապնդել տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքները, հստակեցնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և իրավասությունները, բարձրացնել տեղական ընտրությունների նշանակությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ապահովել ժողովրդավարական

ներկայացուցչություն, համայնքներում աստիճանաբար անցում կատարել ավագանիների ընտրական խառը՝ մեծամասնական և համամասնական համակարգի, իսկ հետագայում՝ 100 տոկոսանոց համամասնական ընտրական համակարգի, ինչպես նաև ընդլայնել համայնքների բյուջետային եկամուտների մեծացման հնարավորությունները և համայնքների ներդաշնակ զարգացման նպատակով ներդնել ֆինանսական համահարթեցման սկզբունքորեն նոր մեխանիզմներ: Այս խնդիրների լուծման նպատակով, բնականաբար, անհրաժեշտ է գնալ համայնքների խոշորացման, որին կուսակցությունը կողմ է:

բ. Ավագանու դերի բարձրացում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում բարձրացնել տեղական ընտրությունների նշանակությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ապահովել ժողովրդավարական ներկայացուցչություն, համայնքներում աստիճանաբար անցում կատարել ավագանիների ընտրական խառը՝ մեծամասնական և համամասնական համակարգի, իսկ հետագայում՝ 100 տոկոսանոց համամասնական ընտրական համակարգի, դրանով իսկ նպաստելով ավագանիների դերի բարձրացմանը:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում

Կուսակցությունը կողմ է միջհամայնքային միավորումների ստեղծմանը, սակայն գտնում է, որ այդ միավորումների ֆինանսավորումը չպետք է կատարվի համապատասխան համայնքների բյուջեներից, ինչպես ներկայումս նախատեսված է օրենքով, այլ այդ միավորումները պետք է ստեղծվեն որոշակի ժամկետով, կոնկրետ՝ միջհամայնքային խնդիրներ լուծելու նպատակով, իսկ ֆինանսավորումն էլ պետք է հիմնականում կատարվի պետական բյուջեից կատարվող հաշվին:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁴

Կուսակցությունը հանդես է գալիս համայնքների բյուջետային եկամուտների մեծացման հնարավորությունների ընդլայնման և համայնքների ներդաշնակ զարգացման նպատակով ֆինանսական համահարթեցման մեխանիզմների կատարելագործման օգտին:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից

Կուսակցության կարծիքով՝ համայնքներին օրենքով վերապահված լիազորությունները ներկայումս շատ ավելին են, քան կարելի էր նրանց հանձնել ՏԻՄ-երի ստեղծման օրվանից՝ առավել ևս հաշվի առնելով նրանց բյուջետային հնարավորությունները: Այս կապակցությամբ՝ կողմ լինելով ՏԻՄ-երի ինքնուրույնության մակարդակի հնարավորինս բարձրացմանը, այդուհանդերձ, նրանց անհրաժեշտ է տալ այնքան լիազորություններ, որոնք ՏԻՄ-երը ի վիճակի կլինեն իրականացնել լիարժեք և ինքնաբավ ռեժիմով:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Կուսակցությունը տարածքային զարգացման բնագավառում առաջնային լուծման ենթակա հիմնական խնդիրներ է համարում՝

- հանրապետության վարչատարածքային բաժանման համար հիմնավոր սկզբունքների և տարածքների ներդաշնակ զարգացումն ապահովող մոտեցումների շարունակական մշակումը,
- տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը,
- համայնքների ֆինանսական հնարավորությունների մեծացումը և վարչատարածքային միավորների ֆինանսական կայուն բազայի ձևավորումը,
- մարզերում զբաղվածության հիմնախնդիրների լուծման համար առավել ճկուն մեխանիզմների կիրառումը,
- պետական իշխանության և տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հստակեցումը,
- պետական կառավարման ապակենտրոնացման գործընթացի սահունության ապահովումը,
- սահմանամերձ տարածաշրջանների, ինչպես նաև լեռնային և նախալեռնային գոտիներում գտնվող համայնքների ամրապնդման և զարգացման նպատակով արտոնությունների համակարգի մշակումը և կիրառումը:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում

Կուսակցությունը նախատեսում է շարունակել քաղաքացիական հասարակության աջակցության և պաշտպանության քաղաքականություն: Կուսակցությունը համոզված է, որ ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված՝ քաղաքացիների ինքնակազմակերպման ձևերում է կուտակված հասարակության զարգացման հսկայական ներուժը: Պետությունը պետք է առավելագույնս օգտագործի այդ ներուժը՝ ապահովելով ստեղծագործական և մշակութային միությունների, հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև սեփականատերերի, սպառողների, գործատուների, աշխատողների, ազգային, կրոնական և այլ միավորումների գործունեությունը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Հասարակական կազմակերպությունների զարգացումը և այդ գործընթացի պետական աջակցությունը, որի ջատագովն է կուսակցությունը, թույլ կտա լուծել այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝

- մարդկային գործոնի էական ուժեղացումը, իշխանության ու հասարակության միջև երկխոսության և տարաբնույթ հարցերի վերաբերյալ հասարակական համաձայնության ձեռքբերման հնարավորությունների մեծացումը,
- բարեփոխումների, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման գործընթացներին քաղաքացիների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը և այդ առումով մասնակցային գործընթացի խթանումը,
- պետության սոցիալական գործառնությունների մի մասը հասարակական կազմակերպություններին փոխանցելու և տնտեսության ոչ առևտրային հատվածում նոր աշխատատեղեր ստեղծելու հաշվին պետական զգալի միջոցների տնտեսումը, ոչ առևտրային ծառայությունների շուկայի զարգացումը և այլն:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է՝

- պետական որոշումների մշակման, քննարկման և կատարման վերահսկողության գործընթացներում ստեղծել հասարակական կազմակերպությունների մասնակցության հնարավորություններ, մասնագիտացված հասարակական կազմակերպություններին ներգրավել սոցիալական և տնտեսական ծրագրերի մշակման գործընթացներին, ինչպես նաև նպաստել ծնողագուրկ երեխաների, տարեցների, հաշմանդամների, փախստականների հիմնախնդիրների լուծմանը,
- ապահովել պետական բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացմանը հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Քաղաքացիական համաձայնության վրա հիմնված և հասարակական-քաղաքական կայուն հարաբերությունների ձևավորման նպատակով՝ կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

- նպաստել հասարակական կազմակերպությունների գործունեության ազատության պահպանմանը,
- կարևորելով ժողովրդավարության զարգացման գործընթացում զանգվածային լրատվամիջոցների՝ որպես բազմակարծության արտահայտման և հասարակական կարծիքի ձևավորման կարևորագույն գործիքի դերը, բարելավել նրանց ազատ և անաչառ գործունեության պայմանները,
- օժանդակել քաղաքացիների խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացմանը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցության հիմնական խնդիրներից մեկը Հայաստանում քաղաքացիական հասարակության, մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության և ժողովրդավարական ինստիտուտների վրա հիմնված իրավական պետության կառուցման գործին իր ջանքերի և հնարավորությունների ներդրումն է:

դ. Դատախրավական համակարգի բարեփոխում

ՀՀ դատական համակարգի գործունեությունը պետք է հիմնված լինի արդարադատության հրապարակայնության և թափանցիկության ապահովման, անհատի իրավունքների պաշտպանության և ողջամիտ ժամկետում գործի արդարացի ու հրապարակային դատական քննության սկզբունքների վրա: Դատավորի կարգավիճակի հստակեցման, նրա անկախության և անկողմնակալության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է ստեղծել դատավորի անձեռնմխելիության ու անփոփոխելիության իրավական, սոցիալական և անհրաժեշտ այլ հիմքեր՝ դրանք հավասարակշռելով պատասխանատվության ապահովման գործունե մեխանիզմներով: Դատախազական համակարգի բարեփոխումների շրջանակում առաջնային լուծում պահանջող խնդիրներից ենք համարում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համատեքստում ՀՀ գլխավոր դատախազությանն օրենքների կատարման նկատմամբ բարձրագույն հսկողություն իրականացնելու իրավունքի վերապահումը, ինչպես նաև դատախազության մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների պատշաճ կատարման ու անկողմնակալության ապահովումը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Պետք է ստեղծել պայմաններ Ազգային ժողովի ընտրությունների 100 տոկոսանոց համամասնական ընտրական համակարգին անցում կատարելու համար: Պետք է նպաստել ընտրական հանձնաժողովների գործունեության թափանցիկության և դրանցում ներկայացված քաղաքական ուժերի պատասխանատվության մակարդակների բարձրացմանը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁴

Կուսակցությունը կարևորում է քաղաքական կուսակցությունների դերի բարձրացումը պետության կյանքում, բազմակուսակցականության ավանդույթների ձևավորումը, ինչպես նաև միջկուսակցական պայքարը քաղաքակիրթ և կոռեկտ պայմաններում տանելու անհրաժեշտությունը:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁵

Կուսակցությունը կարծում է, որ պետության և հասարակության առջև ծառացած բազմաբնույթ խնդիրների լուծման գործընթացում հասարակական կազմակերպությունների մասնակցության կշիռը պետք է հետևողականորեն մեծացվի: ՀԿ-ները պետք է դիտվեն որպես իշխանությունների գործընկերներ, որոնց խնդիրը որոշումների իրականացման հրապարակայնության և թափանցիկության գործընթացին մասնակցելն է:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁴

Կուսակցությունը հանդես է գալիս քաղաքական կյանքում կանանց դերի մեծացման օգտին: Կարևոր է կանանց մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը, ինչպես նաև այդ որոշումների կենսագործմանը:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցության համոզմամբ, ՀՀ պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտի հիմնական խնդիրներն են՝

- ՀՀ տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովումը, արտաքին և ներքին սպառնալիքների կանխարգելման և վերացման ուղղությամբ ծրագրային և օպերատիվ միջոցառումների իրականացումը, տարածաշրջանային անվտանգության այնպիսի համակարգի ձևավորումը, որտեղ Հայաստանը կունենա լուրջ դերակատարություն և առավելագույնս ապահովված կլինի նրա անվտանգությունը,
- երկրի պաշտպանության ամրապնդումը, ազգային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսումը, բացահայտումը, կանխարգելումը, հակազդումը և չեզոքացումը,
- այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության բարիդրացիական, հավասարակշռված, իրավահավասար և փոխշահավետ համագործակցությունը,
- երկրի տնտեսության զարգացումը և սոցիալական ուղղվածություն ունեցող տնտեսական քաղաքականության իրականացումը, տնտեսական շահերի պաշտպանությունը, գիտատեխնիկական և տեխնոլոգիական կախվածության նվազեցումը, ժողովրդագրական գործընթացների կարգավորումը, երկրի բնապահպանական ու բնօգտագործման վիճակի բարելավումը,
- ՀՀ տարածքում մարդու և քաղաքացու անվտանգության, նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովումը, պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործումը, օրինականության ու կարգուկանոնի ամրապնդումը և հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կայունության ապահովումը, քաղաքացիների, պաշտոնատար անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կուսակցությունների, հասարակական միավորումների, կրոնական և այլ կազմակերպությունների կողմից օրենսդրության պահանջների անվերապահ կատարումը:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Տնտեսական վերափոխումների հաշվեկշռվածության, կայունության, ժողովրդավարացման գործընթացների անշրջելիության ապահովման, ինչպես նաև ժողովրդագրական իրավիճակի բարելավման, բնակչության արտագաղթի կանխման, ծնելիության մակարդակի բարձրացման և սոցիալական մի շարք այլ հիմնախնդիրների լուծման կարևորագույն պայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում նպատակային, հասցեական և արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացումը:

Կուսակցության կարծիքով, պետք է արմատական քայլեր ձեռնարկել ծնելիության և կյանքի միջին տևողության անկմամբ պայմանավորված բնակչության ծերացումը և բնական աճի նվազումը, ինչպես նաև դրանց հետևանքով ստեղծված ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը լուծելու համար:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Բնությունն այն կենսական միջավայրն է, որը յուրաքանչյուր մարդ պարտավոր է պահպանել, վերականգնել և խնամքով օգտագործել, շրջակա միջավայրի հետ վարվելով այնպես, ինչպես կվարվեր իր սեփական տան հետ: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում այս պարզ ճշմարտության արմատավորումն ինչպես պետական քաղաքականության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու գիտակցության մեջ, և իր հնարավորությունների սահմաններում աշխատելու է այս ուղղությամբ:

Կուսակցությունը կարևորում է երկրի տնտեսական զարգացումը, սակայն դեմ է, որ տնտեսական զարգացումը տեղի ունենա շրջակա միջավայրի անդառնալի կորուստների, երկիր բնապահպանական անվտանգության մակարդակի նվազման և բնական ռեսուրսների անխնա շահագործման հաշվին:

Բնական պաշարների ողջամիտ օգտագործման պետական քաղաքականության իրականացման առումով կուսակցությունը ձգտելու է ակտիվ քաղաքականություն իրականացնել հետևյալ ուղղություններով՝ հստակեցնել բնական պաշարների օգտագործման ոլորտի, այդ թվում՝ հողային, ջրային անտառային ու բնական այլ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության խնդիրները, ծրագրային հիմքերի վրա դնել օդային ավազանի պահպանման և դրա բարենպաստության մակարդակի բարձրացման հարցերը, հատուկ ուշադրություն դարձնել Սևանա լճի՝ որպես ՀՀ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, բնակլիմայական և ռեկրեացիոն արժեք ունեցող էկոհամակարգի հիմնախնդիրների լուծմանը, մշակել և իրականացնել Սևանա լճի բնական մակարդակի վերականգնման, նրա էկոհամակարգի բնական պաշարների վերարտադրության, պահպանման և դրանց օգտագործման համալիր, տարեկան և նպատակային ծրագրեր:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Կուսակցությունը կարևորում է ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից, հայրենիքի և սեփական ժողովրդի նկատմամբ պատասխանատվություն կրող երիտասարդ սերնդի դաստիարակությունը: Կուսակցությունն առաջնահերթ է համարում երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացումը, երիտասարդ ընտանիքների բնակարանային ապահովվածության, կրթության և սպորտով զբաղվելու բնագավառներում պետական օժանդակության մեխանիզմների ստեղծումը, արտակարգ ունակություններ դրսևորած երիտասարդներին պետականորեն խրախուսումը: Կուսակցությունը չի սահմանափակվելու այս ոլորտում արդեն իսկ իրականացված իր ծրագրերից և շարունակելու է երիտասարդության համախմբման, նրանց ինքնադրսևորման հնարավորությունների ընձենոման և լավագույնների խրախուսման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Հայ երիտասարդը պետք է իրեն ապահով ու պաշտպանված զգա, որակյալ կրթության և արժանապատիվ աշխատանքի հնարավորություն ունենա: Նա չպետք է իր բախտը փնտրի օտար ափերում, այլ պետք է իր հույսը կապի մայր հայրենիքի, իր պետության և պետականության հետ: Անհրաժեշտ է առավել մեծ տեղ տալ երիտասարդ կադրերին, վստահել նրանց պատասխանատու ոլորտներ, առողջ մրցակցային դաշտ ստեղծել սեփական ուժերի լիարժեք դրսևորման համար:

2. «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 76ա
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 53-69-13, (+37410) 53-26-97
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ office@heritage.am
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.heritage.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 14.08.2002թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 14.08.2002թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 10.11.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 30.05.2005թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 02.03.2012թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝ 27.10.2008թ., www.heritage.am
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝ «Ժառանգություն» շրջաբերական
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 43
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 6450, որից
 - Կանայք՝ 35%
 - Երիտասարդներ՝ 30%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 7 պատգամավոր:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Խորհուրդ՝ 41 անդամ
- Վարչություն՝ 11 անդամ
- Վարչության նախագահ
- Կանոնադրական հանձնաժողով՝ 5 անդամ
- Վերստուգիչ հանձնաժողով
- Տարածքային ստորաբաժանումներ
- Կուսակցության նախագահ՝ Բաֆֆի Կ. Հովհաննիսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր գործունակ քաղաքացի՝ կամավոր հիմունքներով, ով ընդունում է կուսակցության Կանոնադրությունը: Կուսակցության անդամը չի կարող միաժամանակ լինել որևէ այլ կուսակցության անդամ, չի կարող հաշվառվել կուսակցության մեկից ավելի տարածքային ստորաբաժանումներում: Կուսակցության անդամ կարող են դառնալ նաև ՀՀ ընտրական իրավունքով օժտված այլ անձինք՝ առանց նրա ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի: Կուսակցության անդամը մուծում է անդամավճար, որի չափերը և գանձման կարգը վարչության ներկայացմամբ հաստատում է կուսակցության խորհուրդը:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցությունն արմատներով ազգային, տնտեսական ուղեգծով՝ ազատական, կառավարման ժողովրդավարական համակարգի կողմնակից քաղաքական ուժ է, որն առաջնային խնդիր է համարում Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական, իրավական, իր ներքին ու արտաքին քաղաքականությունն ազգային ինքնիշխան շահի հիման վրա կառուցող զարգացած պետության կայացումը: Կուսակցությունը գտնում է, որ մարդու արժանապատվության, հոգևոր և նյութական ազատության, բարեկեցության, մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման, կառավարման համակարգի առողջ և արդյունավետ գործունեության երաշխիքը ժողովրդավարությունն է, իսկ պետական և ազգային շահի կրողը՝ ժողովուրդը:

3.2. Նպատակները և խնդիրները

Կուսակցության գործունեության գլխավոր նպատակն է՝ հենվելով համամարդկային և ազգային արժեքների, անցյալի քաղաքականության ժառանգության վրա, նպաստել հայ ժողովրդի բարեկեցիկ, արժանապատիվ կյանքի հաստատմանը և գալիք սերունդներին ժառանգել ազատ, ուժեղ ու բարգավաճ Հայրենիք: Կուսակցությունը վճռել է մասնակցել ՀՀ պետական ու տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների կազմավորմանը և դրանց գործունեությանը, ինչպես նաև երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին:

Կուսակցությունը հեռանկարում Հայաստանը տեսնում է իբրև մի պետություն, որտեղ՝

- բարձրագույն արժեքը մարդն է, նրա իրավունքներն ու ազատությունները,
- պետական կառույցները ծառայում են ժողովրդին, միջոց են նրա ինքնակազմակերպման ու իդձերի իրականացման համար, և նրանց գլխավոր խնդիրը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների իրականացման ապահովումն է,
- քաղաքացին պետության հիմքն է, ժողովուրդը՝ իշխանության աղբյուրը, ազգը՝ պետականության խարիսխը, իսկ նրանց ազատությունը՝ ինքնիշխանության գրավականը,
- ժողովրդավարությունը երաշխավորված է Սահմանադրությամբ, օրենքներով, քաղաքացիական հասարակությամբ, պետության կառավարման բյուրեղացած ժողովրդավարական եղանակներով,
- յուրաքանչյուր ոք և քաղաքական ուժ գիտակցում է անցյալի, ներկայի և ապագայի համար իր պատասխանատվությունը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Ազգային-ազատական, աջակողմյան-կենտրոն

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները.

1. Արտաքին քաղաքական հավասարակշռվածություն՝ որպես արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունք, ինչը կբացառի որևէ պետության կցորդ դառնալու վտանգը:
2. Ինտեգրում եվրոպական կառույցներին՝ եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունների հաստատում, Եվրամիությանը Հայաստանի անդամակցություն՝ որպես արտաքին և ներքին քաղաքականության հիմնական ուղղություն:
3. Համագործակցություն Ռուսաստանի, ԱՊՀ այլ երկրների, ԱՄՆ-ի, Արևելքի հարևան պետությունների, ինչպես նաև խոշոր երկրների (Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Կանադայի և այլնի) հետ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Արտաքին քաղաքականության ուժագծի համար Կուսակցությունը տեսնում է հետևյալ երեք բաղադրիչների պարտադիր, համաժամանակյա կիրառությունը.

1. Տարածքային բաղադրիչ, երբ Հայաստանն իր տարածքում կայանում է որպես ինքնիշխան, իրավական, ժողովրդավարական, ինքնաբավության նվազագույն աստիճանն ապահովելու ունակ պետություն:
2. Մրցակցային բաղադրիչ, որն ուղղված է արտաքին միջավայրին և ենթադրում է տարածաշրջանում Հայաստանի գործառական դերի՝ առաքելության հստակեցում ու մասնագիտացում: Կուսակցությունը Հայաստանի համար այդպիսի առաքելություն է դիտում ժողովրդավարության, կայունության կղզյակի ու առաջանցիկ զարգացման էպիկենտրոնի դերը:
3. Ցանցային բաղադրիչ, որի համար ելակետը պետք է լինի հայտնի «չկան հավերժ բարեկամներ ու թշնամիներ, կան շահեր» դրույթը: Միայն տարածքային և մրցակցային բաղադրիչով լիակատար ապահովվածության դեպքում է արդարացված ցանցայինի մասին խոսելը:

ա. Եվրաինտեգրում

Հայաստանի համար ինտեգրումը վերջնանպատակ չէ. այն առավել բարեկեցության, բարգավաճման ու անվտանգության հասնելու միջոց է: Ինտեգրում ասելով՝ կուսակցությունը հասկանում է փոխշահավետ համագործակցություն, փոխըմբռնման ու փոխօգնության բարձր աստիճանի ձեռքբերում:

բ. ԱՊՀ⁴

Բարիդրացիական հարաբերություններ նախկին խորհրդային հանրապետությունների հետ՝ փոխշահավետության սկզբունքով:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

Քանի դեռ մենք Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ ենք, պետք է կատարենք պայմանագրային պարտավորությունները:

դ. ՀԱՐԿ (NATO)⁵

Անկախ այն հեռանկարից՝ Հայաստանը կանդամակցի, թե չի անդամակցի ՀԱՐԿ-ին՝ ելնելով իր անվտանգության կարիքներից, այսօրվա հրամայականները հարկադրում են բանակի արդիականացում ՀԱՐԿ-ի չափանիշներով, որոնք ապացուցել են իրենց կենսունակությունը թե գլոբալ, թե պետության ներքին մարտահրավերներին դիմակայելու առումով:

ե. ԱՄՆ⁴

Տնտեսական, սոցիալական, արտաքին քաղաքական մարտահրավերներին դիմակայելու, բանակի նյութական և ռազմատեխնիկական սպասարկման ծավալները մեծացնելու և որակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է պահպանել տնտեսական, քաղաքական և ռազմական համագործակցությունը ոչ միայն ավանդական դաշնակից Ռուսաստանի, այլ նաև նոր գործընկերների՝ ԵՄ և ՆԱՏՕ-ի երկրների, հատկապես՝ ժամանակակից գործընկեր ԱՄՆ-ի հետ, որի հետ սերտ համագործակցությունը կուսակցությունը դիտարկում է արգասավոր:

զ. Ռուսաստանի Դաշնություն⁴

Ավանդական դաշնակից Ռուսաստանի հետ անհրաժեշտ է պահպանել սերտ համագործակցությունը, սակայն վերակառուցելով այն և հիմնվելով փոխադարձ շահերի ըմբռնման և հարգանքի վրա: Այդ համագործակցության շրջանակներում, կուսակցության կարծիքով, «Գույք պարտքի դիմաց» ձևաչափը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության ռազմավարական ոլորտների վաճառքը Ռուսաստանին, կամ ցանկացած այլ երկրի՝ անընդունելի է:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁴

Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունները ենթադրում են բաց, անկեղծ, առանց նախապայմանների երկխոսություն մշակույթի, տնտեսության, սոցիալական համագործակցության միջոցով: Երկու ժողովուրդները պետք է աստիճանաբար փոխակերպեն առ այսօր իրենց կառավարող կարծրատիպերը, ընդունեն համամարդկային ու համաեվրոպական արժեքները, ճանաչեն սեփական պատմությունն ու լուծում տան Ցեղասպանության ու նրա ժառանգության հիմնախնդրին, համապարփակ ու համալիր ձևով կարգավորեն բաժանարար բոլոր հարցերը՝ առանց նախապայմանների բացեն փակ սահմանները և հաստատեն դիվանագիտական հարաբերություններ:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Բացառելով ԼՂՀ վերադարձը Ադրբեջանի կազմ՝ Արցախյան հակամարտության վերջնական կարգավորումից հետո Ադրբեջանի հետ անհրաժեշտ է կնքել համալիր խաղաղության եռակողմ պայմանագիր, որի երրորդ կողմը պետք է լինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես բանակցությունների լիիրավ կողմ: Կուսակցությունը նպատակահարմար է գտնում մոտակա տարիների համար ԼՂՀ-ի ինքնիշխանության և քաղաքական անկախության ամրապնդումը և միաժամանակ ՀՀ-ի հետ տնտեսական, մշակութային, գիտական կրթական սերտաճումը և օրենսդրական դաշտերի համապատասխանեցումը:

թ. Իրան⁴

Հիմնվելով առկա բարիդրացիական հարաբերությունների վրա՝ կուսակցությունը կարևորում է Իրանի հետ տնտեսական համագործակցության զարգացումը՝ երկու երկրների տրանսպորտային, էներգետիկ և այլ տիպի անվտանգություն ապահովելու նպատակով: Որպես առաջնայություն՝ կուսակցությունը դիտարկում է Իրան-Հայաստան-ԵՄ լայն տրամաչափի գազատարի կառուցումը:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁴

Վրաստանի հետ անհրաժեշտ է փոխվստահության հիմքի վրա բարիդրացիական մթնոլորտի ստեղծում, տնտեսական համագործակցության տեմպերի փոխանցում նաև քաղաքական ոլորտ: Դա հնարավոր է անել՝ հատկապես հաշվի առնելով մեր երկու երկրների արտաքին քաղաքական նույն գերակայությունները՝ Եվրամիությանն անդամակցելու ուղղությամբ: Զավախքը հայրենի ժառանգության անքակտելի մաս է, միաժամանակ՝ անվտանգության հանգույց Հայաստանի ու Վրաստանի համար: Երկու երկրների փոխադարձ հարաբերության հետագա բնույթը կպայմանավորվի ձեռնարկված այն քայլերի արդյունավետությամբ, որոնք կարտացոլեն այս գիտակցումը, ինչպես նաև կապահովեն վրացահայ համայնքի ու իր հաստատությունների հիմնարար ազատությունները:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում⁴

ՀՀ-ն պետք է օժանդակի Սփյուռքում հայապահպանությանը, նպաստի յուրաքանչյուր սփյուռքահայի՝ Հայաստանի և միմյանց հետ հաղորդակցման հնարավորությունների դյուրացմանը, պետք է դառնա սփյուռքահայ համայնքներն իրար կապող օղակը, շփման գլխավոր կենտրոնը: Սփյուռքն էլ իր հերթին պետք է Հայաստանի և աշխարհի միջև մշակութային, տնտեսական, քաղաքական կապի և համագործակցության լավագույն կամուրջը լինի: Այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության կազմում ստեղծել համապատասխան հանրապետական կառավարման մարմին:

լ. Այլ

Կուսակցությունը կողմնակից է բոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, տարածաշրջանում և ամբողջ աշխարհում աշխարհաքաղաքական խաղաղ մթնոլորտի ձևավորմանը: Պետք է ձգտել հարևանների հետ բոլոր խնդիրները լուծել համագործակցության ոգով:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները.

1. Իրավակարգի բարեփոխումներ:
2. Քաղաքացիական հասարակության կայացում:
3. Տնտեսական և սոցիալական քաղաքականություն:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Պետությունը պետք է առավել արդյունավետ իրականացնի տնտեսության մեջ իրեն վերապահված կարգավորիչ գործառնությունները, այդ թվում՝ հակամենաշնորհային, ազատ մրցակցության ապահովման, արդարադատության և տնտեսական վեճերի հարթման:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁴

- ՀՀ կենտրոնական դրամատան նկատմամբ ԱԺ վերահսկողության մեխանիզմների կատարելագործում:
- Ավանդների երաշխավորման առավել գործունե համակարգի մշակում ու ներդրում, ինչը կարևոր քայլ է դրամատնային ողջ համակարգի հանդեպ հասարակության վստահության ամրապնդման ուղղությամբ:
- Ապահովագրական և կենսաթոշակային մասնավոր ու պետական հիմնադրամների և ընկերությունների ձևավորման համար նպաստավոր պայմանների ստեղծում:
- Հիփոթեքային վարկավորման խթանման նպատակով առավել ազատական դրամավարկային դաշտի ապահովում:
- Դրամատների կողմից տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալների ավելացում՝ վարկերի օգտագործման նկատմամբ սահմանելով օպերատիվ վերահսկողություն:
- Նախկին Հայինայբանկում, ինչպես նաև՝ 90-ական թվականների առաջին տարիների ընթացքում սնանկացած կամ լուծարված 33 բանկավարկային կազմակերպություններում ավանդադրված գումարների վերադարձման իրատեսական ծրագրի իրագործում՝ հետևյալ հիմնական սկզբունքների կիրառմամբ՝ բոլոր ավանդները պետք է ձևակերպվեն որպես պետության ներքին պարտք իր քաղաքացիներին, իսկ ավանդների վերադարձման միջոցների աղբյուր պետք է լինեն պետական գույքի սեփականաշնորհման միջոցները, անցած տարիներին պետական պաշտոնյաների կողմից հասարակությունից կողոպտված հարստության բռնազանձումից ստացվող գումարները, ինչպես նաև՝ որոշ տնտեսվարող սուբյեկտների կողմից մինչ այժմ պետությունից թաքցրած առավել խոշոր չափերի հասնող հարկերը:
- Մակրոտնտեսական ռիսկերի հնարավոր նվազեցում և ժամանակակից կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրում:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁴

- Բյուջետային գործընթացները պետք է դարձնել ավելի բաց և թափանցիկ:
- Անցում կատարել դեպի զարգացման բյուջեները՝ հստակորեն սահմանազատելով ծախսերի այն մասը, որը նպատակաուղղվելու է զարգացման հեռանկարային ծրագրերի իրագործմանը:
- Մեծացնել բյուջետային ծախսերի արդյունավետությունը, նվազեցնել պետական վարչակազմի պահպանման ծախսերը:
- Հանրապետական և համայնքային բյուջեների ծախսերը ծրագրավորել և իրականացնել վերջնական արդյունքների վրա հիմնված ծրագրային բյուջետավորման հիման վրա:
- Ապահովել բյուջեի դեֆիցիտը առավելագույնը 3%-ի շրջանակներում:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ⁴

Անհրաժեշտ է ձևավորել արդարության և համահավասարության սկզբունքով գործող հարկային համակարգ, պայքարել ստվերային տնտեսության դեմ, ավելացնել ուղղակի հարկերից (շահութահարկ, եկամտահարկ) ստացվող մուտքերը, նվազեցնել հիմնական հարկատեսակների դրույքաչափերը, պայքարել տնտեսվարող սուբյեկտների կողմից կեղծ վնասներ ցույց տալու արատավոր երևույթի դեմ: Անհրաժեշտ է մշտապես կատարելագործել և բարձրացնել հարկային վարչարարության մակարդակը: Մաքսային քաղաքականության միջոցով խրախուսել ներքին արտադրությունը և բարձր ավելացրած արժեք ունեցող արտադրատեսակների արտահանումը: Մաքսատներում ապահովել առավել թափանցիկ վարչարարություն, արմատախիլ անել այստեղ արմատացած կոռուպցիան, ապահովել հավասար իրավական պայմաններ բոլոր ներկրողների և արտահանողների համար: Հայրենական արտադրության խթանման նպատակով անհրաժեշտ է իրականացնել պետական նպատակային հովանավորչական մաքսային քաղաքականություն, ինչը ենթադրում է հայրենական արտահանելի արտադրանքի համար մեղմ մաքսային ռեժիմի և դրա համանման արտասահմանյան արտադրանքի ներմուծման նկատմամբ առավել խիստ մաքսային ռեժիմի իրականացում: Անհրաժեշտ է մշտապես կատարելագործել և բարձրացնել մաքսային վարչարարության մակարդակը:

դ. Արդյունաբերության զարգացում⁴

Պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի տնտեսության առավել գիտատար, ինովացիոն ճյուղերի զարգացման խրախուսմանը, ինչպես նաև նկատի ունենա երկրի էներգետիկ, ռազմական, տնտեսական, տրանսպորտային, պարենային և բնապահպանական անվտանգությունը: Կուսակցությունն առաջնային է համարում բարձր (այդ թվում՝ տեղեկատվական) տեխնոլոգիական ոլորտի ու վերամշակող արդյունաբերության զարգացման և դրանց արտադրանքի արտահանման խթանումը, արտադրատեսակների փակ ցիկլերի ձևավորման, ինչպես նաև՝ կլաստերների կազմակերպման խրախուսումը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մրցունակ արտադրատեսակնու ընդլայնմանը, ինչը հնարավոր է արտադրանքի որակը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու պարագայում: Հարկ է մեծացնել արդյունաբերության դերը երկրի համախառն ներքին արդյունքի կազմավորման գործում:

ե. Գյուղատնտեսության զարգացում⁴

Հարուստ ու կայուն գյուղը պետության ինքնիշխանության և անվտանգության լուրջ գրավականն է: Այդ իսկ առումով խիստ կարևորվում է.

- գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման օժանդակությունը,
- գյուղացիական տնտեսություններում ներդրումային և վարկավորման ծրագրերի իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Անհրաժեշտ է ոլորտում ներդնել վարկավորման արդյունավետ համակարգ՝ վարկային միջոցների տրամադրման ժամանակահատվածը և տոկոսադրույքները սահմանելիս հաշվի առնելով տվյալ ճյուղի առանձնահատկությունները՝ որպես գրավի առարկա ընդունելով հողը, ինչպես նաև՝ գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական միջոցները: Անհրաժեշտ է արտոնյալ վարկավորման պայմաններ կիրառել նաև բարձր լեռնային և սահմանամերձ գոտիներում գործող գյուղացիական տնտեսությունների համար,
- գյուղատնտեսության մեջ կամավորության սկզբունքով կոոպերացիայի տարբեր ձևերի կազմավորման համար նպաստավոր պայմանների ու մեխանիզմների ստեղծումը,
- գյուղատնտեսության ապահովագրական ճկուն համակարգի ստեղծումը և դրանում պետության փութաջան մասնակցությունը՝ առաջին հերթին ապահովագրական վճարների մի մասի փոխհատուցումն ստանձնելու ճանապարհով:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁴

ՀՀ-ը կարող է դիմագրավել թե տարածաշրջանային, և թե համաշխարհային մասշտաբով ծավալվող բնական մրցակցության մարտահրավերներին՝ ձևավորելով ինովացիոն տնտեսություն, այսինքն տնտեսություն՝ հիմնված գիտելիքների և բարձր տեխնոլոգիաների վրա: Այդ նպատակով կուսակցությունը պատրաստվում է հանդես գալ մի շարք օրենսդրական նախաձեռնություններով, որոնց միջոցով.

- տնտեսության բարձր, այդ թվում՝ ինֆորմացիոն և նանո-տեխնոլոգիաների ոլորտների համար կապահովվի արտոնյալ հարկային պայմաններ,
- զգալիորեն կավելացվի ՀՀ-ում գիտության և կրթության ոլորտների ֆինանսավորումը,
- պետական բյուջեից ամենամյա դոտացիոն հատկացումների ձևով, մրցութային կարգով կֆինանսավորվի այս ոլորտների համար կադրեր պատրաստող պետական և մասնավոր ուսումնական հաստատությունների համապատասխան ամբիոնների տեխնիկական,

տեխնոլոգիական հազեցումը, դասախոսական կազմի վերապատրաստումն արտասահմանյան լավագույն պրոֆիլային կրթօջախներում, լավագույն ուսանողների ուսումնական պրակտիկան արտասահմանյան լավագույն ուսումնական հաստատություններում,

- կապահովվի ՀՀ միջնակարգ և միջին մասնագիտական կրթական համակարգերի՝ հնարավորինս արդիական նյութատեխնիկական բազայով հազեցմանն անհրաժեշտ միջոցների հատկացումը պետական բյուջեից՝ ներկայումս բյուջետային ծախսերում դրանց ունեցած մասնաբաժնի համեմատ հինգ անգամ ավելի: Կիրականացվի Հայաստանի բոլոր դպրոցների 100%-անոց համակարգչայնացում պետական միջոցների հաշվին, համապատասխան ուսուցիչների պատրաստմանն ուղղված պետպատվերի հատկացում պետական և մասնավոր բուհերին:
- գիտնականների համար, անկախ բնագավառից, նվազագույն աշխատավարձի շեմը կհասցվի երկրի նվազագույն աշխատավարձի հիսունապատիկին,
- կավելացվեն պետական բյուջեի հատկացումները՝ այս ոլորտներում միջազգային ցուցահանդեսներին հայաստանյան համապատասխան ընկերությունների մասնակցության անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև Հայաստանում համապատասխան միջազգային ցուցահանդեսների կազմակերպման ծախսերը հոգալու համար:

Է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁵

Երկրի էներգետիկ ռազմավարական ենթակառուցվածքների կենսագործունեությունն ու զարգացումը պետք է տեղի ունենա պետության աշխուրջ վերահսկողության ներքո՝ բարձրացնելով էներգետիկ անվտանգությունը և անկախությունը: Անհրաժեշտ է էներգակիրների աղբյուրների դիվերսիֆիկացում, էներգաարտադրող հզորությունների մեծացում, իսկ հեռանկարում՝ Մեծամորի ԱԷԿ-ին փոխարինող համապատասխան հզորությունների նոր և ժամանակակից աղբյուրների ստեղծման պարագայում նաև այդ ԱԷԿ-ի փակում, վերականգնվող էներգետիկայի խրախուսում, տարածաշրջանային էներգետիկ ծրագրերում Հայաստանի առավել ակտիվ ներգրավում, Իրան-Հայաստան-ԵՄ գազատարի նախագծի իրականացմանն ուղղված ակտիվ քաղաքականության իրականացում: Իրան-Հայաստան գազատարի վաճառքը կամ որևէ ուրիշ ձևաչափով այլ երկրի հանձնելն անընդունելի է: Երկրի էներգետիկ անկախության ապահովման տեսակետից խիստ կարևորվում է էներգիայի այլընտրանքային բնական աղբյուրների (արեգակի էներգիա, լեռնային ավելի քան 150 գետերի ջուր, քամու ուժ, կոշտ թափոնների գազեր, գրավիտացիայի ուժ) օգտագործման շնորհիվ ապահովել երկրի էներգետիկ պահանջարկի հիմնական մասը:

Ը. Զբոսաշրջության զարգացում⁶

Անհրաժեշտ է զբոսաշրջության զարգացմանը ուղղվող բյուջետային միջոցների ծավալների ավելացում՝ ելնելով բնակավայրերի սոցիալ-տնտեսական և զբոսաշրջային զարգացման, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և բնապահպանական հիմնահարցերի փոխկապակցված լուծման, ազգային, պատմամշակութային, քաղաքաշինական, լանդշաֆտային և բնապատկերային արժեքների պահպանման անհրաժեշտությունից:

Թ. Ներդրումների խթանում

Բարենպաստ ներդրումային մթնոլորտ ապահովելու համար կարևոր նշանակություն ունի ընդհանուր ներդրումային քաղաքական համատեքստում պետության, ձեռնարկությունների և առևտրային դրամատների աշխատանքների փոխհամաձայնեցումը, որոնք ուղղակիորեն կապված են ներդրումների հետ: Պետության ներդրումային քաղաքականության կարևորագույն գործիքներն են կոռուպցիայի դեմ պայքարը, լրավճարային, հարկաբյուջետային, դրամավարկային, հակամենաշնորհային քաղաքականությունը, կառուցվածքային բարեփոխումները և այլն:

Ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում⁴

Կուսակցությունը կարևորում է մեր երկրում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված բարեփոխումների հետևողական իրականացման անհրաժեշտությունը: Մենք գտնում ենք, որ փոքր և միջին բիզնեսը հանդիսանում է Հայաստանում միջին խավի ձևավորման հիմքերից մեկը, որը զարգանալով՝ իր հերթին խթանում է տնտեսական աճը, նոր աշխատատեղերի ստեղծումը, տարածքային զարգացումը, աղքատության կրճատումը:

Ներկայումս ՓՄՁ բաժինը ՀՀ-ում արտադրվող ՀՆԱ-ում խիստ ցածր է և չի համապատասխանում նրա ներուժին: Այս իրավիճակը ստեղծվել է պետական կառավարման և արդարադատության համակարգերում համատարած կոռուպցիայի հետևանքով մի խումբ մարդկանց ձեռքերում տնտեսության մեծ մասի արհեստական գերկենտրոնացման, շուկաների մենաշնորհայնացման, ստվերային տնտեսության ծաղկման արդյունքում: ՓՄՁ-ի ծավալների շեշտակի աճի հնարավոր է հասնել հետևյալ միջոցառումների իրագործման ճանապարհով.

- օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում,

- հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում արդար մրցակցային դաշտի ապահովում,
- կոռուպցիայի դեմ պայքար,
- ինովացիոն քաղաքականության մշակում և իրականացում,
- ներդրումային քաղաքականության խթանում,
- տարածքային ենթակառուցվածքների զարգացում:

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁴

ՀՀ-ի տնտեսության ստվերային մասը ներկայումս կազմում է 50-60%, որի վերացման համար անհրաժեշտ են ոչ այնքան բարդ իրավական մեխանիզմներ, որքան իշխանությունների տարրական քաղաքական կամք: Կուսակցությունը կարևորում է սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծումը՝ անկախ սեփականության ձևից, ներքին շուկայում մենաշնորհային գործունեության սահմանափակումը, բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմանների ապահովումը, կոռուպցիայի, հովանավորչության և որպես դրանց հետևանք՝ ստվերայինության կրճատման համար գործուն ու վճռական քայլերի իրագործումը, ընկերությունների գործունեության թափանցիկության ապահովումը:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁴

Կոռուպցիայի հաղթահարումը բացառապես ինստիտուցիոնալ միջոցներով անհնար է, քանի դեռ իշխանությունների մոտ չկա դրա քաղաքական կամքը: Լեգիտիմ, ժողովրդի կողմից ընտրված իշխանությունների ձևավորումից հետո անհրաժեշտ է հետամուտ լինել առավել բարձրաստիճան կոռուպցիոնների ձեռքավորությանը և պատժին՝ օրենքի ողջ խստությամբ, նրանց կողմից հասցված ամբողջ վնասի փոխհատուցմամբ: Անհրաժեշտ է իրականացնել տնտեսական հանցագործությունների գնահատման և դրանց համաձայն գործընթաց: Կոռուպցիայի դեմ պայքարի գործում կարևոր նշանակություն կարող է ունենալ հանրապետական մեկ անկախ ուժային կառույցի ձևավորումը, որի կառավարման գործում մեծ դեր պետք է հատկացնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

իւ. Այլ

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության ու ֆինանսական շուկայի փոքր ծավալը և թերի կայացվածությունը՝ արտաքին տնտեսական հարաբերությունների մեջ մշտապես հաշվի առնել տնտեսական և ֆինանսական կայունության և անվտանգության խնդիրները:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում⁴.

ՀՀ ներկա իրավիճակում շատ ոլորտներում օրենսդրորեն ապահովված են քաղաքացիների հավասար իրավունքները, սակայն այդ իրավունքներից օգտվելու հնարավորություններն էապես տարբեր են: Սոցիալական ոլորտում ներկա վիճակի առանձնահատկությունն այն է, որ պետությունը հրաժարվում է սահմանադրորեն ամրագրված իր սոցիալական պարտավորությունները կատարելուց: Հետևանքը՝ ժողովրդագրական սրվող խնդիրներն են, ցածր աշխատավարձերն ու թոշակները, անմատչելի բուժապասարկումը, սոցիալական ապահովության անարդյունավետությունը:

ա. Աղքատության հաղթահարում⁴

- Սոցիալական պաշտպանության մեխանիզմների և վարչարարության բարոյականացում, դրանց վերահսկում:
- Նվազագույն աշխատավարձի սահմանում՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքի չափով:
- Նպաստների, կենսաթոշակների բարձրացում և դրանց սահմանում՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքի չափով:
- Առաջիկա տարիների ընթացքում աշխատատեղերի ստեղծում կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքը 40-50%-ով գերազանցող միջին աշխատավարձով:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում⁴

- Գործազրկության կրճատում և զբաղվածության արդյունավետ քաղաքականություն:
- Բնակչության եկամուտների իրական աճ, սոցիալական պաշտպանության համակարգի ամրապնդում:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում⁴

Գործազրկության կրճատման և բնակչության զբաղվածության աստիճանի ավելացման համար կուսակցությունը անհրաժեշտ է համարում.

- աշխատանքային նոր օրենսգրքի անհապաղ վերանայում,
- զբաղվածության ծառայությունների աշխուժացում աշխատատեղերի ստեղծման, վերամասնագիտացման ծառայությունների մատուցման և ինքնազբաղվածության շուկայի ձևավորման նպատակով,
- գյուղական աշխատուժի հանդեպ քաղաքականության մշակում և կիրարկում, աշխատանքային գերշահագործման վերացում, գործատու-աշխատող հարաբերությունների օրենսդրական վերահսկում, ոչ ֆորմալ հարաբերությունների իրավական վավերացում,
- անապահով խավերի աշխատանքային իրավունքի իրական պաշտպանություն,
- ստվերային զբաղվածների օրինականացում, նրանց իրավունքների պաշտպանություն և սոցիալական երաշխիքների տրամադրում:

դ. Առողջապահական համակարգի բարելավում⁴

Մատչելի և որակյալ առողջապահություն ապահովելու համար անհրաժեշտ է.

- Հայաստանի ողջ տարածքում առողջապահական ծառայությունները դարձնել ֆիզիկապես և ֆինանսապես մատչելի,
- ավելացնել ու նպատակային օգտագործել պետական բյուջեից առողջապահությանը տրամադրվող հատկացումները,
- կատարելագործել առողջապահական համակարգի կառավարումը, ներքին վարչարարությունը,
- իրականացնել մասնավոր հատվածում մատուցվող բժշկական օգնության և ծառայությունների գների պետական կարգավորման արդյունավետ մեխանիզմներ,
- որպես օգնություն՝ Հայաստան առաքված բուժօգնական և դեղորայքային միջոցներն օգտագործել նպատակային,
- բնակչության սոցիալապես անապահով խավերին մատուցել կայուն անվճար բուժօգնություն,
- վերանայել դեղերի ներկրման քաղաքականությունը, դեղորայքային շուկան հագեցնել արդյունավետ, անվտանգ և որակյալ դեղորայքով,
- պայքար մղել կեղծ դեղերի կիրառման դեմ. այդ նպատակով ուժեղացնել մաքսային հսկողությունը, կրճատել և իսպառ վերացնել մաքսանենգ ճանապարհով դեղերի ներմուծումը,
- վերականգնել 2001թ. հունվարից վերացված դեղերի շրջանառության վրա կիրառվող ավելացված արժեքի հարկի արտոնությունը,
- կրճատել և իսպառ վերացնել դեղերի ստվերային շրջանառությունը (ինչը գնահատվում է 70-75 տոկոսի սահմաններում),
- մշակել սոցիալապես անապահով խավերին դեղորայքով ապահովելու արդյունավետ քաղաքականություն:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում⁴

Բնակչության սոցիալական սահմանադրական իրավունքներն ապահովելու նպատակով կուսակցությունը կարևորում է.

- պարտադիր բժշկական ապահովագրության անհապաղ ներդրումը,
- առողջության ապահովագրման խրախուսման նպատակով օրենքով թույլատրել ՀՀ տնտեսվարող սուբյեկտներին իրենց հաշվին իրենց աշխատողների առողջության ապահովագրման առնվազն 30%-ը ֆինանսավորելու դեպքում այդ մասով նվազեցնել շահույթը՝ հաշվարկելով այն որպես ծախս,
- անցումը սոցիալական ապահովագրության կուտակային մեթոդներին,
- որակյալ բնակարանային, կոմունալ, որակյալ և անվտանգ տրանսպորտային ծառայությունների ապահովումը,
- ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությունը,
- հանուն Հայաստանի և Արցախի ազատության իրենց կյանքը կամ առողջությունը նվիրաբերածները, այդ թվում՝ այսօր դիրքերում կանգնածները, արժանի են պետական ամենաբարձր ուշադրության, արտոնությունների ու հոգատար վերաբերմունքի:

գ. Այլ

Արտագաղթն արդեն իսկ սպառնում է Հայաստանի Հանրապետությանը՝ որպես ինքնիշխան պետության գոյությանը, և կուսակցությունը գտնում է, որ արտագաղթի շեշտակի նվազմանը, արդեն արտագաղթածների հայրենադարձմանը և ներգաղթի ապահովմանը հնարավոր է հասնել միմիայն երկրում բարոյափոփոխական վիճակի բարելավման, ապագայի հանդեպ հավատի վերականգնման, ներհասարակական սոցիալական բնեռացման կրճատման, արդարադատության արդյունավետ համակարգի կայացման, կոռուպցիայի դեմ լուրջ պայքարի արդյունքում դրա ծավալների կտրուկ կրճատման և իսպառ վերացման, տնտեսության մեջ կատարյալ մրցակցության ապահովման շնորհիվ: Կուսակցության պատկերացմամբ՝ այս ամենին պետք է միտված լինի նոր, լեզիտիմ իշխանությունների ձևավորումը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում⁴

Բարձրագույն, միջնակարգ և միջին մասնագիտական կրթության ոլորտում նպատակային մասնագետներ պատրաստելու համար կուսակցությունը առաջարկում է կազմել այս ոլորտների և դրանց առանձին ուղղությունների զարգացման երկարաժամկետ ու նպատակային ծրագրեր: Անհրաժեշտ է խստացնել բարձրագույն կրթությանը ներկայացվող պահանջները, ինչը կվերացնի կամ կմեղմի միջակության դրսևորումներն ու պարզապես բարձրագույն կրթության վկայական ունենալու մղումները: Բարձրագույն և մասնագիտական կրթության ոլորտում պետք է կիրառել կրթական վարկերի տրամադրման մեխանիզմները: Անհրաժեշտ է խստացնել մասնավոր ԲՈՒՀ-երի ատեստավորման չափանիշները, կարգավորել հանրապետության տնտեսության համար անհրաժեշտ կադրերի պատրաստման գործընթացը: Պետք է խթանել միջին մասնագիտական կրթությունը՝ որպես հանրապետության տնտեսության զարգացման կարևոր գրավական: Կուսակցությունը Հայաստանի համար առաջնահերթ խնդիր է համարում սահմանադրական մակարդակով միջնակարգ կրթությունը որպես քաղաքացու պարտականություն ամրագրելը, կրթության մասին օրենքով կրթությունից դուրս մնալն անօրինական դիտելը, հանրապետության բոլոր քաղաքներում և գյուղերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքն ապահովելը, հաշմանդամ և այլ անապահով ընտանիքների երեխաների կրթական ծախսերը հոգալը: Անհրաժեշտ է կտրուկ պայքար մղել կրթության բոլոր մակարդակներում կոռուպցիոն երևույթներ և դրսևորումներ ծնող պատճառների դեմ:

4.7. Գիտության զարգացում

Գիտության զարգացումը մեզանում ոչ միայն ազգային հպարտության խնդիր է, այլև տնտեսական զարգացման գրավական: Գիտական հաստատությունները ժամանակակից սարքավորումներով հագեցման և նյութատեխնիկական ապահովման, գիտական աշխատողների վարձատրության բարձրացման, գիտական թեմաների ֆինանսավորման ծավալների մեծացման նպատակով անհրաժեշտ է աստիճանաբար ավելացնել հատկացվող միջոցները՝ դրանք հասցնելով պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 4-5%-ի, ինչպես նաև՝ գտնել դրանց ֆինանսավորման այլընտրանքային եղանակներ և աղբյուրներ: Հատուկ ուշադրություն պետք է հատկացնել կիրառական գիտության զարգացմանը՝ որպես երկրի տնտեսության զարգացման կարևոր գրավական:

4.8. Մշակույթ և սպորտ

Մշակույթն առաջնակարգ դեր ունի հայ ժողովրդի կյանքում՝ ոչ միայն ընդհանուր քաղաքակրթական մակարդակի, այլև ազգապահպանության առումով: Հետևաբար՝ պետության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի օրենսդրական համապատասխան դաշտի ձևավորման և գործնական քայլերի միջոցով ազգային մշակույթի զարգացման, ինչպես նաև՝ յուրաքանչյուր քաղաքացու մշակութային պահանջունքների բավարարման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Սպորտը՝ որպես Հայաստանի քաղաքացիների ներուժի դրսևորման, բնակչության առողջության պահպանման ու երկրի մարտունակության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը, պետք է ախտազերծվի կոռուպցիայից: Անհրաժեշտ է մշակել սպորտի զարգացմանը միտված պետական համալիր քաղաքականություն և բարձրացնել պետական բյուջեով սպորտի ֆինանսավորման ցուցանիշները:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Մարզերում ՓՄՁ զարգացումը աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Կուսակցությունը առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզերում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

ա. Համայնքների խոշորացում⁴

Համայնքների առանձնահատկություններից ելնելով՝ կուսակցությունն առաջարկում է իրականացնել տնտեսապես հիմնավորված համայնքների խոշորացմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումներ՝ ապահովելով բնակչության ծառայություններ մատուցելու հնարավորությունը և բնակչության համար հանրային ծառայություններից օգտվելու հասանելիությունը և տրանսպորտային հաղորդակցության հնարավորությունները:

բ. Ավագանու դերի բարձրացում⁴

Կարևորելով ավագանու դերը՝ կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է՝ «համայնքի ավագանու հանձնաժողովների» ինստիտուտի ներդրումը ՏԻՄ համակարգ՝ իր լիազորություններն արդյունավետ իրականացնելու և որոշումների կայացման գործընթացը բարելավելու նպատակով: Հանձնաժողովների ստեղծումը և դրանց գործունեության արդյունավետ կազմակերպումը կավելացնի ավագանիների դերը և կտա մի շարք առավելություններ, հատկապես մեծաթիվ կազմ ունեցող ավագանու դեպքում: Ընտրողների հետ համագործակցությունն ամրապնդելու համար ավագանու անդամները պետք է խրախուսեն քաղաքացիների մասնակցությունը ավագանու նիստերին՝ այսպիսով նրանց ներգրավելով համայնքային նշանակության հարցերի լուծման գործընթացում:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում⁴

Կուսակցությունը անհրաժեշտ է համարում համայնքների որոշակի խնդիրներ համատեղ լուծելու և ծախսերը նվազեցնելու նպատակով ստեղծել միջհամայնքային միավորումներ: Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁴

Անհրաժեշտ է բարելավել տեղական բյուջեների ձևավորման և ծախսերի արդյունավետ կառավարման մեթոդաբանական հիմքերը, որոնք կնպաստեն համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացմանը, լիազորությունների ամբողջական ֆինանսավորմանը և համայնքների կայուն զարգացմանը: Անհրաժեշտ է համայնքների ֆինանսական ինքնուրույնությունը մեծացնել, որը խթան կհանդիսանա ավելի արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն վարելու համար: Իսկ ներկա իրավիճակում համայնքների մեծ մասի, ընդ որում՝ համարյա բոլոր քաղաքների, բյուջեները կախված են կենտրոնից ստացվող դոտացիաներից:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից⁴

Կուսակցությունը գտնում է, որ համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցումը պետք է իրականացվի՝ արտոնելով համայնքներին սահմանելու տեղական որոշ հարկեր, բնապահպանական խնդիրներում որոշումներ կայացնելու լիազորությունների մեծացում, որը կնպաստի համայնքների ֆինանսական ինքնուրույնության և բնակչության էկոանվտանգության բարելավմանը:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Այսօր ՀՀ-ում գերակա և առավել կարևոր են մարզերի համաչափ զարգացման խնդիրները: Անհրաժեշտ է նվազեցնել տնտեսական, վարչական, սոցիալական, մշակութային գերկենտրոնացվածությունը և ներդրումային հոսքերը ուղղել դեպի մարզեր, որը կնպաստի աղքատության նվազեցմանը և կիթանի երկրի կայուն զարգացմանը:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում .

Ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված ժողովրդավարական ու իրավական պետություն կառուցելու նպատակով կուսակցությունը կարևորում է քաղաքացիական հասարակության ձևավորումը: Այդ առումով, քաղաքացիական հասարակության ինքնավարության ու ինքնակազմակերպման բարձր աստիճանը կարող է հասունացած խնդիրների արագ լուծման գրավականը լինել: Միաժամանակ, այն հասարակությանն ու անհատին պետության սահմանազանցումներից ու իրավազանցումներից պաշտպանելու լիարժեք երաշխիք է:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Թղթի վրա Հայաստանում ձևավորված են բավարար հիմքեր՝ ժողովրդավարության ինստիտուտների կայացման և ամրապնդման համար: Սակայն դրա համար անհրաժեշտ է նախևառաջ իշխանությունների քաղաքական կամքը և քաղաքացիական հասարակության գործուն մասնակցությունը: Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդման տեսական հնարավորությունների գործնական կիրառումը լինելու է առաջիկա լեզվիսիմ իշխանությունների առաջնայնություններից մեկը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

ԶԼՄ-ի մասին օրենքով ԶԼՄ-ի գործելու ազատությունը ոչ թե պետք է սահմանափակվի, այլ կանոնակարգվի, իսկ կանոնակարգմամբ չեն կարող սահմանափակվել ԶԼՄ-ի, լրագրողի տեղեկատվություն ստանալու ու տարածելու, խոսքի ազատության և այլ հիմնարար իրավունքները: Էլեկտրոնային կապուղիների տրամադրումը պետք է կատարվի առավելագույնս թափանցիկ: Հետևաբար, կուսակցության կարծիքով՝ անհրաժեշտ է.

- մշակել ԶԼՄ-ի սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենք, որը կբացառի ինչպես պետության, այնպես էլ որևէ կուսակցության կողմից հեռուստաընկերությունների սեփականության իրավունքը,
- բարենպաստ պայմաններ ստեղծել մասնավոր ԶԼՄ-ի զարգացման համար, պարզեցնել արտոնագրման գործընթացը, հստակորեն սահմանել առաջադրվող պահանջները,
- բարձրացնել լրագրողի սոցիալական և իրավական պաշտպանվածության աստիճանը,
- Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի մասնակցությամբ ձևավորել ԶԼՄ-ի գործունեությունը կանոնակարգող և վերահսկող անկախ հանձնաժողով:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորությունը պետք է ապահովված լինի բոլորի համար՝ առանց խտրականության ըստ սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնական դավանանքի, քաղաքական կամ այլ համոզմունքների, սոցիալական ծագման, ազգային պատկանելության, ունեցվածքային դիրքի, ծննդավայրի կամ այլ հատկանիշների: Մարդու իրավունքների պաշտպանի դերի բարձրացում, նրա անկախ և անաչառ գործելու համար իրավական և գործառնության նորմալ պայմանների ստեղծում:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Դատաիրավական բարեփոխումների նպատակը պետք է լինի արդարադատության մատչելիությունը, անկախ ու անաչառ դատական իշխանության ստեղծումը, որն ի գործու է ապահովելու ժողովրդավարության կայացումն ու տնտեսական բարեփոխումները:

ե. Ընտրական համակարգի բարելավում⁴

- Ազգային ժողովի ընտրությունների 100%-անոց համամասնական ընտրակարգի աստիճանական ներդրում,
- կուսակցական արհեստավարժ, հավասարակշռված ընտրական հանձնաժողովների ձևավորում,
- ընտրական միավորումների միջև իրական հավասարություն ապահովող մեխանիզմների ամրագրում,
- իշխանության կողմից ընտրությունների արդյունքների վրա ազդելու հնարավորության բացառում,
- ընտրական հանձնաժողովների գործունեության նկատմամբ իրական հասարակական վերահսկողության սահմանում, ընտրական գործընթացի լիակատար թափանցիկություն,
- ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների համար ավելի խիստ պատժամիջոցների սահմանում և կիրառում,
- պետական ֆինանսավորմամբ ԶԼՄ-ում թեկնածուների միջև հավասար պայմանների ապահովում,
- քաղաքացիների ընտրական մշակույթի զարգացման համապետական նպատակային ծրագրի ընդունում և իրականացում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁴

Անհրաժեշտ է ապահովել ազատ, արդար ընտրություններ, որոնց շնորհիվ տեղի կունենան քաղաքական կուսակցությունների վերասերում ու խոշորացում: Ազգային ժողով անցած կուսակցությունների կամ դրանց դաշինքների համար բարձրացնել պետական ֆինանսավորման հատկացումները: Թույլատրել առևտրային բանկերին՝ գրավի դիմաց ֆինանսավորել կուսակցությունների նախընտրական արշավները: Ազգային ժողովի ընտրություններն անցկացնել բացառապես համամասնական ընտրակարգով: Մշակել ՀՀ ԱԺ պատգամավորների էթիկային կանոններ և հետևանքի արդյունավետ մեխանիզմ:

Է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում

Կուսակցությունը գտնում է, որ ժողովրդի կամքի հետ չհաղորդակցվող ու այն հաշվի չառնող կառավարումն արատավոր ոգի ու որակ է փոխանցում կամ պարտադրում նաև տարբեր խավերի շահերի վերահամանն ու լուծմանը կոչված հասարակական կազմակերպություններին: Վերջիններիս գործունեությունը կարգավորող օրենսդրությունը պետք է՝

- ապահովի նրանց շահեկան տեղը հասարակական ու քաղաքական դաշտում,
- թույլ տա իրացնել նրանց առաքելությունը հանրային, այլ ոչ թե պետական իշխանության սանդղահարթակում,
- ստեղծի նրանց գործունեության համար անկախության, ազատության և ինքնուրույնության առավելագույն պայմաններ,
- ոչ շահեկան ու անցանկալի դարձնի իշխանության խամաճիկի կարգավիճակը և հակառակը՝ շահեկան դարձնի հասարակությանը ծառայելու կոչումը,
- մեծացնի դրանց մասնակցությունը հանրային վերահսկողության ու հսկողության ոլորտներում,
- նպաստավոր ենթահող պատրաստի մասնավորի կողմից քաղաքացիական հատվածի զարգացման նպատակով հիմնադրամներ ու դրամաշնորհներ նախաձեռնելու համար՝ վախի մթնոլորտից ձերբազատելով գործարարներին և բարեգործներին:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

Անհրաժեշտություն է օրենսդրորեն սահմանել քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորել դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:

Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությամբ՝ ընտրություններն անցկացնելիս կանանց համար հավասարապես ապահովել արդարացի և իրական հնարավորություններ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ընտրելու և ընտրվելու իրավունքն իրականացնելու համար:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

Պետության և հասարակության հավասարակշիռ ու ներդաշնակ փոխազդեցությունը պահանջում է շարունակել պետությունից քաղաքացիական հասարակության տարանջատմանն ուղղված բարեփոխումները՝ հանուն այդպիսի հասարակության ձևավորման և իշխանության գործունեության նկատմամբ նրա վերահսկողության սահմանման: Ժամանակակից ժողովրդավարությունն անբաժանելի է քաղաքացիական ազդեցիկ ու կազմակերպված հասարակությունից: Նման պետության գործունեությունը ենթադրում է իրենց իրավունքները պաշտպանելու և քաղաքական որոշումների կայացման և օրենսդրական գործընթացների հանրության մասնակցության ընթացքի վրա անմիջական ազդեցություն գործելու՝ քաղաքացիների համապարփակ հնարավորություն:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անվտանգության ապահովման գործում ՀՀ-ը պետք է ապավինի սեփական ուժերին, նախ և առաջ՝ սեփական զինված ուժերին, որի համար անհրաժեշտ է հասնել համընդհանուր զինվորական պատրաստությանը՝ անկախ սեռից: ՀՀ կանոնավոր բանակը կոչված է արտաքին ոտնձգություններից պաշտպանելու երկրի սահմանները, բանակը երաշխավորն է պետության անկախության և տարածքային ամբողջականության: Անհրաժեշտության դեպքում, համաձայն ՀՀ պաշտպանողական-հարձակողական համադրությի, բանակը Հայաստանի կենսական շահերի երաշխավորը կարող է լինել նաև պետության սահմաններից դուրս:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Հայապահպանության և ազգահավաք գործունեության արդյունավետության, ինչպես նաև ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրների, դրանց լուծման ուղիների գրավականը համախմբված, ծրագրային և համակարգված ռազմավարության իրականացումն է պետության, սփյուռքահայ համայնքների, հայագիտական կենտրոնների, հոգևոր կառույցների և աշխարհասփյուռ հայության հավաքական մասնակցությամբ: Այսօր արդեն իսկ առաջնահերթ է քաղաքական խիզախ դիրքորոշումներ որդեգրելը՝ ապահովելով կայուն, անվտանգ ու խաղաղ ապագան Հայաստան Աշխարհում՝ ռազմավարական ծրագրերի գերակայությամբ, պատմության ողբերգություններից դասեր քաղելով և դրանց կրկնությունը կանխելով:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Շրջակա միջավայրի պահպանման լավագույն քաղաքականությունը սկզբից ևեթ լարվածության օջախներից հնարավորինս խուսափելն է, քան դրանց դեմ հետագայում պայքարելը: ՀՀ-ում օրենսդրորեն պետք է ձևավորվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք բնապահպանական միջոցառումների կիրառումը տնտեսապես շահութաբեր դարձնեն տնտեսվարող սուբյեկտների համար:

Հարկային, ներդրումային, վարկային քաղաքականությունների ոլորտում պետությունը պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերի բնապահպանությանը նպաստող ձեռնարկությունների հանդեպ: Առաջարկվում է բնապահպանությանը նպաստող ապրանքների արտադրության, բնապահպանական տեսակետից մաքուր ապրանքների արտադրության մեջ մասնագիտացված ձեռնարկություններին տալ հարկային արտոնություններ՝ ի տարբերություն վնասակար արտադրություն ունեցող ձեռնարկությունների: Տարբերակված մոտեցում պետք է ցուցաբերել նաև բնօգտագործման վճարների գանձման ժամանակ:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության ապագան կախված է նոր սերնդից: Երիտասարդությունը պետք է դաստիարակվի մեր երազած պետության ու հասարակության ոգով: Հայաստանի երիտասարդության վարքագծում և հոգու մեջ պետք է հետևողականորեն սահմանվեն՝

- ոգու արժեքի գերակայություն՝ նյութապաշտության հանդեպ,
- ազատության արժեքի գերակայություն՝ անազատության հանդեպ,
- իրավունքի արժեքի գերակայություն՝ կամայականության հանդեպ,
- ժողովրդավարության արժեքի գերակայություն՝ մենիշխանության հանդեպ:

Կուսակցությունը հայ նոր երիտասարդությանը տեսնում է տարածաշրջանում և աշխարհում գերիշխող դիրք գրավելու հայտով՝ ինքնաճանաչման և ինքնահաստատման մաքառումներում, հոգևոր գործունեության, գիտության և սոցիալ-մշակութային ոլորտներում, մարզաշխարհում, հայրենի սրբազան սահմանների պաշտպանության դիրքերում (ՀՀ պաշտպանողական-հարձակողական համադրությին համահունչ), համացանցում: Համաշխարհային զարգացման քայլքին համապատասխան անհատին ներկայացվող նոր պահանջներից ելնելով՝ հնարավոր է նպաստել երիտասարդների շրջանում բնավորության այնպիսի գծերի ձևավորմանը, որոնց չափանիշները կգնահատվեն քաղաքակրթության վաղվա օրով և որոնք կդառնան հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման հիմքը: Այս առումով երիտասարդությանը պետք է դիտել որպես հետարդյունաբերական՝ հատկապես տեղեկատվական, հասարակարգի ձևավորմանը զուգընթաց նոր քաղաքակրթություն ձևավորող հիմնական ուժ:

3. «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» (ՀԱԿ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ

3.1. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԱԶԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Սայաթ Նովա 33, բն. 12
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 54-18-29
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ hrant.bagratyan@gmail.com
- Հիմնադրման տարեթիվը՝ 29.05.1997թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 04.06.1997թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 25.11.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 29.05.1997թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 14.01.2011թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրասովամիջոցները՝ 1997թ. «Մենք» պարբերական
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 11,
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 2641, որից
 - Կանայք՝ 32%
 - Երիտասարդներ՝ 44%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ չի մասնակցել:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Հանմագումար
- Հանրապետական վարչություն
- Կուսակցության նախագահ, վարչության նախագահ՝ Հրանտ Բագրատյան
- Կուսակցության քարտուղար՝ Կարինե Պետրոսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ով ընդունում է ծրագիրն ու կանոնադրությունը: Այլ հասրակական-քաղաքական կազմակերպության ներկայացուցիչը չի կարող լինել կուսակցության անդամ: Կուսակցության յուրաքանչյուր անդամ ընդգրկվում է որևէ կառուցվածքային կամ տարածքային ստորաբաժանման մեջ, մասնակցում նրա աշխատանքներին և մոծում անդամավճար, որը ոչ պակաս է քան նվազագույն ամսական աշխատավարձի 0.5 մասը:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՌՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցությունը ՀՀ քաղաքացիների ազատորեն դրսևորված կամքով ստեղծված հասարակական-քաղաքական կազմակերպություն է: Կուսակցության գաղափարական հիմքերը հիմնվում են հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- Մարդու ազատության և զարգացման պայմանների ապահովումը պետության հիմնական հոգսն է:
- Պետության դերը հասարակության կյանքի կարգավորման, այլ ոչ թե կազմակերպման մեջ է:
- Ազգային գաղափարախոսությունն ազգի կենսագործունեության, հասարակության առաջադիմության և պետության գոյատևման կարևոր պայմանն է: Գաղափարախոսության մեջ ազգային կարող է լինել այն, ինչն իրենից նաև համամարդկային արժեք է ներկայացնում:
- Ազգայինը միմիայն անցյալում ձեռք բերածի վկայակոչման շահարկումները չեն: Այն նախնառաջ առաջադիմական հասարակության կառուցման, պետական շինարարության և ժամանակակից մտածելակերպով մարդկանց դաստիարակության անխոնջ, երկարատև ու տքնաջան աշխատանքն է:
- Միջնորդելով հասարակության առաջադիմության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման գործընթացին՝ պետությունը պետք է նվազագույնի հասցնի իր՝ որպես արտադրական գործունեության արդյունքների սեփականատեր հանդես գալը:
- Ապրանք արտադրողի ֆունկցիան պետությունը կարող է ստանձնել միայն բացառիկ՝ օրենքով սահմանված դեպքերում:

- Հասարակական կյանքի բոլոր մյուս ոլորտները պետք է կազմակերպեն ազատ մարդիկ, մարդկանց խմբերը և տնտեսավարող սուբյեկտները:
- Քաղաքական ու տնտեսական իրավունքն ու պատասխանատվությունը պետք է հավասարակշռվեն միևնույն սուբյեկտի մոտ:

3.2. Նպատակները և խնդիրները

Կուսակցության գործունեության նպատակն է նպաստել ՀՀ քաղաքական և տնտեսական հզորացմանը, ժողովրդավարական հասարակարգի կառուցմանը, մասնավոր սեփականության վրա հիմնված արդյունավետ տնտեսության ձևավորմանը և ժողովրդի բարեկեցության ապահովմանը:

Կուսակցությունն իր կարևորագույն խնդիրներից մեկը համարում է Հայաստանի ներքաղաքական կյանքում ազատական գաղափարախոսության հիման վրա քաղաքական ուժ ձևավորելը՝ ստանձնելով չարաշահումներից մարդկանց շահերը պաշտպանելու պատասխանատվությունը:

Կուսակցությունն իր առջև խնդիր է դնում ձևավորել այնպիսի տնտեսական և հասարակական կարգեր, որոնք հավատարիմ պետք է մնան հետևյալ սկզբունքներին՝

- քաղաքականության և սոցիալ-տնտեսական իրականության տարանջատման մերժում,
- մարդու տնտեսական ակտիվության ազատության ապահովում, պետական հոգատարության կոնցեպցիայի կտրուկ սահմանափակում,
- մասնավոր սեփականության, անհատ ձեռներեցության դերի և տեսակարար կշռի շեշտակի աճի նպաստում,
- պետության՝ որպես ապրանքարտադրողի ֆունկցիայի մերժում, բացի օրենքով նախատեսված դեպքերից:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Ազատական

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Քաղաքական միակողմանի կողմնորոշվածությունը վտանգավոր է:
2. Որքան ավելի է տնտեսական կապերի քանակը, որքան շատ երկրներից ենք մենք կախված տնտեսապես, այնքան ավելի անկախ է պետությունը:
3. Ելնելով Հայաստանի երկրաքաղաքական դրությունից, արդյունավետ և ընդունելի կարող է լինել ավելի մեծ երկրաքաղաքական համակարգում ինտեգրված տարածքային անվտանգության համակարգը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

- Հայաստանի ռազմա-քաղաքական ապահովվածությունը և Արցախի ինքնորոշման իրավունքը երաշխավորելը մեր պետության արտաքին քաղաքականության հիմնախնդիրներն են:
- Ժամանակակից աշխարհում նկատելի են գլոբալիզացիայի և բազմաբևեռանի երկրաքաղաքական կենտրոններից միաբևեռանի կենտրոնի անցնելու միտումները: Դա մեզ անհոգ ու երջանիկ ապագա չի խոստանում: Բայց դա նշանակում է, որ քաղաքական միակողմանի կողմնորոշվածությունը վտանգավոր է:
- տնտեսական ինտեգրացիայի գործընթացների առաջանցիկ լինելը և դրա հետ կապված տնտեսական ու քաղաքական շահերի համադրման պարտադիր լինելը: Այստեղ պետք է ելնել որքան ավելի է տնտեսական կապերի քանակը, որքան շատ «երկրներից ենք մենք կախված տնտեսապես, այնքան ավելի անկախ է պետությունը» սկզբունքից:
- Ռազմավարական գործընկեր (ներ) ընտրելու հիմնական չափանիշը մեր պետության ներսում հասարակության համախմբվածության ապահովումն է: Կարևորելով տարածքային անվտանգության հարցերը, պետք է, այդուհանդերձ, հիշել՝ Հայաստանի երկրաքաղաքական քաղաքական դրությունն այնպիսին է, որ արդյունավետ և ընդունելի կարող է լինել այնպիսի մեծ երկրաքաղաքական համակարգում ինտեգրված տարածքային անվտանգության համակարգը:

ա. Եվրաինտեգրում⁵

Հրատապ է գիտատեխնիկական համագործակցության ծավալումը Եվրոպայի հետ:

բ. ԱՊՀ⁵

Կուսակցությունը կարևորում է համագործակցության ծավալումը ԱՊՀ-ի հետ:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

Կուսակցությունը կարևոր է համարում համագործակցությունը ՀԱՊԿ-ի հետ:

դ. ՀԱԴԿ (NATO)⁵

Կուսակցությունը կարևոր է համարում համագործակցությունը ՀԱԴԿ-ի հետ:

ե. ԱՄՆ⁵

Կարևորում ենք համագործակցության ծավալումը ԱՄՆ-ի հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն⁵

Հրատապ է համագործակցության ծավալումը Ռուսաստանի հետ:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁴

Կուսակցությունը կարևորում է Ցեղասպանության ճանաչումը և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ⁵

Կուսակցությունը կարևորում է Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ճանաչումը, Հայաստան – Ադրբեջան-Ղարաբաղ եռակողմ հարաբերությունների հաստատումը:

թ. Իրան⁵

Կարևոր է հատկապես Իրանի, Ռուսաստանի և Վրաստանի ներդրումային շուկաներում առաջընթացի ապահովումն ու էական դիրքերի նվաճումը:

ժ. Վրաստան, այդ թվում ջախախտության հիմնախնդիրներ⁵

Կուսակցությունը կարևորում է ջախախտության մշակութային ինքնության պահպանումը:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Աշխարհի հայության հավաքական կարողությունն անխորտակելի ուժ է հայ ժողովրդի առջև դրված՝ ազգային և տնտեսական հարցերը լուծելու համար: Կուսակցությունը կարևորում է բարի կամքի դեսպանի ինստիտուտի հիմնումը սփյուռքահայության շրջանակներում: Միայն այս դեպքում է հնարավոր ապահովել վերջիններիս վստահությունը Մայր Հայրենիքում ներդրումներ կատարելու համար: Ոչ մի պետական կամ պետության հովանավորությամբ գործող կառույց չպետք է սփյուռքահայության հետ շփվելու մենաշնորհ ունենա: Ոչ մի սփյուռքահայ չի կարող իրեն վերագրել Հայաստանի հետ շփվելու մենաշնորհը: Նկատի ունենալով սփյուռքահայ գաղութների բազմաթիվ լինելը, այդ գաղութներում առկա օբյեկտիվ բազմազանությունը, այն, որ սփյուռքահայության ուժը ոչ միայն և ոչ այնքան առանձին երևելիներն են, այլ միլիոնավոր քաղաքական ու տնտեսական կապեր ունեցող սփյուռքն ամբողջությամբ, հայոց պետությունը պետք է օժանդակի և խրախուսի սփյուռքահայ գաղութներում տարածքային սկզբունքով ընտրովի բարի կամքի դեսպանների ինստիտուտի ստեղծմանը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթություններ⁵

1. Մեփականության տարանջատում պետությունից:
2. Բիզնեսի դուրս մղում կառավարման համակարգից:
3. Նախագահի, կառավարության անդամների և պատգամավորների դուրս մղում բիզնեսից:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում⁵.

Տնտեսական զարգացման նպատակը վերարտադրության սպառման և առաջարկի միջև հարմոնիայի ապահովումն է: Հետևաբար, հարստության չափից ավելի կենտրոնացումը տանում է սպառման կրճատման և տնտեսական անկման:

Ֆինանսական համակարգում առկա են գործիքներ (բազմակի ապահովագրումը, «հեջ-ֆոնդերը» և այլն), որոնք անտեղի մեծացնում են լրացուցիչ ՀՆԱ-ն: Այս պարագայում, ֆինանսական ոլորտի արագ զարգացումը հաճախ տեղի է ունենում տնտեսական իրական հատվածի կրճատման ֆոնի վրա:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁵

Դրամավարկային համակարգի հիմքում պետք է լինի տնտեսական աճ: Դրան հասնելու համար անհրաժեշտ է բարձրացնել տարադրամի պահուստները, ստերիլիզացնել տրանսֆերտները, իջեցնել բանկերի կապիտալի նկատմամբ պահանջները, բացառել վերավարկավորումն ու վարկերի դուրս գրելը, անցում կատարել ունիվերսալ բանկային համակարգից՝ մասնագիտացվածի, թույլ չտալ ազգային արժույթի համեմատական և հարաբերական արժևորումը, տարանջատել բանկային կարգավորումն ու վերահսկողությունը, կենտրոնական բանկի իրավասությունից հանել ֆոնդային բորսայի և ապահովագրության գործերի կառավարումը:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁵

Եկամուտները պետք է կազմեն ՀՆԱ-ի 24%-ից ոչ պակաս, այդ թվում հարկային եկամուտները՝ 22%: Պետք է վերացնել մատակարարներին տրվող սուբսիդիաները, արգելել բյուջետային կազմակերպությունների ավանդները, բարձրացնել առողջապահության ֆինանսավորումը մինչև ՀՆԱ -ի 4% -ը, կրթությունը՝ 5% և գիտությունը՝ 1% (յուրաքանչյուր տարի ավելացնելով 0,25%): Պետք է ֆինանսավորումն իրականացնել ըստ ֆինանսավորվող օբյեկտի, ոչ թե՝ ծառայություն մատուցող կառույցի: Անհրաժեշտ է պետական գնումների առնվազն կեսն իրականացնել ՓՄՁ-ների միջոցով, ինչպես նաև ստեղծել հնարավորություններ, որպեսզի ՀՀ բնակչության 40%-ը կամ մոտ 500 հազարը լինի ակտիվ ձեռներեց:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ⁵

Պետք է բացառել արտոնությունները, հաշվետվությունները պետք է լինեն միայն էլեկտրոնային, պետք է երաշխավորել ԱԱՀ վերադարձը, ֆիզիկական անձանց համար՝ օդանավակայանում: Պետք է հիմնել այլընտրանքային (մասնավոր) մաքսատուն: Պետք է ընդգծված սահմանազատել խոշոր բիզնեսի և ՓՄՁ-ների հարկման դրույքաչափերը, սահմանել պրոգրեսիվ եկամտահարկի համակարգ՝ բարձր եկամուտների մինչև 35%-ը հարկելով, շահութահարկը պետք է ցածր լինի եկամտահարկից, բյուջեում պետք է էապես ավելացնել գույքահարկի տեսակարար չափաբաժինը:

դ. Արդյունաբերության զարգացում⁵

Անհրաժեշտ է հանքերի գիշատչային շահագործման դադարեցում, բարձր տեխնոլոգիաների զարգացում, դեղագործության և բժշկական սարքաշինության զարգացում, գիտելիքահեն ճյուղերի բարգավաճում: Կուսակցությունը կարևորում է նաև բիզնես ինկուբատորների/տեխնոպարկերի (առաջնային տեղը տրվում է տեխնոպարկերին) ներդրման, հեռանկարային կլաստերների (պետությունը օրենքով սահմանված կարգով պետք է մասնակցի նոր, հեռանկարային կլաստերների ձևավորմանը, որոնք հետագայում պարտադիր կարգով պետք է ենթակա լինեն օտարման) զարգացման և ավելացված արժեքի բարձրացման (առաջնային պետք է համարվեն այն ճյուղերը, որոնցում գերակշռում է ավելացված արժեքը) արդյունաբերական զարգացման ուղղությունները:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Անհրաժեշտ է գյուղատնտեսական կոոպերացիայի (փոխօգնության տարբերակով) զարգացում, 4 «սեզոնային հագուստների» տեսության կիրառում: Կուսակցությունը գտնում է նաև, որ անհրաժեշտ է՝

- որ այդ օղակներում աշխատեն այն գյուղացիները, որոնց հողերում կկատարվեն համապատասխան աշխատանքներ,
- ստեղծել փոխօգնության կոոպերացիաների համատարած ցանց, որոնք կլուծեն ոռոգման, ագրոսպասարկման, արտադրված գյուղմթերքների մշակման ու վաճառքի խնդիրները,
- խթանել մանր, պարզիալ գյուղատնտեսությունը, սահմանափակել խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների ստեղծումը:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁵

Անհրաժեշտ է տեղեկատվական և «փափուկ» տեխնոլոգիաների զարգացում:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁵

Կուսակցությունը կարևորում է նոր ատոմակայանի կառուցումը, քամու էներգիայի օգտագործումը, հիդրոակումուլյացիոն կայանների կառուցումը: Ըստ այդմ, կուսակցությունն առանձնացնում է հետևյալ ուղղությունները.

- Արևի էներգիայի կիրառումը տնտեսության մեջ՝ պետական համաֆինանսավորմամբ: Կուսակցությունը գտնում է, որ տարեկան հնարավոր է 40-50 մլրդ էլեկտրոէներգիա ստանալ՝ արևի էներգիայի կիրառմամբ:
- Ատոմակայանի նորոգումը՝ նախկին հզորության վերականգնմամբ: Կուսակցությունը գտնում է, որ այսօր չկա անումային էներգիայի հզորությանը հավասար այլընտրանքային հնարավորություն, հետևաբար, կարևորում է ատոմային էներգիայի ռազմավարական նշանակությունը:
- Էներգախնայողությունը՝ մինչև երկու անգամ ելքերի կրճատումով:

ը. Զբոսաշրջության զարգացում⁵

Պետք է զբոսաշրջիկների թիվն ավելացնել այսօրվա 600 հազարից մինչև 4 մլն մարդ, ազգային ավիաընկերության մենաշնորհը բացառել և վերացնել բոլոր տեսակի լիցենզիաներն ու արտոնությունները հանգստի գոտիներում:

թ. Ներդրումների խթանում⁵

Անհրաժեշտ է ներդրումների հավասար (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) խթանման քաղաքականություն իրականացնել: Ընդ որում, պետք է՝ խրախուսել ներքին ներդրումները, հիմնական կապիտալի վրա կատարած ծախսերը համատարած ազատել շահութահարկից, վերացնել հարկային բոլոր կանխավճարները և բարելավել բիզնես միջավայրը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում⁴

Անհրաժեշտ է նախևառաջ բացառել խոշորների ձեռներեցների ու մենաշնորհների արտոնությունները, պարզեցված հարկի մեխանիզմի կիրառման միջոցով մշտապես իջեցնել փոքր բիզնեսի շեմը և դրանով ընդլայնել ՓՄՁ-ների դերը տնտեսության մեջ, ինչպես նաև մենաշնորհներից զանձել «մոնոպոլ» գերշահույթի մինչև 50-90 %-ը:

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁴

Կուսակցությունը խնդրի հիմնական լուծումը տեսնում է տնտեսության ապակենտրոնացման, ինչպես նաև՝ հարկային բարեփոխումների և հարկային վարչարարության գործառույթների կատարելագործման մեջ:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁵

Անհրաժեշտ է այլընտրանքային դատարանների ստեղծում, բիզնեսի, սեփականության և կառավարման տարանջատում:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

Պետության սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղված լինի անապահով խավին նպատակամետ օգնություն ցուցաբերելուն՝ ըստ կարիքավորության աստիճանի, մատաղ սերնդի դաստիարակության, կանանց խնդիրների լուծման և ծնելիության խրախուսման:

ա. Աղքատության հաղթահարում

Պետական սոցիալական քաղաքականության նպատակն անապահով խավին օգնելն է, այլ ոչ թե ունևորներին անապահով դարձնելը: Մեկից վերցնելով և մյուսին տալով՝ մենք, ի վերջո, ունենում ենք ոչ թե երկու ունևոր, այլ երկու չունևոր:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում⁵

Կուսակցությունը կարևորում է.

- «Բարձր եկամուտ՝ Բարձր հարկ» սկզբունքը:
- Նվազագույն և միջին աշխատավարձերի էական մոտեցումը: Կուսակցությունը գտնում է, որ նվազագույն աշխատավարձը պետք է լինի ավելի, քան նվազագույն սպառողական զամբյուղը և կազմի միջին աշխատավարձի ոչ պակաս, քան 70%-ը:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում⁴

Սոցիալական քաղաքականությունը երբեք չի կարող ուղղված լինել անբան և անաշխատ մարդկանց կենսախնդիրների լուծմանը: Անհանդուրժելի է մարդկանց մեջ սերմանել այն, որ պետությունը պարտավոր է հոգալ նրանց կարիքները: Այդ առումով, կուսակցությունը գտնում է, որ պետք է մշտապես իրականացնել վերապատրաստման դասընթացներ՝ զբաղվածության ապահովման և գործազրկության նվազեցման խնդիրների շուրջ, ներդնել սոցիալական կոհերենթության սկզբունքներն ու զաղափարախոսությունը, մշտապես անցկացնել հանրային աշխատանքներ, կտրուկ ավելացնել անհատ ձեռներեցության հնարավորությունները:

դ. Առողջապահական համակարգի բարելավում⁵

Պետք է ֆինանսավորել հիվանդին, այլ ոչ թե բուժհիմնարկությանը: Պետական օգնությունն առողջապահության և այլ բնագավառներում պետք է իրականացվի բյուջեով հաստատված ծրագրերի շրջանակներում:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում⁵

- Կենսաապահովագրության հիմքը պետք է լինի գործարարի ցանկությունը՝ անկախ սեփականության ձևից:
- Կենսաթոշակային դրամական միջոցները չպետք է տեղաբաշխվեն իբրև բանկային դեպոզիտներ, այլ պետք է պետության հովանավորչության ներքո ներդրվեն սոցիալական արտադրության ենթակառույցների մեջ:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում⁵

Արմատական բարեփոխման կարիք ունի բարձրագույն կրթության համակարգը: Պետական կառավարման օբյեկտը պետք է լինի կրթությունը, այլ ոչ թե բուհերը (անկախ սեփականության ձևից):

- Պետք է ընդունել պետպատվերի ոչ մշտական համակարգային մոտեցումը՝ կապված ուսանողության ուսումնական շրջանում առաջընթացի պայմաններից:
- Հարկավոր է դասավանդման և գնահատման ոլորտների տարանջատում:

4.7. Գիտության զարգացում⁵

Անհրաժեշտ է թեմատիկ ֆինանսավորում իրականացնել գիտության մեջ: Պետք է գիտության ֆինանսավորման ավելացում ներկայիս 0.25% -ից մինչև ՀՆԱ-ի 3%: Անհրաժեշտ է նաև ԲՈՒՀ-ական և ակադեմիական հաստատությունների միավորում համալսարանական բազայի հիման վրա: Պետք է ապահովել միջազգային չեզոք փորձաքննություն:

4.8. Մշակույթ և սպորտ⁴

Հզոր տնտեսությունը և մշակույթը 20-րդ դարի վերջի հիմնական հաղթաթղթերն են: Հայ ժողովրդի գլխավոր հարստությունը՝ ստեղծելու և ստեղծագործելու կարողությունն է, նորագույն տեխնոլոգիաներին հասու լինելը և եղածի վրա մի բան ավելացնելու ունակությունը: Բնական ռեսուրսներով համեմատաբար աղքատ լինելը երիցս կարող է փոխհատուցվել մեր աշխատասեր ժողովրդի մշակութային և գիտատեխնիկական հզոր պոտենցիալի հաշվին:

Կուսակցությունը մշակույթի ոլորտում կարևորում է ծրագրային ֆինանսավորումը, գեղարվեստական և վարչարարական կառավարման տարանջատումը, համայնքային գնահատման համակարգի ներդրումը:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում⁵

Կուսակցությունը կարևորում է տեղական ինքնակառավարման ընտրությունների ժամանակ առանձին բնակավայրերում, տեղեկան առանձնահատկությունները հաշվի առնելով, առանձին դեպքերում նշանակովի պաշտոնների համակարգի խթանման քաղաքականությունը: Կուսակցությունը կարևորում է տեղական ինքնակառավարման համակարգում ավագանու դերի բարձրացումը՝ քվոտային համակարգի հիման վրա: Կուսակցությունը գտնում է, որ ավագանին պետք է ավելի լայն հնարավորություններ ստանա, քան գյուղապետը:

ա. Համայնքների խոշորացում

Կուսակցությունը դեմ է համայնքների խոշորացման գործընթացներին:

բ. Ավագանու դերի բարձրացում⁵

Կուսակցությունը կարևորում է ավագանու դերի բարձրացումը: Կուսակցությունը գտնում է, որ ավագանին պետք է ավելի լայն իրավունքներ ունենա քան գյուղապետը (քաղաքապետը):

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁵

Կուսակցությունը կարևորում է համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացումը հնարավորության սահմաններում՝ միննույն ժամանակ արժևորելով պետական սուբսիդիաների դերի ուժեղացումը:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից

Կուսակցության կարծիքով պետք է եկամտահարկի մի մասը փոխանցել տեղական ինքնակառավարման համակարգերին:

զ. Սարգերի համաչափ զարգացում⁵

Կուսակցությունը գտնում է որ՝

- գույքահարկը պետք է տարբերակվի ըստ գույքի գտնվելու վայրի,
- պետական ներդրումները պետք է առավելագույնս կատարվեն մարզերում,
- Երևանի կենտրոնի շինությունները պետք է լրացուցիչ հարկվեն:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Բազմակուսակցությունը, բազմակարծությունը, ինչպես նաև խոսքի, մամուլի և խղճի ազատությունը ժողովրդավարության անհրաժեշտ տարրերն են: Ժողովրդավարության իրական երաշխիքը պետական իշխանության տարբեր ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումն է:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունը գտնում է, որ մարդու ազատության և նրա զարգացման պայմանների ապահովումը պետության հիմնական հոգան է:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում⁵

Անհրաժեշտ է իրականացնել սահմանադրական փոփոխություններ:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում⁵

Անհրաժեշտ է այլընտրանքային դատական համակարգի հիմնում:

ե. Ընտրական համակարգի բարելավում⁵

Պետք է համամասնական ընտրական համակարգի բարելավմանն ուղղված բարեփոխումներ իրականացնել և բացառել մեծամասնական ընտրական համակարգը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁵

Կուսակցությունը կարևորում է կուսակցությունների պետական ֆինանսավորումը:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում

Կուսակցությունը գտնում է, որ այս ոլորտը կարիք ունի ամրապնդման և օրենսդրական կարգավորման:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

Կուսակցությունը կոչում է հանդես գալիս կանանց շահերի պաշտպանությանն ու կանանց նկատմամբ բռնությունների դեմ ուղղված բոլոր նախագծերին:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն⁵

Կուսակցությունը հանրության մասնակցությունն օրենսդրական գործընթացներում տեսնում է միայն ընտրությունների միջոցով:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետությունը պատասխանատու է երկրի և քաղաքացիների պաշտպանության համար: Երկրի պաշտպանությունն իրագործելու համար բավարար զինված ուժերի և ռեսուրսների ապահովումը պետության պարտականությունն է: Կուսակցությունը բացառում է պետական համակարգից դուրս ինքնուրույն զինված խմբերի, ռազմական կառույցների, ինչպես նաև մատաղ սերնդի օրենքով չսահմանված ռազմա-հայրենասիրական դաստիարակության և նմանատիպ գործունեությունը:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Արտագաղթ ծնող պատճառների վերացում: Ծնելիության, բնական աճի խրախուսման քաղաքականության վարում:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Հողի, ջրի և հանքային պաշարների հաշվեկշիռների կազմում, դրանց նկատմամբ կենտրոնացված վերահսկողության սահմանում, բնական ռեսուրսների օգտագործման կոնցեսիաների կիրառում, անտառապատման լայնածավալ ծրագրերի իրականացում:

3.2. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 12
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+374 10) 27-53-09, (+374 93) 13-32-92
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ zhoghghay@gmail.com
- Հիմնադրման տարեթիվը՝ 07.03.1998թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 20.03.1998թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 04.09.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 07.03.1998թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 10.04.2010թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝ «Հայկական Ժամանակ» օրաթերթ, 07.03.1998թ.
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ Մարզային կառույցներ՝ 11, Մասնաճյուղեր՝ 38
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 4874, որից
 - Կանայք՝ 27%,
 - Երիտասարդներ՝ 33%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 0

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 19 անդամ
- Վերստուգիչ հանձնաժողով
- Կուսակցության նախագահ՝ Պետրոս Ստեփանի Մակեյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, որն ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը և մասնակցում կուսակցության գործունեությանը: Կուսակցության անդամ դառնում են սեփական դիմումի հիման վրա, քաղաքական խորհրդի կամ նրա կողմից լիազորված կուսակցության տարածքային կազմակերպությունների որոշմամբ: Կուսակցության անդամն ինքն է որոշում իր անդամավճարի չափը:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ժողովրդավարական իրավական պետության հաստատում, որի կայացման գլխավոր պայմանը ժողովրդի ազատ կամքի արտահայտումն է:
- Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովում՝ պետական մարմինների և այլոց ունեցություններից ժամանակակից դատական և այլ իրավական մեխանիզմների ներդրման միջոցով:

Այս նպատակների իրականացման միջոցը ընտրական համակարգի արմատական բարեփոխումն է: Պետք է Շարժման և Անկախության շրջանի իմաստավորված ճանապարհով ամբողջացնել և հասարակությանը ներկայացնել արդիական, իրատեսական, համակարգված քաղաքական այլընտրանք, որի շուրջը համախմբված հասարակությունը կկարողանա անմիջական մասնակցություն ունենալ երկրի կառավարման գործընթացներում:

3.1. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Աջ - կենտրոնամետ

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայաստանը պետք է այնպիսի անվտանգության համակարգի մաս կազմի, որը իսկապես կարող է ապահովել իր անվտանգությունը և համապատասխանի նրա քաղաքական դիրքորոշումներին:
2. Անհրաժեշտ է վերացնել օտարերկրյա պետությունների, դրսից ուղղորդվող քաղաքական և այլ ուժերի ազդեցությունը Հայաստանի արտաքին քաղաքականության վրա:
3. Պետք է մշակել արտաքին քաղաքականության հեռանկարային հայեցակարգ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Անհրաժեշտ է արտաքին քաղաքականության խնդիրներ դարձնել երկրի տնտեսության սպասարկումը, մասնավորապես՝ կոմունիկացիաների, արտաքին շուկաների ապահովումը և պաշտպանությունը:

ա. Եվրախնտեզրում

Հայաստանը, համարելով Եվրոպայի մաս և որդեգրելով համամարդկային արժեքների համակարգ՝ որպես ռազմավարական նպատակ արձանագրել անդամակցությունը Եվրամիությանը:

բ. ԱՊՀ

ԱՊՀ համագործակցության շրջանակներում պետք է խորացնել Հայաստանի ինտեգրացիոն գործընթացը միջազգային և տարածաշրջանային տնտեսական համակարգերում:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Անընդունելի է Հայաստանի մասնակցությունը ռազմաքաղաքական համակարգերի, որոնք գտնվում են տարբեր անվտանգության համակարգերի ջրբաժանում:

դ. ՀԱՊԿ (NATO)

Որպես Հայաստանի անվտանգությունը ապահովող համակարգ կարող է հանդես գալ NATO-ն կամ նրա հովանու տակ գտնվող այլ համակարգեր:

ե. ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ պետք է հետևողականորեն զարգացնել հարաբերությունները:

զ. Ռուսաստանի Դաշնություն

ՌԴ-ի հետ անհրաժեշտ է հարաբերությունների բազմակողմանի խորացում, ծավալուն տնտեսական կապերի հաստատում և զարգացում:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

1915թ. Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայ ժողովրդի ցեղասպանությունը, ինչպես մարդկության դեմ իրականացված յուրաքանչյուր ոճիր, պետք է դատապարտվի համաշխարհային հանրության կողմից: Թուրքիայի հետ պետք է փոխշահավետ տնտեսական կապերի ձևավորում: Անհրաժեշտ է ստեղծել իրական նախադրյալներ՝ Թուրքիայի հետ բնականոն հարաբերություններ հաստատելու և սահմանները բացելու համար:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում պետք է վերադառնալ ինքնորոշման սկզբունքի վրա հիմնված մոտեցումներին՝ ապացուցելով, որ տարածքային ամբողջականության մրցակցային սկզբունքը կիրառելի չէ Լեռնային Ղարաբաղի դեպքում:

թ. Իրան

Խիստ անհրաժեշտ է խորացնել բարիդրացիական և փոխշահավետ հարաբերություններն Իրանի հետ:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁵

Հարաբերությունները Վրաստանի հետ պետք է խորացնել տնտեսական և այլ ոլորտներում՝ նպատակ ունենալով դրանք հասցնել ռազմավարական դաշնակցի հարաբերությունների, ինչը կբերի ջավախահայության հիմնախնդիրների կարգավորմանը:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Հայաստանի և Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությամբ անհրաժեշտ է մշակել Հայաստան-Սփյուռք կապերի հարաբերությունների հայեցակարգ՝ շեշտը դնելով ընդհանուր ազգային նպատակների հստակեցման և կառուցվածքային գործուն մեխանիզմների ձևավորման վրա: Բոլոր հայերին պետք է միավորեն ոչ թե քաղաքական հայացքները կամ կուսակցությունները, այլ ազգային մշակույթը, Հայաստանի զարգացման շահը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Պետք է վերականգնել և զարգացնել ժողովրդավարական հաստատությունների կայացման գործընթացները:
2. Պետք է ապահովել անձի իրավական պաշտպանվածությունը, քաղաքացիների գույքային իրավունքներն ու սեփականության անձեռնմխելիությունը:
3. Անհրաժեշտ է բարձրացնել գործադիր իշխանության մարմինների պատասխանատվությունը և աշխատանքի արդյունավետությունը՝ վերացնելով վարչական ավելորդ օղակները:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է հստակեցնել տնտեսական ռազմավարության առաջնահերթությունները, քանի որ տնտեսական համակարգը շարունակում է սպառել 1990-98թթ. բարեփոխումների արդյունքները, ինչը արձանագրված է նաև միջազգային կազմակերպությունների գնահատականներում:

ա. Դրամավարկային քաղաքականություն

Կարևոր նշանակություն ունի շուկայի հետ առնչություն չունեցող ֆինանսական հոսքերի բացառումը, արտարժույթի իրական փոխարժեքի ձևավորման շուկայական մեխանիզմի վերականգնումը՝ բացառելով առանձին տնտեսական խմբերի ազդեցությունը Կենտրոնական բանկի գործունեության վրա:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք

Տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունի պետական բյուջեի մուտքերի տեսակարար կշռում ուղղակի հարկերի մասնաբաժնի էական մեծացումը:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Հարկային քաղաքականությունը պետք է ուղղորդել մի կողմից՝ արտադրության խթանմանը և ներդրումների խրախուսմանը, մյուս կողմից՝ բյուջեի մուտքերի կատարմանը: Անհրաժեշտ է էապես իջեցնել ավելացված արժեքի հարկի դրույքաչափը՝ վերացնելով դրա գանձումը սահմանային շրջաններում: Անհրաժեշտ է նվազեցնել Հայաստանում չարտադրվող ապրանքատեսակների ներկրման մաքսատուրքերը:

դ. Արդյունաբերության զարգացում

Պետք է ճշտել արդյունաբերության զարգացման առաջնահերթությունները և պետական երաշխիքների միջոցով աջակցել միջազգային շուկաներում մրցունակ ապրանքների արտադրությանը:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Խիստ կարևոր է գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ոլորտում գոտիական հարկային քաղաքականության կիրառումը, գյուղատնտեսությանը տրված հարկային արտոնությունների պահպանումը:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

Գենետիկորեն ունենալով մտավոր ներուժ՝ պետք է իրականացնել ոչ թե իմիտացիոն, այլ իրական ինովացիոն ներդրումային քաղաքականություն, որով կկանխվի երիտասարդ կադրերի արտահոսքը զարգացած երկրներ:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում

Պետությունը պետք է վերահսկի ռազմավարական նշանակության ոլորտները՝ երաշխավորելով դրանց անվտանգությունը:

ը. Զբոսաշրջության զարգացում

Հայաստանը պետք է գրավիչ լինի զբոսաշրջիկների համար, որի հիմնական նախապայամանը պետք է լինի օրենքի գերակայությունը: Կոմունիկացիաները պետք է համապատասխանեն միջազգային չափանիշների:

թ. Ներդրումների խթանում

Օտարերկրյա կապիտալի ներհոսքը Հայաստանի զարգացման և պետական անվտանգության առաջնային գրավականներից է, ուստի ներդրված վարկերի արդյունավետ օգտագործումը նպատակային զարգացման ծրագրերով՝ համընդհանուր հասարակական պատվեր է:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Շուկայական տնտեսական համակարգի կայացման համար անհրաժեշտ է մենաշնորհների վերացումն ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը: ՓՄՁ զարգացման համար անհրաժեշտ են պետական իրավական երաշխիքներ՝ հարկային դաշտի կատարելագործմամբ:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Հայաստանում դասական իմաստով ստվերային տնտեսություն գոյություն չունի, քանի որ երկրում գործում են ստվերային հարկային համակարգ և ստվերային բյուջե:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

Պետք է պայքարել կոռուպցիայի դեմ «ձուկը գլխից են բռնում» սկզբունքով՝ խստագույնս կանոնակարգելով վերահսկողական կառույցների աշխատանքն օրենքի տառին և ոգուն համապատասխան և արմատախիլ անելով կաշառակերությունը և անպատասխանության մթնոլորտը:

իւ. Այլ (Գնաձ)

Քանի դեռ չի գործում շուկայական մեխանիզմը, այսինքն սպառողը հնարավորություն չունի պաշտպանվելու գների աճից, գնաձի սանձողի դերը պետք է ստանձնի Ազգային Ժողովը:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

ԺՀԿ-ի սոցիալական քաղաքականության հիմնաքարը հնարավորինս արագ միջին խավի ձևավորումն է, հատկապես ընչազուրկ խավի հաշվին: Կենսաթոշակները պետք է սահմանվեն բյուջետային ոլորտի միջին աշխատավարձի 70 տոկոսի սահմաններում:

ա. Աղքատության հաղթահարում

Աշխատատեղերի ստեղծմանը զուգահեռ, անհրաժեշտ է աստիճանաբար հիմքեր ստեղծել ոչ պետական կենսաթոշակային համակարգի ձևավորման և զարգացման համար:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Պետական մակարդակով պետք է կանխվի ապօրինի հարստացումը՝ առավել վերահսկելի դարձնելով տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Անհրաժեշտ է մշակել բնակչության զբաղվածության համալիր ծրագիր: Պետական վարկերի և մասնավոր ներդրումների շնորհիվ պետք է ստեղծել նոր աշխատատեղեր:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Պետությունը պետք է երաշխավորի բնակչության անապահով խավերի իրական անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Պետությունը պետք է երաշխավորի մանուկների, ծերերի և հաշմանդամների բարեկեցիկ գոյությունը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կրթական ազգային ծրագրի միջոցով պետք է դաստիարակել համամարդկային արժեքների տիրապետող, ժամանակակից աշխարհում արագ կողմնորոշվող և արդյունավետ գործող հայ մարդ:

4.7. Գիտության զարգացում

Գիտության բնագավառում անհրաժեշտ է հստակեցնել հեռանկարային ճյուղերի զարգացման առաջնահերթությունները՝ հաշվի առնելով անցյալի ժառանգությունն ու այսօրվա պահանջները:

4.8. Մշակույթ և սպորտ

Պետությունը պետք է իր հովանու տակ առնի մշակույթի բնագավառն ու ազգային արժեք ներկայացնող հաստատությունները:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Պետությանը պետք է վերապահել վերահսկողական գործառույթներ:

ա. Համայնքների խոշորացում⁵

Համայնքների խոշորացումը պետք է իրականացվի էվոլյուցիոն ճանապարհով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունները:

բ. Ավագանու դերի բարձրացում⁵

Ավագանու դերի բարձրացումը հնարավոր կլինի միայն իրական ժողովրդավարական ընտրությունների ապահովման դեպքում:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում⁵

Պետք է հաշվի առնել ֆինանսական ռեսուրսները և կառավարող մարմինը, ինչպես նաև իրացման մեխանիզմները:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁵

Անհրաժեշտ է համայնքային բյուջեների ձևավորման դաշտի ընդլայնում:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից⁵

Հնարավորինս նվազեցնել պետության միջամտությունը և իրականացնել վերահսկողական ֆունկցիաներ:

զ. Մարզերի համաչափ զարգացում⁵

Ազատ տնտեսական գոտիների ստեղծման և պետական աջակցության միջոցով անհրաժեշտ է սահմանամերձ բնակավայրերի առաջանցիկ տնտեսական զարգացման ծրագրերի իրականացում:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Կուսակցության ծրագրային կարևոր դրույթներից է ժողովրդական իրավական պետության հաստատումը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարության ամրապնդման գործում անհրաժեշտ է.

- ազատ, արդար ընտրություններ ապահովող համակարգի ներդրում,
- ընտրական գործընթացներում պետական, հատկապես՝ ուժային կառույցների չեզոքության ապահովում:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Լրատվամիջոցների ազատության և իրական անկախության ապահովման նպատակով պետք է թեթևացնել նրանց հարկային բեռը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության հուսալի և օրինական ձևը դատական իշխանությունն է, որն այսօր Հայաստանում չի գործում:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերից անկախ դատական համակարգի ստեղծում և դատաիրավական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վերականգնում՝ իրական գործուն քայլերի իրականացմամբ:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Ժողովրդավարական պետության կայացման գլխավոր պայմանը, ժողովրդի ազատ կամքի արտահայտությամբ իշխանությունների ձևավորումն է: Այդ նպատակի իրականացման միջոցը ընտրական համակարգի արմատական բարեփոխումն է, որի համար անհրաժեշտ է.

- փոխել ԱԺ ձևավորման տրամաբանությունը,
- կենտրոնական ընտրական հանձնաժողովները ձևավորել պետության կողմից, որպեսզի ընտրությունների համար պատասխանատվություն կրի պետությունը,
- ձևափոխել ընտրական հանձնաժողովների համակարգը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁵

Պետք է կարևորվի կուսակցությունների դերը պետական և հասարակական կյանքում: Պետությունը պետք է աջակցի կուսակցությունների կայացման գործընթացին, մասնավորապես՝ օրենքով սահմանի նրանց ֆինանսավորման մեխանիզմը և աղբյուրները:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում

Հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանն ուղղված՝ անհրաժեշտ է օրենսդրական դաշտի բարելավում:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁵

Անհրաժեշտ է հավասարաչափ հնարավորությունների ընձեռնում: Կանանց, թե տղամարդկանց դեպքում բռնությունների դեմ պայքարը պետք է իրականացվի գործող օրենսդրության շրջանակներում:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

Հասարակական քննարկումների և հանրաքվեների միջոցով:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բանակը երկրի արտաքին անվտանգության համակարգի բաղադրիչներից մեկն է միայն: Մյուս բաղադրիչներն են տարածաշրջանային և միջազգային անվտանգության համակարգերի մաս կազմելը, տարածաշրջանային և միջազգային տնտեսական ինտեգրացումը, հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

«Օրենքի առաջ բոլորը հավասար են» սկզբունքով գործելու պարագայում կստեղծի բարենպաստ պայմաններ խնդիրների լուծման համար:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բնապահպանական հիմնախնդիրների կարգավորումը հնարավոր է միայն ոլորտի կարգավորմանն ուղղված ամբողջական և համակարգված քաղաքականության իրականացման դեպքում:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Գերակշիռ դերակատարումը պետք է վերապահել պետությանը:

3.3. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺՈՒԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Ահարոնյան փող. 18
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 24-79-23
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ demoway@yandex.ru
- Հիմնադրման տարեթիվը՝ 23.08.2005թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 20.09.2005թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 23.08.2005թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 15.11.2009թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները
«Առավոտ» օրաթերթ և «Իրավունք» թերթ՝ 08. նոյեմբերի 2007թ.: Նույն տարում առանձին գրքույկով (փոփոխություններով և լրացումներով) տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: 15.11.2009թ. կուսակցության 3-րդ համագումարում կատարվել են կանոնադրական փոփոխություններ:
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 22 ,
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 4875, որից
 - Կանայք՝ 27%
 - Երիտասարդներ՝ 36%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորենների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 0

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Վարչություն՝ 21 անդամ
- Քաղաքական խորհուրդ՝ 9 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Մանուել Մանուկի Գասպարյան
- Կուսակցության փոխնախագահ՝ Վարդան Անուշավանի Գրիգորյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ով ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, մասնակցում է կազմակերպության գործունեությանը և մուծում անդամավճար:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցության գլխավոր նպատակն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության լիակատար հաղթանակին ու զարգացմանը, բազմակցությամբ հասարակարգի կառուցմանը, համամարդկային արժեքների, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների իրական երաշխիքների ապահովմանը:

3.2. Նպատակները և խնդիրները

Նպաստել և աջակցել.

- հայրենիքի զարգացմանն ու հզորացմանը, ժողովրդի անվտանգության ապահովմանը,
- ՀՀ-ում քաղաքացիական և իրավական հասարակության ձևավորմանը, ժողովրդավարության և մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար սկզբունքների արմատավորմանը,
- երկրի գիտակրթական, արդյունաբերական, գյուղատնտեսական և մշակութային պոտենցիալի հզորացմանը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ամրապնդմանն ու զարգացմանը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Սոցիալ-ժողովրդավարական

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ՀՀ արտաքին քաղաքականության գերխնդիրը Հայաստանի պետականության ամրապնդումն է, նրա միջազգային հեղինակության բարձրացումը հանուն համայն հայության ազգային շահերի պաշտպանության:

2. Արցախյան հարցի լուծումն իր բոլոր ուղղություններով համարվում է ՀՀ արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրը՝ առաջնային բոլոր այլ խնդիրների նկատմամբ:
3. Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից է սփյուռքահայության հետ կապերի առավել սերտացման հարցը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Ազգային անվտանգության հայեցակարգում անհրաժեշտ է առանձնահատուկ տեղ հատկացնել զինված ուժերին, դրանց կառուցվածքին, մարտունակությանը, սպառազինության որակին, զինված ուժերի ռազմա-հայրենասիրական և բարոյահոգեբանական դաստիարակության հարցերին: Ազգային բանակը պետք է կազմավորված լինի պրոֆեսիոնալ սկզբունքով և գրավի իր արժանի տեղը հասարակության մեջ: Միաժամանակ, դպրոցների բարձր դասարաններում և առավել խորացված ուսումնական այլ հաստատություններում որպես պարտադիր ուսումնական ծրագիր անհրաժեշտ է դասավանդել «Ռազմագիտություն» առարկան՝ առանց սեռական խտրականության:

ա. Եվրախնտեզրում

Ելնելով ժամանակակից աշխարհում Եվրոպայի և ԱՄՆ-ի ունեցած դիրքից, հիմնվելով արդեն կուտակված փորձի ու եվրոպական պետությունների, առաջին հերթին Ֆրանսիայի կողմից համագործակցության նոր առաջարկների վրա՝ անհրաժեշտ է մշակել և կենսագործել կոնկրետ նախագծեր այդ պետությունների հետ կապերի ամրապնդման ու արդյունավետության բարձրացման համար, որը կբերի եվրոպական երկրների հետ ինտեգրմանը:

բ. ԱՊՀ

Անհրաժեշտ է համակողմանի աշխատանքներ տանել ԱՊՀ երկրների հետ տնտեսական և մշակութային փլուզված կապերի վերականգնման, ինտեգրացիոն և ամբողջացման գործընթացների խորացման, արևմտաեվրոպական տիպի արդյունավետ գործող ամբողջացման կառույցների ստեղծման համար:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ) ⁵

ՀԱՊԿ-ի հետ անհրաժեշտ է այսուհետ էլ շարունակել ակտիվ համագործակցությունը:

դ. ՀԱԴԿ (NATO)⁵

Անհրաժեշտ է ակտիվ համագործակցություն անհատական գործընկերության համագործակցման շրջանակներում:

ե. ԱՄՆ⁵

ԱՄՆ-ի հետ անհրաժեշտ է երկկողմ համագործակցություն, այդ թվում ռազմական ոլորտում և հազարամյակի մարտահրավերների ծրագրի շրջանակներում:

զ. Ռուսաստանի Դաշնություն⁴

Ռուսաստանի հետ պետք է հավասար գործընկերային հարաբերությունների հաստատում և էներգետիկայի ոլորտում ՀՀ մասնաբաժնի վերահսկման վերականգնում:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁴

Հայ դատը պետք է լինի արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկը: Կուսակցությունը վճռականորեն պայքարելու է այն արտաքին և ներքին ուժերի դեմ, որոնք Հայ դատի գաղափարն օգտագործում են իրենց հետին նպատակների համար: Հայ դատը պետք է հետապնդվի այնպես, որ նրա լուծումը լինի առավել իրատեսական և չվնասի Հայաստանի պետականության ամրապնդմանը: Անհրաժեշտ է Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատում, այդ թվում դիվանագիտական, սահմանի բացում և Գյումրի-Կարս երկաթգծի վերաբացում:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ արցախյան հարցը երկար ժամանակ կլինի որոշիչ: Ընդունելով նրա լուծման համար արտաքին ուժերի հետ համագործակցության անհրաժեշտությունը՝ հարկ է առավելություն տալ այն որոշումներին, որոնց վերահսկումը և ապահովումը հնարավոր է իրականացնել սեփական միջոցներով: Անհրաժեշտ է բոլոր ձևերով նպաստել ռազմաճակատում ձեռք բերած զինադադարի պահպանմանը, ստեղծված դե ֆակտո իրավիճակի ամրագրմանը:

թ. Իրան⁴

Հիմնվելով Իրանի և Արաբական երկրների հետ ավանդական բարիդրացիական հարաբերությունների և մշակութային ամուր փոխկապակցության վրա՝ անհրաժեշտ է ապահովել որակական առաջընթաց և բոլոր ուղղություններով համագործակցության ուժեղացում: Խորացնելով համագործակցությունը և տնտեսական կապերը՝ անհրաժեշտ է Ռուսաստանից բացի այդ

երկրների հետ ունենալ այլընտրանքային վառելիքաէներգետիկ մատակարարման և վերամշակման, նաև երկրի տարածքում համատեղ ձեռնարկությունների հիմնման ռեալ հնարավորություններ: Իրան-Հայաստան գազամուղի առաջին հերթի շահագործումից հետո անհրաժեշտ է ձեռնամուխ լինել գազամուղի երկրորդ հերթի առավել տարողունակ գազատարի շինարարությանը՝ ՀՀ-ն դարձնելով տարանցիկ երկիր, միաժամանակ բանակցելով նավթամուղի կառուցման շուրջ՝ ստեղծելով հնարավորություն երկրում նավթավերամշակման արդյունաբերության զարգացման ուղղությամբ, ապահովելով Հայաստանի տարածաշրջանային շրջափակումից դուրս գալը:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁵

Վրաստանի հետ անհրաժեշտ է բազմակողմանի համագործակցություն և բարիդրացիական հարաբերությունների համակողմանի խորացում, այդ թվում ռազմավարական ոլորտում:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Վերանայել Սփյուռքի ներուժի նկատմամբ վերաբերմունքը: Քաղաքականությունը ոչ թե նվիրատվությունների և օգնությունների հավաքումն է, այլ խնդիրների մշակումը, որոնց լուծման շուրջ կարող է միավորվել հայությունը: Այդպիսին պետք է դառնա ցեղասպանության միջազգային ճանաչումը և մեր հայրենակիցների՝ Արևմտյան Հայաստանից գաղթածների իրավունքների պաշտպանումը:

լ. Այլ (Երկաթաղաքացիություն)⁵

Կուսակցությունը դիտարկում է նաև երկաթաղաքացիության ընդունման հարցը, որպես կոնկրետ գործողությունների իրականացում: Քաղաքացիության շնորհումը կուսակցությունը ենթադրում է երկու տարբերակով.

- դիմորդը ձեռք է բերում քաղաքացիություն ընտրելու իրավունք, եթե ՀՀ բյուջե է փոխանցում իր ստացած եկամուտների 1%-ը,
- դիմորդը ձեռք է բերում քաղաքացիություն առանց ընտրելու իրավունքի:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Օրենքի գերակայություն:
2. Մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանություն:
3. Կաշառակերության, կոռուպցիայի և ստվերային ոլորտի խսկառ վերացում:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Տնտեսական զարգացումը կարող է ապահովվել սեփականության բոլոր ձևերի առկայությամբ և նրանց միջև ազատ շուկայական հարաբերություններով ու մրցակցությամբ՝ բացառությամբ երկրի համար կենսական ու ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների:

Տնտեսական բնագավառում կուսակցությունն անհրաժեշտ է համարում.

- նոր տեխնոլոգիական և ինովացիոն հիմքերի վրա վերականգնել քայքայված տնտեսությունը,
- դադարեցնել սեփականաշնորհման գործընթացը,
- ակտիվացնել արհմիութենական շարժումը:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁵

Տնտեսության արդիականացման ֆինանսավորման աղբյուր կարող են լինել բանկային միջոցները (վարկերը), քանզի բանկային համակարգի և ֆոնդային շուկայի շնորհիվ է իրականանում բնակչության խնայողությունների և ձեռնարկությունների միջոցով տրանսֆորմացիոն ներդրումների կայուն զարգացումն ու աճը: Բայց բանկային համակարգ, որպես այդպիսին, Հայաստանում գոյություն չունի: Այդ մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ բանկային համակարգը գործնականում մրցակցություն չունի երկրի տնտեսական կյանքում կամ մասնակցում է շատ աննշան չափով:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁵

Պետության բյուջեն գտնվում է մշտական դեֆիցիտի իրավիճակի մեջ, ինչն էլ թույլ չի տալիս լուծել ոչ միայն ներդրումային, այլ նույնիսկ սոցիալական բնույթի խնդիրները:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ⁴

Անհրաժեշտ է ներդնել ոլորտների հարկավորման տարբերակված համակարգ: Հարկային համակարգի գլխավոր սկզբունքն այն է, որ ոչ մի հարկավորում չպետք է խեղդի արտադրողին և ձեռնարկատերերին: Կուսակցությունն իր խնդիրն է համարում ապահովել հարկային բեռի տրամաբանական նվազեցում և հարկային քաղաքականության պարզեցում:

Պետք է բացառել մաքսային ծառայությունների կողմից մաքսատուրքի դրույքային ինքնակամ ձևակերպման որոշումների կայացումը:

դ. Արդյունաբերության զարգացում⁴

Հայաստանը նախկին ԽՍՀՄ-ի այն քիչ երկրներից էր, որտեղ զարգացած էին արդյունաբերության բարձր տեխնոլոգիական ճյուղերը, մասնավորապես՝ հզոր համակարգիչների, էլեկտրական սարքավորումների մշակումն ու արտադրությունը և այլն: Այսինքն ինֆորմացիոն տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացման համար երկրում դեռ մնացել է անհրաժեշտ գիտատեխնիկական և կադրային ներուժ: Ուղղակի պետք է այլ երկրների օրինակով մշակել և ներդնել տնտեսական խթանման քաղաքականություն, որն իր մեջ կներառի հարկային և ներդրումային արտոնությունների համակարգը:

Հայաստանի արդյունաբերության զարգացման գերակայությունների ընտրությունն անհրաժեշտ է ժամանակակից արդյունաբերական քաղաքականության մշակման և այն «լոկոմոտիվային» ճյուղերի որոշման համար, որոնք իրենց հետևից կտանեն ամբողջ տնտեսությունը՝ ապահովելով նրա ճեղքումը:

ե. Գյուղատնտեսության զարգացում⁴

Հայաստանում գյուղատնտեսության զարգացման և գյուղական բնակչության արտահոսքի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է մեծացնել պետական աջակցությունը գյուղատնտեսության արտադրողների հանդեպ, պայմաններ ստեղծել հողի արդյունավետ և լիարժեք օգտագործման համար, ուժեղացնել պետության դերը գյուղատնտեսության այն ճյուղերում, որոնք ապահովում են երկրի ռազմավարական պահանջները, հատկապես պարենային անվտանգությունը:

Գյուղացիական տնտեսությանն աջակցելու համար պետությունը պետք է կիրառի հետևյալ միջոցները՝

- քանի որ գյուղացիական տնտեսությունների մեծ մասը զուրկ է սերմերի գնման, հողային տարածքների ռոտման վճարման համար անհրաժեշտ միջոցներից, ապա այս գործընթացները պետք է ձևավորել որպես ապրանքային վարկեր,
- պետությունը պետք է ներդնի գյուղատնտեսության վարկավորման պարզեցված և արտոնյալ համակարգ,
- պետությունը պետք է աջակցի ոչ միայն գյուղացիական տնտեսություններին, այլ նաև գյուղատնտեսության ենթակառուցվածքի այնպիսի տարրերի ստեղծմանը, ինչպիսիք են ագրոքիմիական, գնման, զոտտեխնիկական և այլ ծառայությունները,
- պետք է ստեղծել գյուղացիական տնտեսությունների գործունեության ապահովագրման արդյունավետ համակարգ:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁴

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող շարժերն ու փոփոխությունները թելադրում են հետևյալ ճյուղերի զարգացման անհրաժեշտությունը՝ ինֆորմացիոն, համակարգչային և բարձր տեխնոլոգիաներ, բիոտեխնոլոգիա, նոր նյութերի արտադրություն և դեղագործություն, ինչպես նաև էլեկտրոնիկա, սարքաշինություն, ճշգրիտ մեքենաշինություն և այլն:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում

Էներգետիկ անվտանգության ու անկախության մակարդակը կարելի է բարձրացնել հիմնականում այնպիսի էլեկտրաէներգետիկայի զարգացման շնորհիվ, որը կախված չէ կամ քիչ է կախված էներգակիրների ներմուծումից: Հայաստանի էլեկտրաէներգիայի զարգացումը պետք է ունենա երկու հիմնական ուղղություն՝ առաջինը՝ հիդրոէներգետիկա, երկրորդը՝ ատոմային էներգետիկա:

ը. Զբոսաշրջության զարգացում⁵

Պատմական հուշարձանների պահպանման, վերականգնման ու արդիականացման, նոր ուղիների ու կեցավայրերի կառուցման միջոցով զարկ տալ զբոսաշրջության զարգացմանը:

թ. Ներդրումների խթանում⁵

Ներդրումային քաղաքականությունը պետք է այնպես մշակվի, որ ուղիղ, պորտֆելային և այլ ներդրումների տրամաբանությունն ուղղված լինի տնտեսության որակյալ և ժամանակակից կառուցվածք ձևավորելուն:

Հայաստանը, զուրկ լինելով տրանսպորտային հեռահաղորդակցման ուղիներից, պետք է արտոնյալ պայմաններ ստեղծի յուրաքանչյուր լուրջ արտասահմանյան ներդրողի համար:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Անհրաժեշտ է իրական տնտեսական խթանների համակարգի ստեղծում: Բավարարել ԱՀԿ-ի բոլոր պահանջները՝ պաշտպանելով ազգային արտադրողի շահերը:

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁵

Ստվերային տնտեսության կրճատման դժվարագույն խնդրի լուծմանը կարելի է հասնել երեք համակցված ճանապարհներով՝

- վարչարարության ուժեղացման շնորհիվ,
- տնտեսական միջոցներով, որոնց շնորհիվ ստվերում աշխատելը դառնում է ոչ ձեռնտու, և տնտեսվարող սուբյեկտների համար շահավետ է դառնում մտնել հարկային դաշտ,
- հարկային և գույքային համաներում:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁵

Կուսակցությունը՝ իշխանական լծակների առկայության դեպքում, պարտավորվում է վարել անհաշտ, անողոք և հետևողական պայքար կոռուպցիայի, կաշառակերության և հովանավորչության դեմ, որի դրական ու շոշափելի արդյունքները կերևան բոլոր բնագավառներում արդեն 2012-2013թթ:

լւ. Այլ (Արտաքին տնտեսական շուկայում հայկական արտադրանքի մրցունակության բարձրացում)⁴

Վերականգնելով քայքայված տնտեսությունը՝ անհրաժեշտ է լուծել շուկայի հարցը, ընդ որում, կողմնորոշվելով դեպի Եվրամիություն, ինչպես նաև ռուսական և ԱՊՀ մյուս երկրների շուկաներ՝ նկատի ունենալով նրանց համեմատական մոտիկությունը, ավանդական բնույթը և հայկական արտադրանքի մրցունակությունը միջազգային ասպարեզում:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է սոցիալական առաջնահերթ պահանջների բավարարում, սոցիալական հուսալի երաշխիքների համակարգի ստեղծում ազգային եկամուտի արդարացի բաշխման ուղիով, որպեսզի մարդը զգա իրեն իր պետության գործունյա և լիիրավ քաղաքացի:

ա. Աղքատության հաղթահարում⁴

Քաղաքացիների կյանքի իրավունքի փաստացի ապահովման նպատակով անհրաժեշտ է պետական և բոլոր այլ համակարգերի աշխատավարձը, կենսաթոշակները, նպաստները և այլ վճարումները համապատասխանեցնել ֆիզիկական գոյատևման համար անհրաժեշտ նվազագույն մակարդակին: Կուսակցությունը համարում է, որ աղքատության դեմ պայքարը պետք է տանել ոչ թե հարուստ և հաջողակ զարծարարներին ստիպելով բարձր հարկեր վճարել և այնուհետև բաշխել այդ հարկերը աղքատների օգտին, այլ պետք է ստեղծել այնպիսի պայմաններ և հնարավորություններ, որոնց շնորհիվ հենց աղքատները կկարողանան հաղթահարել իրենց աղքատությունը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Եկամտի նվազագույն մակարդակը պետք է ապահովեն ոչ թե ձեռնարկություններն ու կազմակերպությունները, այլ անմիջապես պետությունը: Անհրաժեշտ է ընդունել քաղաքացիների առջև պետության պատասխանատվության մասին օրենք: Յուրաքանչյուրը պետք է իրավունք ունենա պետությանը հայց ներկայացնելու և հասնելու վնասի փոխհատուցման:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Սոցիալական քաղաքականության հիմնական բաղադրիչը, որից կախված է բոլոր այլ ուղղությունների իրականացումը, քաղաքացու ազատ աշխատանքի իրավունքն է, որն ապահովում է նրա տնտեսական, հետևաբար նաև քաղաքական ինքնությունը, ընձեռում է հնարավորություն ստեղծագործաբար ինքնիրացվել կյանքում:

դ. Առողջապահական համակարգի բարելավում⁵

Անհրաժեշտ է պետպատվերի ընդլայնում և ծառայությունների շրջանակի ավելացում: Ընտանեկան բժիշկների ինստիտուտի զարգացում, ժամանակակից տեխնոլոգիաների համակողմանի ներդրում:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում⁵

Անհրաժեշտ է պետական թոշակային բաշխիչ համակարգից անցնել մասնավոր կուտակման հիմնադրամներին:

զ. Այլ (Արտագաղթ)

Կուսակցությունը գտնում է, որ աշխատանքի շնորհիվ իր կենսագոյությունն ապահովելու անհնարինությունը հարկադրում է ՀՀ քաղաքացիներին զանգվածային արտագաղթի:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կրթության բնագավառում գլխավոր սկզբունքը պետք է լինի միջնակարգ և բարձրագույն կրթության մատչելիությունը բոլոր նրանց համար, ովքեր ցանկություն և ընդունակություն ունեն սովորելու, ընդ որում, միջնակարգ կրթությունը պետք է պարտադիր լինի ՀՀ բոլոր քաղաքացիների համար:

Բարձրագույն կրթության մեջ պետք է զուգակցել անվճար (պետական պատվեր) և վճարովի ուսուցումը պետական և մասնավոր բուհերում: Պետությունն ամեն ինչ պետք է անի, որպեսզի չունևոր ընտանիքների ընդունակ երեխաները կարողանան իրենց ուսումը շարունակել պետական և մասնավոր բուհերում:

4.7. Գիտության զարգացում

Հայաստանի ավանդական բարձր գիտական և կրթական մակարդակի պահպանումն ու զարգացումը պետական իշխանության կարևորագույն խնդիրներից է: Պետությունը պետք է ունենա գիտության զարգացման հստակ հայեցակետ, որտեղ նշված կլինեն գիտության զարգացման առաջնահերթությունները: Դրանց մեջ կարևոր տեղ պետք է հատկացվի տեսական այնպիսի ճյուղերի, որոնք խոր արմատներ ունեն Հայաստանում՝ աստղագիտություն, մաթեմատիկա, ֆիզիկայի որոշ ճյուղեր, քիմիա, կենսաբանություն և այլն: Հիմնարար գիտությունների զարգացումն անհնար է առանց պետական հովանավորչության:

4.8. Մշակույթ և սպորտ⁴

Պետությունը պետք է ունենա հստակ մշակութային քաղաքականություն: Դրա նպատակը պետք է լինի հայկական արվեստի ազգային առանձնահատկությունների պահպանումն ու զարգացումը: Մշակութային քաղաքականության կարևոր կետերից մեկը պետք է լինի ամենալայն կապերն աշխարհի երկրների հետ՝ առանց գոհաբերելու մշակույթի ազգային դեմքը: Սպորտը համարվում է բնակչության առողջության կարևորագույն գործոններից մեկը: Այս բնագավառում անհրաժեշտ է սպորտային և առողջացման համալիրների մատչելիության ապահովում:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում⁵

Կառավարության կառուցվածքում փոփոխություն մտցնել՝ առավել ակտիվ դերակատարում շնորհել տարածքային կառավարման զարգացմանը, ստեղծել լայն լիազորություններով տարածքային տառավարման խորհուրդ, որը կիրականացնի ազգային ժողովի ստորին պալատի գործառույթները, նպաստելով ՏԻՄ զարգացմանը:

ա. Համայնքների խոշորացում⁵

Կուսակցությունը դրական է վերաբերվում փոքր համայնքների խոշորացմանը՝ եթե դրանք իրար շատ մոտ են գտնվում, պայմանով, որ ավագանու աշխատանքներին պարտադիր ներգրավված լինեն բոլոր համայնքների ներկայացուցիչները:

բ. Ավագանու դերի բարձրացում⁵

Ավագանու անդամների լիազորությունների առավել ընդլայնում, համայնքի ղեկավարին՝ վերջինիս ապորինությունները բացառելու նպատակով, անվստահության հայտնման դեպքում հարցի դրական լուծման միտման ապահովում:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում⁵

Կուսակցությունը խրախուսում է միջհամայնքային միավորումների ստեղծմանը, եթե այն նպաստելու է համայնքների ինքնուրույնությանը և զարգացմանը: Այդ նպատակով հասնել համապատասխան օրենսդրական փոփոխությունների ԱԺ կողմից:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁵

Համայնքների ֆինանսական ինքնուրույնության նպատակով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունված որոշումների պարտադիր իրագործում՝ ի շահ համայնքի բնակչության բարեկեցության և համայնքային հարցերի լուծման:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից⁵

Կուսակցությունը կառավարության միջոցով պահանջելու է պետության կողմից համայնքներին փոխանցել լրացուցիչ լիազորություններ, նրանց աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

զ. Մարզերի համաչափ զարգացում⁵

Ամեն կերպ աջակցել մարզերի համահավասար զարգացմանը:

է. Այլ (Գյուղական համայնքների ոռոգման ցանցի բարելավում)

Համայնքների ոռոգման ցանցերի արդիականացում, ջրային ռեսուրսների առկայության դեպքում օգտագործման լիազորությունների փոխանցում համայնքներին:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում⁵.

Այսօր Հայաստանում գոյություն չունի քաղաքացիական հասարակություն երկու վճռորոշ պատճառներով՝ նախ, պետական իշխանությունն արհամարհում է օրենքը, երկրորդ՝ այն օտարված է ժողովրդից: Կուսակցությունը համոզված է, որ քաղաքացիական հասարակության կառուցման գործում առաջին հերթին պետք է լուծվի երկրի բարոյական մթնոլորտի, արդարության, մարդկայնության և հոգևոր արժեքների գերակայության հարցը: Առանց այդպիսի կտրուկ տեղաշարժի ոչ մի քաղաքական ու տնտեսական հարց չի լուծվի:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը պատրաստ է աջակցել հանրապետության քաղաքական տարբեր ուժերի մշակված այլընտրանքային նախագծերին, ուր իրոք կապահովվի իշխանության տարբեր ճյուղերի հավասարակշռությունը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունը նպատակադրվում է պաշտպանել լրատվամիջոցների լիակատար ազատությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Ազատությունը կուսակցությունը դիտում է առաջին հերթին որպես անձի ազատություն, երբ յուրաքանչյուր քաղաքացի հասարակական կյանքի ցանկացած ոլորտում ունի ընտրության և ինքնորոշման իրավունք: Անձի ազատության իրականացումը կապված է ժողովրդավարության և սոցիալական արդարության հետ:

դ. Դատախիրավական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է դատախիրավական համակարգի լիիրավ անկախություն, իշխանական թևերի հավասարակշռում և տարանջատում:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Պետք է ժողովրդավարական չափանիշներով ընտրական համակարգի ստեղծում և ընտրությունների անցկացում ու քաղաքական կամքի դրսևորում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետության կայացման գործում կուսակցությունը կարևորում է ազատ ու արդար ընտրությունների անցկացումը և հետամուտ է լինելու դրա իրականացմանը:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁵

Կուսակցությունը համակողմանի աջակցում է տանելու հասարակական կազմակերպությունների կայացման և ոլորտի օրենսդրական հետագա կարգավորման ուղղությամբ:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁵

Պատկան մարմինների միջոցով նպաստել կանանց շահերի պաշտպանությանը և կանանց նկատմամբ բռնությունների դեմ հետագա պայքարին: Ամեն կերպ նպաստել երկրի հասարակական- քաղաքական կյանքում կանանց առավել ներգրավվածությանը:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն⁵

Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցությունը կուսակցությունը տեսնում է նույն հանրության՝ այդ աշխատանքներում ներգրավվածության մեջ: Պարտադիր հանդիպումներ ընտրողների հետ, նրանց կողմից բարձրացված հրատապ հարցերի բարձրաձայնման և կյանքի կոչման ուղղությամբ:

ժ. Այլ (Կուսակցությունների դերի հստակեցում)⁵

Անհրաժեշտ է ազգաբնակչության մեջ սերմանել հստակ գաղափարախոսություն, որ քաղաքական կուսակցությունները սոցիալական հարցեր լուծող կառույցներ չեն և կուսակցական հիմնադրամները բարեգործության համար չեն կարող ծառայել:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ազգային անվտանգության հայեցակարգը մշակելիս անհրաժեշտ է առանձնահատուկ տեղ հատկացնել զինված ուժերին, դրանց կառուցվածքին, մարտունակությանը, սպառազինության որակին, զինված ուժերի ռազմա-հայրենասիրական և բարոյահոգեբանական դաստիարակության հարցերին: Ազգային բանակը պետք է կազմավորված լինի պրոֆեսիոնալ սկզբունքով և գրավի իր արժանի տեղը հասարակության մեջ: Միաժամանակ, դպրոցների բարձր դասարաններում և առավել խորացված ուսումնական այլ հաստատություններում որպես պարտադիր ուսումնական ծրագիր անհրաժեշտ է դասավանդել «Ռազմագիտություն» առարկան՝ առանց սեռական խտրականության:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Անհրաժեշտ է աջակցություն երիտասարդ և նորաստեղծ ընտանիքներին, յուրաքանչյուր ընտանիքի 3-րդ և ավելի երեխաների համար նպաստների ապահովում՝ մինչև նրանց չափահաս դառնալը:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Կուսակցությունը ստեղծման օրվանից պահանջել է մշակել հրատապ հայեցակարգ բնապահպանության ոլորտի պահպանման ուղղությամբ, այն հայտարարելով պետական գերակա շահ՝ ընդունելով պետական հոգածության առաջնահերթության օրենսդրություն, որում հստակ կնախանշվեն երկրի ընդերքի ու կանաչ տարածքների պետական հարստության վերաբերյալ դրույթներ:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Համակողմանի աշխատանք տանել Երիտասարդության դաստիարակության ուղղությամբ, այն սկսելով նախակրթական ու կրթական հաստատություններից, սեր ու հարգանք սերմանելով պետության ու պետականության խորհրդանիշերի նկատմամբ՝ հիմն, զինանշան, դրոշ:

4.15. Այլ (Եկեղեցի)⁵

Պետության կողմից, որպես պատվիրակված լիազորություններ, եկեղեցուն՝ որպես մայրենի լեզվի, մշակույթային ու հոգևոր արժեքների, հայապահպանման սրբազան գործում ունեցած ավանդի գնահատում, փոխանցել քաղաքացիական ակտերի գրանցումը, դրանով նպաստելով եկեղեցու հետ ժողովրդի կապի ամրապնդմանը:

3.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԺԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Ղազար Փարպեցի 7
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 53-15-01, (ֆաքս) 53-77-01
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ nap_Armenia@yahoo.com
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.ppa.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 23.05.1998թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 15.05.1998թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 02.06.2001թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 28.02.1999թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 04.12.2010թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրասովորագրությունները՝ 17.02.2007թ.
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 49
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 23400, որից
 - Կանայք՝ 40%
 - Երիտասարդներ՝ 35%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 0

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Վարչություն՝ 81
- Կուսակցության քարտուղարներ՝ Ստեփան Երվանդի Մինասյան, Գրիգոր Հարությունի Հարությունյան, Ֆելիքս Արամի Խաչատրյան
- Կուսակցության նախագահ՝ Ստեփան Կարենի Դեմիրճյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

ՀԺԿ անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, որն ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, նպաստում կուսակցության նպատակների ու խնդիրների իրագործմանը, մասնակցում է նրա կազմակերպություններից մեկի աշխատանքներին, կամովին մուծում է անդամավճար և չի հանդիսանում մեկ այլ կուսակցության անդամ, ինչպես նաև ՀՀ ընտրական իրավունքով օժտված այլ անձինք, որոնք կարող են անդամակցել կուսակցությանն առանց նրա ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՌՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Հայաստանի Ժողովրդական կուսակցությունը ժողովրդավարական, ժողովրդական սոցիալիզմի գաղափարներ կրող, ՀՀ Սահմանադրության և օրենքների սահմաններում գործող, ՀՀ քաղաքացիների կամավորության սկզբունքով միավորված հասարակական-քաղաքական կազմակերպություն (կուսակցություն) է:

Կուսակցության գաղափարախոսությունը հասարակության զարգացման մասին ժամանակակից, առաջավոր գաղափարների ու հայացքների համակարգ է, որի հիմքում ընկած են ազգային ու համամարդկային արժեքների գույժը, ժողովրդի հայրենասիրական իդեալն ու զգացմունքները, սոցիալական արդարության նկատմամբ նրա ավանդական հակվածությունը:

Կուսակցության հիմնական արժեքներն են անհատի ազատությունը, ժողովրդավարությունը, արդարությունն ու համերաշխությունը:

3.2. Նպատակները և խնդիրները

Կուսակցությունն իր առջև խնդիր է դնում նպաստել ՀՀ պետականության ամրապնդմանը, տնտեսական և հոգևոր ներուժի զորացմանը, ժողովրդի սոցիալական պաշտպանվածության ապահովմանը, նրա համակողմանի և ներդաշնակ զարգացմանն ու բարգավաճմանը:

Կուսակցության նպատակը Հայաստանում քաղաքացիական հասարակության ու ժողովրդի իրական իշխանության արմատավորման հիման վրա ժողովրդավարական և իրավական պետության կերտումն է:

է, այնպիսի պետության, որի ուշադրության կենտրոնում կլինի հասարակության յուրաքանչյուր անդամ, որը կծառայի ժողովրդի շահերին:

Կուսակցությունն իր պրակտիկ գործունեությունը նպատակամղում է սոցիալական արդարության, արժանապատվության, օրինականության և բարոյականության համամարդկային արժեքներին հարիր հասարակության կայացմանը՝ այն դիտելով որպես ժողովրդի բարօրության և ազգային միասնության հուսալի երաշխիք:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Կենտրոնամետ

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻԲՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Կուսակցությունը ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից առաջնայինը համարում է հայաստանաբնակ ժողովրդի և արցախահայության անվտանգության, ազատ զարգացման ու բարգավաճման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:
2. Եվրախնտեգրումը կուսակցությունը համարում է արտաքին քաղաքականության գերակա ուղղություն:
3. Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունը պետք է լինի ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրությունները, այդ թվում.

Ազգային շահերի պաշտպանությունը միջազգային ասպարեզում պետք է իրականացվի արտաքին քաղաքական համապարփակ հայեցակարգի հիման վրա:

ա. Եվրախնտեգրում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ինտեգրումը Եվրոպական կառույցներին (Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ): Պետք է խորացնել երկկողմանի հարաբերությունները Եվրոպական երկրների հետ՝ դիտարկելով Հայաստանի անդամակցությունը Եվրամիությանը՝ որպես արտաքին և ներքին քաղաքականության նպատակ:

բ. ԱՊՀ

Կուսակցությունը հանդես է գալիս ԱՊՀ շրջանակներում փոխշահավետ համագործակցության օգտին:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Կուսակցությունը կարևորում է միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ փոխհարաբերությունների և արդունավետ կապերի խորացման խնդիրը:

դ. ՀԱԴԿ (NATO)

Կուսակցությունը կարևորում է ՀԱԴԿ հետ ՀՀ փոխհարաբերությունների և արդունավետ կապերի խորացման խնդիրը:

ե. ԱՄՆ

Հայաստանը պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատի տարածաշրջանի բոլոր երկրների հետ, ինչպես նաև փոխշահավետության հիմքի վրա զարգացնի և խորացնի համագործակցությունն ԱՄՆ-ի, Եվրոպական և աշխարհի այլ երկրների հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

ՌԴ հետ ռազմավարական գործընկերությունը պետք է լինի ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը: Պետք է կարգավորվեն ավանդական տնտեսական կապերը ՌԴ հետ:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Կուսակցությունն իր ուշադրության կենտրոնում է պահում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ մայր հայրենիքի և սփյուռքի ջանքերի միավորումը:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Կուսակցությունը գտնում է, որ Արցախյան հիմնախնդրի արդար լուծմանն անհրաժեշտ է հասնել խաղաղ ճանապարհով, քաղաքական բանակցությունների միջոցով: Այդ բանակցություններում լիիրավ կողմ պետք է հանդիսանա ԼՂՀ-ն: ԼՂՀ-ի հակամարտության կարգավորման հիմքում պետք է դրվի միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի սկզբունքը:

թ. Իրան

ՀՀ պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատի տարածաշրջանի բոլոր երկրների հետ:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ

ՀՀ պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատի տարածաշրջանի բոլոր երկրների հետ:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Սփյուռքի հետ համակողմանի կապերի ամրապնդումն ու զարգացումը, համագային խնդիրների լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ մայր հայրենիքի և Սփյուռքի ջանքերի միավորումը մշտապես կգտնվի կուսակցության ուշադրության կենտրոնում: Ընդունելով երկքաղաքացիության սկզբունքը՝ կուսակցությունը կարևորում է դրա իրականացման իրավական և գործնական մեխանիզմների մշակումը: Հայաստան-Սփյուռք հարաբերությունները որակապես նոր մակարդակի հասցնելու համար նպատակահարմար է ստեղծել համապատասխան պետական կառույց:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Կուսակցությունը հանդես է գալիս ժողովրդի շահերին միտված՝ արդյունավետ քաղաքական, սոցիալական և տնտեսական բարեփոխումների իրականացման օգտին: Բարեփոխումներ, որոնք կնպաստեն մարդկանց կենսամակարդակի բարձրացմանը, հասարակական համերաշխության և քաղաքական կայունության ապահովմանը:
2. Կուսակցությունը երկրի ժողովրդավարացման կարևորագույն պայման է համարում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման և միմյանց հակակշռելու սկզբունքի իրականացումը:
3. Կուսակցությունը կնպաստի քաղաքակիրթ շուկայական հարաբերությունների կայացմանը: Տնտեսական համակարգում անհրաժեշտ է ազատ շուկան լավագույնս գույժորդել պետական կարգավորման հետ, առավելագույնս օգտագործել ազատ ձեռնբերեցության և պետության կողմից արտադրողներին աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Պետք է ձեռնարկել տնտեսական և սոցիալական համակողմանի միջոցառումներ գյուղական բնակչության սպառնալից չափերի հասնող արտահոսքի կանխման, սահմանամերձ բնակավայրերի կայունացման նպատակով:

ա. Դրամավարկային քաղաքականություն

Պետք է աջակցել բանկային համակարգի կատարելագործմանը, ֆինանսավորման տոկոսային դրույքաչափերի նվազեցմանը, վարկավորման մեխանիզմների առավելագույն պարզեցմանը:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք

Ֆինանսական և բանկային համակարգի բարելավումը Կուսակցությունը համարում է իր տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Պետք է ապահովել բյուջետային ծախսերի և պետական գնումների արդյունավետությունը:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Պետք է կատարելագործել և պարզեցնել հարկային համակարգը: Հարկերը պետք է լինեն հիմնավորված և պարտադիր. վարկային և հարկային քաղաքականության մեջ առավելագույնս պետք է հաշվի առնել գյուղմթերքների արտադրողների աշխատանքի սեզոնային բնույթը, ոռոգելի ջրով, վառելանյութով, տեխնիկայով, պարարտանյութով, սերմացուով պահանջված ժամկետներում և մատչելի գներով նրանց ապահովելու անհրաժեշտությունը: Պետք է հարկային, ֆինանսավարկային և մաքսային ճկուն քաղաքականության միջոցով աշխուժացնել հայրենական ապրանքարտադրողների գործունեությունը, նպաստել ՓՄՁ զարգացմանը:

դ. Արդյունաբերության զարգացում

Կուսակցության նպատակն է Հայաստանը դարձնել զարգացած արդյունաբերական երկիր, ապահովել ժամանակակից, բարձր տեխնոլոգիաներով, գիտատար և արտահանմանն ուղղված արտադրությունների առաջնահերթ զարգացումը, խրախուսել մտավոր գործունեությունը:

Պետք է խելամտորեն օգտագործել հանրապետության հանքահումքային ռեսուրսները, առկա կադրային ներուժը, ինչպես նաև ժամանակակից բարձրորակ մասնագետների պատրաստման հնարավորությունները:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Ագրարային քաղաքականության բնագավառում կուսակցությունը հանդես է գալիս բարեփոխումների արդյունավետության ապահովման, գյուղատնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների և առաջավոր փորձի պետական մակարդակով տարածման անհրաժեշտության օգտին: Ագրարային բարեփոխումների փորձը, որը հիմնված էր հողակտորների մասնատման և սեփականացման վրա, ինքնըստինքյան չէր կարող ապահովել գյուղատնտեսության արդյունավետությունը, քանզի գյուղում սեփականատիրական հարաբերությունների ձևավորումն իրականացվեց հանպատրաստից և հապճեպ: Հողերի մասնատումը հանգեցրեց գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականության նվազեցմանը, արտադրության կազմալուծմանն ու ծախսերի մեծացմանը, ինչպես նաև գյուղատնտեսական տեղական ապրանքների մրցունակության շեշտակի անկմանը: Տնտեսության ագրարային հատվածում գոյություն ունեցող բացասական միտումների հաղթահարման նպատակով կուսակցությունը առաջարկում է՝

- ստեղծել ճյուղային բանկերի արդյունավետ գործող ցանց՝ գյուղատնտեսական արտադրության վարկավորման համար,
- լայնորեն կիրառել վարկերի հատկացում գալիք բերքի դիմաց,
- ձևավորել գյուղմթերքի գնման, վերամշակման և պատրաստի արտադրանքը սպառողին հասցնելու ամբողջական համակարգ,
- ստեղծել գործուն ապահովագրական համակարգ՝ գյուղատնտեսությունը բնական աղետներից և արհավիրքներից պաշտպանելու համար,
- մշակել հատուկ ծրագրեր ոռոգման համակարգերի վերականգման և զարգացման համար,
- անհրաժեշտ պայմաններ ապահովել սերմնաբուծության և տոհմային անասնապահության զարգացման ուղղությամբ,
- համալիր միջոցներ գործադրել համաճարակների, հիվանդությունների կանխարգելման և բուժման, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարի ուղղությամբ,
- ստեղծել գյուղում ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման նոր արդյունավետ կառույցներ,
- ներդնել աշխարհում ընդունված գյուղմթերքների գնման պետական պատվերների պրակտիկան: Ներքին շուկան արտասահմանյան մրցակցության բացասական դրսևորումներից զերծ պահելու համար անհրաժեշտ է գործուն միջոցներ կիրառել ներմուծվող մթերքների որակի վերահսկողության ուղղությամբ: Հողօգտագործման ձևերի ընտրության խնդրում Կուսակցությունը մերժում է գաղափարայնացված քարացած մոտեցումները: Ելնելով ազգային ավանդույթներից, աշխարհագրական և բնակլիմայական յուրահատկություններից, տեղաբաշխվող արտադրության բնույթից՝ կարող են կիրառվել հողօգտագործման մասնավոր, խառը, կոլեկտիվ ձևեր: Այս կամ այն ձևի ընտրությունը որոշվում է ոչ թե քաղաքական-գաղափարական նախասիրությամբ, այլ աշխատանքի բարձր արտադրողականությամբ ու հողի օգտագործման երաշխիքով:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

Կուսակցության նպատակն է Հայաստանն ապահովել ժամանակակից, բարձր տեխնոլոգիաներով, նպաստել գիտատար և արտահանման ուղղված արտադրությունների առաջնահերթ զարգացմանը:

թ. Ներդրումների խթանում

Կուսակցությունը կողմնակից է արդյունավետ այն միջոցների իրականացմանը, որոնք կդրսևորեն ձեռնարկություններին տրվելիք երկարաժամկետ վարկերի միջոցով կապիտալ ներդրումների իրականացումը՝ բարձրացնելով ներդրողների շահագրգռվածությունը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Կուսակցությունը կարևորում է ՓՄՁ համակողմանի սատարումը, ինչը նախատեսում է ապահովել նրանց պետական և այլ պատվերներով, վարկային և հարկային արտոնություններով:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Այս ոլորտում պետք է գործուն քայլեր ձեռնարկել աննախադեպ չափերի հասնող կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

Պետք է նպաստել կառավարման այնպիսի համակարգերի ստեղծմանը, որոնք կխթանեն իշխանության, պաշտոնատար անձանց լավագույն և առավել ձկուն աշխատանքը՝ պատնեշելով կամայականության դրսևորումները և կաշառակերության երևույթները: Անհրաժեշտ է մշակել և ընդունել հակակոռուպցիոն օրենսդրական փաթեթ:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

Կուսակցությունն առանձնապես կարևորում է սոցիալական ապահովվածության հիմնահարցը:

ա. Աղքատության հաղթահարում

Այս ոլորտում Կուսակցությունն առանձնապես կարևորում է սոցիալական ապահովվածության հիմնահարցը: Կուսակցությունը կարևորում է այն փաստը, որ աղքատության հաղթահարման ծրագրերը պետք է զուգորդվեն կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարի իրականացման հետ:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Քաղաքացու սոցիալական դիրքը պետք է պայմանավորված լինի հասարակության բարօրությանն ու զարգացմանը նպաստակաուղղված անձնական ներդրումներով: Սոցիալական արդարությունը պետք է ամրագրվի օրենքներով և կախված չլինի պաշտոնատար անձանց կամայականություններից:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Այս ոլորտում ներկա ժամանակաշրջանի կարևոր անելիքներից մեկը Կուսակցությունը համարում է աշխատանքի և զբաղվածության իրավունքի պաշտպանությունը: Պետությունը պետք է նպաստի զարգացման հեռանկար ունեցող ժամանակակից ճյուղերում նոր աշխատատեղեր ստեղծելուն:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Առողջապահության բնագավառում Կուսակցությունը պաշտպանում է յուրաքանչյուր քաղաքացու, անկախ անձնական եկամուտներից, անհրաժեշտ բուժօգնություն ստանալու օրենսդրորեն ամրագրված իրավունքը: Անվճար բժշկական ծառայությունը պետք է ապահովվի առողջապահության պետական համակարգի միջոցով: Բնակչության առողջության, կյանքի միջին տևողության ցուցանիշները պետք է հիմք հանդիսանան իշխանության գործունեության գնահատման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների ընտրության համար:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում սոցիալական ապահովագրման համակարգի բարեփոխումը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կրթության բնագավառում Կուսակցությունը պաշտպանում է հնարավորությունների հավասարության սկզբունքը, որի կիրառմամբ յուրաքանչյուր դպրոցական, ուսանող, անկախ ընտանիքի նյութական հնարավորություններից, աշխատասիրությանը և ունակությունների համապատասխան կստանա անվճար կրթություն: Կուսակցությունը կոչում է համընդհանուր միջնակարգ անվճար կրթությանը, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մրցութային հիմունքներով անվճար կրթությանը, չբացառելով վճարովի կրթության հնարավորությունը: Պետական կրթական հաստատությունների աշխատանքների որակի բարձրացմանը զուգընթաց անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նաև ոչ պետական վճարովի ուսումնական հաստատությունների զարգացման համար՝ սահմանելով խիստ հսկողություն պետական պահանջներին և չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերի բարձր մակարդակն ապահովելու ուղղությամբ: Կրթական ծրագրերի և կրթական հաստատությունների ձևերի բազմազանությունը ոչ միայն չպետք է բացառի, այլ պետք է նպաստի կրթական չափանիշների պահպանմանը: Կրթական համակարգը պետք է նպատակամղել բարձրորակ կադրերով համալրմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը:

4.7. Գիտության զարգացում

Կուսակցությունն առաջնահերթ խնդիր է համարում գիտության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Կուսակցությունը ցուցաբերում է շահագրգռվածություն գիտության նվաճումներն արտադրության մեջ ներդնելու, բուհ-գիտություն կապն ամրապնդելու, տեսական և հայագիտական ճյուղերի զարգացումը պետության հովանավորչությամբ ապահովելու նկատմամբ:

4.8. Մշակույթ և սպորտ

Սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է հոգևոր կյանքի և մշակույթի վերածննդի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Այսօրվա գլոբալացվող աշխարհում Կուսակցությունն առանձնահատուկ կարևորություն է տալիս ազգային ինքնության պահպանմանը, պետական մակարդակով ազգային մշակույթի հովանավորչությանն ու զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը: Ուղղունելով տարբեր երկրների հետ մշակութային փոխադարձ կապերը, Կուսակցությունը հանդես է գալիս հանուն մշակույթի համամարդկային, մնայուն

արժեքների և ընդդեմ մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը վիրավորող կեղծ մշակույթի տարածման: Կուսակցությունն ելնում է այն պարզ ճշմարտությունից, որ միայն պետականորեն խթանվող գործընթացի շնորհիվ է հնարավոր բազմապատկել համաշխարհային քաղաքակրթության գանձարանին հայ մշակույթի և գիտության ներդրումը:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Ելնելով ազգային ավադություններից, աշխարհագրական և բնակլիմայական յուրահատկություններից, տեղաբաշխվող արտադրության բնույթից, կարող են կիրառվել հոդօգտագործման մասնավոր, խառը և կոլեկտիվ ձևեր: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում բարեփոխել վարչատարածքային կառավարման ներկայիս համակարգը՝ իշխանությունը մոտեցնելով քաղաքացուն և ապահովելով տարածքային կառավարման մարմինների ընտրովիությունը:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Կուսակցությունը նպատակ է հետապնդում ըստ ամենայնի նպաստել քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացմանն ու ժողովրդավարության զարգացմանը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարական ընտրությունների միջոցով իշխանության ձևավորումը ժողովրդավարական հասարակարգի անկյունաքարն է: Ցանկացած ուսնձգություն քաղաքացու ընտրական իրավունքի դեմ հանցագործություն է ժողովրդի և պետության հանդեպ: Ընտրական օրենսդրությունը խախտողները և ընտրությունների արդյունքները խեղաթյուրողները պետք է անխուսափելիորեն պատժվեն օրենքով սահմանված կարգով: Կուսակցությունը երկրի ժողովրդավարացման կարևորագույն պայման է համարում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման և միմյանց հակակշռելու սկզբունքի իրականացումը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունը հանդես է գալիս մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք ապահովման, երկրի ներքին օրենսդրությունը և հասարակական հարաբերությունների ամբողջական համակարգը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, ժողովրդավարական հասարակարգի պահանջներին համապատասխանեցնելու օգտին:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Պետությունը պետք է լինի յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորն ու պաշտպանը: Կուսակցությունը բոլոր օրինական միջոցներով պայքարում է միջազգային փաստաթղթերով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Պետք է բացառվի աշխատանքի պայմանների թելադրման, ձեռնարկատիրական գործունեության, մրցակցության և ազատ շուկայի վրա ճնշում գործադրելու ամեն մի ուսնձգություն: Այդ նպատակով կուսակցությունը կարևորում է գործող ընտրական և քաղաքացիական օրենսդրության կատարելագործումը, դատական համակարգի բարեփոխումը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Ազատ ընտրություն կատարելու ՀՀ քաղաքացիների իրավունքի ուսնահարումը բացառելու նպատակով Կուսակցությունն առանձնահատուկ կարևորություն է տալիս ընտրական օրենսդրության կատարելագործմանը, քաղաքացիների ընտրական իրավունքի ազատ իրականացման երաշխիքների ապահովմանը, ընտրական օրենսդրության խախտման համար սահմանված պատժամիջոցների խստացմանը և դրանց պարտադիր կիրառմանը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁵

Կուսակցությունը հանդես է գալիս Ազգային Ժողովի ընտրություններում 100% համամասնական ընտրակարգի օգտին և գտնում է, որ այն կնպաստի քաղաքական համակարգի կայացմանը: Կուսակցությունը հետևողականորեն զորակցում է գաղափարական հիմքի վրա քաղաքական դաշտի ձևավորմանը՝ հակադրվելով քաղաքականացված քրեական խմբավորումների ու հանցավոր կլանների ստեղծմանը:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

Պետք է ստեղծել կյանքի այլախի պայմաններ, որ կհինը վերստին իրեն զգա բոլորի կողմից հարգված, վստահ իր երեխաների ապագայի նկատմամբ՝ վերագտնի ընտանիքի հպարտ պահապանի իր անփոխարինելի դերը:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

Ժողովրդավարական ընտրությունների միջոցով իշխանության ձևավորումը ժողովրդավարական հասարակարգի անկյունաքարն է: Ցանկացած ոտնձգություն քաղաքացու ընտրական իրավունքի դեմ՝ հանցագործություն է ժողովուրդի և պետության հանդեպ: Ընտրական օրենսդրությունը խախտողները և ընտրությունների արդյունքները խեղաթուրողները պետք է անխուսափելիորեն պատժվեն օրենքով սահմանված կարգով:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ազգային շահերի պաշտպանությունը միջազգային ասպարզում պետք է իրականացվի արտաքին քաղաքական համապարփակ հայեցակարգի հիմնա վրա:

Անհրաժեշտ է նաև մշակել և ընդունել ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգ:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հայաստանում ժողովրդագրական տազնապահարույց իրավիճակը հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել ծնելիության աճի խթանմանը և ներգաղթի խրախուսմանն ուղղված պետական համալիր ծրագրեր՝ առանձնահատուկ աջակցություն ցուցաբերելով երիտասարդ և բազմազավակ ընտանիքներին:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է մշակել և իրականացնել բնական պաշարների ռացիոնալ օգտագործման պետական ծրագրեր, գործուն միջոցներ ձեռնարկել Սևանա լճի ջրային և բնապահպանական հավասարակշռության վերականգնման ուղղությամբ, արգելել Երևան քաղաքի և այլ բնակավայրերի կանաչ տարածքների ոչնչացումը և ձեռնամուխ լինել կորցրածը վերականգնելուն:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցության նատակն է երկրում հաստատել այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, որ Հայրենիքին ծառայելը քաղաքացին համարի իր պատվի գործը:

3.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԲԵՐԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԼԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք.Երևան, Հին Երևանցու 47ա/102
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 53-47-09
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ hlk.lpa@gmail.com
- Հիմնադրման տարեթիվը՝ 16.08.2008թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 15.10.2008թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 16.08.2008թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 30.10.2010թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները
Հուլիս 2008թ., «Հայք» օրաթերթ
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 14
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 4123, որից
 - Կանայք՝ 42%
 - Երիտասարդներ՝ 31%

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 9 անդամ
- Վերստուգիչ հանձնաժողով՝ 5 անդամ
- Նախագահ՝ Հովհաննես Հովհաննիսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները⁴

Կուսակցության անդամ կարող են դառնալ 18 տարին լրացած, այլ կուսակցության անդամ չհանդիսացող ՀՀ քաղաքացիները, ովքեր ընդունում են կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը: Կուսակցությունում անդամավճար նախատեսված չէ:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

ՀԼԿ գաղափարախոսության հիմքում ազատականությունն է: Կուսակցությունը գտնում է, որ պետության բոլոր գործողությունների հիմքում պետք է կարևորվի մարդը, նրա շահերը, հիմնարար ազատություններն ու իրավունքները: Այս բարձրագույն արժեքները պետք է դառնան իշխանությունների գործունեության մեկնակետը՝ դրանց լիարժեք իրականացումը դիտարկելով որպես պետության հզորացման գլխավոր գործոն:

3.2. Նպատակները և խնդիրները

ՀԼԿ նպատակը ՀՀ անկախության ամրապնդմանը, իրավական, ժողովրդավարական, սոցիալական, տնտեսապես հզոր, անվտանգ ինքնիշխան պետության կառուցմանը բազմակողմանի նպաստ բերելն է:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Ազատական (լիբերալ)

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ՀՀ լիարժեք մասնակցություն և ինտեգրում միջազգային քաղաքական, տնտեսական, կրթական, գիտական, մշակութային և այլ ծրագրերին ու կառույցներին՝ առաջնորդվելով բացառապես ՀՀ շահերով:
2. ԱՄՆ-ի հետ համագործակցության խորացում, քաղաքական ու տնտեսական երկարաժամկետ և փոխշահավետ հարաբերությունների հաստատում:
3. ՌԴ-ի հետ ավանդաբար ձևավորված բազմաշերտ հարաբերությունների կառուցում՝ «հավասարը հավասարի հետ» սկզբունքով (ինչպես նաև ցանկացած երկրի հետ), որպես ինքնիշխան պետությունների հավասար ու փոխշահավետ գործընկերային հարաբերություններ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է լինի ինքնուրույն և սպասարկի ՀՀ շահերը, որի գլխավոր խնդիրը պետք է լինի մեր տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատումը, Հայաստանի միջազգային դիրքերի ամրապնդումը, հեղինակության բարձրացումը, անվտանգ ու ժողովրդավար զարգացման ապահովումը: Հենց այս սկզբունքներից ելնելով՝ պետք է ձևավորվի Հայաստանի պետական արտաքին քաղաքականության օրակարգը և կառուցվի տարբեր երկրներում ու միջազգային կազմակերպություններում տարվող մեր դիվանագիտությունը:

ա. Եվրախնտեգրում

ՀԼԿ-ն կողմ է ՀՀ անդամակցությանը ԵՄ-ին և այդ ճանապարհին երկրում համակողմանի ազատական ու ժողովրդավարական բարեփոխումների իրականացումը համարում է միջոց այդ նպատակներին հասնելու համար:

բ. ԱՊՀ⁵

ԱՊՀ անդամակցությունը կուսակցությունը համարում է ընդամենը հարթակ տարբեր երկրների հետ բարձր մակարդակով լրացուցիչ շփումների համար:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

Անհրաժեշտ է պասիվացնել գործունեությունը ՀԱՊԿ շրջանակներում և չստորագրել այնպիսի համաձայնագրեր, որոնք կխոչընդոտեն ՀՀ ինքնիշխանությունը:

դ. ՀԱՌԿ (NATO)

ՀԼԿ-ն կողմ է ՆԱՏՕ-ի հետ բազմակողմանի համագործակցության խորացմանը և ընդլայնմանը:

ե. ԱՄՆ

ՀԼԿ-ը կարևորում է ԱՄՆ-ի հետ համագործակցության խորացումը, քաղաքական ու տնտեսական երկարաժամկետ և փոխշահավետ հարաբերությունների հաստատումը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

ՌԴ-ի հետ ավանդաբար ձևավորված բազմաշերտ հարաբերությունները պետք է կառուցվեն «հավասարը հավասարի հետ» սկզբունքով (ինչպես նաև ցանկացած երկրի հետ) որպես ինքնիշխան պետությունների հավասար ու փոխշահավետ գործընկերային հարաբերություններ:

է. Գեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁵

ՀԼԿ-ը կողմ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և սահմանի բացմանը: Երկրի ապագայի նկատմամբ պատասխանատվությունը պետք է գերակա լինի անցյալի հիշողություններից: Ոչ ոք չի կարող կասկածի տակ դնել Հայոց ցեղասպանության եղելությունը: ՀԼԿ-ը դեմ է այդ հարցի առնչությամբ պատմաբանների հանձնաժողի ստեղծմանը: Միևնույն ժամանակ կուսակցությունը գտնում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը չպետք է դրվի ՀՀ պետական արտաքին քաղաքականության հիմքում: Այդ հարցի լուծմանը պետք է հասնել Հայաստանի և Սփյուռքի ոչ կառավարական կառույցների ջանքերով:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ⁴

ՀԼԿ-ը կողմնակից է ԼՂ-ի հիմնախնդրի փոխադարձ զիջումների վրա հիմնված խաղաղ ճանապարհով կարգավորմանը: ՀԼԿ-ը ԼՂ-ի հակամարտության կարգավորման գլխավոր սկզբունքներն է համարում.

- ԼՂ-ի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացումը,
- իր բնակավայրում ԼՂ-ի ժողովրդի անվտանգության երաշխավորված ապահովումը:

Մինչ ԼՂ-ի խնդրի կարգավորումը ՀԼԿ-ը կարևորում է հայ-ադրբեջանական շփումները ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում, որը կարող է հարթակ հանդիսանալ հետագա, ավելի խորը շփումների և փոխադարձ վստահության համար:

թ. Իրան⁵

ՀԼԿ-ը գտնում է, որ անհրաժեշտ է Իրանի հետ խորացնել երկկողմ տնտեսական փոխշահավետ համագործակցությունն ու բարիդրացիական հարաբերությունները՝ չպայմանավորելով դրանք երրորդ երկրների հետ ունեցած մեր և իրանական կողմի հարաբերություններով:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁵

ՀԼԿ-ը գտնում է, որ Վրաստանի հետ անհրաժեշտ է հաստատել ամենաբարձր մակարդակի սերտ հարաբերություններ: Պետք է գործուն քայլեր ձեռնարկել, որպեսզի Վրաստանը տարածաշրջանում դառնա մեր երկրի համար ամենասերտ ու հուսալի դաշնակիցը: ՀԼԿ-ը գտնում է, որ Հայաստանը պետք է ջավախահայության խնդիրները միշտ պահի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Հայաստանն ամենաբարձր մակարդակներով միշտ պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի

ջավախահայության խնդիրները Վրաստանի կողմից անուշադրության չմատնվեն, հանդես գա խնդիրները համահարթեցնողի դերում: Պետք է ամեն ինչ անել, որ այդ խնդիրները չդառնան հայ և վրաց ժողովուրդների դիմակայության պատճառ: Մյուս կողմից, ջավախահայությունը, չկորցնելով ազգային նկարագիրն ու ինքնությունը, պետք է ավելի սերտ ինտեգրվի վրաց հասարակությանը: ՀՀ-ը անհրաժեշտ է համարում Ջավախքում ՀՀ դեսպանության ներկայացուցչության բացումը, որը կգրավի այդ բոլոր խնդիրների համակարգմամբ:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Սփյուռքը կարողացել է կուտակել այնպիսի ներուժ, որն այսօր ՀՀ անկախ պետականության պայմաններում կարող է վերածվել ազգի և պետության զարգացումն ամրապնդող հզոր խթանի: Անհրաժեշտ է սփյուռքի դերի արմատական վերանայում՝ ֆինանսավորման աղբյուրից դեպի սփյուռքի ներկայացուցիչների փորձի, գործարար կապերի, մասնագիտական կարողությունների, հնարավորությունների և ներուժի համախմբում՝ ի նպաստ ՀՀ պետականության հզորացման:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Ժողովրդավարական սկզբունքներով՝ ազատ, թափանցիկ, վստահություն ներշնչող, առանց կեղծիքների ընտրությունների միջոցով լեգիտիմ իշխանության ձևավորումը:
2. Կոռուպցիայի, հովանավորչության, կլանային, ստվերային, մենաշնորհային տնտեսության դեմ պայքարի գործուն մեխանիզմների ներդրումը և ազատ, շուկայական, մրցակցային տնտեսական համակարգի կայացումը:
3. Պետական իշխանության թևերի հստակ տարանջատման գործուն մեխանիզմների ամրապնդումը՝ նպատակ ունենալով միմյանց գործերին միջամտության բացառումը և նույն համատեքստում արդարադատության անկախ համակարգի կայացումը, որպես օրենքի գերակայության հաստատման և օրենքի առաջ հավասար պատասխանատվության երաշխիք:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Պետության ֆինանսատնտեսական քաղաքականության հիմքում պետք է դրվի տնտեսական աճ ապահովող պայմանների ստեղծումը՝ գերնպատակ համարելով մարդկանց բարձր կենսամակարդակի ապահովումը: Այսօր ՀՀ տնտեսությունն իր գերակշիռ մասով սպառողական բնույթ է կրում՝ չապահովելով իրական տնտեսական աճ և ազգային հարստության իրական հավելած: Անհրաժեշտ է մշակել և հետևողականորեն կյանքի կոչել տնտեսության զարգացման հեռանկարային ռազմավարություն: Տնտեսական և ֆինանսական կառավարման բոլոր լծակներով անհրաժեշտ է համակողմանի աջակցություն ցուցաբերել արտահանմանը միտված բիզնեսին, տնտեսության դիվերսիֆիկացիային ուղղված ծրագրերին:

ա. Դրամավարկային քաղաքականություն

Անհրաժեշտ է իրականացնել հավասարակշռված և սահուն դրամավարկային քաղաքականություն՝ բացառելով երկրի արտահանմանը վնասող դեֆլյացիոն զարգացումները և պահպանելով սղաճի ցածր և կառավարելի տեմպեր, միաժամանակ կատարելագործելով դրամավարկային քաղաքականության լծակների կազմը:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁴

Անհրաժեշտ է տանել ստվերային տնտեսության և մենաշնորհի դեմ իրական պայքար, որի արդյունքում հնարավոր է ապահովել բյուջետային մուտքերը, աշխուժացնել տնտեսությունը: Մյուս կողմից, անհրաժեշտ է կրճատել պետական ապարատը և նրա վրա կատարվող ծախսերը: Ազատված միջոցների մի մասն էլ անհրաժեշտ է ուղղել պետական արտաքին պարտքի մարմանը, ծայրահեղ դեպքում այլևս չավելացնել արտաքին պետական պարտքը:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Հարկային և մաքսային վարչարարության ամբողջ իմաստը պետք է կայանա նրանում, որ որևէ մեկը չհայտնվի արտոնյալ վիճակում և խուսափի հարկերից: Բոլորին հավասարապես օրինական դաշտ բերելը պետք է դառնա համակարգի գլխավոր խնդիրներից մեկը: Պետությունը պարտավոր է համարժեք պատասխանատվության ենթարկել օրենքների կատարման հարցում թերացող բոլոր սուբյեկտներին՝ անկախ նրանց գրաված դիրքից և պաշտոնից: Մաքսային ոլորտում անհրաժեշտ է վերանայել որոշակի ապրանքների գծով մաքսային դրույքաչափերը, հատկապես այն ապրանքների և սարքավորումների գծով, որոնք ունեն հետագա արտադրական նշանակություն:

դ. Արդյունաբերության զարգացում

Պետական տնտեսական քաղաքականությունն արդյունաբերության զարգացման առումով պետք է ուղղված լինի գիտատար ճյուղերի, ինովացիոն, տեղեկատվական տեխնոլոգիաների խթանմանը, ինչպես նաև վերամշակող արդյունաբերության զարգացմանը: Տարածաշրջանում կայուն

քաղաքական վիճակի պայմաններում կուսակցությունը հնարավոր է համարում արդյունաբերության բնագավառում բազմաբնույթ կոոպերացիաների, համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, վերագրային միջազգային խոշոր ընկերությունների կողմից լուրջ ներդրումները՝ հատկապես հաշվի առնելով էժան և կրթված աշխատուժը:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցությունն առաջնահերթ է համարում շուկան հագեցնել բարձրորակ գյուղատնտեսական ապրանքներով և նպաստել ագրոարդյունաբերական ձեռնարկությունների և համապատասխան ենթակառուցվածքների կայացմանը, ֆերմերային տնտեսությունների զարգացմանը: Տարբեր գործոններով պայմանավորված՝ գյուղատնտեսության առջև ծառացել են մի շարք հիմնախնդիրներ: Այդ հիմնախնդիրներն իրենց խորությամբ ու ընդգրկվածությամբ այնպիսին են, որ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտները սեփական ուժերով չեն կարող լուծել, ուստի գյուղացիությանն անհրաժեշտ է պետական համակողմանի աջակցություն:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁴

Չնայած վերջին շրջանում ՀՀ կառավարության կողմից բավականին ուշադրություն է դարձվում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, այնուամենայնիվ, կուսակցությունը գտնում է, որ պետությունը հատկապես մեծ ներդրումներ պետք է անի այդ ոլորտում կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ: Տրանսպորտային ուղիների խիստ թանկության պայմաններում կուսակցությունը գտնում է, որ ՀՀ-ի համար սա այն ոլորտն է, որը միջազգային ասպարեզում կարող է ապահովել մրցունակ արտադրանք:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁴

Ստեղծված իրավիճակում, երբ ՀՀ-ի էներգոհամակարգի գրեթե 85%-ը գտնվում է միայն ռուսական ընկերությունների ձեռքում, որոնց հիմնական բաժնետերը հանդիսանում է ՌԴ կառավարությունը, Հայաստանը պետք է դիվերսիֆիկացնի իր էներգոհամակարգը, ընդ որում ոչ միայն էներգիայի տարբեր՝ այլընտրանքային աղբյուրների հաշվին, այլև տարբեր երկրների կողմից ներմուծվող հումքի հաշվին՝ մասնավորապես պետք է հասնել իրանական գազի և էներգիայի արտադրության ավելացմանը:

ը. Զբոսաշրջության զարգացում⁵

Զբոսաշրջության զարգացման համար կուսակցությունը կարևորում է ենթակառուցվածքների զարգացումը, սպասարկման կուլտուրայի բարձրացումը և ծառայությունների սակագների իջեցումը: Հարկային, ֆինանսական գործիքների միջոցով պետք է հասնել այս ոլորտում խելամիտ գների սահմանմանը:

թ. Ներդրումների խթանում

Ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը պետք է հանդիսանա բարենպաստ ներդրումային մթնոլորտի ապահովումը, կատարված ներդրումների պաշտպանությունը, տնտեսական ռիսկերից ապահովագրումը: Հանրապետության համար առանձին հեռանկարային ոլորտներում և առավել նվազ զարգացած շրջաններում ներդրումները խրախուսելու նպատակով անհրաժեշտ է սահմանել որոշակի նպատակային արտոնություններ:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Բիզնես միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է ապահովել հավասար մրցակցային պայմաններ գործարարությամբ զբաղվող բոլոր սուբյեկտների համար: Հարկային և մաքսային վարչարարության կամայականությունները բացասաբար են անդրադառնում ինչպես բիզնես միջավայրի բարելավման, այնպես էլ փոքր և միջին բիզնեսի զարգացման, ինչպես նաև ապրանքների և մատուցվող ծառայությունների գների վրա:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Կուսակցությունը կարևորում է ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը միտված աշխատանքները: Այդ առումով կուսակցությունը խիստ է անհրաժեշտ է համարում բարեփոխումները հարկային և մաքսային ոլորտում: Հարկային վարչարարությունը պետք է հավասարապես գործի բոլորի համար, այլ ոչ թե ընտրանքային տարբերակով: Ստվերային տնտեսության հիմնական պատճառ է հանդիսանում իշխանության և տնտեսության սերտաճումը, իսկ դրա դեմ պայքարը հնարավոր է միմիայն բացառելով իշխանավորների կողմից այս կամ այն բիզնեսին որևէ կերպ մասնակից լինելը: Բարեփոխումների նպատակը պետք է լինի, որ տնտեսվարող սուբյեկտը հնարավորինս քիչ շփվի հարկային մարմինների հետ: Մյուս կողմից, կանխիկ դրամի զգալի մասը շրջանառվում է ստվերային ոլորտում: Ուստի կուսակցությունը անհրաժեշտ է համարում կանխիկ դրամի շրջանառու ծավալների կրճատմանը միտված միջոցառումների իրականացումը:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիան դրսևորվում է տարբեր ձևերով և խիստ բացասաբար է անդրադառնում երկրի քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացման վրա: Կուսակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներ է համարում թափանցիկ ու արդյունավետ կառավարման համակարգը և օրենքի գերակայությունը բոլոր ասպարեզներում: Իշխանություններն իրենց գործունեությամբ պետք է ապահովեն օրինականություն, արդարություն, սկզբունքայնություն, պատասխանատվություն և հետևողականություն:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրությունները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում .

Կուսակցությունը կարևորում է բնակչության բոլոր խմբերի սոցիալական իրավունքների լիարժեք պաշտպանվածությունը, կյանքի ու գործունեության արժանապատիվ պայմանների ստեղծումը: Սոցիալական համակարգը պետք է կարողանա անհրաժեշտ և արդյունավետ աջակցություն ցուցաբերել սոցիալապես անապահով խավերին, հնարավորինս բարձրացնել բնակչության կենսամակարդակը, նվազեցնել սոցիալական անհավասարությունը: Միաժամանակ, կուսակցությունը համոզված է, որ աշխատունակ անապահով անձանց համար առաջին հերթին անհրաժեշտ է աշխատելու հնարավորություն ստեղծել:

ա. Աղքատության հաղթահարում

Աղքատության կրճատումը կուսակցության ռազմավարական նպատակներից է: Աղքատության կրճատումն իր մեջ ներառում է համալիր ծրագրերի իրականացում, որոնցից առաջնահերթ էն.

- ստվերային տնտեսության կրճատումը,
- կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը,
- ներդրումների խթանումը,
- մրցակցային դաշտի բարելավումը,
- նպաստումը փոքր և միջին բիզնեսի կայացմանն ու զարգացմանը,
- մարզերի համաչափ զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացումը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Բյուջետային մուտքերի ավելացմանը զուգընթաց պետք է առավել մեծ ուշադրություն դարձնել բնակչության նորմալ կենսաապահովման խնդիրների լուծմանը, նվազագույն աշխատավարձի բարձրացմանը, սոցիալապես անապահով խավերին աջակցության ցուցաբերմանը: Հասարակության սոցիալական պաշտպանվածության և միջին խավի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի փոքր և միջին բիզնեսի զարգացումը:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում⁴

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը նպաստող վարկային միջոցների տրամադրումը, հատուկ ֆոնդերի և ապահովագրական հիմնադրամների ստեղծումը: Բարենպաստ ներդրումային և գործարար միջավայրն անշուշտ մեծ դեր կունենա տարբեր ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Մյուս կողմից, անցումային և դեռևս անբարենպաստ ներդրումային այս փուլում կառավարությունն ինքը պետք է նախաձեռնի որոշակի տնտեսական հզորությունների ստեղծումը՝ հեռանկարային համարվող այն ոլորտներում, որտեղ անհրաժեշտ են մեծ ծավալի ներդրումներ: Այդ հզորությունների ստեղծումից հետո պետությունը կարող է ձեռնամուխ լինել դրանց վերածմանը բաց բաժնետիրական ընկերությունների և կամաց-կամաց իր բաժնեմասերը երկրորդային շուկայում վաճառքի հանել: Այդ դեպքում պետությունը ֆինանսական կորուստներ չի ունենա, գործարարներն ավելի վստահ ներդրում կանեն արդեն գործող կառուցվածքներում և կլուծվի զբաղվածության խնդիրը:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Բնակչության առողջության պահպանումը կուսակցությունը դիտարկում է որպես պետական քաղաքականության գերակա ուղղություն: Անհրաժեշտ է ապահովել նվազագույն առաջնային մասնագիտական բուժօգնության մատչելիություն բոլորի համար, տարեցտարի ընդլայնել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ցանկն ու ընդգրկման ծավալները: Կուսակցությունը կարևորում է բժշկական ապահովագրության ներդրումը և այդ ոլորտի զարգացումը:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ՀՀ-ում քաղաքակիրթ աշխարհին բնորոշ սոցիալական ապահովագրական համակարգի ստեղծումը: Սոցիալական ապահովագրության համակարգը պետք է պաշտպանի բնակչության բոլոր խմբերին սոցիալական տարբեր ռիսկերից՝ ծերություն, հաշմանդամություն, աշխատունակության ժամանակավոր կորուստ, գործազրկություն և այլն:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կրթական համակարգի պահպանումն ու զարգացումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումն ազգային անվտանգության հենասյուներից են: Անհրաժեշտ է իրականացնել կրթական համակարգի հիմնավորված ծրագրային բարեփոխումներ, որոնց նպատակը պետք է լինի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և բարձր մասնագիտացում ստացած կադրերի պատրաստումը: Կրթության զարգացումը պետության կողմից պետք է ուղղորդվի այն ուղղություններով, որոնցով այսօր շուկան, այդ թվում նաև միջազգային, առավել պահանջարկ ունի, որի շնորհիվ մեր երկիրն ավելի մրցունակ կլինի: Պետք է ուշադրություն դարձնել նաև միջին մասնագիտական կրթությանը և տարբեր ոլորտներում որակյալ արհեստավորների պատրաստմանը:

4.7. Գիտության զարգացում

Անհրաժեշտ է աջակցել գիտությանն ուղղվող ֆինանսական միջոցների ավելացմանը, գիտական ներուժի վերարտադրությանը, վերապատրաստմանը և ինտեգրմանը միջազգային շրջանակներում, գիտության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, գիտական հաստատությունների տեխնիկական և տեխնոլոգիական վերազինմանը, պետական հեռանկարային ծրագրերի միջոցով հիմնարար գիտությունների զարգացմանը: Անհրաժեշտ է կտրուկ ավելացնել պետության կողմից գիտությանն ուղղվող պետական ֆինանսական միջոցների մեծությունը, համեմատելի դարձնել այն զարգացած երկրների կողմից կատարվող հատկացումներին: Մյուս կողմից, գիտությունը պետք է մտնի արտադրություն, տնտեսության բոլոր ոլորտները, որը հնարավորություն կտա առավել մրցունակ ներկայանալ միջազգային շուկաներում:

4.8. Մշակույթ և սպորտ

Մշակութային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ազատ ստեղծագործելու ապահովմանը, մշակութային նախաձեռնություններին աջակցելուն, ազգային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ֆիզիկական դաստիարակության և սպորտի զարգացման ծրագրերի իրականացմանը, աջակցությունը հասարակության առողջ կենսակերպի ապահովման ուղղությամբ տարվող միջոցառումներին:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Կուսակցությունը կարևորում է տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումը՝ որպես ժողովրդավարության հիմնական ինստիտուտներից մեկը: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդյունավետ համագործակցության և իրավասությունների հստակ իրագործման առումով կուսակցությունը նպատակահարմար է գտնում, որ մարզպետի ինստիտուտը նույնպես ձևավորվի ընտրությունների միջոցով:

ա. Համայնքների խոշորացում⁵

Կուսակցությունը հնարավոր է համարում որոշ, շատ փոքր համայնքների միավորումը մեկ համայնքի շրջանակներում, որը սակայն պետք է կատարվի կամավոր՝ համայնքների կողմից անցկացված հանրաքվեի արդյունքների հիման վրա: Խոշորացումը կնպաստի որոշակի ֆինանսների տնտեսմանը:

բ. Ավագանու դերի բարձրացում⁵

Ավագանին պետք է վերահսկի համայնքի ֆինանսական հոսքերը, ներկայացնի այդ ծախսերի արդյունավետ ուղղությունները, այլ ոչ թե հանդես գա ընդամենը հաստատողի, օրինականացնողի դերում:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում⁵

Միջհամայնքային միավորումների ստեղծման համար որևէ խոչընդոտող հանգամանք չկա, այդ թվում նաև օրենսդրական: Տնտեսական շահի տեսանկյունից, եթե նման միավորումների կարիք լինի, ապա այսօր էլ դրանք կարող են ստեղծվել:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁵

ՀՀ տնտեսության զարգացմանը զուգընթաց, կուսակցությունը գտնում է, որ հետագայում անհրաժեշտ է ներմուծել տեղական հարկեր, որ մի կողմից կավելացնի համայնքների ֆինանսական ինքնուրույնությունը, իսկ մյուս կողմից կնպաստի համայնքի առաջնահերթ խնդիրների ձևավորմանը և լուծմանը: Հնարավոր են համարվում նաև տեղական բյուջեի ձևավորման այլ ճանապարհներ:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից⁵

Համայնքները պետք է հնարավորություն ունենան ոչ միայն վեր բարձրացնել իրենց խնդիրները և հանդես գալ պետությունից միջոցներ ու օժանդակություն խնդրողի դերում, այլ նաև լիարժեք մասնակցություն ունենան համայնքի կառավարման բոլոր ասպարեզներում և փուլերում: Այդ առումով համայնքներին շատ հարցերում անհրաժեշտ կլինի պետության կողմից լրացուցիչ լիազորություններ փոխանցել:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Կուսակցությունը լուրջ հիմնախնդիր է համարում մայրաքաղաքի գերծանրաբեռնվածության կողքին հանրապետության մյուս բնակավայրերի թերբեռնվածությունը բնակչությանը: Տեղի է ունենում տարածքների անհամաչափ և միմյանց հետ չշաղկապված զարգացում, որով վտանգվում է երկրի պաշտպանունակությունը: Կուսակցությունը համարում է, որ հանրապետության ամբողջ տարածքում բնակավայրերի համաչափ զարգացումը, տեղերում զբաղվածության և կյանքի նորմալ պայմանների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը ՀՀ-ի համար ամենակարևոր ռազմավարական խնդիրներից են:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Առանց քաղաքացիական հասարակության կայացման, թերևս հնարավոր չէ լուրջ հաջողությունների հասնել հատկապես մարդու իրավունքների, ժողովրդավարական արժեքների, բնապահպանական խնդիրների, ազատ մամուլի, արդարադատության և այլ հարցերում: Այս ասպարեզում ցանկացած հարցի քննարկումը հնարավորինս հեռու է լինում քաղաքականացումից և քաղաքական շահարկումներից, որն ավելի շատ մարդկանց է կարողանում համախմբել՝ հանուն տվյալ խնդրի արդարացի և օրինական լուծման⁴:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում⁴

Քաղաքացիական հասարակության ձևավորումը կուսակցությունը համարում է ժողովրդավարական բարեփոխումների և հասարակական-քաղաքական կայունության կարևորագույն գործոն: Քաղաքացիական հասարակության կայացման գործում չափազանց կարևոր է հասարակական կազմակերպությունների դերը: Պետությունը պետք է աստիճանաբար այդ կազմակերպություններին պատվիրակի իր գործառույթների մի մասը և խթանի ինքնակարգավորման, ինքնակազմակերպման և պետության մի շարք գործողությունների նկատմամբ հասարակական վերահսկողության սկզբունքները:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում⁴

Կուսակցությունը չափազանց կարևորում է ՁԼՄ-ի անկախությունը և խոսքի ու տեղեկատվության ազատության ապահովումը: Մարդն ունի ազատ ու անկողմնակալ տեղեկատվություն ստանալու իրավունք: Այս առումով հատկապես հարկատուների կողմից ֆինանսավորվող հանրային ՁԼՄ-ն պետք է զերծ մնա միակողմանի և պատվիրված տեղեկատվության տարածումից: Չորրորդ իշխանության կայացմամբ է գնահատվելու Հայաստանի՝ որպես ժողովրդավարական երկրի մակարդակը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում⁴

Կուսակցությունը կարևորում է ազատական արժեքների հաստատումը և սատար է կանգնում մարդու հիմնարար ազատությունների և իրավունքների պաշտպանությանը: Մարդու կյանքը, ազատությունը և սեփականության անձեռնմխելիությունը պետք է պաշտպանված լինեն ոչ միայն օրենսդրորեն, այլև իրական կյանքում: Պետության բոլոր գործառույթների կենտրոնում, որպես պետականության հզորացման հիմք, նախապայման պետք է դրվի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանների լիարժեք ապահովման խնդիրը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում⁴

Դատաիրավական համակարգի հետագա բարեփոխումների ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները պետք է ուղղված լինեն դատական համակարգի դերի, հեղինակության և վերջինիս նկատմամբ վստահության բարձրացմանը, որպեսզի դատարանը դառնա արդարության և մարդու իրավունքների հուսալի երաշխավորը: Այս ամենին կարելի է հասնել միմյալն դատական համակարգի անկախության ապահովման միջոցով, որն այսօր դեռևս փաստացի կախման մեջ է գործադիր իշխանությունից: Դատավորի անկախությունը պետք է լինի թե՛ նյութական բարեկեցության, թե՛ հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի արդյունք:

ե. Ընտրական համակարգի բարելավում⁴

Կուսակցությունը հետամուտ է լինելու ընտրական համակարգի արմատական բարեփոխումներին: ՀՀ զարգացման այս փուլում կուսակցությունն անհրաժեշտ է համարում անցումը ՀՀ ԱԺ-ի ձևավորման հարյուր տոկոսանոց համամասնական ընտրակարգին: Կուսակցությունը կարևորում է նաև քվեարկած քաղաքացիների ցանկին ծանոթանալու արգելքի հանումը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁴

Կուսակցությունների կայացման համար անհրաժեշտ է նախ բարձրացնել նրանց քաղաքական դերը: Այդ առումով կուսակցությունը կարևորում է անցումն ԱԺ համամասնական ընտրական համակարգին, որը կլուծի նաև կուսակցությունների խոշորացման խնդիրը՝ բարձրացնելով նրանց հեղինակությունն ու ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁴

Կուսակցությունը խիստ կարևորում է ՀԿ-ների դերը երկրում քաղաքացիական հասարակության կայացման գործում: Եթե պետությունը չի ցանկանում, որպեսզի շատ ու շատ տարբեր բնույթի խնդիրներ և չլուծված հարցեր չկուսակցականացվեն, չշահարկվեն վերջիններիս կողմից, եթե ցանկանում է այս կամ այն հարցում ավելի օբյեկտիվ քննադատություն, կարծիք կամ վերաբերմունք ստանալ, ապա պետությունն իր գործառույթների որոշակի մասը պետք է փոխանցի ոչ կառավարական, հասարակական կազմակերպություններին, ֆինանսական աջակցություն ցուցաբերի և կարգավորի այս ոլորտի օրենսդրական դաշտը:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁵

Կուսակցությունը դեմ է կանանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելուն: Կանայք այսօր կազմում են ՀՀ բնակչության գրեթե կեսը, սակայն ոչ միայն լիարժեք չեն ներկայացված պետական կառավարման շատ ոլորտներում, այլև նույնիսկ որոշ դեպքերում իրենց ընտանիքում և աշխատավայրում ենթարկվում են բռնությունների և խտրական վերաբերմունքի: Այս նպատակով ստեղծված տարաբնույթ ՀԿ-ները դեռևս բավարար արդյունքներ չեն գրանցում և անհրաժեշտ է, որպեսզի պետությունը ևս ուշադրության արժանացնի այս խնդիրները, այլ ոչ թե շատ դեպքերում աչք փակի և հարցին վերաբերվի ձևավորված ավանդույթի շրջանականերում:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն⁵

Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցությունն իրականացվում է նրա կողմից պատվիրակված անձանց՝ ԱԺ պատգամավորների կողմից և այս առումով օրենսդրական դաշտում այլ միջամտության անհրաժեշտություն կուսակցությունը չի տեսնում: Ուղղակի, կուսակցությունը չի բացառում և նույնիսկ անհրաժեշտ է համարում երկրի և հասարակական կյանքի համար շատ կարևոր որոշ հարցերում հանրաքվեների անցկացումը՝ հասարակության կարծիքն այդ հարցում իմանալու և ճիշտ կողմնորոշվելու համար:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ներքին և արտաքին քաղաքականության հայեցակարգում մշտապես պետք է դրված լինեն ազգային անվտանգության հիմնախնդիրները: Դրանք կուսակցությունը բաժանում է մի շարք ուղղությունների՝ ռազմավարական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, սոցիալ-հոգեբանական ու մշակութային:

Վերը նշված ուղղությունների հիմնախնդիրները պետք է լուծել հետևյալ փախկապակցված բաղադրամասերով.

- Հայաստանի (ներառյալ Արցախի) անվտանգության ամրապնդում բոլոր ուղղություններով, ուժերով և միջոցներով:
- Օրենքի ու սոցիալական արդարության վրա հիմնված ժողովրդավարական պետության կառուցում և քաղաքացիական հասարակության կայացում:
- Կենսաապահովման համար անհրաժեշտ նվազագույն սոցիալական երաշխիքների, աշխատանքի և բարեկեցության ապահովում:
- Հայկական ինքնօրինակ քաղաքակրթության զարգացում՝ համաշխարհային առաջադեմ փորձի օգտագործմամբ:
- Տարածաշրջանային գործընթացներին լիարժեք ինտեգրում, անմիջական հարևանների հետ կայուն, փոխշահավետ և երկարաժամկետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Շարունակական արտագաղթը, սոցիալական անբավարար վիճակով պայմանավորված ուշ ամուսնություններն ու ամուսնալուծությունները, ծնելիության ցածր և մահացության բարձր մակարդակները Հայաստանը կանգնեցրել են դեմոգրաֆիկ աղետի առջև: Արտագաղթը դարձել է Հայաստանի թիվ մեկ մարտահրավերը, որը պայմանավորված է մի շարք սոցիալական, տնտեսական, ժողովրդավարական խնդիրների չլուծմամբ: Այս հիմնախնդիրները լուծելու համար ոչ միայն անհրաժեշտ է Հայաստանը դարձնել զարգացած ու ժողովրդավարական երկիր, այլև կոնկրետ նպատակային ծրագրեր իրականացնել բոլոր ուղղություններով:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Առաջնահերթ խնդիր է համարվում բնական ռեսուրսների օգտագործման կանոնակարգումն ու համապատասխան օրենսդրության կատարելագործումը: Հանրապետության էկոլոգիական հավասարակշռության պահպանման, շրջակա միջավայրի վիճակի բարելավման և բնօգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով պետք է իրականացնել համալիր ծրագրեր՝ ուժեղացնելով վերահսկողությունը բնապահպանական նորմերի կիրառման նկատմամբ:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Կուսակցությունը գտնում է, որ երկրում բարոյահոգեբանական մթնոլորտը խիստ անհանգստացնող է: Մարդիկ հիմնականում հուսահատված են և այլևս լուրջ հույսեր չեն կապում սեփական երկրում եական փոփոխությունների հետ՝ չկա աշխատատեղ, ամենուրեք տիրում է անարդարություն և նրանք լքում են հայրենիքը: Կուսակցությունը առավել կարևորում է երիտասարդության վերաբերմունքը երկրում կուտակված հիմնախնդիրների լուծման առումով: Ուստի, անկախ ներկա ժամանակի գրեթե ամբողջությամբ աղճատված արժեհամակարգին, երբ նյութապաշտությունը, անկրթությունը, զոռբայությունը դառնում են գերակշռող, կուսակցությունը անհրաժեշտ է համարում այս ուղղությամբ երիտասարդության ճիշտ դաստիարակությունը, քանի որ բանիմաց, կրթված, զարգացած ու խելացի երիտասարդները, չգտնելով իրենց տեղը Հայաստանում, արտագաղթում են: Այս առումով մեծ դեր ունեն նաև ԶԼՄ-ները: Հատկապես հեռուստաալիքներով ցածրորակ, ոչ հայերեն բառապաշարով, դաժանություն և ուժի ու փողի միջոցով հարցեր լուծող կինոները, ոչինչ չասող հաղորդաշարերը խիստ բացասաբար են անդրադառնում երիտասարդ սերնդի դաստիարակության վրա:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Դավիթաշեն 3 թաղ, 12 շենք, բն. 55
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37494) 73-34-02
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ greenpartyarmenia@yahoo.com
- Հիմնադրման տարեթիվը՝ 24.06.1998թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 24.07.1998թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 02.12.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 24.06.1998թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 24.11.2007թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը՝ 24.11.2007թ.
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 11
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 2300, որից
 - Կանայք՝ 61%
 - Երիտասարդներ՝ 20%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ չի մասնակցել:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Վարչություն
- Տարածքային (համայնքային) կազմակերպություն
- Տարածքային խորհուրդ
- Մարզային խորհուրդ
- Կուսակցության նախագահ՝ Արմենակ Դովլաթյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, որն ընդունում է կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը, իր գործունեությամբ նպաստում է կանոնադրության և ծրագրերի իրականացմանը, մուծում անդամավճար: ՀՀ ընտրական իրավունքով օժտված այլ անձինք կարող են անդամակցել կուսակցությանը՝ առանց ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՌՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում մարդկանց բարեկեցիկ ապրելակերպը, որին հասնելու համար բավարար չէ միայն սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը: Կուսակցության գաղափարախոսությունը հիմնվում է ազգային և համամարդկային արժեքների գնահատման և յուրացման, էկոլոգիական և քաղաքական կառավարման համակարգերի ստեղծման և զարգացման, շուկայական տնտեսության կայացման, ազգային միասնության և ազգի անվտանգության, մարդու իրավունքների և ազատությունների ապահովման, ինչպես նաև հասարակական իրազեկության և քաղաքական մասնակցության սկզբունքների վրա:

3.2. Նպատակները և խնդիրները

Պետք է հասնել այնպիսի վիճակի, երբ էկոլոգիական խնդիրները լուծվում են սոցիալ-տնտեսական խնդիրներին զուգահեռ: Ըստ այդմ՝ կուսակցություն գտնում է, որ՝

- ազգաբնակչության անվտանգ և բարեկեցիկ կյանքի ապահովման համար պետք է ստեղծել սոցիալ-էկոլոգիական համազգային ծրագիր,
- հասարակության գիտակցությանը պետք է հասու դարձնել համազգային և համաշխարհային բնույթի սոցիալ-էկոլոգիական խնդիրները,
- պետք է մշակել սոցիալ-էկոլոգիական գաղափարախոսություն, որի հիմքում կլինի «մարդ-բնություն-տեխնոլոգիա» փոխազդեցությունների դինամիկան,
- պետք է տնտեսապես հզոր, քաղաքականապես կայուն, էկոլոգիապես մաքուր, բարեկեցիկ պետության կերտել, որի հիմքում կլինեն սոցիալական արդարության ու մարդու իրավունքների, ազատությունների առաջնայնության սկզբունքները:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները⁴

Կուսակցությունը գտնում է, որ Էկոլոգիան չունի սահմաններ և, հետևաբար, չեն կարող լինել զուտ տեղական Էկոլոգիական խնդիրներ: Այս տեսակետից կուսակցությունն անհրաժեշտ է համարում համագործակցությունը բոլոր պետություններում գործող՝ սոցիալ-էկոլոգիական հիմնախնդիրներով զբաղվող, հասարակական-քաղաքական, պետական և ոչ պետական կառույցների հետ: Այդ համագործակցության հիմքը պետք է լինի «միասնական ժողովուրդ, միասնական Էկոլոգիա» կարգախոսը: Ըստ այդմ, կուսակցության արտաքին քաղաքականության առաջնահերթություններն են.

1. Համագործակցություն բոլոր պետություններում գործող, սոցիալ-էկոլոգիական հիմնախնդիրներով զբաղվող, հասարակական-քաղաքական, պետական և ոչ պետական կառույցների հետ:
2. Կուսակցությունը գտնում է, որ մեր պետությունն ունի քաղաքական և տնտեսական ներուժ ու հաջողություններ, որպեսզի կարողանա միջազգային ասպարեզում ապահովել համապատասխան դիրք և կեցվածք:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները⁴.

Միջազգային ասպարեզում համագործակցության հիմքը պետք է լինի միասնական ժողովուրդ, միասնական Էկոլոգիա կարգախոսը: Պետք է աշխուժացնել Հայաստան-Սփյուռք կապը և այն նպատակաուղղել համազգային խնդիրների լուծմանը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները⁴

1. Ազգաբնակչության սոցիալական խնդիրների լուծում:
2. Հասարակության ակտիվ քաղաքական մասնակցություն:
3. Գործուն մեխանիզմների մշակում, որտեղ հստակ կներկայացվեն սոցիալ-էկոլոգիական խնդիրներ առաջացնող պատճառները, ինչը պետությանը և հասարակությանը կարող է գերծ պահել աննպատակ, ավելորդ գերծախսերից, որոնք որպես հիմք առաջանում են նախկինում իրականացված ոչ ճիշտ էկոքաղաքականության հետևանքով:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Կուսակցությունը գտնում է, որ պետական քաղաքականության հիմնական առանցքներից մեկը հարկային ճիշտ քաղաքականությունն է: Հարկային արտոնություններ պետք է սահմանել այն ձեռնարկությունների նկատմամբ, որոնք ներդրվող նոր տեխնոլոգիաների հաշվին կարողանում են առավելապես քիչ թափոններ արտանետել շրջակա միջավայր:

դ. Արդյունաբերության զարգացում

Պետք է սահմանել հարկային արտոնություններ արդյունաբերական այն ձեռնարկությունների նկատմամբ, որոնք ներդրվող նոր տեխնոլոգիաների հաշվին կարողանում են առավելապես քիչ թափոններ արտանետել շրջակա միջավայր:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում գիտատեխնիկական-հետազոտական բարեփոխումների իրականացումը, որի առանցքը դիտվում է սերնդի դաստիարակության հիմնախնդիրը: Կուսակցությունը գտնում է, որ պետք է նպաստել սոցիալ-էկոլոգիական գիտահետազոտական նախաձեռնությունների, նոր՝ բարձրակարգ տեխնոլոգիաների ներդրման իրականացմանը, որոնք առնչվում են ազգաբնակչության և առհասարակ մարդկության կյանքի որակի բարելավմանը:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում .

Այն երկրները, որտեղ բնակչության սոցիալապես անապահով խավը կազմում է ճնշող մեծամասնություն, անհամեմատ շատ են տուժում բնական աղետներից: Ելնելով այս իրողությունից՝ կուսակցությունը հրատապ խնդիր է համարում ազգաբնակչության սոցիալական խնդիրների լուծումը: Կուսակցությունը նաև կարծում է, որ այն առավել իրատեսական է շուկայական տնտեսության զարգացման պայմաններում, որը կարող է երաշխավորել քաղաքացիների տնտեսական ազատությունը, սեփականության անձեռնմխելիությունը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ եթե չկան գիտության զարգացման տենդենցներ, ապա լրիվ անընդունելի է նոր կրթական տեխնոլոգիաների արհեստական կիրառումը: Կրթության և գիտության բնագավառում պետք է մշակվի ներդաշնակ զարգացման հայեցակարգ: Պետք է պահպանել անվճար ուսուցման պետական համակարգը, սակայն դրան զուգահեռ զարգացնել նաև մասնավոր ուսուցման համակարգը:

4.7. Գիտության զարգացում⁴

Կուսակցությունը կարծում է, որ կրթական տեխնոլոգիաների արհեստական կիրառումը ոչ միայն չի խթանում գիտության զարգացմանը, այլև կրթության նկատմամբ մարդկանց մոտ առաջացնում է ոչ լուրջ մոտեցումներ: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում գիտատեխնիկական-հետազոտական բարեփոխումների իրականացումը, որի առանցքը դիտվում է սերնդի դաստիարակության հիմնախնդիրը:

4.8. Մշակույթ և սպորտ

Բնականոն սերնդափոխության հիմքը մշակութային արժեքների վերականգնումն է: Դրանց վերարտադրությունը հրատապ խնդիր է, որը պահանջում է լուրջ պետական քաղաքականություն: Զկա ազգ առանց մշակույթի, հետևաբար գոյություն չունի մշակույթ առանց նրա իսկ ազգային կրողների:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացումն ու զարգացումը հանդիսանում է ժողովրդավարության հիմնական բնութագիրը: Կուսակցությունը պաշտպանում է այն մոտեցումը, ըստ որի քաղաքացիական հասարակությունը դիտարկվում է որպես միջնորդավորված պահանջմունքների համակարգ, որը հենվում է մասնավոր սեփականության և մարդկանց համընդհանուր իրավական հասարակության վրա:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ինստիտուտները գործում են պետության նկատմամբ ունեցած հարգանքից, այլ ոչ թե ամրագրված սանցքիներից և հասարակական կյանքում պետք է հանդես գան, որպես անցումային և կապող օղակներ:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունը մարդու իրավունքների և ազատությունների խախտում է համարում սոցիալ-էկոլոգիական հիմնախնդիրների նկատմամբ պետության կողմից դրսևորվող անտարբերությունը: Չպետք է քմահաճ վերաբերմունք ունենալ մարդկանց ապագայի, անվտանգ և բարեկեցիկ կյանքի նկատմամբ: Կուսակցությունը դատապարտում է պետության մեջ ավտորիտարիզմի և տոտալիտարիզմի դրսևորումները: Ժողովրդավարական իշխանությունն իր գործունեության մեջ մեծ տեղ պետք է վերապահի լեգիտիմության կայացմանը, քանի որ կառավարվում է ժողովրդի համաձայնությամբ: Լեգիտիմ իշխանության պայմաններում հասարակության առջև ծառացած յուրաքանչյուր խնդիր պետք է արժանանա համապատասխան վերաբերմունքի:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Իրավական համակարգի կենսունակությունը մեծապես կախված է գործող օրենքների կիրառման վախից: Անհրաժեշտ է ընդունել օրենքներ, որոնք սկզբունքորեն կարող են կարգավորել միջանձնային հարաբերություններն ու կապերը: Յուրաքանչյուր օրենքի էությունը պետք է լինի իրավունքների և պարտականությունների միասնություն:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Ընտրությունները ժողովրդավարական քաղաքական համակարգի փաստացի հիմնավորումն են: Միաժամանակ, նրանք հանդիսանում են իշխանության լեգիտիմության գործիք: Կուսակցությունն ընդունում է համընդհանուր ընտրական իրավունքը, որի հիմքում ընկած են ազատության, հավասարության և թափանցիկության սկզբունքները: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում մարդկանց ակտիվ քաղաքական մասնակցությունը: Հասարակության մեջ այն աշխատող մեխանիզմ կդառնա բացառապես գաղափարական համոզմունքների հիման վրա: Անտարբերությունն ընտրությունների նկատմամբ որպես սոցիալ-քաղաքական երևույթ կարող է հաղթահարվել հատուկ ընդգծված գաղափարաքաղաքական հոսանքների արտահայտման պայմաններում, որտեղ գերակայող սկզբունքի դերում հանդես է գալիս սոցիալ-քաղաքական հայեցակարգը:

4.12. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Կուսակցությունը գտնում է, որ պետության անվտանգությունն ու կայունությունն ապահովելու համար պետք է նպաստել ՀՀ Ազգային բանակի կայացմանը:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է ձևավորել էկոլոգիայի կառավարման այնպիսի համակարգ, որը չի արգելակում սոցիալական պրոգրեսը: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունի այնպիսի էկոլոգիական աուդիտի անցկացումը, որի շնորհիվ արդյունաբերական ձեռնարկություններն ու ստրատեգիական նշանակություն ունեցող օբյեկտներն առավելապես հոգ կտանեն նոր տեխնոլոգիաներ ձեռք բերելու խնդրին, և դրանով նվազագույնի կհասցնի շրջակա միջավայրին հասցված վնասը:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Կուսակցությունը կարևորում է քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման գործընթացին առողջ՝ երիտասարդ ուժերի ներգրավումը:

4.15. Այլ (Լեզիտիմ կառավարում)

Կուսակցությունը գտնում է, որ չկա ժողովրդավարական կառավարում առանց լեզիտիմության հաստատման: Այն անհրաժեշտ անցում է երեք հիմնական ուղիներով. 1. պետական իշխանության ճանաչում, 2. պետական իշխանության ընդունում, 3. պետական իշխանության կառավարման իրավասություն: Եթե խախտվում է այս գործընթացի հաջորդականությունը, ապա ամբողջ քաղաքական համակարգը փոխակերպվում է ավտորիտար կառավարման: Այստեղ արդեն պետական իշխանության կառավարման իրավասություն է առանց հասարակության կամքի արտահայտման:

3.7. «ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԾ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Սարյան 38
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 53-50-34
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ armeniannationalmovement@gmail.com
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.anm.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 1989թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 15.07.1991թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 20.05.2005թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 05.11.1989թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 17.07.2010թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝ 17.07.2010թ., www.anm.am կայքէջում
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝ «Հայք» օրաթերթ
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 48
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 7750, որից
 - Կանայք՝ 32%
 - Երիտասարդներ՝ 21%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ չի մասնակցել:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Հանրապետական խորհուրդ՝ 72 անդամ
- Վարչություն՝ 29 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Արամ Վիգենի Մանուկյան
- Կուսակցության նախագահի տեղակալ՝ Սամվել Միշայի Աբրահամյան
- Կուսակցության գործադիր քարտուղար՝ Վահագն Արսենի Հայոցյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

- Կուսակցության անդամագրվել կամ կուսակցությունից դուրս գալ ցանկացող անձինք սահմանված կարգով դիմում են ներկայացնում կուսակցության համապատասխան տարածքային կազմակերպության խորհրդի նախագահի անունով, որից հետո ընդունվում է համապատասխան որոշում տարածքային կազմակերպության խորհրդի կողմից:
- Կուսակցության անդամը մուծում է անդամավճար իր գրանցման տարածքային կազմակերպությունում, տվյալ կառույցի կողմից սահմանված նվազագույն չափից ոչ պակաս, իսկ առավելագույն չափ չի սահմանվում, այն թողնված է անդամի հայեցողությանը:
- Կուսակցության անդամ կարող է դառնալ տասնութ տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, որն ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, ցանկանում է մասնակցել վերջինիս գործունեությանը և չի հանդիսանում այլ կուսակցության անդամ:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Հայոց Համազգային Շարժումը ազատության կուսակցություն է, որն առաջնորդվում է երկրի անկախության, անհատի ազատության, արժանապատվության, մարդու հիմնական իրավունքների պաշտպանության սկզբունքներով:

3.2. Նպատակները և խնդիրները

- Կուսակցության նպատակն է ազատական, ժողովրդավարական սկզբունքների հիման վրա ապահովել ՀՀ քաղաքական, տնտեսական և հոգևոր զարգացումը: Կուսակցությունը Հայաստանի անվտանգության ապահովման ու զարգացման կարևորագույն գործոն համարում է հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, ինչպես նաև սկզբունքորեն կարևորում՝ տարածաշրջանային և միջազգային խաղաղությանը նպաստելը:

- Կուսակցությունը գործում է օրինականության, կամավորության, իրավահավասարության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով: Կուսակցությունն իր ծրագիրն իրականացնելու նպատակով ընտրությունների միջոցով մասնակցում է ՀՀ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը և դրանց գործունեությանը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Ազատական-ժողովրդավարական

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ՀՀ արտաքին քաղաքականության իրականացում՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:
2. Նորմալ միջպետական հարաբերություններ բոլոր հարևանների հետ:
3. Ինտեգրում միջազգային, հատկապես, եվրոպական կառույցներին:⁵

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.⁴

- ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի տարածաշրջանում և աշխարհում կայուն խաղաղության և տնտեսական համագործակցության ապահովմանը:
- Պետք է կտրականապես մերժել օտար պետությունների կողմից Հայաստանի պետական շահերին առնչվող ազգային խնդիրների օգտագործումը միջազգային հարաբերություններում, որպես այլ երկրների հանդեպ քաղաքական ճնշման կամ շահ ստանալու միջոց, ինչը լինելով անընդունելի, միաժամանակ նվազեցնում է հարևանների հետ փոխըմբռնման ՀՀ հնարավորությունները:

ա. Եվրաինտեգրում⁵

ՀՀ անդամակցությունը Եվրամիությանը կուսակցության հիմնական նպատակներից է:

բ. ԱՊՀ⁵

Անհրաժեշտ է մասնակցել ԱՊՀ կառույցների նախաձեռնություններին՝ ելնելով ՀՀ իրական շահերից:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Նախընտրելի է բոլոր հարևանների հետ ընդգրկվել միևնույն անվտանգության համակարգում:

դ. ՀԱՊԿ (NATO)

Հայաստանի պետական անկախության և ժողովրդի անվտանգության կարևորագույն երաշխիքներն են՝ անհրաժեշտ պաշտպանություն ապահովող, բարոյապես կայուն ու մարտունակ պրոֆեսիոնալ բանակը, միջազգային առավել հեռանկարային ու հզոր անվտանգության համակարգին անդամակցելը:

ե. ԱՄՆ

Անհրաժեշտ է հաստատել նորմալ միջպետական և հավասարազոր գործընկերային հարաբերություններ:

զ. Ռուսաստանի Դաշնություն⁵

Անհրաժեշտ է դուրս գալ վասալային վիճակից, վերականգնել հավասարազոր գործընկերային միջպետական հարաբերությունները:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁵

Ցեղասպանության ճանաչման հարցը գաղափարախոսական և քարոզչական հարթությունից պետք է տեղափոխվի քաղաքական հարթություն: Խնդիրը պետք է քննարկել Թուրքիայի հետ երկկողմ բանակցությունների ընթացքում: Ցեղասպանության ճանաչումը չի կարող լինել ՀՀ արտաքին քաղաքականության գերակա խնդիր:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ⁵

Անհրաժեշտ է վերականգնել իրական բանակցություններ ԼՂՀ հիմնահարցի շուրջ՝ Ղարաբաղյան կողմին դարձնելով բանակցությունների լիարժեք մասնակից: Խնդրի կարգավորման միակ իրատեսական տարբերակը փուլայինն է: Պատերազմը պետք է բացառվի, ուստի և Ղարաբաղյան հարցը պետք է լուծվի միայն խաղաղ և փոխզիջումային բանակցությունների միջոցով:

թ. Իրան

Իրանի հետ անհրաժեշտ է բարիդրացիական հարաբերությունների ամրապնդում:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ

- Վրաստանի հետ անհրաժեշտ է բարիդրացիական հարաբերությունների ամրապնդում:
- Ջավախահայության հիմնախնդիրների լավագույն լուծումը կլինի նրանց լայն ինտեգրումը Վրաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական բնագավառներում⁵:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Հայաստանն այն հիմնական առանցքն է, որի շուրջ պետք է համախմբվեն օտար երկրներում կազմավորված հայկական համայնքները: Համահայկական հարցերում Հայաստանը տարբեր օտար երկրների հայ համայնքների հետ հարբերությունները պետք է կառուցի երկրի պետական և սփյուռքահայության շահերի ներդաշնակեցման հիման վրա: Հայաստանը պետք է նպաստի օտար երկրներում հայկական համայնքային կառույցների կապերի սերտացմանը և ակտիվ համագործակցությանը՝ միաժամանակ խուսափելով միջամտել ներհամայնքային հարաբերություններին: Սփյուռքահայությունն, իր հերթին, պետք է ձեռնպահ մնա Հայաստանի ներքաղաքական զարգացումներին միջամտելու և նրա արտաքին քաղաքականության վրա ազդելու որևէ նախաձեռնությունից: Հայաստանը պետք է արագորեն արձագանքի որևէ երկրի հայ համայնքի նկատմամբ այլատյացության և այլ կարգի սպառնալիքների դրսևորումներին:

լ. Այլ (Քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտներ)

Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր խոչընդոտները հիմնականում արտաքին քաղաքական են՝ դարաբաշխի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի բացակայությունը և դրանով պայմանավորված տնական շրջափակումը, որոնց հաղթահարումը պետք է լինի երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրը, որի լուծումով միայն հնարավոր կդառնա տնտեսական և սոցիալական լուրջ առաջընթացը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Կուսակցությունը կարևորում է պետականության ամրապնդումը և այնպիսի հասարակարգի ստեղծումը, որը երաշխավորում և ապահովում է՝

1. մարդու կյանքի և սեփականության անձեռնմխելիությունը,
2. յուրաքանչյուր անձի խոսքի, խղճի, մտքի, դավանանքի ազատությունը,
3. օրենքի գերակայությունն ու նրա առջև բոլորի հավասարությունը, իշխանությունների տարանջատումն ու հասարակության կողմից վերահսկելիությունը, դատարանի անաչառությունը:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

ՀՀ տնտեսական համակարգի հիմքը պետք է լինի ազատականությունը, որը ենթադրում է մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը և լիակատար իրավական պաշտպանվածությունը:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁵

Անհրաժեշտ է ապահովել երկարաժամկետ վարկերի տրամադրումը:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁵

Անհրաժեշտ է ապահովել պետական բյուջեի՝ որպես ՀՀ օրենքի կատարողականի հրապարակայնությունը՝ կտրուկ նվազեցնելով պետական կառավարման մարմինների ծախսերը:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ⁵

- Անհրաժեշտ է հարկային բեռի կտրուկ թեթևացում, որը հնարավորություն կտա ընդլայնել հարկային բազան: Անհրաժեշտ է առավելագույնս պարզեցնել հարկային օրենսդրությունը:
- Անհրաժեշտ է մաքսասակագնային քաղաքականության փոփոխություն՝ նպատակ ունենալով բարձրացնել արտահանողի և ներկրողի պաշտպանվածությունը:

դ. Արդյունաբերության զարգացում

Հայաստանն իր կարողություններին համապատասխան պետք է զարգացնի այնպիսի տնտեսական ճյուղեր, որոնք հնարավորություն կընձեռեն առավել արագորեն ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը և ուրույն տեղ գրավել համաշխարհային շուկայում: Մոտակա տարիները վճռական պետք է լինեն Հայաստանը առանձին երկրների ապրանքային կցորդի կարգավիճակից ձերբազատելու գործում: Անհրաժեշտ է կտրուկ արագացնել նոր արդյունաբերական համակարգի կայացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և այդ համակարգը ձևավորող նոր ձեռնարկություններին տրամադրել ժամկետային զգալի արտոնություններ:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Անհրաժեշտ է ապահովել տնտեսության ազատականացման անդարձելիությունը, բոլոր բնագավառներում վերացնել մենաշնորհները և խրախուսել ազնիվ մրցակցությունը, վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության մրցունակ ճյուղերը, վերազինել դրանք գիտատեխնիկական առաջատար տեխնոլոգիաներով: Պետք է համապատասխան պայմաններ ստեղծել Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի հիմնավորված էժանացման ու մրցունակության կտրուկ բարձրացման համար:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

- Անհրաժեշտ է նախապատվությունը տալ գիտատար և նոր տեխնոլոգիաների հիման վրա զարգացող արդյունաբերության ճյուղերին:
- Տնտեսության, արդյունաբերության, կրթության, մշակույթի, սոցիալական և այլ բնագավառներում անհրաժեշտ է իրականացնել ապակենտրոնացման քաղաքականություն:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁵

Էներգետիկայի զարգացման համար լավագույնը՝ այլընտրանքային, էկոլոգիապես անվտանգ աղբյուրների օգտագործումն է: Միաժամանակ էներգետիկայի բնագավառում անթույլատրելի է հպատակի և տիրոջ հարաբերությունները, որոնք ձևավորվել են Ռուսաստանի հետ 1998թ-ից ի վեր, որն ամբողջովին վտանգում է ՀՀ էներգետիկ անվտանգությունը:

ը. Զբոսաշրջության զարգացում⁴

Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր խոչընդոտների վերացումը՝ դարաքաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը և տևական շրջափակման վերացումը հնարավորություն կտա զարգացնելու զբոսաշրջության ոլորտը, որն այսօր հիմնված է սփյուռքի նվազող հայրենաբաղձության զգացումի և հարևան Իրանի քաղաքացիների կրոնական տոնակատարությունների արտագնա քիչ թե շատ ազատ արարողությունների կատարման վրա:

թ. Ներդրումների խթանում

Տնտեսական համակարգի հիմքը պետք է լինի ազատականությունը, մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, ազատ մրցակցությունը և լիակատար իրավական պաշտպանվածությունը, որը կխթանի արտաքին ներդրումների ծավալները, ինչի շնորհիվ կտրուկ կնվազի գործազրկությունը և կապահովվի անհրաժեշտ տնտեսական աճ:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Անհրաժեշտ է ապահովել տնտեսության ազատականացման անշրջելիությունը, բոլոր բնագավառներում վերացնել մենաշնորհները և խրախուսել ազնիվ մրցակցությունը:

Փոքր և միջին բիզնեսի զարգացման համար նպատակահարմար է ապահովել հարկային և վարկային խրախուսման օրենսդրական շարունակական զարգացում:

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁴

Քաղաքական մրցակցությունը, որը կնպաստի օրինակարգ իշխանության ձևավորմանը, կբարձրացնի քաղաքական միավորների դերը և պատասխանատվությունը, հնարավորություն կընձեռնի նվազագույնի հասցնել ստվերային տնտեսությունը:

Անհրաժեշտ է տնտեսական մենաշնորհների վերացում և ազատ մրցակցության ապահովում:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

Կուսակցությունը համարում է, որ ներկայումս Հայաստանում սոցիալական արդարության հաստատման գլխավոր խոչընդոտը կոռուպցիան է, որը կազմավորում է երկրի պետական կառույցները և պառակտում հասարակությունը: Կոռուպցիայի դեմ պայքարի այլևայլ միջոցների շարքում առավել արդյունավետն իշխանությունից և գործատուներից քաղաքացու կախվածության հիմքերը ողջամիտ նվազագույնի հասցնելն է և անօրինականությունների դեմ ամենօրյա անհաշտ պայքարը: Կոռուպցիայի նվազեցումը հնարավոր է օրինականության ամրապնդման և հասարակության միջին կենսամակարդակի բարձրացման միջոցով:

լւ. Այլ (Առևտրի համաշխարհային կազմակերպություն)⁵

Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջների կատարում: ՀՀ-ն Առևտրի Համաշխարհային Կազմակերպության լիարժեք անդամ է, ինչը նշանակում է, որ Հայաստանը հետևողականորեն պետք է իրականացնի այդ հեղինակավոր միջազգային կազմակերպության պահանջները:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում .

Սոցիալական քաղաքականությունը պետք է խարսխվի այն անվիճարկելի իրողության վրա, որ յուրաքանչյուր երկրի ամենակարևոր արժեքը, անփոխարինելի ռեսուրսը և մեծագույն հարստությունը մարդն է՝ երկրի քաղաքացին: Կուսակցության գլխավոր նպատակները և հասարակության յուրաքանչյուր անդամի բարեկեցության անշեղ աճի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը:

ա. Աղքատության հաղթահարում⁵

Աղքատության հաղթահարման միակ և արդյունավետ միջոցը վերջնական խաղաղության հաստատումն է, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի վերացնել շրջափակումը և նոր աշխատատեղեր ստեղծել նոր ներդրումների հաշվին:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Սովետային տնտեսության վերացման հաշվին հնարավոր է նվազեցնել հասարակության շերտերի բևեռացումը և հաստատել ու իրագործել սոցիալական արդարության քաղաքականության ամբողջական համակարգ, որի բաղկացուցիչները բնակչության զբաղվածության հետ մեկտեղ կազմում են սոցիալական պաշտպանվածության և կենսաթոշակային ապահովության հիմնասյուները:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում⁴

Զբաղվածության ապահովման համար անհրաժեշտ է տնտեսական կտրուկ աճ, որը հնարավոր է իրագործել ժողովրդի կողմից ընտրված օրինական իշխանության միջոցով:

դ. Առողջապահական համակարգի բարելավում⁵

Պետությունը պետք է ֆինանսավորի միայն համաճարակային, մանկական և մի քանի տարածված ու վտանգավոր հիվանդությունների կանխարգելումն ու բուժումը: Անհրաժեշտ է ներդնել բուժական ապահովագրական լայն ցանց՝ միջազգային նմանատիպ կառույցների հետ սերտ համագործակցությամբ:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում⁵

Պետք է անպայման գործի սոցիալական ապահովության այլընտրանքային ապահովագրական և զեղչերի ձևերի համակարգ:

զ. Այլ (օգնություններ ու բարեգործություններ)

Կուսակցությունը անթույլատրելի և Հայաստանի քաղաքացու համար անպատվաբեր է համարում, որ հայաստանյան հասարակության նշանակալի հատվածը աշխատատեղերի բացակայության պատճառով չի կարողանում իր հանապազօրյա հացը վաստակել հանրօգուտ աշխատանքով, զուրկ է կենսական նվազագույն ապահովությունից ու տարիներ շարունակ թողնված է նպաստների, օգնությունների ու բարեգործությունների հույսին:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում⁵

Հանրակրթությունը պետք է լինի պետական մենաշնորհ, զերծ լինի կուսակցական գաղափարախոսություններից: Ուսուցումը հանրակրթությունում պետք է իրականացվի միայն հայերենով՝ միաժամանակ ապահովելով օտար լեզուների լիարժեք ուսուցումը: Մասնավոր ԲՈԻՀ-երը պետք է դառնան լուրջ մրցակիցներ պետական ԲՈԻՀ-երին:

4.7. Գիտության զարգացում⁵

Գիտության ներուժի պահպանությունը պետք է լինի ռազմավարական խնդիր: Գիտության բոլոր ճյուղերը պետք է ֆինանսավորվեն անկախ հիմնադրամների կողմից, որով հնարավոր կլինի պետության հետ մեկտեղ շահագրգռել գիտության զարգացմամբ հետաքրքրվող հասարակության բոլոր շերտերին: Տեխնիկական և կիրառական ճյուղերի մեջ անհրաժեշտ ներդրումների ներգրավումը հնարավոր է ներքին և արտաքին համապատասխան քաղաքականության մշակման և կիրառման միջոցով:

4.8. Մշակույթ և սպորտ⁴

Մշակույթը պետք է զերծ լինի որևէ գաղափարախոսությունից: Այն պետք է մասնակիորեն հովանավորվի պետության կողմից: Մշակույթը պետք է միտված լինի համամարդկային արժեքների ինտեգրմանը՝ զուգահեռաբար պահպանելով և զարգացնելով ազգային արժեքներն ու մշակույթը:

Պետք է տարանջատել զանգվածային ֆիզկուլտուրան պրոֆեսիոնալ սպորտից: Զանգվածային ֆիզկուլտուրայի զարգացման համար պետք է ցուցաբերվի պետական հոգածություն, միաժամանակ խրախուսվի անկախ կազմակերպությունների ներդրումները:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում⁴

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման դերը պետք է բարձրացնել վարչահրամայական մեթոդներից հրաժարվելու միջոցով: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է առաջնորդվեն օրենքի կատարման առաջնահերթությունից և ապահովեն իրենց գործառույթների կատարման հրապարակայնությունը:

ա. Համայնքների խոշորացում⁵

Համայնքների խոշորացման խնդիրները պետք է կարգավորել միայն տվյալ տարածքում բնակվող քաղաքացիների կամքի (հանրաքվե) ազատ արտահայտման միջոցով, այդ նպատակով ընդունել համապատասխան օրենսդրություն:

բ. Ավագանու դերի բարձրացում⁵

Անհրաժեշտ է ընդունել տեղական ինքնակառավարման բարեփոխումների ամբողջական ռազմավարական ծրագիր: Ավագանու դերի բարձրացման համար օրենքով սահմանել տեղական նշանակության հարցերում ավագանու ինքնուրույն որոշումներ ընդունելու լիազորություններ:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում⁵

Միջհամայնքային միավորումների ստեղծումը և օրենսդրության հստակեցումը պետք է իրականացվի ժողովրդավարական լայն բարեփոխումների հետ միաժամանակ՝ հաշվի առնելով հարցի կարևորությունը և նրբությունները:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁵

Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացման լավագույն միջոցն ապակետրոնացումն է և ավագանու դերի բարձրացումը:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից⁵

Ապակետրոնացումով համայնքներին պետք է տրվի պետության լայն լիազորություններից հատկապես տեղական տուրքերի հավաքագրումը:

զ. Մարզերի համաչափ զարգացում⁵

Մարզերի համաչափ զարգացումը պետք է իրականացնել՝ տվյալ մարզի ժողովրդագրական տվյալները հաշվի առնելով, միաժամանակ գնահատելով տվյալ մարզի բնական և նյութական ռեսուրսները:

է. Այլ (ՏԻՄ-երի լիազորությունները)⁵

Հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից ՏԻՄ-երի երեք հիմնական՝ պարտադիր, կամավոր և պետության կողմից պատվիրված, լիազորությունների կատարման ընթացքում պետք է օրենքով կանոնակարգել կատարման առաջնահերթությունները:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.⁵

Ընտրական համակարգի բարեփոխումը, քաղաքական կուսակցությունների դերի բարձրացումը և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանն աջակցությունը կարևորագույն խթան կհանդիսանան քաղաքացիական հասարակության ձևավորման համար:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում⁵

Անհրաժեշտ է նպաստել պետականորեն ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը, օժանդակել կուսակցությունների կազմակերպմանն ու ինքնադրսևորմանը, երաշխավորել խոսքի, մամուլի, խղճի իրական ազատությունները և արմատավորել ժողովրդավարության հանրաճանաչ նորմերը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Ցանկացած մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները պետք է ամրագրվեն Սահմանադրությամբ, որոնք սպառնիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների և ազատությունների բացառում:

դ. Դատախիզական համակարգի բարեփոխում⁵

Անհրաժեշտ է իրականացնել իրական օրենսդրական բարեփոխումներ, որոնք կնպաստեն դատախիզական համակարգի տարանջատմանը գործադիր իշխանությունից:

ե. Ընտրական համակարգի բարելավում⁵

Անհրաժեշտ է նոր ընտրական համակարգի ձևավորում, որը կնպաստի քաղաքական մրցակցության կայացմանը Հայաստանում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁵

Անհրաժեշտ է նոր ընտրական համակարգի ձևավորում, որը հնարավորություն կտա լիարժեք իրագործել քաղաքական մրցակցության սկզբունքը, կիսթանի քաղաքական կուսակցությունների գործունեությունը:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁵

Անհրաժեշտ է օրենսդրորեն ընդլայնել հասարակական կազմակերպությունների իրավունքները:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁵

Կանանց շահերի պաշտպանության և նրանց նկատմամբ բռնությունների դեմ պայքարում ներգրավել հասարակության լայն շերտերին, միաժամանակ համագործակցել միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

Հանրությունը օրենսդրության մշակման գործընթացներում լավագույնս կարող է մասնակցել արդար ընտրությունների արդյունքում ընտրված պատգամավորների, ինչպես նաև քաղաքացիների ազատ նախաձեռնությունների միջոցով:

ժ. Այլ (քաղաքացիական հասարակության ինքնակառավարման սկզբունքների ձևավորումը)

Քաղաքացիական հասարակության ինքնակառավարման սկզբունքների ձևավորումը թույլ կտա լուծելու օրինակարգ իշխանություն հիմնելու հասարակության ձգտումները, որն ազգային անվտանգության հիմնախնդիրներից է:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է տարածաշրջանային և միջազգային ինտեգրացիա: Պետք է ներգրավվել անվտանգության առավել արդյունավետ համակարգերում:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Ազգագրական, արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրներն իրենց լուծումները կստանան սոցիալական արդարության սկզբունքների կիրառմամբ, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմամբ:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Բնապահպանական հիմնախնդիրները հնարավոր է լուծել, բայց հասարակության պայմաններում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման դեպքում:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը համոզված է, որ հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը կառողջանա իշխանությունների նկատմամբ հավատի և վստահության վերականգնմամբ:

4.15. Այլ

Կուսակցությունը համոզված է, որ Հայաստանի ազգային անվտանգության հիմնախնդիր է դարձել օրինակարգ իշխանություն ձևավորելու հասարակության ձգտումները, որի միջոցով կլուծվեն պետական-ազգային բազմաբնույթ հիմնախնդիրները:

3.8. «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀայՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք.Երևան, Լյուքսեմբուրգի I նրբանցք, 42, բն.3
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 66-19-48, (+37491) 58-32-22
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ aeghoyan@mail.ru
- Հիմնադրման տարեթիվը՝ մայիս, 2005թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ մայիս, 2005թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ հոկտեմբեր, 2005թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ մայիս, 2005թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ օգոստոս, 2010թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ապրիլ, 2005թ.
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 94
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 18825, որից
 - Կանայք՝ 19%
 - Երիտասարդներ՝ 41%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ չի մասնակցել:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար,
- Կենտրոնական կոմիտե՝ 33 անդամ,
- Մարզային կոմիտեներ, Երևանի քաղաքային կոմիտե, տարածքային կոմիտեներ՝ 871 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Արշակ Սուրենի Բակլաչյան
- Կուսակցության փոխնախագահ՝ Անահիտ Մկրտչի Եղոյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի:
Անդամավճարը՝ կամավոր:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը⁵

Ազգային, ձախամետ- պահպանողական

3.2. Նպատակները և խնդիրները⁵

- պետության հիմքերի ամրապնդումը, հայկական հարցի լուծումը, խոշոր և միջին արտադրության միջոցների մասնակի ազգայնացումը,
- միջին խավի ձևավորումը՝ անհատ ձեռներեցների, ընտանեկան ձեռներեցության և փոքր ձեռնարկությունների հիմնադրման և զարգացման ուղղությամբ պետության կողմից տնտեսական աջակցությունը և խրախուսումը,
- հարկային դաշտի պարզեցումը և հաստատագրված հարկային քաղաքականության իրականացումը,
- սոցիալական արդարությունը, ազգային դպրոցի ամրապնդումն ու պետության կողմից գիտության և կրթության հովանավորությունը,
- արտագաղթի կանխումն ու ներգաղթի ապահովումը,
- ծնելիության խրախուսումը և գյուղատնտեսության պետական հովանավորումը,
- պրոֆեսիոնալ բանակի ձևավորումը և սահմանամերձ բնակավայրերի կարգավիճակի բարձրացումը,
- ազգային մշակույթին աջակցությունը և միջազգային ասպարեզում ներկայացումը, մարզական կյանքի աշխուժացումը և զարգացումը, աջակցությունը երիտասարդ ընտանիքին և երջանիկ մանկության ապահովումը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Ազգային, ձախամետ-պահպանողական

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները⁴

1. Միջազգային ատյաններում ՀՀ դերի ամրապնդում:
2. Կոմպլեմենտար քաղաքականություն:
3. Երկկողմ և բազմակողմ փոխշահավետ կայուն քաղաքականություն:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Արտաքին քաղաքականության ոլորտում պետք է շարունակվի կոմպլեմենտար քաղաքականություն իրականացումը:

ա. Եվրաինտեգրում

Պետք է եվրաինտեգրվել՝ ազգային հոգեկերտվածքի պահպանմամբ: Կձգտենք և կհասնենք արևելքի ու արևմուտքի պետությունների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների սերտացմանը՝ օգտագործելով ոչ միայն մեր քաղաքական դիրքն ու տնտեսական ներուժը:

բ. ԱՊՀ⁵

Անհրաժեշտ է վերականգնել և ամրապնդել ավանդական տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը կուսակցությունը ցուցաբերում է դրական մոտեցում:

դ. ՀԱՂԿ (NATO)⁵

ՀԱՂԿ-ի հետ անհրաժեշտ է համագործակցության ամրապնդում:

ե. ԱՄՆ⁵

ԱՄՆ-ի հետ անհրաժեշտ է քաղաքական և տնտեսական հարաբերությունների ամրապնդում և առավել ջերմացում:

զ. Ռուսաստանի Դաշնություն⁵

ՀՀ քաղաքացիների անվտանգության ապահովում և ռազմավարական գործընկերոջը հատուկ իրական հարաբերություններ:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Ցեղասպանության ճանաչումը պարտադիր է:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ⁵

Ղարաբաղի Հանրապետությունն արդեն լուծել է այդ հիմնախնդիրը:

թ. Իրան⁵

Իրանի հետ պետք է ամրապնդել քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը: Միջազգային ատյաններում անհրաժեշտ է փոխադարձ աջակցություն: Հայաստանը ոչ մի պայմանով չպետք է դառնա պլացդոմ Իրանի հանդեպ երբևէ ռազմական գործողություններ իրականացնելու պարագայում:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁵

Վրաստանի հետ պետք լինեն իրական բարիդրացիական հարաբերություններ:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Հայաստան-Սփյուռք կապերի խորացումը պետք է լինի բոլոր ոլորտներում և բնագավառներում: Պետությունների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների սերտացմանը՝ օգտագործելով ոչ միայն մեր քաղաքական դիրքն ու տնտեսական ներուժը, այլև այդ երկրներում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունները և սփյուռքի աջակցությունը: Անհրաժեշտ ենք համարում սեղմ ժամանակահատվածում ընդունել երկքաղաքացիության մասին վաղուց սպասված օրենքը: ՀայՀԿ-ը պայքարելու է սփյուռքում յուրաքանչյուր հայի հայ մնալու համար և հնարավոր ամեն ինչ անելու է սփյուռքահայության շրջանում հայոց լեզվի իմացության, հայ ժողովրդի և Հայաստանի պատմությանը գոնե ծանոթացման, հայ գրականության և մշակույթի տարածման ուղղությամբ: Այս գործում ՀայՀԿ-ը պատրաստ է համագործակցել պետական մարմինների, Հայաստանի և սփյուռքի հասարակական, քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների և օտար, բայց հայամետ անհատների ու կազմակերպությունների հետ:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Արտադրության խոշոր և միջին ձեռնարկությունների մասնակի (51%) ազգայնացում:
2. Անհատ ձեռներեցների ազատում բոլոր հարկերից՝ միջին խավի ձևավորում:
3. Սոցիալական արդարություն:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում խիստ անհրաժեշտ է: Այս հարցում կուսակցությունը նախատեսում է ազգայնացման գործընթաց: Պետությունը պետք է ուղղակի մասնակցի տնտեսության կառավարման ողջ գործընթացին:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁵

Անհրաժեշտ է բանկերի 51% փայաբաժնի ձեռքբերում պետության կողմից:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁵

Հիմնավորված սոցիալական ուղղվածությամբ բյուջեի հաստատում:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Անհրաժեշտ է անհատ ձեռներեցների, ինչպես նաև ընտանեկան ձեռներեցության և փոքր արտադրական ձեռնարկությունների ազատում հարկերից:

Պետք է արտահանվող տեղական արտադրության վերջնական արտադրանքի մաքսատուրքերի նվազեցում և Հայաստանում արտադրվող ապրանքներին համանման ապրանքների ներկրման մաքսատուրքի բարձրացում:

դ. Արդյունաբերության զարգացում⁴

Ոլորտի զարգացումը հնարավոր է շուկաների ուսումնասիրման և արդյունաբերական ձեռնարկությունների վերամասնագիտացման ու գործարկման դեպքում:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Անհրաժեշտ է պետություն-գյուղացի պայմանագրային և փոխշահավետ համագործակցություն: Գյուղացի-պետություն հարաբերությունները պետք է կանոնակարգվեն օրենքներից բխող անհատական պայմանագրերով, կրեն փոխշահավետ, շահագրգիռ բնույթ: Ավելորդ չենք համարում հակակարկտային համալիրների և գյուղատնտեսական ավիացիայի վերականգնումը: Պետք է գործի գյուղարտադրության պետական պարտադիր ապահովագրությունը, որը պետք է հատուցի գյուղացուն՝ կրած կորուստների դիմաց: Սահմանամերձ գյուղը Հայաստանի ամենագործուն սահմանապահն է, սահմանամերձ գյուղերում բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձը պետք է սահմանել մայրաքաղաքի հետ համեմատած՝ առնվազն 1.5 անգամ ավելի:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁵

Պետք է այլընտրանքային միջոցների ներգրավում և ներդրում այս բնագավառում:

թ. Ներդրումների խթանում⁵

Պետությունը պետք է հանդիսանա անկորուստ ներդրման գրավականը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Անհատ ձեռներեցներին հարկերից ազատման միջոցով կապահովվի փոքր և միջին բիզնեսի զարգացումը:

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁵

Արտադրության գործընթացին պետության ուղղակի մասնակցությունը կրացառի ստվերային տնտեսությունը: Մասնակի ազգայնացման արդյունքում գործուն կդառնա պետություն - ձեռներեց փոխադարձ վերահսկումը: Փայատերերից և ոչ մեկն իրավունք և հնարավորություն չի ունենա դիմել զարտուղի ճանապարհների, թաքցնել իրական եկամուտները, ներկայացնել գնագոյացման կեղծ թվային փաստեր: Կայունանա նաև հարկային դաշտը, կրացառվի կամ գրեթե կրացառվի հարկատվությունից խուսափումը:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁵

Պետություն-գործարար և պետություն-քաղաքացի համագործակցությունն ու փոխադարձ վերահսկողությունը կրացառեն կոռուպցիան: Մասնակի ազգայնացման արդյունքում կվերանա այսպես ասած «տանիքի» անհրաժեշտությունը, կոռուպցիան մեծ հարված կստանա՝ փաստացի զրկվելով նյութական բազայից:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

Արտադրության միջոցների մասնակի ազգայնացման (51%) գործընթացի արդյունքում կապահովվեն պետության փայաբաժնից կայացած կայուն և ամենամյա մուտքերը պետական բյուջե:

ա. Աղքատության հաղթահարում

Ելնելով ներկայիս խնդիրներից՝ անհրաժեշտ է հատուկ ռազմավարության մշակում և կիրառում:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Անհրաժեշտ է անհատ ձեռներեցության խրախուսման ճանապարհով միջին խավի ձևավորում, մասնակի ազգայնացման քաղաքականության իրականացման ճանապարհով աշխատատեղերի ստեղծում և աղքատության հաղթահարում, ինչպես նաև գերշահույթ ստացող բոլոր ձեռնարկությունների և անհատների նկատմամբ պրոգրեսիվ հարկի կիրառում:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Պետք է ապահովել ՀՀ քաղաքացու կենսագործունեության բարեկեցիկ պայմանների ստեղծում՝ պետության կողմից աշխատանք և սոցիալական արդարություն:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Պետք է ապահովել անվճար բուժսպասարկում և բժշկական պարտադիր ապահովագրություն:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում պետական ապահովագրության վերականգնումը և համահավասար մրցակցային դաշտի ապահովումը, ինչպես նաև պետության կողմից սոցիալական չափանիշների հիմնավորումը և վերասահմանումը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում⁴

ՀայՖԻ-ն անհրաժեշտ է համարում ապահովել անվճար կրթություն պետական բոլոր կրթական հաստատություններում՝ նախակրթարանից մինչև բուհական համակարգ, մասնավոր կրթօջախների ստեղծման խրախուսում, ինչպես նաև խոշոր ձեռնարկությունների գործարկմանը զուգընթաց՝ գործատուի ներկայացրած առաջարկ-պահանջարկով պրոֆտեխկրթության համակարգի գործարկում:

4.7. Գիտության զարգացում⁵

Անհրաժեշտ է պետական հովանավորություն և որպես սահմանադրական նորմ՝ պետբյուջեի 30%-ի հատկացում գիտությանը և կրթությանը: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը պետք է վճարվի ոչ պակաս, քան մեր երկրի բանակի սպայական անձնակազմը, քանզի սա էլ ճակատ է, որը ինտելեկտուալ ներուժի ստեղծման գրավականն է:

4.8. Մշակույթ և սպորտ⁴

Անհրաժեշտ է նպաստել ազգային մշակույթի զարգացմանը և միջազգային ասպարեզում ներկայացմանը, այդ թվում նաև՝ ազգային փոքրամասնությունների մշակույթի: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում սպորտային ինդուստրիայում միջազգային ներդրումները և ոլորտի զարգացման արդյունավետ քաղաքականությունը:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.⁴

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ժողովրդավարության հիմնավոր կայացումն ու պետական մարմինների կողմից ռազմավարական քաղաքականությունը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում⁵

Անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների ընդլայնում:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում⁵

Ընդդիմադիր ԶԼՄ-ին պետք են պետական հոգածություն, նյութական և տնտեսական հատկացումներ:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում օրենսդրական դաշտի ստեղծումն ու կիրառումը:

դ. Դատախիզավական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է ՀՀ-ում ներդնել երդվյալ ատենակալական համակարգ Կուսակցությունը ձգտելու է նպաստել ՀՀ-ում համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակեցմանը, մարդու իրավունքների, ազատությունների, անվտանգ ու արժանապատիվ կյանքի երաշխավորվածությանը:

ե. Ընտրական համակարգի բարելավում⁵

Անհրաժեշտ է միջազգային ընդունված չափանիշների ներդրում օրենսդրությունում, ինչպես նաև թափանցիկ ընտրությունների անցկացում: Ընտրակեղծիքների և ընտրական օրենսգրքի այլ հանցավոր խախտումների համար քրեական պատասխանատվության խստացում՝ քրեական օրենսգրքում փոփոխությունների կատարում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետք է աջակցություն ցուցաբերել կուսակցություններին իրենց գաղափարախոսական քարոզչության իրականացման գործում: Պետությունը պետք է աջակցի քաղաքական կառույցների զարգացմանը, լիարժեք բազմակուսակցական համակարգի կայացմանը՝ խթանելով ժողովրդավարության հիմունքների վրա քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Անհրաժեշտ է կրթական համակարգի, ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև ոստիկանության, բանակի, մշակույթի, սպորտի և արտադրության գործընթացներում ընդգրկված անձանց հայրենասիրական և ազգապահպան գաղափարախոսության արմատավորում:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Ծնելիության խրախուսումը, արտագաղթի դադարեցումը ու ներգաղթի վերականգնումը, ինչպես նաև բազմազավակության խրախուսումը պետք է լինեն մեր պետության թիվ մեկ խնդիրները:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում Սևանա լճի, ՀՀ կանաչ գոտիների և կենդանական աշխարհի պահպանության ապահովումը, ինչպես նաև հանքարդյունաբերության և արտադրության արտանետումների նորմատիվ պահանջների ապահովումը:

3.9. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան փ.116 շ., բն. 12
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 58-57-34
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ zartak69@yahoo.com
- Հիմնադրման տարեթիվը՝ 27.02.2001թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 27.03.2001թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 02.12.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 27.02.2001թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրասովամիջոցները՝ 25.11.05թ.՝ 5-րդ արտահերթ համագումարի N 11 որոշմամբ:
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 50
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 5500
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ չի մասնակցել:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 11 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Արամ Զավենի Սարգսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Իր դիմումի համաձայն և սկզբնական կազմակերպության որոշմամբ կամ կուսակցության սկզբնական կազմակերպություն հիմնադրելու մասին հիմնադիր որոշմամբ կուսակցության անդամ կարող է դառնալ ընտրական տարիք ունեցող ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ով ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, իր գործունեությամբ պատրաստ է նպաստել նրա նպատակների ու խնդիրների իրագործմանը և այլ կուսակցության անդամ չէ:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

«Հանրապետություն» կուսակցությունը գերակա է համարում մարդու իրավունքներն ու ազատությունները, ՀՀ-ի ամրապնդումն ու զարգացումը: Կուսակցությունն առաջնահերթ է համարում երկրում սահմանադրական կարգի վերականգնումը և համակարգային բարեփոխումների իրականացումը: «Հանրապետություն» կուսակցության որդեգրած սկզբունքները՝ Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ժողովրդավարությունը և խոսքի ազատությունը, ինչպես նաև մարդու ազատությունները և սեփականության իրավունքը, մեր ժողովրդին միավորող հիմնարար գաղափարներն են:

Կուսակցության նպատակն է ՀՀ ամրապնդումն ու հզորացումը, ՀՀ քաղաքացիների բարեկեցիկ կյանքի ապահովումը և ազգային խնդիրների շուրջ հայ ժողովրդի համախմբումը:

3.2. Նպատակները և խնդիրները

Իր առջև դրված նպատակներին հասնելու համար կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

- պահպանողական գաղափարների և աշխարհայացքի վրա խարսխված քաղաքական արժեքային նոր համակարգի ստեղծումը,
- ժողովրդի քաղաքական կամքի ազատ ձևավորման և արտահայտման ապահովումը, Հայաստանում ժողովրդավարության հաստատումն ու քաղաքացիական հասարակության ստեղծումը,
- ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի գերակայության ապահովումն ու իրավական պետության կայացումը,
- տնտեսական գործընթացներում պետության կարգավորիչ դերի հստակեցումն ու ուժեղացումը, տնտեսական հարաբերությունները կազմավորող իրավական դաշտի բարելավումը՝ երաշխավորելով ազատ մրցակցության և գործարար ակտիվության զարգացումը, ինչպես նաև ներդրումների համար բարենպաստ պայմանների ապահովումը և սոցիալական շուկայական տնտեսության ձևավորումը,
- ՀՀ-ում համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակեցումը, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանությունը,

- պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշիռ, տարանջատ և անկախ գործունեության ապահովումը,
- տարածաշրջանային և միջազգային ինտեգրացիոն գործընթացներին ՀՀ ակտիվ մասնակցությունը, այլ երկրների հետ փոխշահավետ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների հաստատումն ու զարգացումը,
- ազգային անվտանգության համալիր ծրագրի մշակումն ու իրագործումը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

«Հանրապետություն» կուսակցությունը պահպանողական կուսակցություն է:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները:

1. ԼՂ-ի խնդրի արագ, արժանապատիվ և խաղաղ կարգավորում:
2. Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատում և սահմանի բացում:
3. ՀՀ-ի ինտեգրում տարածաշրջանային համագործակցության ծրագրերում և դաշնագրերում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում Հայաստանի արդյունաբերությունը պետք է ուղղորդվի դեպի արտաքին շուկաներ, ապահովելով ինովացիոն տեխնոլոգիաների արտադրություն և արտահանում:

ա. Եվրաինտեգրում

Կուսակցությունն առաջնահերթ է համարում ՀՀ-ի Եվրաինտեգրումը:

բ. ԱՊՀ

ԱՊՀ-ի շրջանակներում համագործակցությունը կազմակերպել այնպես, որ այն չխոչնդոտի ավելի յալն, ավելի արդյունավետ և ավելի առաջադեմ Եվրոինտեգրման գործընթացին:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

ՀԱՊԿ անդամակցությունը ոչ մի կերպ չպետք է սահմանափակի ՀՀ ինքնիշխանությունը և անկախությունը:

դ. ՀԱՄԿ (NATO)

Կուսակցությունը կարևորում է ՀՀ-ի մասնակցությունը և ակտիվությունը տարածաշրջանային անվտանգության նոր համակարգի ձևավորմանը և NATO-ի հետ համագործակցության ընդլայնմանը:

ե. ԱՄՆ

Կուսակցությունը կարևորում է ՀՀ-ԱՄՆ ռազմավարական գործընկերության զարգացումը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում հայ-ռուսական հարաբերությունները հավասարը – հավասարի և գործընկերային դարձնելը:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Կուսակցությունը կարևոր է համարում հայ-թուրքական դիվանագիտական կապերի հաստատումը և առանց նախապայմանների սահմանի բացումը:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Կուսակցությունը ԼՂ-ի խնդրի լուծումը տեսնում է ռեգիոնալ համագործակցության, ժողովրդավարական ինստիտուտների կայացման ու զարգացման համատեքստում:

թ. Իրան

Կուսակցությունը կարևորում է հայ-իրանական հարաբերությունները՝ վստահություն հայտնելով, որ Իրանի շուրջ միջազգային լարվածությունը խաղաղ հանգուցալուծում կստանա:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ

Վրաստանը ՀՀ-ի ռազմավարական դաշնակիցն է:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Պետությունը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի հայ ժողովրդի համախմբման՝ Հայաստանի հզորացման և Սփյուռքի հայապահպանության խնդիրների լուծման համար:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Դատական համակարգի անկախացում:
2. Ընտրական ինստիտուտների վերականգնում: Ժամանակակից ժողովրդավարության հաստատում:
3. Օլիգարխիկ համակարգի վերացում:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք

Պետությունը պետք է պատասխանատվություն կրի քաղաքական և տնտեսական պայմանավորվածությունների և պայմանագրերի կատարման համար, բարոյական, տնտեսական և քաղաքական իրավիճակի բարելավմամբ աշխատի կայունացնել երկրի տնտեսական վիճակը:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Կուսակցությունը կարևորում է հարկային համակարգի պարզեցումն ու հարկատեսակների կրճատումը, ինչպես նաև՝ գործարարության նկատմամբ միջամտությունների բացառումը, ստուգումների և վերահսկողության մեխանիզմների կանոնակարգումը և թափանցիկության ապահովումը:

դ. Արդյունաբերության զարգացում

Արդյունաբերության՝ պետական, մասնավորեցված և նորաստեղծ ձեռնարկությունների, զարգացումը պետք է դառնա տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գլխավոր գործոնը՝ հասարակության զբաղվածության և աշխատատեղերի ստեղծման գլխավոր գրավականը: Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում արդյունաբերությունը պետք է կողմնորոշվի դեպի արտաքին շուկաներ:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Գյուղատնտեսության բնագավառում բարեփոխումների քաղաքականության հիմքում պետք է դրվի հողի լիարժեք և արդյունավետ օգտագործման գաղափարը: Ագրարային ոլորտի բարեփոխումները պետք է նպատակաուղղվեն գյուղացիների բարեկեցությանը, գյուղական բնակչության արտահոսքի կանխարգելմանն ու սահմանամերձ բնակավայրերի ամրացմանը: Կարևորվում է տնտեսությունների վարկավորումը, ապահովագրական համակարգի ներդրումը և գյուղմթերքների իրացման օժանդակումը:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

Ոլորտը պետք է համարել գերակա և պետական ու հասարակական միջոցներն ուղղել դրա զարգացման գործընթացին: Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում Հայաստանի արդյունաբերությունը պետք է կողմնորոշվի դեպի արտաքին շուկաներ, նախապատվություն տալով ինովացիոն տեխնոլոգիաների արտադրությանն ու արտահանմանը:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում

Տնտեսության զարգացման կարևոր նախապայման են էներգետիկ անվտանգությունը և այլընտրանքային էներգակիրների ապահովումը: Այս առումով կուսակցությունը հատկապես կարևորում է էներգետիկ անկախության ապահովումը միջուկային էներգիայի նոր կայանի կառուցմամբ: Դա կնպաստի ՀՀ-ի ինքնիշխանությունը սահմանափակող հարաբերությունների վերացմանը:

ը. Զբոսաշրջության զարգացում

Կուսակցությունը կարևոր է համարում տրանսպորտային, տեղեկատվական և սպասարկման ոլորտների զարգացմամբ երկրի գրավչության բարձրացումը:

թ. Ներդրումների խթանում

Երկրի տնտեսության զարգացման համար էական նշանակություն ունի առաջնահերթությունների և ռազմավարական ոլորտների սահմանումը, այդ ոլորտների զարգացմանը բիզնես շրջանակների, հասարակության և պետական միջոցների ներգրավմամբ տնտեսական լոկոմոտիվների ստեղծումը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Պետությունը պետք է ունենա կարգավորիչ գործառույթ՝ խթանելով ազատ շուկայի զարգացումը, ինչպես նաև ինովացիոն տնտեսության ստեղծումը և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում օլիգարխիկ համակարգի վերացումը, ազատ շուկայական տնտեսության մեխանիզմների ստեղծումն ու զարգացումը:

լ. Կոռուպցիայի հաղթահարում:

Կուսակցությունը կարևորում է կոռուպցիայի դեմ պայքարը՝ իշխանությունների վարչական կամքի դրսևորման և պետական ավելորդ ֆունկցիաների վերապատվիրակման ճանապարհով:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրությունները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

ա. Աղքատության հաղթահարում

Ժողովրդավարությունը չի կարող լիարժեք լինել, եթե պետության քաղաքացիները չեն ապրում բարեկեցիկ կյանքով: Աղքատությունը ծնում է ժողովրդավարությանն անհարիր երևույթներ՝ կասկածի տակ դնելով քաղաքացիների ինքնուրույնությունն ու ազատությունները, օրինական իշխանություններ ձևավորելու կարողությունը: Կուսակցությունը կարևորում է «Աղքատության դեմ պայքարի համազգային ծրագրի» մշակումն ու իրականացումը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Կուսակցությունն առաջնային խնդիր է համարում ժամանակակից պետության և հասարակության հիմքը կազմող միջին խավի կայացումը:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակը երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն է, որն աշխատատեղերի էական աճի ու բնակչության իրական եկամուտների բարձրացման հիմնական միջոցն է:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Կուսակցությունը հետամուտ է լինելու առողջապահության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, առողջության իրավունքի իրական ապահովմանն և արդյունավետ պաշտպանությանը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կուսակցությունը հետամուտ է լինելու կրթության, գիտության և արտադրության (իրացման) փոխադարձ կապի ստեղծմանը:

4.7. Գիտության զարգացում

Կուսակցությունը հետամուտ է լինելու կրթության, գիտության և արտադրության (իրացման) փոխադարձ կապի ստեղծմանը:

4.8. Մշակույթ և սպորտ

Կուսակցությունը կարևոր է համարում ազգային ինքնության, սեփական տեսակի պահպանության և հայրենիքի հետ աշխարհասփյուռ հայության կապի ապահովման հիմնական միջոց հանդիսացող ազգային մշակույթի զարգացման նոր հայեցակարգի մշակումը, հաստատումը և իրագործումը:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Կուսակցությունն առաջնային է համարում երկրում սահմանադրական կարգի վերականգնումը, ընտրական ինստիտուտների գործունեությունը, իրական ժողովրդավարության հաստատումը, ինչպես նաև հաշվետու գործադիր իշխանության ձևավորումը, անկախ դատական համակարգի կայացումը, ոստիկանության և ԱԱԾ-ի, այդ թվում նաև բանակի գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ստեղծումը: Քաղաքացիական հասարակության ինստիտուտներին հանրային հայցի հարուցման իրավունքի օրենսդրորեն ամրագրումը, պետական պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական իրավախախտումների արձանագրությունների կազմման իրավունքի տրամադրումը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարությունը կոչված է ապահովելու քաղաքացիների համագործակցությունը, երաշխավորելու նրանց արժանապատիվ և բարեկեցիկ կյանքը, անվտանգությունը, մամուլի, խոսքի և քաղաքական ազատությունները, ինչպես նաև սեփականության անձեռնմխելիությունը և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Բացառապես այս սկզբունքների որդեգրումը կարող է հանգեցնել ընտրական ինստիտուտների և քաղաքական դաշտի կայացմանը, ինչպես նաև պառլամենտարիզմի զարգացմանը և սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայի ձևավորմանը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցության որդեգրած սկզբունքներից է խոսքի ու տեղեկատվության ազատությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցության համար հիմնարար արժեքներ են Հայաստանի անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև ժողովրդավարությունը, քաղաքացիական հասարակությունը և մարդու իրավունքներն ու ազատությունները:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը մեծապես կարևորում է իրավական ոլորտի բարեփոխումները, դատարանների իրական անկախության ապահովումը, քաղաքացիների համար դատական ատյանների, այդ թվում նաև վճռաբեկ դատարանի, մատչելիության իրավունքի ապահովումը, դատավորների սոցիալական, ներքին՝ ներհամակարգային, անկախությանը խոչընդոտող օրենսդրական արգելքների վերացումը և այդ երաշխիքներն ապահովող իրավակարգավորման մեխանիզմների ստեղծումը: Վեճերի արտադատական կարգով լուծման ընթացակարգերի կիրառման իրավակիրառական պրակտիկայի բարելավման մեխանիզմների մշակումը, ինչպես նաև դատախազության, ՆԳՆ-ի և ԱԱՆ-ի գործառույթների նկատմամբ հասարակական վերահսկողության բարձրացումը, դրանց նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների ուժեղացումը (ՆԳՆ-ին և ԱԱԾ-ին նախարարությունների կարգավիճակ վերադարձնելը):

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում

Հասարակական կազմակերպությունների կայացմանը և հզորացմանը հասնել հանրային հայցի ինստիտուտի ներմուծմամբ, վարչական իրավախախտումներ կատարած պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական իրավախախտման արձանագրություն կազմելու ու դատարան ներկայացնելու իրավունք ՀԿ-ներին օրենսդրորեն վերապահելով, ՀԿ-ների կողմից կատարած դատական ծախսերի և կրած վնասների փոխհատուցման ինստիտուտի գործնական կիրառմամբ:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

Ընտանիքում կանանց տնտեսական անկախության և ընտանեկան բյուջեի ձևավորմանը մասնակցության բարձրացման միջոցով նվազեցնել սեռական խտրականությունը:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

Մեծացնել օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցությունը՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին ներգրավելով իրավական ակտերի, այդ թվում նաև օրենքների, նախագծերի մշակման փուլում: Հանրային հայցի ինստիտուտի ներմուծմամբ հնարավորություն տալ հանրության ներկայացուցիչներին դատական կարգով վիճարկել ենթաօրենսդրական և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը՝ դրանով իրականացնել նեգատիվ իրավաստեղծ գործունեություն:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հայաստանում ժողովրդագրական աղետ է, որը, ի թիվս այլոց՝ պայմանավորված է բնակչության արտագաղթով ու ցածր ծնելիությամբ: Արտագաղթի պատճառներից է հպատակ քաղաքացիների նկատմամբ պետության և նրա անունից հանդես գալու լիազորությամբ օժտված անձանց հոգատարության բացակայությունը, Հայաստանի՝ որպես անարդար, իր իրական մեծությանը անհարիր մանրախնդիր պետության ընկալումը: Ոչ պակաս բացասական ազդեցություն ունեն նաև աշխատանքի բացակայությունը, մենաշնորհների առկայությունը, մրցակցային պայմանների բացակայությունը, ինչպես նաև քաղաքական իշխանությունն ընտրությունների միջոցով փոփոխելու անհավանական լինելու համոզմունքը: Ցածր ծնելիության պատճառներից են սոցիալական պայմանները և վերարտադրողական առողջության անբավարար վիճակը:

Վերոգրյալ խնդիրների լուծումը պայմանավորված է դրանց պատճառների վերացմամբ, արտագաղթածների՝ հայրենադարձության ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ, բնակչության վերարտադրողական առողջության բարելավմանը, մանկական մահացության նվազեցմանը և ծնելիության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Շարադրված հիմնախնդիրների լուծման միայն միտումը կնպաստի հասարակությունում բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման մեկնարկին:

3.10. ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքեխյան 11/4
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37491) 40-97-37, (+37455) 29-97-37
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ conservative@conservative.am
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.conservative.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 10.06.1991թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 10.06.1991թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 24.11.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 12.03.2000թ.՝ 01.11.2003թ. խմբագրմամբ
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 01-02.05.2010թ. (9-րդ համագումար)
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝ տեղադրված է www.conservative.am կայքում, խոշոր տպաքանակով և առանձին գրքույկով հրատարակվել է 2001թ.-ին:
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝ www.conservative.am
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 12
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 2700, որից
 - Կանայք՝ 25%
 - Երիտասարդներ՝ 45%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 0

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Կենտրոնական խորհուրդ՝ 7 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Միքայել Հայրապետյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամագրումը կամավոր է և կատարվում է գրավոր դիմումի հիման վրա՝ մասնաճյուղի ժողովի կամ Կենտրոնական խորհրդի որոշմամբ: Անդամավճարների չափը և գանձման կարգը որոշում է ՊԿ Կենտրոնական խորհուրդը, որը ներկայումս անդամավճար չի սահմանել:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՌՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

ՊԿ գաղափարական հիմքը Պահպանողականությունն է՝ որպես գաղափարաբանություն և արժեքային համակարգ: Պահպանողական կուսակցությունն առաջին հերթին գաղափարակցություն է և հոգեկեցություն, ապա նոր՝ քաղաքական կազմակերպություն:

Պահպանողականությունը դուալիստական ուսմունք է: Պահպանողական կուսակցության բարձրագույն արժեքներն են՝ Հայաստանի Հանրապետությունը, պետական անվտանգությունը, լեզուն՝ հայերենը, մշակույթը, բարոյականությունը, քաղաքացու իրավունքները, խղճի ազատությունը, սեփականության իրավունքը: Պահպանողական կուսակցության համար առաջնայինը քաղաքացու և հասարակության անվտանգությունն ու բարեկեցությունն են: Հայաստանի Հանրապետությունը 21-րդ դարում կարող է գոյատևել և զարգանալ միայն ժողովրդավարության, հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների, քաղաքացիական հասարակարգ և եվրոպական իրավական մոդելի, բարձր զարգացվածությամբ կրթական և գիտական համակարգ ունենալու, ամուր և կարգապահ բանակի, պետական քաղաքականությամբ ուղղորդվող և ազատ շուկայի կողմից ղեկավարվող տնտեսության, համաշխարհային գործընթացներից առաջ կամ ետ չընկնելով՝ դրանց ներդաշնակորեն ինտեգրվելու պայմաններում: Կուսակցությունը պայքարում է, որ ռազմավարական նշանակության բոլոր կառույցները լինեն պետության սեփականություն:

3.2. Նպատակները և խնդիրները

Պահպանողական կուսակցության առաջնային նպատակներն են՝

- ժողովրդավարական, ինքնիշխան, սոցիալական, իրավական պետության ամրապնդումը,
- քաղաքական հավասարակշիռ դաշտի ստեղծումը, որը կբացառի հեղափոխական ճանապարհով իշխանափոխություններն ու բռնապետություն կամ ամբոխապետություն հաստատելը,
- քաղաքացիական հասարակության կայացման օժանդակումը,
- հասարակական-քաղաքական համաձայնության մթնոլորտի ամրապնդումը,
- ազգային արժեքների իմաստավորումն ու արժևորումը,
- ազգային զարգացման ծրագրերի մշակումը,
- հայրենիքի և սփյուռքի կապերի խորացումը և ամրապնդումը,
- ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանությունը:

Պահպանողական կուսակցության առաջնային խնդիրներն են՝

- ՀՀ-ի բարգավաճմանը, միջազգային բարձր վարկի հաստատմանը, քաղաքացիների բարօրությանը՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նախատեսված միջոցներով նախանձախնդիր մասնակցությունը,
- ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված միջոցներով կուսակցության ծրագրային դրույթների իրականացումը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Պահպանողական կուսակցությունն իր տեսակով պահպանողական է:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները⁴

1. Ռուսական տոտալիտարիզմից վերջնական ազատագրում և ներդաշնակ ինտեգրում Արևմտյան քաղաքակրթական համակարգին:
2. Տարածաշրջանում և աշխարհում Հայաստանի համար մրցակցային բարենպաստ դաշտի և շուկայի ապահովում:
3. Արցախի խնդրի ողջամիտ փոխզիջումային լուծման ապահովում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Հայաստանի պետությունն ու քաղաքացիներն իրավունք ունեն և պարտավոր են տարածաշրջանի պետությունների, ժողովուրդների ու միջազգային հանրության հետ խաղաղ համակցություն ապահովել, թոթափել՝ հազարամյա մեկուսացման կաղապարներն ու դառնալ քաղաքակիրթ մարդկության մասնիկը՝ մերժելով հեղափոխականությունն ու պասիվ հարմարվողականությունը:

ա. Եվրաինտեգրում⁴

Հայ մշակույթի հարազատ արեալը Եվրոպական կամ Արևմտյան քաղաքակրթությունն է, ուստի այն պետք է լինի վերջին հանգրվանը թե՛ քաղաքակրթական, թե՛ քաղաքական առումներով:

բ. ԱՊՀ⁵

ԱՊՀ-ն ԽՍՀՄ-ից քաղաքակիրթ ձևով հրաժարվելու ապահարգանի տարբերակ էր: Հայաստանի տեղն այնտեղ չէ. խնդիրը ժամանակի մեջ է:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

ՀԱՊԿ-ն Վարշավյան միության մնացուկ է. այն որևէ դրական բան չի կարող տալ Հայաստանին, սակայն ժողովրդավարական գործընթացներին վնասելու մեծ ներուժ դեռևս պահպանում է:

դ. ՀԱՂԿ (NATO)⁵

ՆԱՏՕ-ն Արևմտյան քաղաքակրթության անվտանգության համակարգն է: Հայաստանը որքան շուտ հայտնվի այնտեղ, այնքան մեծ կլինի նրա պետականության անվտանգության երաշխիքը:

ե. ԱՄՆ⁵

ԱՄՆ-ն անկախությունից ի վեր ՀՀ-ում ամենամեծ և անվերադարձ ներդրումներ արած գերտերությունն է, որը Հայաստանի համար բնական և ռազմավարական դաշնակից է դիտվում Պահպանողական կուսակցության կողմից:

զ. Ռուսաստանի Դաշնություն⁴

Ռուսաստանի Դաշնությունը, ըստ Կուսակցության, Հայաստանի համար անվտանգ դաշնակից կարող է լինել միայն այն ժամանակ, երբ կթոթափի ավտորիտարիզմը և ինքն էլ կդառնա Արևմտյան քաղաքակրթական համակարգի մաս: Կուսակցությունը գտնում է, որ Կովկասից հեռացող Ռուսաստանի դեպքում ՀՀ-ի առջև դրվում է Հարավկովկասյան Տան կառույցին, Մերձավոր արևելքին, և առաջին հերթին Արևմտյան համակարգին առավելագույնս ինտեգրվելու հրամայական: Հայաստանի ապագան եվրասիականությունը չէ:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁵

Պահպանողական կուսակցությանը ողջունում է Ցեղասպանության միջազգային ճանաչումը, սակայն այն չպետք է դառնա ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություն, բայց և՛ չպետք է դուրս մղվի ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգից: Հայ-թուրքական հարաբերությունները պետք է կարգավորվեն բացառապես միջազգային օրենքների հիման վրա, իսկ այդ օրենքներով անեքսիա է որակվում ժամանակակից Թուրքիայի կողմից ինքնիշխան Հայաստանի Հանրապետության Կարսի մարզի բռնակցումը, որը, միջազգային օրենքներին հակասող՝ կոմունիստական Ռուսաստանի բիրտ ճնշման տակ 1921թ. ճանաչել է Հայաստանի կոմունիստական կառավարությունը: Հայ-թուրքական հաշտեցման չստորագրված համաձայնագրի միակ հակաօրինական կետը ռուս-թուրքական և հայ-ռուս-թուրքական նախորդ պայմանագրերի իրավագործության ճանաչումն է, թեև այդ պայմանագրերը կնքվել են միջազգային օրենքների խախտումով, ինչը կարող է փաստել միջազգային դատարանը: Միջազգային օրենքի խախտում է նաև Թուրքիայի կողմից ՀՀ հետ պետական սահմանի փակ լինելը: Թուրքերի և քրդերի հարցում ՀՀ դիվանագիտությունը պարտավոր է լինել առավել հեռատես և ոչ զգացմունքային: Հայության և ՀՀ-ի համար չպետք է լինի տարբերություն և շահագրգռություն՝ Արևմտյան Հայաստանի տարածքում թուրքակա՞ն, թե՛ քրդական պետություն է:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ⁴

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը ՀՀ արտաքին քաղաքականության հիմնահարցերից է, որը, ըստ Պահպանողական կուսակցության, պետք է լուծվի բացառապես միջազգային իրավունքի համատեքստում՝ Ջենքի չկիրառման, Ազգերի ինքնորոշման և Տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա: Արցախի հարցի պատասխանը ոչ թե Հայ դատի ծիրում է, այլ՝ աշխարհաքաղաքական իրավիճակի ընձեռած հնարավորությունների առավելագույն օգտագործման:

թ. Իրան

Կուսակցությունը, համարելով, որ Հայաստանի պետությունը չունի որևէ թշնամի, միևնույն ժամանակ պնդում է, որ դաշնակիցներ ընտրելու և դրանք փոփոխելու հարցում պետք է առաջնորդվել բացառապես պետական շահերով: Առնվազն առաջիկա տասնամյակների համար ՀՀ-ի բնական դաշնակիցը կարող է լինել առաջին հերթին Իրանը: Հայաստանը պարտավոր է գերնրբանկատ լինել Իրանին վերաբերող բոլոր հարցերում:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁴

Վրաստանի հետ հարաբերությունները պետք է լինեն այն հաշվարկով, ըստ որի՝ Վրաստանին արդեն հաջողվել է պորտալարը կտրել ավտորիտար ռեժիմով Ռուսաստանից և անշեղորեն դեպի Արևմտյան քաղաքակրթություն ընթանալ: Հայ դատի շրջանակներում Ջավախքի խնդրի ստեղծումը հայ պետականության համար հղի է անկանխատեսելի հետևանքներով: Կուսակցությունը դա ևս դիտում է բացառապես աշխարհաքաղաքական տեսանկյունից: Ջավախահայության խնդրում ՀՀ-ն մեկ պահանջ միայն կարող է ներկայացնել՝ Վրաստանին՝ հայոց լեզվով կրթություն ստանալու ջավախահայության իրավունքի պաշտպանություն:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում⁴

Հայաստանը Սփյուռքի համար պետք է լինի հայապահպանության խթանող՝ առանց խառնվելու ներգաղութային գործերին: Սփյուռքը Հայաստանի համար արտաքին քաղաքականության իրացումը դյուրացնող հանգամանք է: Պահպանողական կուսակցությունը դեմ է Սահմանադրություն խցկված երկքաղաքացիության մասին դրույթին: Կուսակցությունը ջանալու է, որ պահանջատիրությունը չլինի ՀՀ պետական քաղաքականություն, քանզի դա դուրս է իրատեսության սահմաններից և կվտանգի Հայաստանի պետության գոյությունն ու զարգացումը: ՀՀ-ն առայժմ կարող է միայն պաշտպանել արևմտահայերի հետնորդների ազգային ինքնորոշման պահանջը, եթե սփյուռքահայերը և ՀՀ քաղաքացիների պահանջատեր հատվածը տեղափոխվեն նախնիների հայրենիք և հաստատեն այնտեղ բնակվելու իրենց կամքը: ՀՀ-ն երբևէ կարող է ունենալ ոչ թե սոսկական տարածքի, այլ կենսատարածքի խնդիր:

լ. Այլ (Ինտեգրացիոն գործընթացներ)

Կուսակցությունն օրենքի շրջանակում անելու է ամեն ինչ, որպեսզի հանուն ինչ-որ գաղափարախոսությունների ՀՀ-ն դուրս չմնա տարածաշրջանային և միջազգային տնտեսական, կոմունիկացիոն, գիտակրթական, մշակութային, արդյունաբերական և ռազմական ինտեգրացիոն գործընթացներից:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները⁴

1. Քաղաքացիական արժեքների ամրագրում և անշրջելիության ապահովում:
2. Ժողովրդավարական ընտրությունների ազատության ապահովում և դրանց արդյունքների հարգում:
3. Արևմտյան չափանիշերին համապատասխան՝ կոռուպցիայի հաղթահարում:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Կուսակցությունը պաշտպանում է տնտեսության, գիտության, կրթության և սոցիալական ինստիտուտների ինքնավարությունը, որտեղ պետության ուղղակի միջամտությունը պետք է հասցվի նվազագույնի: Կուսակցությունը կողմնակից է հակամենաշնորհային քաղաքականության՝ բացառությամբ ընդհանուր անվտանգությունն ապահովող պետական մենաշնորհների: Կուսակցությունը Հայաստանի զարգացումը տեսնում է արտահանումը և ներդրումները խրախուսող հարկային, մաքսային և ֆինանսավարկային քաղաքականության մեջ: Կուսակցությունը մրցակցային դաշտի ապահովումը և պահպանումը համարում է ՀՀ կենսունակության և առաջընթացի պարտադիր պայման: Ազատ մրցակցությունն ապահովելու համար կուսակցությունը կողմնակից է մասնավոր սեփականության հակամենաշնորհային օրենքներին: Ըստ այդմ, այս ոլորտում ևս կուսակցությունն աջ կենտրոնական՝ ազատական-պահպանողական, կուսակցություն է:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁴

Կուսակցությունը պաշտպանում է ազգային արժույթի ազատ լողքի քաղաքականությունը՝ չխրախուսելով Կենտրոնական բանկի կողմից տարվող կոպիտ միջամտությունը:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁴

Կուսակցությունը մշտապես պայքարելու է գոյատևման բյուջեները զարգացման բյուջեներով փոխարինելու համար: Պետական պարքը սարսափելի չէ, եթե այն ողջամտության սահմաններում է, իսկ ստացված միջոցներն ուղղորդվում են բացառապես արտահանմանը միտված տնտեսության զարգացման սպասարկմանը:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ⁴

Հարկային բարեփոխումները պետք է իրականացվեն արևմտյան ստանդարտներին համապատասխան՝ բացառելով կոռուպցիոն ռիսկերի սողանցքների հովանավորչությունը: Հարկային բեռի զգալի մասն իրենց վրա պետք է կրեն խոշոր բիզնեսն ու ներմուծումը: Մաքսային բարեփոխումներ իրականում չեն կարող լինել, քանի դեռ ՀՀ-ն չի կողմնորոշվել Եվրոպական Միության կամ ռուսական-եվրասիական մաքսային գոտիներին ինտեգրվելու հարցում. կուսակցության հակվածությունը միանշանակորեն դեպի Եվրոպական մաքսային դաշնության մաս կազմելն է:

դ. Արդյունաբերության զարգացում

Կուսակցությունը Հայաստանի տնտեսության առաջնահերթություններ է համարում բարձր տեխնոլոգիաները, գիտակրթական ինդուստրիան, էներգետիկան, ջրային պաշարների շահագործումը, ներքին և արտաքին կապուղիները, օգտակար հանածոների արդյունահանումն ու տեղում ցիկլային արդյունաբերության կազմակերպումը, գյուղատնտեսական, թեթև և սննդի արդյունաբերական ենթակառուցվածքները և բանկային համակարգերը, ինչպես նաև՝ զբոսաշրջությունն ու առևտուրը: Օտարերկրյա կապիտալի ներհոսքը և շրջանառումը արդյունաբերության ոլորտում՝ Հայաստանի զարգացման և պետական անվտանգության առաջնային գրավականներից են:

ե. Գյուղատնտեսության զարգացում

ՀՀ գյուղատնտեսության հիմքը կարող են դառնալ աշխատատար ճյուղերը, որոնք հենված կլինեն միջին բիզնեսի վրա:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁴

ՀՀ-ն առայժմ ունի բոլոր հնարավորությունները տարածաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն համակարգերի առաջատար դառնալու համար: Դրա համար այժմ իշխանություններին պակասում են ռազմավարական միտքը և քաղաքական կամքը:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁴

Հայաստանի էներգետիկ անվտանգությունը ազգային անվտանգության մաս է կազմում: Այդ անվտանգությունն ապահովելու համար կուսակցությունը համոզված է, որ անհրաժեշտ է.

- ազատել ՀՀ էներգետիկ համակարգը ռուսական մենաշնորհից,
- զարկ տալ այլընտրանքային էներգաաղբյուրների գիտական մշակումներին և ներդրմանը,

- ի հավելումն ներկայումս գործող և ռուսական կառավարման հանձնվածի՝ նոր ատոմակայան կառուցել եվրոպական հովանավորությամբ,
- արտաքին քաղաքականության առաջնահերթություն դարձնել ՀՀ տարածքով տրանզիտային գազատարի կամ նավթամուղի անցկացումը:

ը. Զբոսաշրջության զարգացում⁵

ՀՀ-ում զբոսաշրջության հիմնական տեսակը կարող է լինել էկոզբոսաշրջությունը, որի համար ենթակառուցվածքների հիմնումը չպետք է սահմանափակել սոսկ երևանյան հյուրանոցաշինությամբ:

թ. Ներդրումների խթանում⁴

Օտարերկրյա կապիտալի ներհոսքը և շրջանառումը Հայաստանի զարգացման և պետական անվտանգության առաջնային գրավականներից են, սակայն դրանց խթանումը կարող է պայմանավորվել առաջին հերթին հայաստանյան կոռուպցիային վերջ տալով. հակառակ պարագայում՝ ՀՀ-ում շրջանառվելու է ստվերային և հանցավոր կապիտալը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում⁴

Բիզնես միջավայրը կարող է բարելավվել բացառապես կոռուպցիայի վերացմամբ, իսկ դա կարող է լինել միայն այն պարագայում, երբ ՀՀ-ն դադարի Ռուսաստանի Դաշնության արտապատճենումը լինելուց: Փոքր և, մանավանդ, միջին բիզնեսն է ՀՀ տնտեսության զարգացման ողնաշարը, որն այժմ կոտրված է հովանավորվող օլիգարխիայի կողմից:

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁴

Ստվերային տնտեսության վերացումը կամ կրճատումը քաղաքական խնդիր է և պայմանավորված է լեգիտիմ իշխանության ձևավորմամբ, որը կաշկանդված չի լինի:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁴

Կոռուպցիան ՀՀ-ում կհաղթահարվի, եթե երբևէ ՀՀ-ում ձեւավորվի լեգիտիմ իշխանություն, որը վերջապես կլուծի Հայաստանի քաղաքակրթական ընտրանքի խնդիրը՝ հոգուտ Արևմտյան համակարգի: Այլապես ՀՀ-ն կոսմետիկ փոփոխություններից այն կողմ անցնել չի կարող:

խ. Այլ (Տնտեսություն և Քաղաքականություն կապ)⁵

ՀՀ-ում, ինչպես ԱՊՀ ամբողջ տարածքում, տնտեսության ուղղվածությունն ածանցվում է քաղաքականից, ուստի պետք է կատարել քաղաքական բեկում:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրությունները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

Կուսակցությունը առաջին հերթին միջին խավի, մտավորականների և ծառայողների շահերի արտահայտողն ու պաշտպանն է. պայքարելու է, որ աշխատատեղեր և ազատ ձեռներեցության հնարավորություն ստեղծելու ճանապարհով ստորին և ընչազուրկ խավի կենսամակարդակը հավասարեցվի միջինին: Պետությունը երաշխավորն է մանուկների և ծերերի բարեկեցիկ գոյության: Սոցիալական բեռը ժամանակի ընթացքում աստիճանաբար պետք է փոխանցվի գործատուին:

ա. Աղքատության հաղթահարում⁴

Աղքատությունը ներկա քաղաքական ուղղվածության պայմաններում հաղթահարելն անհնար է: Դա ևս քաղաքական խնդիր է. աղքատությունը կհաղթահարվի, երբ վերջ դրվի մեծահարստապետությանը: Իսկ այն գուցե վերջ գտնի, եթե երբևէ ՀՀ-ում կայանան նախագահական և խորհրդարանական ազատ, արդար և թափանցիկ ընտրություններ:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում⁴

Ներկա համակարգն օբյեկտիվորեն չի կարող հնարավորություն ընձեռել, որպեսզի հասարակության սոցիալական տարբեր շերտերի միջև եղած անդունդը նվազի: Սոցիալական արդարության որոշակի կոսմետիկ բարելավումը հնարավոր է օրենսդրական բարեփոխումներով (սոցիալական բեռի՝ պետությունից գործատուին փոխանցմամբ), սակայն, ըստ էության, բարելավում հնարավոր է միայն օլիգարխիկ համակարգի հաղթահարման դեպքում:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում⁵

Ներկայումս ՀՀ-ն չի իրականացնում Մահմանադրությամբ ամրագրված սոցիալական պետության իր ֆունկցիան, քանի որ կլանային-նոմենկլատուրային հովանավորվող ստվերը և կապիտալը գտնվում են օրենքից վեր, ուստի պետությունը չի կարող զբաղվածության և գործազրկության հարցում դաշնակցել գործատու համայնքի հետ:

Զբաղվածության հարցը կարող է լուծվել միայն այն դեպքում, եթե՝

- պետությունը կաշկանդված չլինի իր իսկ հովանավորած ստվերի կողմից,
- պետությունն ունենա տնտեսության զարգացման ռազմավարական հստակ ծրագիր և այդ ծրագիրը կյանքի կոչելու քաղաքական կամք:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Որպեսզի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի բժշկական սպասարկումից պատշաճ չափով օգտվելու հնարավորություն ունենա, անհրաժեշտ է սոցիալական ինստիտուտների ինքնավար կայացում: Դրա մեծագույն խոչընդոտն այսօր մոնոպոլացումն է:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում⁵

Ապահովագրական համակարգն այն եզակի ոլորտներից է, որ ՀՀ-ում այս կամ այն կերպ կայանում է ոչ միայն թղթի վրա, այլև իրականում: Դրա վկայությունը պետական պարտադիր ապահովագրումներն են: Ժամանակի ընթացքում օրենսդրությամբ այն պետք է փոխանցել մասնավոր սեկտորին՝ պետական հսկողության ներքո:

զ. Այլ⁴

Սոցիալական հարցերի մի ամբողջ խումբ է հասարակության վերաբարձրողականության քաղաքականության մշակումն ու իրականացումը, որոնցից հատկապես կարևոր են՝

- նորաստեղծ ընտանիքների պետականորեն խրախուսումը,
- բազմազավակ ընտանիքների սոցիալական հարցերի լուծումը,
- արտագաղթի նվազեցումը

Դրանք պետք է հռչակվեն առաջնահերթություններ:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Հայաստանի Հանրապետությունը 21-րդ դարում կարող է գոյատևել և զարգանալ միայն բարձր զարգացվածությամբ կրթական և գիտական համակարգ ունենալու դեպքում: Բարեփոխումները պետք է կատարվեն արեւմտյան փորձի տեղայնացմամբ:

4.7. Գիտության զարգացում⁴

Գիտության զարգացումը պայմանավորված է՝

- խորհրդային ժամանակվրեպ համակարգային կառուցվածքից հրաժարմամբ,
- համաշխարհային գիտական ընտանիքին Հայաստանի ինտեգրմամբ:

4.8. Մշակույթ և սպորտ⁴

Նախ անհրաժեշտ է հստակեցնել մշակութային քաղաքականության առաջնահերթությունները: Մշակույթը, քաղաքակրթության մաս լինելով, պահանջում է քաղաքակրթական ընտրություն կատարել: Կուսակցությունը միանշանակորեն զրբալ արևմտյան քաղաքակրթության ջատագովն է: Մշակույթի և սպորտի բնագավառներում պետք է աստիճանաբար անցնել ոչ կառավարական համակարգի ստեղծմանը:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում⁵

Տարածքային կառավարումը պետք է ժողովրդավարացնել՝ Երևանի քաղաքապետի և մարզպետների ուղիղ ընտրություններ կատարելով: Տեղական ինքնակառավարման մարմիններին պետք է փոխանցել կենտրոնական կառավարության շատ լիազորություններ:

ա. Համայնքների խոշորացում⁵

Համայնքների խոշորացումը տանելու է դեպի կոմունիզմ: Պետք է օրենսդրորեն մեծացնել համայնքների լիազորություններն ընդհուպ՝ միջհամայնքային պայմանագրային համակարգ:

բ. Ավագանու դերի բարձրացում⁴

Ավագանու դերի բարձրացումը հնարավոր է՝

- արևմտյան փորձի տեղայնացմամբ
- ազատ, արդար ու թափանցիկ ընտրություններով՝ առաջին հերթին նախագահի և Ազգային ժողովի:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում⁵

Միջհամայնքային միավորներ ստեղծելն ավելորդ բյուրոկրատացում է, իսկ միջհամայնքային պայմանագրային կապերի ազատությունը կընդլայնի ժողովրդավարության սահմանները, ինչի ջատագովն է Կուսակցությունը:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁴

Կուսակցության ծրագրային դրույթներից է բխում համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացումը, իսկ իշխանական վերադաս մարմիններին պետք է վերապահել բացառապես վերահսկողի գործառնություններ:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից

Լրացուցիչ լիազորությունների փոխանցումը բխում է ՊԿ ծրագրային դրույթներից:

զ. Մարզերի համաչափ զարգացում⁴

Մարզերի համաչափ զարգացումն ունի ազգային անվտանգության նշանակություն: Այն խրախուսելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ազատ շուկայի փիլիսոփայությունը դարձնել պետական կառավարման հավատո հանգանակ:

է. Այլ ⁴

Պետք է մշակել Երևանի բեռնաթափման ռազմավարական ծրագիր՝ ընդհուպ մինչև նոր մայրաքաղաքի հիմնում:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Մարդիկ ծնվում են տարբերություններով, միակ հավասարությունը պետության օրենքների և Աստծո առջև է: Ըստ այդմ՝ այդ հավասարությունը պետք է և հնարավոր է ապահովել միայն քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն և բարոյական հայրենիք ստեղծելով, որի համար Պահպանողական Կուսակցությունը ներդնելու է իր ամբողջ ներուժը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում⁴

Կուսակցությունը գտնում է, որ ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդումը հնարավոր է օրենսդրությամբ՝ դրանց պաշտպանությունն ապահովելով և միջազգային վերահսկողություն սահմանելով, այլապես այն կլինի կա՛մ ձևական, կա՛մ կմնա տկար:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում⁵

Խոսքի ազատությունը և տեղեկատվություն ստանալու իրավունքը կուսակցության համար կարևոր արժեքներ են, որոնք պետք է կարգավորվեն օրենսդրությամբ:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում⁴

Կուսակցությունը պարտավորված է զգու՛մ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համար իր ուժերի սահմաններում լինել այդ նպատակը հետապնդող ցանկացած քաղաքացիական շարժման կողքին:

դ. Դատախիրավական համակարգի բարեփոխում

Միայն իրավական պետությունը կարող է լինել ամուր և կայուն, ապահովել համընդհանուր բարօրություն, արդարադատություն, հասարակական կարգ ու կայունություն: Կուսակցության կարծիքով Դատախիրավական բարեփոխումների օրենսդրական մասը գրեթե իդեալականացված է. բացակայում է երկրի քաղաքական վերնախավի կամքը, որն արգելակում է դատական իշխանության տարանջատումը քաղաքականից:

ե. Ընտրական համակարգի բարելավում⁴

Ընտրական համակարգ, ըստ կուսակցության, ՀՀ-ում գոյություն չունի՝ անկախ այն բանից, որ օրենսդրությունը վատը չէ: Ընտրական ամբողջ գործընթացի կազմակերպումը և կառավարումը պետք է վերցնել կուսակցություններից և հանձնել պետական համապատասխան գերատեսչություններին: Կուսակցությունը համամիտ չէ միջազգային դիտորդական կազմակերպությունների կողմից տրվող դրական գնահատականներին:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁵

Կուսակցությունը որևէ կուսակցության հզորության և արդյունավետության միակ պայման է համարում նրա արժեքային համակարգն ու համակիրների բանակը և մերժում է հասարակության ամբողջական կուսակցականացումն ու մարդոբսությունը, առավել ևս՝ կաշառումը: Հայաստանի ներքաղաքական ապագան եռահոսանք դաշտի ձևավորումն է՝ սոցիալիստներ, լիբերալներ, պահպանողականներ: Կուսակցությունների համար սահմանված տարաբնույթ ցենզերն առաջին խոչընդոտն են այդ ինստիտուտի կայացման ճանապարհին: Այլ խոչընդոտները պայմանավորված են էթնոհոգեբանությամբ, խորհրդային ժառանգությամբ, ինչպես նաև՝ ՌԴ-ից գաղութային կախվածությամբ: Դասական իմաստով ՀՀ-ում առայժմ կուսակցություն չկա:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁵

Սա եզակի ոլորտներից է, որ աստիճանաբար կայանում է: Այստեղ օրենսդրական կարգավորումներից առավել կարևոր են արևմտյան փորձի ներդրումը և արևմտյան խաղի կանոնների որդեգրումը:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁵

Կանանց շահերի պաշտպանությունը քաղաքական հիմնահարց է ամբողջ Արևելքում, որի լուծման բանալին գտնվում է Հավասարության սկզբունքի մեջ:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն⁵

Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցությունը կարող է չափվել իր հանրային ինստիտուտների կայացվածությամբ: Պետք է ունենալ նախ քաղաքացիական հասարակություն, որն ինքն է նվաճելու իր ազատություններն ու իրավունքները:

ժ. Այլ⁵

Քաղաքացիական հասարակության ձևավորման և կայացման համար անհրաժեշտ է արժեքային հեղափոխություն:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Ազգային անվտանգությունը ՊԿ Ծրագրում և Կանոնադրությունում հռչակված բարձրագույն արժեքներից է: Հիմնախնդիրներից են՝

- ազգային անվտանգության իրոք հայաստանյան կառույց, ոչ թե ռուսական ԿԳԲ-ի կցորդ ունենալը, այդ թվում նաև կիբերանվտանգության առանձնացված պետական ստորաբաժանում ունենալը,
- արտագաղթի նվազեցումն ու համակարգումը,
- ՆԱՏՕ-ի հետ համաչափ ինտեգրման ճանապարհային քարտեզ ունենալը,
- հոգևոր և բանական ամրոճատման գործիքի վերածված էլեկտրոնային ՁԼՄ-ներին իրական ազատություն տալը և նրանց բնույթը փոխելը,
- կրթական համակարգի ոչ թե կոսմետիկ, այլ իրական բարեփոխումները,
- էներգետիկայի դիվերսիֆիկացիան,
- ջրային պաշարների օգտագործման և պահպանման ռազմավարական ծրագիր ունենալը,
- բնապահպանական անվտանգության հստակ քաղաքականությունը,
- Երևանի բեռնաթափումն ու սահմանային բնակավայրերի զարգացման հեռահար ծրագրերի մշակումը,
- բանակի աստիճանական պրոֆեսիոնալացումը,
- քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ արևմտյան մոդելով կայացումը և այլն:

Դրանց լուծման ուղիները հանգում են երկու կետի՝

- քաղաքակրթական ընտրանք՝ հոգուտ Արևմտյան համակարգի (արժեհամակարգային հեղափոխություն կամ բեկում),
- ազատ, արդար և թափանցիկ ընտրություններ անցկացնելու մշակույթի ձևավորում:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Այս հատույթի լուծումն ածանցվում է երկրում բարոյա-հոգեբանական մթնոլորտի փոփոխությունից:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Կուսակցությունը իր Կանոնադրությունում արձանագրում է, որ ինքը որոշ առումով Կանաչների կուսակցություն է: Տասնյակ հիմնախնդիրների լուծումը կարող է լինել Արևմուտքում վաղուց հայտնի բնապահպանական հարցերի ժողովրդավարական մոտեցումների ամբողջ համակարգը որդեգրելով: Հասարակական կազմակերպությունների դրական ազդեցությունն այս հարցում խիստ սահմանափակ է, քանի որ՝

- ներկա համակարգն ամբողջատիրական է,
- հասարակական բնապահպանական կազմակերպությունները չեն կարող հայաստանյան ներկա միջավայրում մինչև վերջ կայանալ և ֆունդամենտալ փոփոխությունների հասցնել:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները տասնյակներով են, որոնց արմատը գտնվում է քաղաքական համակարգի հիմքում: Ոչ կոսմետիկ, այլ իրական բեկում հնարավոր է բացառապես քաղաքական և քաղաքակրթական լուծման պարագայում:

4.15. Այլ⁵

Ազգային անվտանգության հիմնախնդիր է հայոց պատմության և անցյալի վերաթմրումը, որը կարելի է սկսել խորհրդային ԿԳԲ-ի արխիվների բացման, քաղաքական հետապնդումներին մասնակցած գործակալական ցանցի բացահայտման մասին օրենք ընդունելով (Արևլյան Եվրոպայի և Վրաստանի օրինակով), որով պետք է նաև բացառել տոտալիտարիզմին ծառայագրվածների՝ ՀՀ-ում առանցքային պետական պոստեր զբաղեցնելը:

4. «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՅԴ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Հանրապետության 30
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 52-15-02, (+37410) 52-04-26
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ gmarf@rambler.ru
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.arf.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 1890թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 02.07.1991թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 28.11.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 1892թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 04-06.06.2010թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝
Ծրագիր (գրքույկ)՝ փետրվար, 1998թ., Կանոնագիր (գրքույկ)՝ ապրիլ, 2006թ.
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 58,
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթի կից լրացման ժամանակ՝ 6785, որից
 - Կանայք՝ 13,6% (923)
 - Երիտասարդներ՝ 31,3% (2124)
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 16 պատգամավոր:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Գերագույն մարմին՝ 9 անդամ
- Մարզային Կոմիտե՝ 5 կամ 7 անդամ
- Կոմիտե կամ Առանձնակի խմբի ղեկավան
- Խումբ
- Գերագույն մարմնի ներկայացուցիչ՝ Արմեն Եզնակի Ռուստամյան
- Գերագույն մարմնի նախագահ՝ Միքայել Վաղինակի Մանուկյան
- Գերագույն մարմնի քարտուղար՝ Հրաչ Վահրամի Թադևոսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Հ.Յ.Դաշնակցության անդամ կարող է լինել Բարոյական նկարագրի տեր և 18 տարին լրացած յուրաքանչյուր անհատ, ով ընդունում է ՀՅԴ ծրագիրն ու գործելակերպը, ենթարկվում է նրա կանոնադրին ու որոշումներին և ամեն ջանք գործադրում է դրանք իրականացնելու համար: Հ.Յ.Դաշնակցության անդամակցել ցանկացող անհատը գրավոր դիմում է բնակավայրի (տարածքային) մարմնին՝ կոմիտեին և երեք ամսվա ընթացքում ստանում է պատասխան:

Անդամավճարի նվազագույն չափը ճշտում է Գերագույն ժողովը: Անդամավճարի չափը ճշտում են համապատասխանաբար Մարզային և տարածքային ժողովները և կոմիտեները:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՌՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

«Հ.Յ. Դաշնակցություն» կուսակցությունը նպատակադրում է ազատ, անկախ և միացյալ Հայաստանի կերտում: Հ.Յ. Դաշնակցությունն իր էությանը, աշխարհայացքով և ավանդներով ազգային, սոցիալիստական, ժողովրդավարական և հեղափոխական կուսակցություն է, պայքարում է հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի պաշտպանության համար, առաջադրում է անհատի ազատության, ազգային ինքնորոշման, անկախ պետության, հասարակական համերաշխության և բարօրության ճանապարհով ազգի ներդաշնակ զարգացման ապահովումը և ձգտում է Հայ Դատի լուծմանը:

3.2. Նպատակները և խնդիրները

Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի կերտում, ժողովրդավարության և իրավական պետության նվիրագործում, ժողովրդի բարօրության ապահովում և սոցիալական արդարության հաստատում: Առ այդ, մեկնելով Հայաստանի և հայության առջև ծառացած արտաքին ու ներքին մարտահրավերներն ու սպառնալիքները հաղթահարելու անհրաժեշտությունից՝ Հ.Յ. Դաշնակցության 2012-2017թթ. հիմնական նպատակներն են.

- շեշտակի կրճատել աղքատությունը և վերացնել չքավորությունը (յուրաքանչյուր քաղաքացու համար երաշխավորել կենսաապահովման նվազագույն բյուջեից ոչ ցածր եկամուտ),
- կազմավորել միջին խավ,
- ապահովել արժանավայել կյանքի պայմաններ,
- ձևավորել կայուն զարգացող, մրցունակ տնտեսություն,
- կառուցել ազգային-ժողովրդավարական ժամանակակից պետություն և հաստատել ներկա մարտահրավերներին համարժեք ազգային-պետական ուղեգիծ:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Ազգային և սոցիալիստական

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ԼՂՀ միջազգային ճանաչում: ԼՂՀ-ի կարգավիճակի և անվտանգության խնդիրների լուծման առաջնայնության ապահովում:
2. Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման պետական քաղաքականության հիմնադրությունների և ցեղասպանության ուրացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքների ընդունում:
3. Միյուրքահայությանը հայոց պետականության գործընթացում լիարժեք ներգրավելու ակտիվ քաղաքականության իրականացում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրությունները, այդ թվում.

Արտաքին քաղաքական հարաբերություններում անհրաժեշտ է առաջնորդվել բացառապես ազգային շահերով՝ առանց տուրք տալու այս կամ այն կուսակցության, սոցիալական դասի կամ պետական-քաղաքական գործչի մղումներին: Ըստ այդմ՝ կուսակցությունը կարևորում է արտաքին քաղաքականության դոկտրինի մշակումը՝ հիմնված հայության անվտանգության և լինելիության, Հայաստանի անկախության և ինքիշխանության ամրապնդման գերակայության վրա:

ա. Եվրախնտեգրում

Նպատակադրումը՝ Հայաստանի անդամակցությունը Եվրամիությանը:

բ. ԱՊՀ

ԱՊՀ շրջանակներում համագործակցությունը պետք է կառուցվի ընդհանուր շահերի շուրջ:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

Անհրաժեշտ է համագործակցությունը ՀԱՊԿ շրջանակներում:

դ. ՀԱՊԿ (NATO)

Անհրաժեշտ է համագործակցություն ռեգիոնալ անվտանգության ապահովման համար:

ե. ԱՄՆ

Անհրաժեշտ է համագործակցություն քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Անհրաժեշտ է համագործակցություն քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում:

Է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը պետք է իրականացնել ազգային անվտանգության ռազմավարությունը չխափանելու, մեր ժողովրդի լինելիությունն ու նրա նպատակների իրականացման հեռանկարը չվտանգելու պատասխանատվությամբ: Հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրություններից պետք է ետ կանչվի հայկական կողմի ստորագրությունը:

Առանց նախապայմանների ցամաքային շրջափակման վերացումը և միջազգային իրավունքի ընդհանուր հիմունքներով դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պետք է ընդունվի որպես հարաբերությունների կարգավորման բնական մեկնակետ:

ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգի անքակտելի մասը պետք է կազմեն Հայոց ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման հարցերը, պետք է բացառվի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը թուլացնող որևէ գործողություն՝ չեզոքացնելով ցեղասպանության ուրացման թուրքական քաղաքականության փորձերը:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Ադրբեջանի հետ հակամարտությունը կարգավորելու հայեցակարգով պետք է ապահովվի, որ հայկական կողմերի (Հայաստան-Արցախ) փոխզիջումը չարձանագրի նահանջ Արցախի ժողովրդի 1991թ. Անկախության և 2006թ. ԼՂՀ Սահմանադրության ընդունման համաժողովրդական

հանրաքվեներով արդեն իսկ արտահայտված կամքից և լինի համարժեք ու համաչափ Ադրբեջանի միաժամանակյա զիջումներին:

Պետք է պահանջվի, որ Արցախը, լինելով հակամարտության հիմնական և ինքնուրույն կողմ, ճանաչվի և հանդիսանա իրավահավասար բանակցային կողմ, իսկ Հայաստանը պետք է ճանաչվի և հանդիսանա ԼՂՀ անկախության և անվտանգության երաշխավոր:

Հայաստանի և Արցախի միջև անհրաժեշտ է կնքել համաձայնագիր ռազմավարական դաշինք ձևավորելու մասին, պետք է նաև Ադրբեջանի հետ ուժի կիրառումը բացառող եռակողմ պայմանագիր ստորագրելու խնդիր դրվի:

Հայաստանի արտաքին քաղաքականությունն անհրաժեշտ դիմակայություն պետք է ապահովի թուրք-ադրբեջանական տանդեմի հակահայկական ծրագրերին: Թուրքիայի կողմից ներկայացվող նախապայմանները պետք է գնահատվեն որպես անօրինական և մեր ազգային արժանապատվությունը վիրավորող: Պետք է բացառել նաև հայ-թուրքական հարաբերությունների և դարաբադյան հակամարտության կարգավորման առկա գործընթացների փոխկապակցումը:

թ. Իրան⁵

Իրանը տարածաշրջանում հանդիսանում է մեր ռազմավարական գործընկերը: Մեր խնդիրը նրա հետ բարիդրացիական սերտ կապերի հաստատումն ու փոխհամագործակցության ընդլայնումն է:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ

Հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների ամրությունն ու հետագա զարգացումը մեծապես կպայմանավորվի Վրաստանում բնակվող մեր հայրենակիցների՝ որպես այդ երկրի լիարժեք քաղաքացիների անվտանգության, քաղաքական, սոցիալական և մշակութային իրավունքների հարգմամբ և ապահովմամբ: Պետք է լիակատար աջակցություն ցուցաբերվի հայաբնակ Ջավախքին սոցիալ-տնտեսական, կրթական և մշակութային ոլորտներում: Անհրաժեշտ է իրագործել հայրենադարձության և Արցախի վերաբնակեցման ամբողջական ծրագրեր:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առաջնորդող սկզբունք պետք է համարվի այն, որ Հայոց պետականությունը ոչ միայն Հայաստանի քաղաքացիների, այլև համայն հայության ազգային նպատակների իրականացման երաշխավորն է: Ըստ այդմ՝ ամեն ինչ պետք է արվի սփյուռքահայությանը հայոց պետականության գործընթացում լիարժեք ներգրավելու համար:

Պետք է գործադրվի Հանրապետության և հայության տարբեր հատվածների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման, համագգային ներուժի բացահայտման և օգտագործման ամբողջական ռազմավարություն:

լ. Այլ (Նախիջևան)

Նկատի ունենալով, որ Նախիջևանը բռնակցվել է Ադրբեջանին, անհրաժեշտ է մեր ժողովրդի հիշողության մեջ վառ պահել նրա հայկական պատկանելիության գիտակցությունը, քաղաքական, իրավական և մշակութային հիմքեր նախապատրաստել հարցը միջազգային ատյաններում արծարծելու համար:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայ մարդու և հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի համար մղվող մշտական պայքար:
2. Հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում համակարգային փոփոխությունների իրականացում և, առողջ ուժերի աջակցությամբ, Ազատ քաղաքացիների Արդար երկրի կառուցում:
3. Կայուն զարգացող և մրցունակ տնտեսության ձևավորում:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Ազատական գաղափարախոսության սխալ ընկալումը, դրա ծայրահեղ գործադրումը, սոցիալական պետության հիմնադրույթի անտեսումը, ազատ շուկայի կարգավորման գործում պետության դերի թերագնահատումը հանգեցրել են տնտեսական ներկա կարգին, երբ պետությունը կառավարում են ֆինանսատնտեսական մենաշնորհները: Ուստի կուսակցությունը գտնում է, որ 2012-2017թթ. սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրները պետք է լինեն զբաղվածության ապահովումը, տնտեսության մրցունակության բարձրացումը, արտահանման խրախուսումը, արժանապատիվ վարձատրության համակարգի ներդրումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և աղքատության հաղթահարումը:

ա. Դրամավարկային քաղաքականություն

Ֆինանսական շուկայի միասնական կարգավորման իրավասությունը պետք է դուրս բերվի Կենտրոնական բանկի վերահսկողության տիրույթից՝ տարանջատելով դրամավարկային քաղաքականության և ֆինանսական շուկայի կարգավորման գործառնությունները:

Գնաձի թիրախ պետք է սահմանվի միջին գնաձի ցուցանիշը և օրենքով ամրագրել պատասխանատվություն Կենտրոնական բանկի և այլ մարմինների համար՝ գնաձի թիրախավորված ցուցանիշից 50% շեղվելու դեպքում:

Գնաձի թիրախների ապահովման համար պետք է օգտագործվեն նաև մինչև մեկ տարվա ժամկետով բորսայական մեխանիզմներ:

Հայկական ապրանքների արտահանումը խրախուսելու նպատակով պետք է ներդրվի արտահանման վարկերի համակարգ՝ տարեկան հինգ տոկոս տոկոսադրույքով՝ հիմնվելով արտահանման մասին պայմանագրի և հաշիվ-ապրանքագրի վրա:

Վարկային տոկոսադրույքները պետք է լինեն 8-10% միջակայքում և վերանայվեն վարկային համակարգի տնտեսական նորմատիվները: Պետք է մեծանա վարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (հատկապես գյուղատնտեսության, արդյունաբերության և հիփոթեկային վարկավորման շուկայում):

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք

Ազգային ժողովի կողմից պետք է ընդունվի պետական բյուջեի մուտքերի հավաքագրման, ծախսերի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից ու միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցների օգտագործման արդյունավետության վերահսկման օրենսդրություն:

Պետք է ներդրվի ծրագրային բյուջետավորման և պետական ու համայնքային եռամյա և հնգամյա բյուջեների ամբողջական համակարգ:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Մի շարք ոլորտներում (այդ թվում՝ հանքարդյունաբերություն) պետք է կիրառվի գերշահույթի հարկման լիարժեք քաղաքականություն: Անհրաժեշտ է ներդնել ռեզիդենտների կողմից օտարերկրյա պետություններում կատարված տեղաբաշխումներից ստացված եկամուտների հայտարարագրման և հարկման համակարգ:

Պետք է վերանայվի ներկրվող թեթև մարդատար ավտոմեքենաների մաքսազերծման նոր համակարգը՝ ապահովելով նոր, ժամանակակից, տնտեսող, էկոլոգիապես մաքուր մեքենաների մատչելիությունը և 3-5 տարվա ընթացքում երկրի շարժակազմի ամբողջական արդիականացումը: Պետք է վերանայվի գույքահարկի օրենսդրությունը, նոր համակարգը առավելագույնս համապատասխանեցվի ըստ արդարության գանձելու սկզբունքին, ինչպես նաև՝ սահմանվի շքեղության հարկ (պրոգրեսիվ գույքահարկով պետք է հարկվի մեկ ընտանիքին 750 քառ. մետրից ավելի բնակատարածությունը):

Պետք է վերանայվի մաքսային օրենսգիրքը, մաքսադրույքներն ու մաքսային խթանները, որոնք պետք է դառնան գործիք՝ ակտիվ արդյունաբերական քաղաքականության, ինչպես նաև արտահանման ուղղված հայրենական արտադրության ծավալների ընդլայնման համար:

դ. Արդյունաբերության զարգացում

Կառավարության, համաշխարհային հայտնի ընկերությունների, Սփյուռքի խոշոր գործարարների հետ ուղղակի բանակցությունների միջոցով Հայաստանում պետք է հիմնվեն արտահանման ուղղվածությամբ հզոր արտադրական ձեռնարկություններ: Նման ընկերություններից յուրաքանչյուրի համար Ազգային ժողովի կողմից պետք է ընդունվեն հատուկ օրենքներ՝ պայմանների, պետական աջակցության, արտոնությունների և փոխադարձ պարտավորությունների վերաբերյալ:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Պետական աջակցությունը, ըստ տարածաշրջանների և անհրաժեշտության, պետք է ուղղվի գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործմանը, կարևոր պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, գոտիական մասնագիտացմանը, ձկնաբուծական, մեղվաբուծական, տեղական սերմնաբուծական և տոհմային տնտեսությունների, ինչպես նաև անբարենպաստ բնակլիմայական գոտիներում գյուղատնտեսական արտադրության կազմակերպմանը: Հողերի մշակման և տնտեսական շրջանառության մեջ ներգրավման աստիճանի բարձրացման նպատակով պետք է վերանայել հողերի կադաստրային արժեքները: Անհրաժեշտ է խրախուսել դրանց մշակելուն ուղղված ծրագրերը: Ամբողջությամբ պետք է սուբսիդավորվեն գյուղացիական տնտեսությունների կողմից լիզինգային կարգով ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի վարկային տոկոսադրույքները: Պետք է ձևավորվեն կարևոր պարենային մթերքների նվազագույն շահավետ գնով երաշխավորված իրացման և ինտերվենցիոն համակարգեր:

գ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁵

Անհրաժեշտ է մշակել և իրագործել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականություն, որը ենթադրում է բարձրացնել պետության պատասխանատվությունն արդյունաբերության նոր, տեխնոլոգիական առումով առաջատար սեկտորների վերականգնման կամ ստեղծման գործընթացներում:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁵

Պետք է՝

- ձեռնարկել և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երկրի էներգետիկական անվտանգության բարձրացմանը,
- ապահովել ՀԱԷԿ-ի պահպանումը և անվտանգությունը, իսկ շահագործման դադարեցումը պայմանավորել նոր՝ անվտանգության ժամանակակալից չափանիշներին համապատասխանող համարժեք հզորության ԱԷԿ-ի կառուցմամբ:

ը. Զբոսաշրջության զարգացում

Ցամաքային շրջափակման մեջ գտնվող հանրապետությունում տուրիզմի զարգացման, մարդկանց մատչելի տեղաշարժի ապահովման նպատակով՝ անհրաժեշտ է ձեռնարկվեն ավիատոմսերի գների իջեցման համալիր միջոցառումներ:

Էթնո- և էկոտուրիզմի զարգացման նպատակով մարզերում պետք է կազմակերպվեն ուսումնական դասընթացներ, մատուցվի անհատույց խորհրդատվություն, ստեղծվի փոքր հյուրանոցների ցանցում տեղերի ամրագրման բազմալեզու կայք-էջեր, տրամադրվեն արտոնյալ վարկեր՝ ընդհուպ մինչև առաջին երկու տարվա վարկային տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորում:

թ. Ներդրումների խթանում

Յուրաքանչյուր դիվանագիտական ներկայացուցչության աշխատանքի գնահատման կարևորագույն չափորոշիչ պետք է սահմանվի պատասխանատու տարածաշրջանում կամ երկրում Հայաստանից արտահանման ծավալների ավելացումը, հայկական կազմակերպությունների շահերի պաշտպանությունը, ինչպես նաև տվյալ երկրից դեպի Հայաստան ներդրումների աճը:

Պետք է լայնածավալ ներդրումներ իրականացվեն միջհամայնքային, ներհամայնքային և միջպետական ճանապարհների կառուցման, ոռոգման և խմելու ջրի, ինչպես նաև գազաֆիկացման հասանելիության ապահովման համար:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում նիոքր և միջին բիզնեսի զարգացում

Թեթև արդյունաբերության զարգացումը կարող է դիտարկվել ներկրվող մի շարք ապրանքների արտադրությունը Հայաստանում կազմակերպելու, զբաղվածություն (հատկապես՝ կանանց շրջանում) ապահովելու, պետական պատվերի շրջանակներում աջակցություն ցուցաբերելու, օտարերկրյա կազմակերպությունների հետ հնարավոր համագործակցության մեխանիզմներ ձևավորելու տեսանկյունից:

Գրանցված գյուտերի կիրառման, ինչպես նաև նորարարությունների, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման համար փոքր և միջին ձեռնարկություններին պետք է տրամադրվեն արտոնյալ վարկեր մինչև 50 մլն դրամի չափով՝ ընդհուպ մինչև առաջին երկու տարվա վարկային տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորում:

Փոքր և միջին ձեռնարկություններին այն ապրանքների արտադրության կազմակերպման նպատակով, որոնց ներմուծման ծավալները գերազանցում են հայրենական արտադրանքի ծավալները, պետք է տրամադրվեն մինչև 50մլն. դրամի չափով արտոնյալ վարկեր՝ ընդհուպ մինչև առաջին երկու տարվա վարկային տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորում:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Պետք է գործադրվի հակամենաշնորհային օրենսդրություն, վերացվեն շուկաներ ազատ մուտք գործելու արհեստական սահմանափակումները:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁵

Կոռուպցիայի հաղթահարումը կուսակցության առաջնային նպատակներից մեկն է, ինչին ՀՅԴ-ն հետամուտ է լինելու համալիր ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

Առաջադրված տնտեսական համակարգը պետք է հատկանշվի արդարությամբ և կասեցնի սոցիալական բևեռացումը:

ա. Աղքատության հաղթահարում

Աղքատության շեմ պետք է համարվի կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը (2012թ. դրությամբ՝ 63.000 դրամ՝ ներկայիս 33.517 դրամի փոխարեն), անհրաժեշտ է երաշխավորել յուրաքանչյուր քաղաքացու կենսապահովման նվազագույն բյուջեից ոչ ցածր եկամուտ ունենալու իրավունքը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Պետք է նվազեցվի եկամուտների և կենսամակարդակի տարբերությունը հասարակության աղքատ և հարուստ խավերի միջև:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Սոցիալ-տնտեսական քաղաքականության ամբողջական գործադրմամբ՝ ՀՆԱ-ն պետք է կրկնապատկվի, պետական բյուջեն՝ պետք է եռապատկվի, ստեղծվի առնվազն 200 հազար նոր աշխատատեղ:

Անհրաժեշտ է ընդունել երկրում աշխատավարձերի սահմանման միասնական ռազմավարություն, ինչը կապահովի աշխատանքի արտադրողականության աճ, միջին աշխատավարձերի տարբերակում՝ ըստ տնտեսության առաջնահերթությունների, մասնագիտությունների և աշխատանքային փորձառության:

Հանրապետությունում նվազագույն ժամային աշխատավարձը պետք է սահմանվի յուրաքանչյուր տարի՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հետ միասին, տվյալ տարվա առաջին եռամսյակի միջին ժամային աշխատավարձի 50%-ի չափով, սակայն ոչ պակաս կենսապահովման նվազագույն բյուջեից, որի աճը չպետք է պակաս լինի տարեկան գնաճի ցուցանիշից: Համակարգի լիարժեք ներդրման դեպքում նվազագույն ամսական աշխատավարձը 2013 թվականին կկազմի մոտ 63 հազար դրամ (այժմ 32.500 դրամ է):

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Աստիճանաբար պետք է ներդրվի առողջության պարտադիր ապահովագրության պետական-կորպորատիվ վճարումների համակարգը, ընդ որում՝ ապահովագրական վճարի չափը պետք է պայմանավորված լինի քաղաքացիների եկամտի չափով՝ աղքատության շեմից ցածր գտնվող քաղաքացիների, երեխաների, թոշակառուների, սոցիալապես խոցելի խմբերի համար ապահովագրական վճարները ամբողջությամբ պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեից: Միջին եկամուտ ունեցող քաղաքացիների ապահովագրական վճարի մի մասը պետք է հատուցվի պետական միջոցների հաշվին, հասարակության ապահով հատվածը պետք է վճարի ապահովագրական վճարն ամբողջությամբ:

Մեկ անձի համար տարեկան առողջապահական ծախսը նվազագույնը պետք է հասցնել 150.000 դրամի (այժմ՝ բյուջետային ֆինանսավորումը չի գերազանցում 21.000 դրամը):

Պետք է արտոնություններ տրամադրվեն մարզերում և հեռավոր բնակավայրերում աշխատող բուժանձնակազմին, ներդրվեն դեղերի և առողջապահական ծառայությունների գների պետական կարգավորման մեխանիզմներ: Անհրաժեշտ է պետական վերահսկողություն և մասնակցություն ապահովել դեղերի շուկայում:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է ընդլայնել և 5 անգամ մեծացնել հանրային ծառայության սոցիալական փաթեթը՝ ներառելով առողջապահության, մշակույթի, կրթության և գիտության ոլորտի բոլոր աշխատակիցներին: Կուսակցությունը պատրաստակամ է վերանայելու կենսաթոշակային բարեփոխումների համակարգը՝ ապահովելով արդարացի և սերունդների համերաշխությունը երաշխավորող կենսաթոշակների վճարումը: Կուսակցությունը գտնում է, որ համակարգի լիարժեք ներդրման դեպքում միջին աշխատանքային կենսաթոշակը կկազմի մոտ 63 հազար դրամ (այժմ 31.255 դրամ է):

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Յուրաքանչյուր երիտասարդ պետք է ունենա որակյալ կրթություն ստանալու, ստեղծագործելու, աշխատելու, բիզնեսով զբաղվելու և ինքնադրսևորվելու լիարժեք հնարավորություն: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները պետք է դառնան անվճար ամբողջ երկրի տարածքում, իսկ այդ հաստատությունների աշխատակիցների աշխատավարձը պետք է կազմի միջինը 110 հազար դրամ: Պետք է ապահովել ուսման մատչելիությունը, վերանայել կրթավճարները, ուսումնական հաստատություններում ուսման վճարի չափը պետք է կապակցվի շահառուների եկամուտների, ինչպես նաև տրամադրվող կրթության որակի և գիտելիքի հետ:

Ուսանողներին պետք է ընձեռվի մետրոպոլիտենի ծառայություններից զեղչով օգտվելու հնարավորություն (ամսական աբոնեմենտի տրամադրում՝ փոխադրավարձի 50%-ի հաշվարկով): Ուսանողներին, ըստ առաջադիմության, պետք է տրամադրվի կրթաթոշակ նվազագույն աշխատավարձի 50-100 տոկոսի չափով:

4.7. Գիտության զարգացում

Գիտության ոլորտի ֆինանսավորման բարեփոխման, գիտական հետազոտությունների կազմակերպման կատարելագործման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել համապատասխան հայեցակարգ և ծրագրեր:

4.8. Մշակույթ և սպորտ

Կուսակցությունը կարևորում է մշակութային քաղաքականության դերը՝ որպես երկրում իրականացվող բարեփոխումների, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման և ժամանակակից մրցունակ պետության գրավական: Ըստ այդմ՝ պետք է մշակվեն մշակութային անվտանգության եռամյա և հինգամյա ռազմավարական ծրագրեր՝ ուղղված ազգային մշակույթի պահպանմանն ու համամարդկային հոգևոր արժեքներին հաղորդակցմանը: Յուրաքանչյուր տարի պետք է ավելանան մշակույթի ոլորտի բյուջետային ֆինանսավորումն ու ներդրումները, ընդլայնվի հայ մշակույթի միջազգային ընդգրկվածությունը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետք է խթանվեն մարզադպրոցների և ակումբների աշխատանքները, բարելավվեն մարզիչների սոցիալական պայմանները, օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին նախապատրաստելու, հաջող մասնակցություն ապահովելու նպատակով՝ ազգային հավաքական թիմերը պետք է ապահովվեն ժամանակակից պայմաններով, խրախուսվեն հայկական ավանդական մարզաձևերն ու մասայական սպորտը:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում⁵

Տարածքային քաղաքականության ոլորտում պետք է ապահովվել պետության արդյունավետ վարչարարությունը և մարզերի ներդաշնակ զարգացումը, ընդլայնվել մարզի խորհրդի լիազորությունների շրջանակը, հստակեցնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում

Երևանից 30կմ. և ավելի հեռու գտնվող համայնքներում նորաստեղծ երիտասարդ ընտանիքներին տուն կառուցելու համար անհատույց տրամադրել հողատարածք և արտոնյալ վարկեր՝ առնվազն տասը տարի բնակություն հաստատելու պայմանով:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդթվում.

Կուսակցության ընկերվարական իդեալն այնպիսի հասարակության կերտումն է, որ մարդն ազատագրված կլինի ռասայական, կրոնական-դավանական, ազգային, քաղաքական, սոցիալական և տնտեսական ամեն կարգի խտրականությունից, կաշկանդումից, բռնությունից և շահագործումից:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Հ.Յ. Դաշնակցության համոզմամբ ընկերվարության ճանապարհով է, որ մարդկության քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումն օժտվում է արդար և համերաշխ հարաբերություններով:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Անհրաժեշտ է խոսքի ազատության ու բազմակարծության իրական երաշխավորում: ՀՌԱՀ և Հանրային հեռուստատեսության խորհուրդների ձևավորումը պետք է իրականացվի քաղաքական հավասարակշռության ու գործունեության թափանցիկության ապահովման սկզբունքներով:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Հ.Յ. Դաշնակցության համար Հայաստանի անկախությունն ու ինքնիշխանությունը բացարձակ արժեք են: Բարձրագույն արժեք է մարդը, նրա արժանապատվությունն ու իրավունքները:

դ. Դատախիրավական համակարգի բարեփոխում

Պետք է նախաձեռնվեն համակարգային, սահմանադրական և օրենսդրական բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն.

- վերահսկման, հակակշռման և զսպման ժամանակակից ու թափանցիկ մեխանիզմներով օժտված խորհրդարանական կառավարման համակարգի ձևավորմանը, ԱԺ պատգամավորների թվի կրճատմանը, անձեռնմխելիության սահմանափակմանը, պատգամավորների ետկանչման հնարավորության ստեղծմանը,
- դատական համակարգի իրական անկախությունը ապահովող դատավորների նյութական ապահովվածությանը, առաջադրման ու ազատման հակակշռող մեխանիզմների ամրագրմանը, դատարանների նախագահների ռոտացիոն կարգով ընտրությանը,
- քրեական օրենսդրության փոփոխություններին, որոնք հատկապես կվերաբերեն հանցագործությունների համար սահմանված պատիժների համապատասխանեցմանը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին, պատվիրված քննությունները բացառելուն, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նվազեցմանը, ազատազրկման հետ չկապված և պայմանական ազատազրկման պատժի կիրառման ամբողջական համակարգի գործադրմանը, քրեակատարողական հիմնարկների բեռնաթափմանը,
- վարչական պատասխանատվության վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունմանը, որը համահունչ կլինի անկախ պետականության և վարչական բնույթի զանցանքների պատասխանատվության պարզեցմանն ու համահարթեցմանը,
- ՋԼՄ-ների հանդեպ ոչ համաչափ տուգանքներ սահմանող դատական հայցերի կիրառման օրենսդրորեն բացառմանը,
- քաղաքական և տնտեսական գործառույթների զուգակցումը բացառող, անձի չվարկաբեկվածության, անհրաժեշտ ունակության ու փորձառության հատկանիշների գերակայությունը երաշխավորող և հանրային ծառայողների բնականոն առաջխաղացումն ապահովող կադրային քաղաքականության ձևավորմանը,
- հասարակական վերահսկողությունն ու միջամտությունն ապահովող, արդյունավետ գործիքներով օժտված քաղաքացիական հասարակության կայացմանը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Պետք է սահմանվի 100% համամասնական ընտրակարգ, ձևավորվի ընտրական հանձնաժողովների անաչառությունն ապահովող ու պատասխանատվությունը հստակ հասցեավորող անկախ և ինքնուրույն գործող ընտրական նոր կառույց: ԿԸՀ նախագահը պետք է նշանակվի ԱԺ կողմից, իսկ ընտրություններին մասնակցությունը սահմանվի որպես քաղաքացու պարտավորություն: Պետք է ամրագրվեն քվեաթերթիկների կեղծումը, ապօրինի շրջանառությունը, կրկնակի քվեարկությունը կանխող և քվեարկության մատյանների հասանելիությունն ապահովող գործունե մեխանիզմներ, իսկ համապատասխան մարմինների համար սահմանվեն հատուկ լիազորություններ և պատասխանատվություն՝ ընտրակաշառքի կանխարգելման և բացահայտման համար:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁵

Պետք է բազմակարծության, գաղափարաքաղաքական մրցակցության և քաղաքացիական հասարակության ձևավորման գործում կուսակցությունների դերի բարձրացում:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

Կուսակցությունը կարևորում է վարչական պատասխանատվության վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունումը, որը համահունչ կլինի անկախ պետականության և վարչական բնույթի հանցանքների պատասխանատվության պարզեցմանն ու համահարթեցմանը, ինչպես նաև՝ քաղաքական և տնտեսական գործառույթների զուգակցումը բացառող, անձի չվարկաբեկվածության, անհրաժեշտ ունակության ու փորձառության հատկանիշների գերակայությունը երաշխավորող և հանրային ծառայողների բնականոն առաջխաղացումն ապահովող կադրային քաղաքականության ձևավորումը:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետք է բարձրացնել Հայաստանի անկախության և անվտանգության երաշխավոր հայոց ազգային բանակի մարտունակությունը, կարգապահությունը, արդիականությունը: Պետք է նաև մշակել արտաքին քաղաքականության դոկտրին՝ հիմնված հայության անվտանգության և լինելիության, Հայաստանի անկախության և ինքիշխանության ամրապնդման գերակայության վրա:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետք է գործադրել ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն՝ ուղղված ծնելիության մակարդակի բարձրացմանը, մահացության մակարդակի նվազեցմանը, կյանքի տևողության ավելացմանը, արտագաղթի կասեցմանն ու ներգաղթի խրախուսմանը: Արդյունքում յուրաքանչյուր տարի բնակչության թվաքանակը կաճի միջինը 50.000-ով: Պետք է սահմանել մինչև 7 տարեկան երեխաների ամենամսյա նպաստ՝ առաջին երեխայի դեպքում՝ 20.000 դրամ, երկրորդ երեխայի դեպքում, 25.000 դրամ, երրորդ երեխայի դեպքում՝ 40.000 դրամ, չորրորդ, հինգերորդ և հաջորդ երեխաների դեպքում՝ 60.000 դրամ: Հինգ և ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետք է անհատույց տրամադրել բնակարան: Անհրաժեշտ է ընդունել օրենք, որի համաձայն՝ մինչև երկու տարեկան երեխա խնամող չաշխատող կանանց համար այդ ժամանակահատվածը կհամարվի աշխատանքային ընդհանուր ստաժ:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Տնտեսական նախագծերը պետք է իրականացվեն բացառապես շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության փորձաքննության և համապատասխան եզրակացության առկայության դեպքում, դրանց արդյունքները պետք է հասանելի լինեն հանրությանը: Պետք է ներդրվի թափոնների և աղբի հետագա կուտակումները սահմանափակող ընթացակարգ: Նոր թափոնների կուտակում կարող է իրականացվել միայն առկա թափոնների և աղբի համապատասխան կառավարման մեխանիզմների գործադրման դեպքում (վերամշակում, վնասագերծում, մեկուսացում, արտահանում և այլն):

Պետք է սահմանափակել ժամանակակից էկոլոգիական նորմերին չհամապատասխանող տրանսպորտային միջոցների մուտքը Հայաստան:

Պետք է խրախուսվի էլեկտրատրանսպորտի գործունեությունը, կառուցվեն մետրոյի նոր կայարաններ: Պետք է սահմանափակվի բեռնատար մեքենաների երթևեկությունը Երևանի մեծ կենտրոնում, արգելվի քաղաքացիների առողջությանը վնասող և սահմանված նորմերի (աղմուկի, փոշու, արտանետումների) խախտումով աշխատող կազմակերպությունների գործունեությունը, վերականգնվեն, ընդլայնվեն կանաչ տարածքները և ջրային ավազանները, հանրային զբոսայգիների քանակը և մակերեսը՝ զերծ պահելով դրանք առևտրային շահագործումից:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԴԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Փ.Բուզանդի 1/3
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 52-52-73
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ arm_democracy@yahoo.com
- Հիմնադրման տարեթիվը՝ 18.09.1991թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 25.10.1991թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 26.11.2003թ.
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 27, որից 9 մարզային
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 3700, որից
 - Կանայք՝ 25%
 - Երիտասարդներ՝ 30%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 0

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Հանրապետական խորհուրդ
- Նախագահություն
- Կուսակցության նախագահ՝ Արամ Գասպարի Սարգսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած, կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունն ընդունող ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ով դիմում է սկզբնական կազմակերպությանը: Անդամավճարը՝ 100 և ավելի դրամ:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցությունը դավանում է սոցիալ-դեմոկրատական գաղափարներ, որի հիման վրա ստեղծել է «դեմոկրատական սոցիալիզմի հայկական մոդել» ծրագիրը՝ նպատակ ունենալով հիմնել սոցիալական արդարության պատասխանատվություն կրող պետական հասարակարգ:

3.2. Նպատակները և խնդիրները

Պետք է ամրապնդել ազգային ինքնիշխան պետականությունը, ապահովել ազգային-պետական անվտանգությունը, կլանային-օլիգարխիկ ռեժիմը փոխարինել դեմոկրատական սոցիալիզմի համակարգով, պայքարել ազգային նկարագրի խաթարումների, ազգային ինքնության կորստյան դեմ, կանխել հասարակության սոցիալական բեռնացումը, որի արդյունքում կձևավորվի ամուր միջին խավ:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Արտաքին քաղաքականության մեջ առաջնահերթությունները որոշելիս՝ դեմոկրատական սոցիալիզմի պետությունն առանձնահատուկ նշանակություն է տալու այն երկրներին, որոնց հետ հարաբերությունների խորացումը բխում է հայ ժողովրդի ազգային շահերից: Ըստ այդմ՝ կուսակցությունն առանձնացնում է հետևյալ առաջնահերթությունները.

- ազգային-պետական անվտանգության շահերին համագործակցել փոխհարաբերությունների պահպանում և ձևավորում առանցքային երկրների հետ, այդ թվում՝ ՌԴ, Եվրամիություն, Չինաստան, ԱՄՆ, հարևան երկրներ,
- ռազմավարական գործընկեր ՌԴ հետ փոխվստահելի հարաբերությունների խորացում,
- Հայ Դատի անվերապահորեն հետապնդում՝ հենվելով միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների, համամարդկային արժեքների և պատմական ճշմարտության վրա:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրությունները, այդ թվում.

- Հայ դատի պահանջատիրության սկզբունքների հետապնդում,
- Արցախի հիմնահարցի կարգավորմանն ուղղված ազգային-պետական հայեցակարգի ձևավորում՝ այն պաշտոնապես ներկայացնելով ՄԱԿ-ի անդամ երկրներին:

ա. Եվրախնտեգրում⁴

Եվրախնտեգրման գործընթացի իրականացումը պետք է համապատասխանի ՀՀ պետական շահերին՝ քաղաքացիական հասարակություն ձևավորող ինստիտուտների զարգացումով:

բ. ԱՊՀ⁴

ԱՊՀ անդամակցության պետք է համապատասխանի ՀՀ պետական շահերին՝ քաղաքացիական հասարակություն ձևավորող ինստիտուտների զարգացումով:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Կուսակցությունը կողմ է և անհրաժեշտ է համարում ՀՀ անդամակցումը ՀԱՊԿ՝ ելնելով մեր պետության ազգային-պետական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

դ. ՀԱԴԿ (NATO)

Կուսակցությունը գտնում է, որ ՀԱԴԿ-ի ընդլայնումը դեպի Արևելք հեռու է գլոբալ անվտանգություն ստեղծելու նպատակներից, և Ռուսաստանի շրջանցումով՝ Հայաստանը դնում է երկրնորանքի առջև՝ կամ ՀԱԴԿ, կամ Ռուսաստան: Հետևաբար, կուսակցությունը կողմ է միջբլոկային համագործակցությանը: Օրինակ, զանգվածային ոչնչացման զենքերի տարածման, միջազգային ահաբեկչության, թմրադեղեր արտադրողների դեմ ընդհանուր, արդյունավետ պայքար մղելու ուղղությամբ:

ե. ԱՄՆ⁴

Պետք է զարգացնել հարաբերություններն ԱՄՆ-ի հետ՝ նաև հաշվի առնելով այս երկրում առկա հայահոծ համայնքը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

ՌԴ-ի հետ պետք է զարգանա ու խրախուսվի ռազմավարական, տնտեսական համակողմանի համագործակցությունը:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Թուրքիայի հետ հարաբերությունները չեն կարող կարգավորվել մեր օրինական պահանջատիրությունից հրաժարվելու գնով:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Կուսակցությունը կողմնակից է հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը՝ տուրք չտալով փոխզիջումային զարգացումներին: Կուսակցությունը գտնում է, որ ցանկացած բանակցություններ, ցանկացած ձևաչափով չեն կարող ընթանալ առանց ԼՂՀ իշխանությունների մասնակցության: Արցախի հիմնահարցը կուսակցությունը լուծված կհամարի այն դեպքում, երբ համաժողովրդական հանրաքվեի արդյունքում Լեռնային Ղարաբաղը կմիավորվի Մայր Հայրենիքի հետ: ԼՂ հիմնահարցում կուսակցությունը հիմք է ընդունում Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի իրավական արդյունքը, որը ամբողջովին համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

թ. Իրան⁴

Իրանին համարելով կարևոր դերակատարում ունեցող տարածաշրջանային երկիր՝ կուսակցությունն անհրաժեշտ է համարում շարունակել զարգացնել բարեկամական հարաբերությունները:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁴

Վրաստանի հետ պետք է խորացնել բարիդրացիական հարաբերությունները՝ այդ ենթատեքստում պաշտպանելով ջավախահայության հիմնախնդիրները:

ի. Հայաստան-Միություն կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում⁴

Լինելով փոքրատարածք երկիր՝ Հայաստանը պետք է և կարող է աշխարհասփյուռ մեր ժողովրդի տնտեսական և մտավոր ներուժն ի սպաս դնել աշխարհում իր իրական և արժանապատիվ տեղն ու դերը հաստատելու համար:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթություններ⁴

1. Տնտեսական կացութաձևի ընտրություն:
2. Երկրի ռազմավարական զարգացման պլանավորում:
3. Մեփականատիրման և բաշխման հարաբերությունների կարգավորում՝ շուկայական հարաբերությունների հնարավորություններով և պետական կարգավորման անհրաժեշտության պայմաններով:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում⁴

Կարգավորվող շուկայական հարաբերություններ՝ առավելությունը տալով խառը տնտեսական կացութաձևին, որի արդյունքները կնպաստեն սոցիալական արդարության հաստատմանը:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁴

Վարկերն անհրաժեշտ է պետական-հասարակական առումով խիստ վերահսկելի դարձնել, դրանք օգտագործել տնտեսական զարգացման, ընդլայնված վերարտադրության, ինչպես և ռազմավարական ու սոցիալ-տնտեսական առաջնային անհրաժեշտության ձեռնարկությունների վերագործարկման և այդպիսիք ստեղծելու կոնկրետ ծրագրերի համար:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁴

Անհրաժեշտ է կրճատել բյուջեի ծախսերը, սակայն ոչ թե ի հաշիվ սոցիալականի, այլ ուռճացած պետապարտի, ստվերային տնտեսության դեմ հետևողական պայքարի, ամենակարևորը՝ տնտեսությունը գործող և եկամտաբեր դարձնելու շնորհիվ:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Արմատապես պետք է վերակառուցվի և բարեփոխվի հարկային համակարգը: Պրոգրեսիվ հարկումը պետք է դառնա դեմոկրատական սոցիալիզմի սկզբունքներից մեկը: Հարկային և մաքսային քաղաքականությունը պետք է ունենան մարտավարական և ռազմավարական ուղղվածություն՝ նպաստելով երկրի տնտեսության կայունացմանը ու վերընթացին: Ներկայումս գանձվող տարբեր հարկերի փոխարեն պետք է սահմանել միասնական հարկ:

դ. Արդյունաբերության զարգացում

Հայաստանը պետք է լինի արդյունաբերական բարձր զարգացած և ոչ թե սպասարկող երկիր: Արդյունաբերության զարգացման համար դեմոկրատական սոցիալիզմի պետությունը հնարավոր ամեն ինչ պետք է անի՝ ապահովելու արտաքին շուկան, եթե ձեռնարկվելիք միջոցառումները չեն վնասում պետության ինքնիշխանությանը:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Ագրարային հարաբերություններում դեմոկրատական սոցիալիզմի ազգային առանձնահատկություններից մեկը հողի՝ ազգային ամենամեծ հարստության պետական սեփականությունն է: Հողը պետական սեփականություն դարձնելով և վարձակալությամբ օգտագործելով՝ կապահովվի հողի նկատմամբ սեփականության իրավունքը, մասնավոր հողատիրության հանդեպ կապահովվեն մի շարք առավելություններ, ինչը պետությունը թույլ կտա:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում գիտություն-արտադրություն կապի խթանումը, մասնավորապես՝ ֆինանսական միջոցների ներգրավումով տեխնոպարկերի տիպի ենթակառուցվածքի ձևավորումը, գիտական և տեխնոլոգիական հեռանկարային ուղղությունների զարգացումը խթանող 15-20 տարվա հեռանկարով համալիր ծրագրերի մշակումը:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁴

Համարելով էներգետիկան տնտեսության անկախության ու զարգացման հենասյուներից՝ կուսակցությունը նախատեսում է առաջիկա 10 տարում մշակել ու իրագործել հիդրոէներգետիկ արդյունավետ օգտագործման ազգային ծրագիր:

թ. Ներդրումների խթանում

Պետք է խրախուսվեն նաև օտարերկրյա կապիտալ ներդրումները՝ գերապատվությունը տալով Սփյուռքի գործարարներին: Կապիտալ ներդրումներ պետք է կատարեն ոչ միայն օտարերկրացիները, այլև պետությունը, որը վարկերով օգնելու է նաև հայրենական գործարարությանը՝ նրանց համար ստեղծելով էժան վարկեր ձեռք բերելու հնարավորություն:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Շուկայական հարաբերություններում դեմոկրատական սոցիալիզմի տնտեսաձևը միաժամանակ մերժում է թե՛ անսահմանափակ ազատականությունը, առավել ևս՝ ամենաթողությունը, և թե՛ սեփականության ձևերի ու տնտեսավարման բազմազանության բացառումը: Առողջ ֆինանսները պետությանը թույլ կտան վարել փոքր և միջին գործարարությունն ու կոոպերացիայի զարգացումը խրախուսող վարկային քաղաքականություն:</

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁴

Պետության գործառնությունների օգտագործումով, օրենքի ուժով անհրաժեշտ է կազմաքանդել, ստվերային, մենաշնորհային, օլիգարխիկ համակարգը:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիան, կաշառակերությունը և դրամաշորթությունը հասարակական չարիք են, որոնք բացարձակապես անհարիր են դեմոկրատական սոցիալիզմի բարոյականությանը և պետք է անողորմաբար պատժվեն օրենքով:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրությունները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում .

Կուսակցության գլխավոր նպատակն է իրական սոցիալական պետության կառուցումը, ուր չեն լինի աղքատներ և սոցիալապես անապահովներ, ամեն ոք կկարողանա օգտվել առողջապահական ծառայություններից և կստանա անհրաժեշտ կրթություն, ուր պետությունը կստանձնի պարտավորություն իր քաղաքացու սոցիալական վիճակի համար:

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է ստվերային տնտեսությունը փոխակերպելու միջոցով մեկ շնչին ընկնող եկամուտը հասցնել սպառողական զամբյուղի չափին:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Պրոգրեսիվ հարկում կիրառելու շնորհիվ և անապահով խավերին էական սոցիալական օժանդակություն ցուցաբերելով՝ հնարավոր է նվազեցնել հասարակական շերտերի բևեռացումը:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում⁴

Անհրաժեշտ է երկրում օրենքի գերակայության ապահովումը և պետական ներդրումներով նոր աշխատատեղերի ստեղծումը:

դ. Առողջապահական համակարգի բարելավում⁵

Անհրաժեշտ է պետական ստացիոնար և ամբուլատոր բուժօգնությունների ցանցի վերականգնում, նորերի ստեղծում պետպատվերով բուժվողների թվի կտրուկ ավելացում:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Պետք է թոշակը հասցվի սպառողական զամբյուղի չափին և երիտասարդ ընտանիքներին պետական հոգածություն ցուցաբերվի:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կրթական համակարգի բարեփոխումը պետք է դառնա երկրի զարգացման հեռանկարային ռազմավարական ծրագրի (15-20 տարի) օրգանական մասը: Դա նշանակում է պետության կողմից համակարգված մոտեցում: Պետք է պարբերաբար ավելացնել կրթության համար նախատեսված բյուջեի մասնաբաժինը, ինչը կապահովի կրթության բովանդակության նորացումը և որակի էական բարելավումը:

4.7. Գիտության զարգացում

Գիտությանը պահանջվող աջակցությունը պետք է լինի պետության առաջնային հոգածության առարկա: Պետք է սահմանվեն գիտատեխնիկական քաղաքականության առաջնահերթությունները, պահպանված գիտական ներուժի, հատկապես՝ ավանդական դպրոցների, հիման վրա ձևավորվի գիտության կառավարման արդյունավետ համակարգ, բարձրացվի գիտաշխատողների աշխատավարձը: Պետք է արագ վերականգնել Հայաստանի արտադրական ու գիտատեխնիկական ներուժը:

4.8. Մշակույթ և սպորտ⁵

Անհրաժեշտ է մշակույթին տրվող ֆինանսավորման ավելացում և այս ոլորտում մնացորդային ֆինանսավորումից հրաժարում: Ֆիզկուլտուրան և սպորտը անհրաժեշտ է մատչելի դարձնել հասարակության լայն խավերի, հատկապես՝ երիտասարդության համար:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁵

Կուսակցությունն առաջնային անհրաժեշտություն է համարում զուգակցված պատասխանատվության բարձրացումը:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից⁵

Կուսակցությունն անհրաժեշտություն է համարում վերահսկման մեխանիզմների ստեղծումը:

զ. Մարզերի համաչափ զարգացում⁵

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Ժողովրդավարությունը պետության տված շնորհ չէ: Դա ժողովրդի գերիշխող ապրելաձև է կյանքի բոլոր ոլորտներում: Քաղաքական համակարգում այն պետք է արտահայտվի ազգի համախմբման, բարգավաճող պետության կերտման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման ձևով:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Պետք է մամուլի պատասխանատվության բարձրացում և պետական մարմինների կողմից բարձրացված հարցերի պատասխանում:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ խորհրդարանական համակարգով ապահովվելու են մարդու բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների, ամենից առաջ՝ ապրելու, աշխատանք ունենալու իրավունքը, խոսքի, մամուլի ժողովների, հանրահավաքների, երթերի և ցույցերի ազատությունը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Կուսակցությունը կարծում է, որ խորհրդարանական արդար, առանց կեղծումների և թափանցիկ ընտրությունները սկզբունքային ու վճռական նշանակություն ունեն: Երկրի բարձրագույն մարմինը պետք է կազմված լինի պրոֆեսիոնալ, բարձրագույն անձանցից: Սահմանադրական դրույթ պետք է դառնա ընտրողների պահանջով խորհրդարանական կուսակցությունների կողմից այս կամ այն պատգամավորի հետ կանչելը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Անհրաժեշտ է հանրապետությունում ձևավորված բոլոր կուսակցությունների համար հավասար պայմանների ստեղծում:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁵

Անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների թվաքանակի ճշգրտում, գործունեության հստակեցում, գրանտների և դրանցից հարկերի վճարման պահանջների հստակեցում:

բ. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

Դեմոկրատական սոցիալիզմը բացառում է սոցիալական տարբերությունները կնոջ և տղամարդու միջև: Հաշվի առնելով ֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է կանանց համար սահմանվել արտոնություններ՝ ապահովելով նրանց դերը հասարակության մեջ որպես մայր, դաստիարակ, ընտանիքը պահպանող ու ամրապնդող:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հաշվի առնելով ազգային-պետական անվտանգության սպառնալիքները՝ անհրաժեշտ է մշակել ազգային անվտանգության հայեցակարգ, որից պետք է բխի հիմքում ազգային շահեր ունեցող երկրի արտաքին քաղաքականությունը:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցության գլխավոր նպատակն է երիտասարդ ընտանիքների ամրապնդումը, բնակարան ստանալը վարկավորելու, ծնված երեխայի համար վճարում սահմանելու, բազմազավակ ընտանիքներին խրախուսելու միջոցառումները:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Դեմոկրատական սոցիալիզմի համակարգում մարդը դիտվում է որպես բնության անբաժան մաս և չպետք է հակադրվի դրան, առավել ևս՝ իր գիտատեխնիկական և արդյունաբերական գործունեությամբ շահադետ կերպով կործանի այն:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման լավագույն միջոցը սեփականատիրության ձևի և բաշխման հարաբերությունների հստակեցումն է, հասարակական հարաբերություններում բարոյականության սկզբունքների հաստատումը, անբարո արարքների համար օրենքի առջև հավասար լինելը և խախտումների համար պատժելիության անխուսափելիությունը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Զաքյան 10
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+ 37410) 54 – 19 – 17
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ comparty.armenia@yandex.ru , comparty.armenia@mail.ru
- Հիմնադրման տարեթիվը՝ 1991թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 29.07.1991թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 24.11.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 30.11.1997թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 29.11.2010թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները 05.11.2003թ., «Հայաստանի կոմունիստ», «Правда Армении» պարբերականներ
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝ «Հայաստանի կոմունիստ», «Правда Армении» պարբերականներ
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 45
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 19730, որից
 - Կանայք՝ 22%
 - Երիտասարդներ՝ 17%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 0

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- ԿԿ պլենում՝ 81 անդամ
- ԿԿ բյուրո՝ 14 անդամ
- Կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար՝ Ռուբեն Գրիգորի Թովմասյան
- Կուսակցության Կենտկոմի երկրորդ քարտուղար՝ Տաճատ Գեղամի Սարգսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, որն ընդունում ու կատարում է կուսակցության ծրագրի և կանոնադրության պահանջները, ընդգրկված է նրա տարածքային կազմակերպություններից մեկում և մուծում է կուսակցական անդամավճար:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

ՀԿԿ-ն հասարակական քաղաքական միավորում է, որը ստեղծագործաբար իրականացնելով մարքսիզմ-լենինիզմի տեսության դրույթները՝ կամավոր հիմունքներով միավորում է հանրապետության քաղաքացիներին հանուն իր ծրագրային նպատակների կենսագործման:

3.2. Նպատակները և խնդիրները

Կուսակցությունը պաշտպանում է բանվորների, գյուղացիների, մտավորականության և բոլոր աշխատավոր մարդկանց շահերը, պայքարում երկրի սոցիալ տնտեսական, քաղաքական և հոգևոր ճգնաժամի լիակատար հաղթահարման, իրական ժողովրդավարության վերահաստատման և սոցիալիստական համակարգի վերականգման համար՝ հանուն ՀՀ տնտեսական, քաղաքական և հոգևոր վերածննդի ու զարգացման, ժողովրդների բարեկամության և սերտ համագործակցության գաղափարի վերածնման, մարդու սոցիալական ու քաղաքական բոլոր իրավունքների պաշտպանության:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Ձախակողմյան

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՑԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները⁵

1. Հայ-Ռուսական հարաբերությունների խորացում և ռազմավարական համագործակցության շրջանակների ընդլայն

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Կուսակցության գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի տարածաշրջանի երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, պահպանմանը և այլ կապերի փոխշահավետ զարգացմանը պետության աջակցության շնորհիվ:

ա. Եվրախնտեզրում ⁵

Կուսակցությունը դեմ է Եվրախնտեզրմանը:

բ. ԱՊՀ

Պետք է խորացնել ԱՊՀ-ի հետ հարաբերությունները:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

Ելնելով Հայաստանի շահերից պետք է համագործադրել ՀԱՊԿ-ի հետ:

դ. ՀԱԴԿ (NATO)⁵

Կուսակցությունը դեմ է ՀԱԴԿ-ի հետ ցանկացած տիպի համագործակցությանը:

ե. ԱՄՆ⁵

Կուսակցությունը կրկնակի դեմ է ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացման ցանկացած դրսևորմանը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը կարևոր է համարում դարավոր պատմություն ունեցող ընկերական, տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդումը Ռուսաստանի Դաշնություն հետ:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁴

Աշխարհը պետք է ճանաչի հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը: 21.05.2005թ. ՀԿԿ-ի նախաձեռնությամբ ԱՊՀ-ի երկրների կոմունիստական կուսակցությունները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Կուսակցությունը միանշանակ դեմ է Թուրքիայի հետ ցանկացած հարաբերությունների հաստատմանը:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Ղարաբաղյան հիմնահարցը պետք է լուծվի ազգերի ինքնորոշման սկզբունքների դրյույթների հիման վրա: Ադրբեջանի հետ հարաբերությունները հնարավոր են միայն հայանպաստ բանակցությունների դեպքում:

թ. Իրան⁵

Իրանի հետ պետք է պահպանել և զարգացնել բարիդրացիական հարաբերությունները:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ⁵

Վրաստանի հետ պետք է պահպանել և զարգացնել բարիդրացիական հարաբերությունները, որոնք կնպաստեն Ջավախքի և վիրահայության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Պետք է օգտագործել Սփյուռքի ներուժը համահայկական խնդիրների լուծման և Հայաստանի զարգացման գործում:

լ. Այլ (Հենցգափոխել և չաղավաղել պատմությունը)⁵

Կուսակցությունը անհրաժեշտ է համարում, չաղավաղել և չհենցափոխել պատմությունը, Սովետական Հայաստանի պատմական ժամանակաշրջանը ներկայացնել արդարացի, որպես հայ ժողովրդի զարգացման փառապանծ ժամանակաշրջան, որից ծնվեց երրորդ Հանրապետությունը՝ անկախ Հայաստանը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Սոցիալական արդարություն:
2. Ժողովրդին վերադարձնել իշխանությունը և ապահովել արդար ընտրություններ:
3. Արտագաղթի կանխում և նոր աշխատատեղերի ստեղծում:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

Կուսակցությունը հանրապետությանը տնտեսական ճգնաժամից դուրս բերելու և տնտեսության արդյունավետ զարգացման հիմնական պայմանը համարում է ԱՊՀ երկրների միասնական ֆինանսական համ

ա. Դրամավարկային քաղաքականություն⁵

Պետության դրամավարկային քաղաքականությունը պետք է նպաստի արտադրողական ուժերի զարգացմանը: Կարևոր է իրականացնել կանխիկ դրամաշրջանառության նվազեցման ծրագիր, պահպանել դրամավարկային քաղաքականության հավասարակշռությունը՝ խուսափելով դրամական շուկայի ցնցումներից և տատանումներից:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁵

Անհրաժեշտ է վերանայել պետական միջոցների անարդյունավետ ծախսման քաղաքականությունը, նվազեցնել պետական վարչակազմի պահպանման ծախսերը, թույլ չտալ տարաբնույթ չարաշահումներ ու մսխումներ: Պետական միջոցներն ուղղել տնտեսության ոլորտ՝ արդյունաբերություն ստեղծելու և զարգացնելու, իսկ արտադրական միջոցները որպես երաշխիք կապահովեն դրամական միջոցների վերադարձը բյուջե: Կանոնակարգել պետական բյուջեի ծախսերը՝ ելնելով պետության զարգացման և բարգավաճման առաջնահերթություններից:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ⁵

Անհրաժեշտ է բարեփոխել ու կանոնակարգել հարկային համակարգը և հարկային վարչարարությունն այնպես, որպեսզի վերացվի ստվերային դաշտը: Պարզեցնել և նվազեցնել հարկերի դրույքաչափերը հոգուտ ժողովրդի: Բարեփոխել ու կանոնակարգել մաքսային քաղաքականության ընթացակարգը այնպես, որպեսզի նպաստի ստվերային դաշտի, կոռուպցիայի և բյուրոկրատական խոչընդոտների վերացմանը:

դ. Արդյունաբերության զարգացում

Անհրաժեշտ է վերականգնել նախկին արդյունաբերական հզորությունները՝ շարունակելով ոլորտի ամբողջական զարգացումը:

ե. Գյուղատնտեսության զարգացում⁵

Պետք է նպաստել գյուղատնտեսության զարգացմանը: Կուսակցությունը անհրաժեշտ է համարում բարձրացնել մեխանիզացիայի և ագրոտեխնոլոգիայի մակարդակը:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁵

Կուսակցությունը անհրաժեշտ է համարում գիտատեխնիկական ռազմավարական և տնտեսական նպատակային համալիր ծրագրերի մշակումը, որոնք ապահովված կլինեն տնտեսության մեջ ներդրվող նյութատար փոքր ծախսերով և նպատակաուղղված գիտատարության բարձր մակարդակ ունեցող հեռանկարային ուղղությունների զարգացմանը, ինչպիսիք են՝ նանոտեխնոլոգիան, կենսատեխնոլոգիան, էկոտեխնոլոգիան ու տեղեկատվական տեխնոլոգիաները: Զարգացնել ինովացիոն գործունեությունը գիտության և տնտեսության գիտատեխնիկական ու գիտատարողունակ ճյուղերի ոլորտներում:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում

Պետությունը պետք է ապահովի երկրի էներգետիկ անվտանգությունը:

ը. Զբոսաշրջության զարգացում⁵

Պետական աջակցություն և զարգացում զբոսաշրջությանը, որպես տնտեսության անարտադրողական բնագավառ, որը կնպաստի տեղական բյուջեի ավելացմանը:

թ. Ներդրումների խթանում

Անհրաժեշտ է նպաստել ներդրումների ծավալների մեծացմանը՝ պետության ձեռքում պահելով դրանց գլխավոր փաթեթը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Ոլորտի կարգավորման շրջանակում պետք է ստեղծվեն խառը և համատեղ ձեռնարկություններ՝ նպաստելով փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:

ի. Ստվերային տնտեսության կրճատում⁵

Անհրաժեշտ է վճռականորեն պայքարել ստվերային տնտեսության կրճատման համար:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁵

Հայաստանում պետք է բարեփոխել տնտեսական քաղաքականությունը, որը կնպաստի բոլոր ռազմավարական ճյուղերը ազգայնացնելուն, ժողովրդից վերցվածը՝ վերադարձնել ժողովրդին:

խ. Այլ (Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում)

Պետք է պետության ձեռքում կենտրոնացնել գերշահույթ բերող ճյուղերը և վերանայել սեփականաշնորհված ձեռնարկությունների իրական ար

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում .

Պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության ուղղվածությունը պետք է լինի Հայաստանի քաղաքացիների անվտանգության, ապահովվածության և կենսամակարդակի բարձրացումը:

ա. Աղքատության հաղթահարում

Աղքատության հաղթահարումը պետք է լինի սոցիալական քաղաքականության գերնպատակը: Կուսակցությունը պայքարելու է կենսաթոշակների, կրթաթոշակների և սոցիալական օգնության այլ ձևերի բարձրացման համար:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Կտրուկ քայլերով պետք է կրճատել և վերացնել հասարակության խավերի շերտավորումները, նրանց եկամուտների ներկայիս տարբերությունը: Վարել զբաղվածության և բնակչության սոցիալական ապահովության համակարգի ստեղծման ու ամրապնդման արդյունավետ քաղաքականություն:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Հայաստանի համար զբաղվածության ապահովումը և գործազրկության նվազեցումն ունի ռազմավարական նշանակություն, որի իրագործմանը պետք է ուղղված լինի պետական հստակ քաղաքականությունը:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Կուսակցությունն իր առաջնային խնդիրներից է համարում անվճար բուժսպասարկման համակարգի վերականգնումը և զարգացումը, որը պետք է ընդգրկի բնակչության բոլոր շերտերը:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում⁵

Պետք է իրականացնել պետական հստակ քաղաքականություն սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխման համար, որը կնպաստի բնակչության ապրելակերպի բարելավմանը:

զ. Այլ (Եկեղեցի)

Կուսակցությունը մեծ նշանակություն է տալիս Հայ Առաքելական եկեղեցու գործունեությանը, որն ուղղված է ազգի պահպանման, ամբողջ աշխարհում հայերի միասնության ամրապնդմանը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Կրթությունը Հայաստանում պետք է լինի անվճար: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում վերականգնել բոլորի համար հասանելի անվճար բարձրագույն և միջին մասնագիտական կրթության համակարգը: Կուսակցությունն ազգային դպրոցի զարգացումն ու կատարելագործումն աճող սերնդի դաստիարակման պայման է համարում: Ուսուցչի հեղինակության բարձրացումն ու սոցիալական վիճակի բարելավումը կրթության համակարգի բարեփոխումների կարևոր գործոններն են:

4.7. Գիտության զարգացում

Հայաստանին անհրաժեշտ է գիտության շեշտակի զարգացում: Գիտությունը պետք է լինի պետության հոգաձության առարկա: Կուսակցությունը կարևոր պետական խնդիր է համարում հիմնարար, կիրառական, ճյուղային, փորձարարական և հումանիտար գիտությունների զարգացումը:

4.8. Մշակույթ և սպորտ

Հայաստանին անհրաժեշտ է մշակույթի շեշտակի զարգացում: Մշակույթը պետք է լինի պետության հոգաձության առարկա: Պաշտպանելով հայ ժողովրդի՝ դարերի ընթացքում ձևավորված ավանդույթները, մշակույթի զարգացումը համարելով առաջնային խնդիր՝ կուսակցությունն անհրաժեշտ է համարում այդ կարևոր ոլորտի ֆինանսավորումը պետական միջոցներից:

Հայաստանին անհրաժեշտ է սպորտի շեշտակի զարգացում: Սպորտը պետք է լինի պետության հոգաձության առարկա:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում⁵

Պետության կողմից իրականացվող տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքականությունը պետք է բարեփոխվի, նրանց լիազորություններն ու պատասխանատվությունը պետք է հստակ սահմանազատվեն: Անհրաժեշտ է կառավարման բոլոր տեսակի մեխանիզմները կատարելագործել և դարձնել իրատեսական գործընթաց:

ա. Համայնքների խոշորացում

Կուսակցությունը կարևորում է պետական հոգացությամբ և աջ

բ. Ավագանու դերի բարձրացում

Պետք է իրականացնել պետական հստակ քաղաքականություն տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարի ու ավագանու լիազորությունների սահմանազատման հարցում և այն ամրագրել օրենսդրությամբ:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում

Համայնքների համար պետության կողմից անհրաժեշտ է արդյունավետ տարածքային քաղաքականություն մշակել և այն ամրագրել օրենսդրությամբ:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում

Անհրաժեշտ է բարեփոխել և բարելավել համայնքային բյուջեներին տրվող պետական օժանդակության մեխանիզմները, կատարելագործել ֆինանսական մեխանիզմները՝ ըստ եկամուտների կամ ծախսերի ցուցանիշների:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից

Պետությունը պետք է ապահովի տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունն ու պաշտպանվածությունը՝ ընդլայնելով նրանց լիազորությունները և օրենսդրությամբ հստակ ամրագրել զարգացման մեխանիզմները:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Որպես պետական նշանակության խնդիր՝ կուսակցությունը կարևոր է համարում մարզերի համաչափ և հավասարակշռված զարգացումը:

է. Այլ (Արտադրական ենթակառուցվածքների զարգացում)

Պետության ենթակայության տակ պետք է գտնվեն էլեկտրակայանները, քաղաքային, միջքաղաքային և օդային տրանսպորտը, պետության հիմքը հանդիսացող գործարանները, գիտաարտադրական միավորումները, ինչպես նաև բոլոր գիտական, բժշկական և կրթական ձեռնարկությունները:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում .

Քաղաքացիական հասարակության ձևավորման, ամրապնդման ու զարգացման համար պետությունը պետք է ստեղծի նպաստավոր պայմաններ:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Անհրաժեշտ է իշխանությունը փոխանցել ժողովրդին:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Պետք է ապահովվի խոսքի և տեղեկատվության ազատությունը՝ ձևական մոտեցումների փոխարեն կոնկրետ քայլերի իրականացմամբ:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Պետությունը պետք է լինի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորողը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում⁵

Անհրաժեշտ է ամբողջապես փոխել դատական համակարգը և ստեղծել ժողովրդական դատարանների ինստիտուտը: Տարանջատել դատական համակարգը իշխանությունից, որպեսզի գործի արդարադատությունը հանուն ժողովրդի:

ե. Ընտրական համակարգի բարելավում⁵

Անհրաժեշտ է բարեփոխել ընտրական համակարգը, որպեսզի բացառվեն ամեն տեսակի ընտրախախտումները և ոտնձգությունները քաղաքացիների ընտրական իրավունքի նկատմամբ: Երկրի օրենսդիր մարմինը պետք է կազմավորվի ժողովրդի արդար քվեն ստացած հասարակության պրոֆեսիոնալ ներկայացուցիչներից:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում⁵

Կուսակցությունների կայացման և քաղաքական դաշտի զարգացման հիմնական գործոնը՝ գաղափարախոսությունն է: Հայաստանի քաղաքական դաշտի շատ կուսակցությունների գաղափարախոսությունն առնչված է գաղափարագողությամբ:

ՀԿԿ ունի լուրջ և հզոր գաղափարախոսություն և հանդիսանում է քաղաքական դաշտի ամենաարմատական ընդդիմադիր կուսակցությունը:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁵

Հասարակական կազմակերպությունների կայացումը, որպես քաղաքացիների կամավոր միավորումներ, անհրաժեշտ է՝ իր ինքնավարությամբ և կազմակերպական ինքնագործունեությամբ, լուծելու ինչպես տվյալ միավորման, այնպես էլ հասարակության առջև ծառացած խնդիրները: Պետության հոգաձության խնդիրն է ոլորտի օրենսդրական կարգավորումը:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁵

Կանանց շահերի պաշտպանության և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքարն իրականացնում է Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիան: Կնոջ շահագործման վերացումն ու տղամարդու հետ նրա իրավահավասարությունն ապահովվել է Սովետական Հայաստանում: Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան կառույցներ, որոնք կունենան պետական հոգածություն:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն⁵

Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցությունն անհրաժեշտ է:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը կարևորում է սոցիալական հասարակության և ժողովրդավարության վերականգնման հիման վրա անհրաժեշտ պայմանների ստեղծումը հայ ժողովրդի ազգային անվտանգության ապահովման համար:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները.⁵

Պետք է ներդնել բոլոր ջանքերը վերացնելու արտագաղթը: Ծնելիության հիմնախնդիրների լուծման ուղիներն են.

- մարդկանց ապահովել համապատասխան աշխատանքով,
- ժողովրդի համար ստեղծել սոցիալ – տնտեսական նորմալ պայմաններ,
- ձեռնարկել համալիր այլ միջոցառումներ երիտասարդ ընտանիքների կազմավորման համար:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պետք է պետության ուշադրություն առարկան լինեն և ամրագրվեն օրենսդրությամբ:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Կուսակցությունը անհրաժեշտ է համարում ստեղծել մանկական և երիտասարդական կազմակերպություններ, երեխաներին ու երիտասարդներին մասնակից դարձնել հասարակական գործունեությանը, զինել նրանց քաղաքականապես և գաղափարապես, որը կնպաստի նրանց բազմակողմանի զարգացմանը՝ մտավոր, բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղարվեստական դաստիարակությանը:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Մելիք-Աղամյան 2
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 56-21-51
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ hhk@hhk.am
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.hhk.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 02.04.1990թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 14.05.1991թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 17.02.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 02.04.1990թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 10.03.2012թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝ 2009թ., www.hhk.am,
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝ «Հանրապետական» հանդես
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 103
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 150.000, որից
 - Կանայք՝ 51% ,
 - Երիտասարդներ՝ 26 %
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 64 պատգամավոր:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Խորհուրդ՝ 142
- Գործադիր մարմին՝ 19
- Կուսակցության նախագահ՝ Սերժ Ազատի Սարգսյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ինչպես նաև ՀՀ-ում ընտրական իրավունքով օժտված այլ անձինք՝ առանց Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի: Համաձայն Կուսակցության կանոնադրության, Կուսակցության անդամները պետք է ընդունեն Կուսակցության ծրագիրը, գործեն Կանոնադրության շրջանակներում և չհանդիսանան այլ կուսակցության անդամ: Կուսակցության անդամը մուծում է անդամավճար, որի մեծությունը որոշվում է կամավոր հիմունքներով:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Հայոց գերագույն նպատակը, որ իմաստավորումն է իր աստվածաստեղծ գոյության, հարատևումն է Հայրենիքում, հաստատումն իր կենսական ուժի, ստեղծագործ հանճարի ու ազատ կամքի: Այդ նպատակի իրագործման գրավականը Հայ ազգային գաղափարախոսությունն է, որում, ՀՀԿ համոզումով, էական տեղ ունի Գարեգին Նժդեհի ուսմունքը: Հայ ազգային գաղափարախոսությունը կառուցվում է հայոց արժեհամակարգի ու պատմամշակութային փորձի զուգակցումով՝ ազգային և համամարդկային արժեքների համադրմամբ: Այն պետք է ամրապնդի հայության հավատը սեփական ուժերի ու ապագայի նկատմամբ և իբրև գաղափարախոսական համակարգ՝ մշտապես զարգացում ապրի:

3.2. Նպատակները և խնդիրները

- Հայոց ազգային անկախ պետականության ամրապնդումը և զարգացումը,
- ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կերտումը,
- ՀՀ Սահմանադրության և օրենքների շրջանակներում՝ իշխանությունների կազմավորման գործընթացին, պետության կառավարմանը մասնակցելը,
- ՀՀ քաղաքական համակարգի կայունացմանն ու ամրապնդմանը նպաստելը,
- քաղաքացիական հասարակության կառուցմանն օժանդակելը:

ՀՀ-ն որպես պահպանողական կուսակցություն առաջնորդվում է այն գաղափարով, որ պետությունը պարտավոր է իր քաղաքացիների համար ստեղծել արժանապատիվ ապրելու և արարելու լավագույն

հնարավորություններ: Դրան կարող է հասնել կառուցելով հասարակություն՝ հիմնված հետևյալ արժեքների վրա՝

- անձի և ազգի անվտանգություն,
- հավատարմություն ժողովրդավարական արժեքներին և անկախությանը,
- հայրենասիրություն, հայապահպանություն,
- հավասար հնարավորություններ և հավասար իրավունքներ,
- մրցակցային միջավայր և նվաճումների արդարացի գնահատում,
- անհատական ազատություն և ընտրության հնարավորություն,
- անձնական պատասխանատվություն,
- ամուր ընտանիք և համերաշխ համայնք:

ՀՀ-ի գործունեությունը առավելապես ուղղված է դեպի մարդը, յուրաքանչյուրը, ՀՀ քաղաքացին: Տնտեսական վերելքը դառնալու է կոնկրետ աշխատանք կոնկրետ մարդու համար, և մարդկանց աշխատանքով ու արժանապատիվ վարձատրությամբ ապահովելը՝ առաջնային նպատակ:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ազգային պահպանողական կուսակցություն է, որի նպատակներն ու գործունեությունը բխում են Ազգի և Հայրենիքի հավիտենության գաղափարներից:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում և Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչում:
2. Ռուսաստանի Դաշնության հետ կնքված առևտրատնտեսական, ռազմական, էներգետիկ, գիտական, կրթական, մշակութային ոլորտներին վերաբերող պայմանագրերի իրագործման արդյունավետության բարձրացում: ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ֆրանսիայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Հնդկաստանի, Ճապոնիայի և այլ երկրների հետ համագործակցության խորացում: Մասնավոր ներդրումների և ազգային մրցունակության կարողությունների ավելացում, հայկական ապրանքների համար նոր շուկաների բացահայտում:
3. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին համախմբել հայության ջանքերը՝ մարդկության դեմ սարսափելի ոճրի միջազգային ճանաչման, ապագայում ցեղասպանությունների կանխարգելման, ուրացման բացառման, դատապարտման գործում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում

Արտաքին քաղաքականությունն ուղղված է երկրի արտաքին անվտանգության ամրապնդմանը, պետության զարգացման արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումների ներկայացմանը, արտերկրում ՀՀ և նրա քաղաքացիների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը, ինչպես նաև՝ տարածաշրջանային խնդիրների կարգավորմանն ու համագործակցային մթնոլորտի ձևավորմանը:

ա. Եվրախնտեզրում

Արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից է ԵՄ հետ մշտական համագործակցությունը, որը կծառայի քաղաքական հարաբերությունների և առևտրատնտեսական կապերի խորացմանը, ինչպես նաև ժողովրդավարական և իրավական պետության հաստատությունների բարեփոխման և կատարելագործման նպատակին: Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցության միջոցով շարունակել համագործակցությունը ժողովրդավարության, արդյունավետ կառավարման, տնտեսական ինտեգրման և էներգետիկ անվտանգության, ինչպես նաև մարդկանց միջև շփումների խորացման համար: ԵՄ հետ կնքել խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր:

բ. ԱՊՀ

ԱՊՀ շրջանակներում առանձնահատուկ նշանակություն է տրվում անդամ պետությունների միջև համագործակցությանը՝ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործում: ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների տեղաշարժմանը և ազատ շփմանը, քաղաքական, տնտեսական, բնապահպանական, հումանիտար, մշակութային և այլ ոլորտներում կարևորվում է անդամ պետությունների միջև բազմակողմանի և հավասարակշռված տնտեսական ու սոցիալական համագործակցության զարգացումը ընդհանուր տնտեսական տարածության շրջանակներում, ինչպես նաև միջպետական համագործակցությունը և ինտեգրումը:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Կարևորվում է երկրի ակտիվ մասնակցությունն ԱՊՀ շրջանակներում ընթացող գործընթացներին և առաջնությունը տրվում է ՀԱՊԿ-ին՝ որպես ՀՀ անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրատարրերից մեկի: ՀԱՊԿ շրջանակներում պետք է մշտապես ջանքեր գործադրել՝ առաջին հերթին, Հայաստանի հանդեպ հնարավոր ագրեսիայի սպառնալիքի կամ ագրեսիայի ակտի դեպքում ՀԱՊԿ պայմանագրից բխող անդամ պետությունների պարտավորությունների, այն է՝ հավաքական պաշտպանության սկզբունքի, իրագործումն ապահովելու նպատակով, ինչպես նաև ՀՀ համար կենսական նշանակություն ունեցող միջազգային կազմակերպությունների օրակարգային հարցերի վերաբերյալ ՀԱՊԿ անդամ պետությունների օժանդակությունը ստանալու նպատակով:

դ. ՀԱԴԿ (NATO)

Հայաստանի և ՀԱԴԿ-ի ակտիվ համագործակցում ժողովրդավարական, ինստիտուցիոնալ և ռազմական բարեփոխումների հարցերում, որոնք ընդգրկում են բազմաթիվ ոլորտներ, այդ թվում՝ խաղաղապահ առաքելությունները: Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳԳԾ) նախանշում է Հայաստանի և ՀԱԴԿ-ի միջև համագործակցության ծրագիրը, ինչպես նաև սահմանում բարեփոխումների լայն շրջանակ: Հայաստանը, չձգտելով անդամակցել ՆԱՏՕ-ին, պետք է խորացնի գործնական և քաղաքական համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ:

ե. ԱՄՆ

ԱՄՆ կարևոր տեղ է զբաղեցնում Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքում, այդ թվում ակտիվ մասնակցում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին՝ ՌԴ-ի և Ֆրանսիայի հետ մեկտեղ հանդիսանալով խմբի երեք համանախագահներից մեկը: Միևնույն ժամանակ, Միացյալ Նահանգները հանդիսանում է Հայաստանին մարդասիրական և տեխնիկական օգնություն տրամադրող խոշորագույն դոնորը: Պետք է շարունակաբար խորացնել համագործակցությունը ԱՄՆ հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ձևավորվել է բազմակողմ համագործակցության հսկայական իրավապայմանագրային դաշտ՝ կնքվել են քաղաքական, ռազմա-քաղաքական, տնտեսական և հումանիտար ոլորտների հարաբերությունները կարգավորող բազմաթիվ միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրեր ու համաձայնագրեր, ինչը վստահելի հիմք է հանդիսանում ռազմավարական նշանակության բազմաթիվ ծրագրեր կյանքի կոչելու համար: Ապագայում ևս պահպանվելու և խորացվելու է ձեռք բերված ռազմաքաղաքական, տնտեսական կայուն և փոխշահավետ դաշնակցային հարաբերությունները՝ առաջնորդվելով անվտանգության ապահովման առաջնահերթություններով: Միջոցներ է ձեռնարկվելու առևտրատնտեսական, ռազմական, էներգետիկ, գիտական, կրթական, մշակութային ոլորտներին վերաբերող պայմանագրերի իրագործման արդյունավետությունը բարձրացնելու համար:

է. Գեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Հայոց ցեղասպանության ճանաչումը կուսակցությունը դիտարկում է պատմական արդարության վերականգնման, Թուրքիայի կողմից իր անցյալի վերաարժեվորման, դրանով իսկ նոր ոտնձգությունների բացառման համատեքստում: Շարունակվելու են ջանքերը ցեղասպանությունների կանխարգելման ու դատապարտման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն առնչվող խնդիրները միջազգային հանրության օրակարգում պահելու համար: Քաղաքակիրթ մարդկությունն այս չարիքի դեմ պետք է դրսևորի մեկ միասնական ճակատով արդյունավետ գործելու ունակություն: Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին պետք է համախմբել հայության ջանքերը Հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ սարսափելի ոճրի միջազգային ճանաչման, ապագայում ցեղասպանությունների կանխարգելման, ուրացման բացառման, դատապարտման գործում:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Բազմապատկվելու են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ ցանկացած տեսակի ագրեսիայի դրսևորման վտանգի կանխարգելմանն ուղղված դիվանագիտական ջանքերը:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցը խարսխվելու է հետևյալ սկզբունքների վրա.

- Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանաչումը,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավագործության տակ գտնվող անխափան ցամաքային կապ,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի:

թ. Իրան

Իրանի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը մեր երկրի քաղաքականության այն կարևորագույն մասն է, որը նպատակաուղղված է նաև իսլամական աշխարհում Հայաստանի նկատմամբ բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը: Կուսակցությունը կողմ է Հայաստանի և Իրանի միջև հավասարակշռված հարաբերությունների պահպանմանը:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ

Վրաստանի հետ մեր պետության հարաբերությունները բխում են երկու երկրների ռազմավարական շահերից և նպատակաուղղված են տարածաշրջանային ինտեգրմանը, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, ռազմական ոլորտներում կայուն և շարունակական համագործակցության զարգացմանը, այդ ոլորտները կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխմանը: ՀՀ-ն հայ-վրացական հարաբերությունները գնահատում է որպես Հարավային Կովկասում կայունության պահպանման կարևոր գործոն:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Օգտագործելով երկքաղաքացիության ինստիտուտը և հայրենադարձության պետական ծրագիրը՝ ստեղծել նպաստավոր միջավայր Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի ներգրավվածության ավելացման և ներդրումների խրախուսման համար: Աջակցել հայապահպանության, մայրենի լեզվի, հայկական ինքնության շուրջ սփյուռքի համայնքների միավորմանն ու համախմբմանը, համայնքային ինքնակառավարման մարմինների հզորացմանը, միջհամայնքային հորիզոնական կապերի հաստատմանը և ՀՀ-ի հետ այդ կառույցների կապերի ամրապնդմանը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ՀՀ անվտանգություն:
2. Աշխատատեղերի ստեղծում և տնտեսական աճ:
3. Պայքար կոռուպցիայի դեմ:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.

- Միջին և փոքր բիզնեսի կայացման և զարգացման երաշխիքների ստեղծում:
- Ֆինանսական միջոցների մատչելիության և հասանելիության բարձրացում:
- Հավասար մրցակցային պայմանների ապահովում:
- Խոշոր բիզնեսի կողմից գերիշխող դիրքի չարաշահումների բացառում:
- Տնտեսական աճի նպատակադրումներից տնտեսական զարգացման հայեցակարգին անցում՝ հիմնված տնտեսության նոր ոլորտների, գործունեության նոր տեսակների, նոր ձեռնարկությունների, նոր ապրանքների արտադրության և նոր ծառայությունների մատուցման վրա:

ա. Դրամավարկային քաղաքականություն

- Ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության ապահովում:
- Ֆինանսական շուկայում նոր մասնակիցների՝ ներդրումային հիմնադրամների մուտքի և ներկայացվածության ապահովում ֆինանսական համակարգում:
- Գների կայունության ապահովում՝ գնաճի նպատակադրմամբ (սահմանելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը գնաճի կանխատեսված մակարդակը նպատակային թիրախին մոտ պահելու նկատառումով):
- ՀՀ արժույթային պահուստների արդյունավետ կառավարում, ՀՀ դրամի հուսալիության ու միջազգային հեղինակության բարձրացում, ընթացիկ արժույթային գործառնությունների և կապիտալի շարժի, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ իրավատնտեսական դաշտի ստեղծում:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք

- Բյուջեի պակասուրդի աստիճանական նվազման միջոցով Պետական պարտքի կայունության և կառավարելիության ապահովում՝ միջնաժամկետում ապահովելով պարտք/ՀՆԱ ցուցանիշի առնվազն կայուն մակարդակ:
- Պետական ծախսային քաղաքականության շրջանակներում կարիքավորներին ուղղվող սոցիալական ծախսերի հասցեականության և տրվող միջոցների շարունակական բարձրացում:
- Ներքին աուդիտի համակարգի ամբողջական ներդրում՝ որպես պետական ֆինանսների արդյունավետ կառավարման և փողի նպատակային ծախսման համար կարևորագույն հանգույց:

- Պետական գնումների էլեկտրոնային համակարգի լիարժեք ներդրում, որպես պետական միջոցների ծախսման գործընթացների թափանցիկության, կոռուպցիայի նվազեցման և արդարության ապահովման կարևորագույն միջոց:
- Արդյունքներին ուղղված ֆինասավորման համակարգի լիարժեք ներդրում՝ ապահովելով փողի ծախսման նպատակայնության էական բարձրացում:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

- Հարկային վարչարարության պարզեցում:
- Աստիճանաբար շահութահարկի նվազագույն շեմի վերացում:
- Մաքսային արժեքի որոշման և մաքսագերծման գործընթացի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին:
- Բոլոր տեսակի հարկային հաշվետվությունների, տեղեկությունների և դիմումների էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորության ընձեռում:
- Տեսչական մարմինների թվի կրճատում՝ համախմբումների և կրկնվող գործառույթները բացառելու միջոցով:
- Հարկային բեռի շարունակաբար տեղափոխում դեպի խոշոր հարկատուները՝ տարեցտարի ավելացնելով հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:

դ. Արդյունաբերության զարգացում

- Ճյուղային արդյունաբերական քաղաքականության իրականացում՝ երաշխավորելով ներդրումների աճ, հազարավոր ժամանակակից աշխատատեղերի ստեղծում, նոր շուկաներ մուտքի դուրսինացում, մրցունակ ճյուղերի առաջանցիկ տեմպերի և արտահանման ծավալների ավելացում:
- Մասնավոր հատվածի հետ համատեղ երկխոսության միասնական հարթակի ձևավորում՝ յուրաքանչյուր ճյուղի համար ստեղծելով առանձնահատուկ գործիքակազմ և սահմանելով փոխադարձ պարտավորություններ:
- Ազատ տնտեսական գոտիների գործարկում, տեխնոպարկերի և բիզնես-ինկուբատորների զարգացում՝ նպաստելով տնտեսության մրցունակության աճին և վերագգային կորպորացիաների համար գրավիչ դառնալուն:

ե. Գյուղատնտեսության զարգացում

- Գյուղատնտեսական տեխնիկայի ու տեխնոլոգիաների արդիականացում:
- Մատչելի ֆինանսավորման և սպասարկման ճկուն մեխանիզմների ներդրում՝ ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերման նպատակով:
- Ջերմոցային տնտեսությունների տարածքների ավելացում առնվազն երեք անգամ՝ նպաստելով մի շարք գյուղմթերքների գների սեզոնային տատանումների նվազեցմանը, արտահանման ծավալների աճին, շուրջ երեսուն հազար նոր աշխատատեղի ստեղծմանը:
- Ձկնաբուծության ոլորտում ժամանակակից լավագույն տեխնոլոգիաների ներդրում, ձկնամթերքի վերամշակման ժամանակակից կարողությունների ստեղծում՝ ապահովելով տարեկան արտադրանքի թողարկման առնվազն եռապատիկ աճ:
- Անասնապահության ցուցանիշների էական բարելավում՝ տոհմային երինջների ներկրմամբ և սելեկցիայի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:
- Մանրամթերքի անվտանգության միջազգային չափանիշներին համապատասխանության վերահսկողական մեխանիզմների ներդրում:
- Բնակլիմայական ռիսկերի նվազեցում՝ հակակարկտային կայանների կառավարման ժամանակակից համակարգերի կիրառմամբ:
- Խմելու ջրի, գազի, էլեկտրաէներգիայի, հեռախոսակապի, համացանցի, ժամանակակից բժշկական ծառայությունների հասանելիության ապահովում՝ գյուղական համայնքների կարողությունների ավելացման միջոցով:
- Գյուղական ճանապարհների էական բարելավում ու տրանսպորտային ժամանակակից ցանցերի ձևավորում:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

- Տեխնոպարկերի, ինկուբատորների զարգացում՝ նպաստելով ՏՏ ոլորտի գործիքների և լուծումների ներդրմանը տնտեսության այլ բնագավառներում (ինչն էլ իր հերթին կապահովի երկրի ընդհանուր մրցունակության բարձրացումը):
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջանցիկ զարգացման տեմպերի պահպանման միջոցով ուսումնական հաստատությունների և արտադրողների կապի խթանում՝ ստեղծելով բազմաթիվ ժամանակակից աշխատատեղեր:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում

- Ձեռնարկություններին ու բնակիչներին վերջնականապես կայուն և անխափան, լարման տատանումները գերծ էլեկտրաէներգիայով ապահովում:
- Էներգիայի վերականգնվող աղբյուրների և այլընտրանքային էներգետիկայի նպատակային զարգացմանը միտված քաղաքականության շարունակական իրականացում:
- Իրան-Հայաստան և Վրաստան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքների ավարտ:
- Ռուսաստանի Դաշնության հետ կնքված էներգետիկ ոլորտին վերաբերող պայմանագրերի իրագործման արդյունավետության բարձրացում:

ը. Զբոսաշրջության զարգացում

- Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում:
- Զբոսաշրջության ոլորտի գովազդատեղեկատվական համակարգի կատարելագործում:
- Զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության ծավալում:

թ. Ներդրումների խթանում

- Բարենպաստ բիզնես միջավայրի ստեղծում՝ դարձնելով այն ներդրումների ներգրավման մրցակցային առավելություն:
- Նախաձեռնողական արտաքին քաղաքականության իրականացում՝ ուղղված մասնավոր ներդրումների և երկրի ազգային մրցունակության կարողությունների ավելացմանը:
- Երկքաղաքացիության ինստիտուտի և հայրենադարձության պետական ծրագրի օգտագործմամբ նպաստավոր միջավայրի ստեղծում Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի ներգրավվածության ավելացման և ներդրումների խրախուսման համար:
- Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում ներդրումների ներգրավում,
- Ազատ տնտեսական գոտիների ձևավորում և գործարկում:
- Արդյունաբերական քաղաքականության իրականացման արդյունքում մասնավոր ներդրումների շեշտակի աճի ապահովում:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

- Փոքր և միջին բիզնեսի համար պարզեցված հարկային դաշտի ձևավորում:
- Հարկային վարչարարության պարզեցում:
- Աստիճանաբար շահութահարկի նվազագույն շեմի վերացում:
- Բոլոր տեսակի հարկային հաշվետվությունների, տեղեկությունների և դիմումների էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորության ընձեռում:
- Տեսչական մարմինների թվի կրճատում՝ համախմբումների և կրկնվող գործառնությունները բացառելու միջոցով:
- Հարկային բեռի շարունակաբար տեղափոխում դեպի խոշոր հարկատուները:
- Շինարարական թույլտվությունների ստացման ընթացակարգերի պարզեցում և արագացում (այդ թվում էլեկտրոնային համակարգերի ներդրմամբ):

ի. Ստվերային տնտեսության կրճատում

- Հարկային մարմինների համար ստվերային տնտեսության բացահայտման նպատակով նոր գործիքների ստեղծում:
- Բիզնեսների կողմից միմյանց, ինչպես նաև հարկային ու մաքսային մարմինների հետ շփումներն աստիճանաբար էլեկտրոնային հարթակներ տեղափոխում:
- Կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների շարունակական իրականացում՝ ապահովելով հրապարակայնություն և թափանցիկություն:
- Ֆինանսական չարաշահումների դեմ պայքարի գործուն մեխանիզմների ստեղծում:
- Աշխատավարձերի վճարման գործում առկա ստվերայինության կրճատում՝ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

- Իրավական դաշտի վերանայում՝ կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները վերացնելու նպատակով:
- Հանրությանը պետության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելիս իրենց իրավունքների և ստեղծված նոր հնարավորությունների մասին շարունակական իրազեկում:
- Գնումների առցանց ավտոմատ համակարգի գործարկում (հնարավորություն տալով հասարակությանն ու տնտեսավարողներին հսկելու գնումների վերաբերյալ հայտարարությունները և բոլոր ընթացակարգերը)՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:
- Էթիկայի հանձնաժողովի դերի և նշանակության ամրապնդում:
- Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների հայտարարագրերը հանրությանը հասանելի դարձնելու մեխանիզմների ներդրում:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

Սոցիալական քաղաքականության մեջ փոփոխությունը միտված է լինելու անհավասարություն ծնող պատճառների վերացմանը

ա. Աղքատության հաղթահարում

- Սահմանափակ հնարավորություններով անձանց համար լիարժեք կյանքով ապրելու պայմանների և հնարավորությունների ստեղծում (աշխատելու, սպորտով զբաղվելու, մշակութային օջախներ հաճախելու):
- Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդին պետական աջակցության ծրագրերի ծավալների շարունակական ավելացում:
- Կենսաթոշակների բարձրացման քաղաքականության շարունակական իրականացում:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

- Եկամուտների հետ ուղղակի կապ ունեցող և անձնական պատասխանատվության վրա հիմնված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում՝ երաշխավորելով ապահով և արժանապատիվ ծերություն:
- Պետության կողմից քաղաքացիների կենսաթոշակային-կուտակային հաշիվների միջոցների կրկնապատկում՝ խրախուսելով խնայողությունների առաջացումը և կրճատելով աշխատավարձերի վճարման գործում առկա սովերայնությունը:
- ԽՍՀՄ խնայքանկում մինչև 1993 թվականը ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման ծրագրերի շարունակական իրականացում:
- Մատչելի բնակարանային ֆոնդի ազգային ծրագրի շրջանակներում «Մատչելի բնակարան» և «Բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագրերի ծավալների ավելացում:
- Երիտասարդների համար պետության կողմից սուբսիդավորվող վարկային նոր գործիքների ներդրում՝ կրթվելու և սոցիալական այլ խնդիրներ հոգալու նպատակով:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

- Աշխատունակ խոցելի խավերի համար կրթության և աշխատանքի հասանելիության ապահովում:
- Անաշխատունակ քաղաքացիների համար թիրախային օգնության ավելացման շեշտադրում:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

- Պետության վերահսկողության ուժեղացում շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ՝ օդի, ջրի որակի, կանաչ տարածքների, աղբամշակման բարձր չափանիշների սահմանմամբ:
- Պետպատվերի շրջանակներում որոշ հիվանդությունների տեսակների և սոցիալապես անապահով խավերի համար բժշկական ապահովագրության ինստիտուտի ներդրում:
- Բժիշկների պարտադիր վերապատրաստում, այդ թվում՝ աշխարհի լավագույն առողջապահական կենտրոններում:
- Հիվանդությունների ճշգրիտ և վաղ ախտորոշում, որակյալ բուժում, ինչպես նաև՝ հետվիրահատական վերականգնողական շրջանի գրագետ վարում:
- Առաջին անգամ ՀՀ բոլոր քաղաքացիների համար սրտի անհետաձգելի վիրահատության երաշխավորում:
- Եվրոպական լավագույն չափանիշներին համապատասխան արյունաբանության հիվանդանոցի կառուցում:
- Ուռուցքաբանական կենտրոնի հիմնում՝ հնարավորություն ընձեռելով ժամանակակից գիտական մեթոդներով նորագոյացությունների հայտնաբերման, ախտորոշման և որակյալ բուժման համար:
- Մարզային բժշկական հաստատությունների վերակառուցման և վերազինման ծրագրի շարունակական իրականացում:
- Հիվանդությունների կանխարգելում՝ առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծման միջոցով (սպորտի մասսայականացում, առողջ և անվտանգ սննդի երաշխավորում, ծխելու դեմ պայքարի իրականացում):

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

- Սոցիալական ծառայությունների տրամադրման ինտեգրված համակարգի ստեղծում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքներին) ըստ կարիքի՝ դրան համարժեք սոցիալական համալիր ծառայությունների տրամադրման նպատակով:

- Միայնակ տարեցների և խնամքի կարիք ունեցող հաշմանդամների համար խնամքի, սպասարկման, խորհրդատվության, իրավաբանական օգնության տրամադրման ծրագրերի իրականացում՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրմամբ:
- Սոցիալական երաշխիքների տրամադրում պետական աշխատողներին:
- Սոցիալապես անապահով խավերի համար բժշկական ապահովագրության ինստիտուտի ներդրում:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

- Պետության կողմից երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանը:
- Անվճար կրթության ապահովում սոցիալապես անապահով խավերի համար (ներառյալ բարձրագույն կրթությունը):
- Յուրաքանչյուր առաջին դասարանի աշակերտի անվճար համակարգչի տրամադրում:
- Մարզերում նոր մանկապարտեզների կառուցում:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող խոցելի բոլոր խմբերի երեխաների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորության ընդլայնում:
- Դասագրքերի և ուսուցչական ձեռնարկների բովանդակային որակի բարելավում:
- Կրթության արդյունքային ցուցանիշների վրա հիմնված ֆինանսավորման և արդյունավետության գնահատման գործիքների ներդրում:
- Դպրոցներում համացանցի ամբողջական և որակյալ ծածկույթի ապահովում:
- Ընդունելության քննությունների համակարգի վերանայում՝ հեշտացնելով դիմորդների մուտքը բուհ, ինչպես նաև առաջադիմության խիստ պահանջների ներդրում:
- Հայալեզու էլեկտրոնային կրթական ռեսուրսների բովանդակության ծավալների եռապատկում,
- Բուհերում ուսման վարձի վերին շեմի սահմանում:
- Բարձրագույն տեխնոլոգիական կրթության ոլորտում, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, ժամանակակից լաբորատորիաների ցանցի հիմնում:
- Հանրակացարանային ցանցի բարելավում և ընդլայնում (եվրոպական համալսարանական ավանների ձևաչափով):

4.7. Գիտության զարգացում

- Հավատարմագրման եվրոպական համակարգին միանալու միջոցով Հայաստանում շնորհված կրթական որակավորումների միջազգային լիարժեք ճանաչման կազմակերպում:
- Գիտություն - տնտեսություն կապի ամրապնդում:

4.8. Մշակույթ և սպորտ

- Հայ հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում:
- Պետական պատվերի շրջանակներում երաժշտության, ֆիլմերի, հեռուստահաղորդումների, գրքերի միջոցով ազգային և համամարդկային արժեքների տարածում:
- Դպրոցում ազգային երգ ու պարի դասավանդում:
- Կրթական ծրագրերում ազգային մշակույթի տարրերի ավելացում:
- Հանրապետության ամբողջ տարածքում մշակութային ծառայությունների մատչելիության, հասանելիության, բազմազանության, համաչափության ապահովում:
- Ազգային փոքրամասնությունների ամբողջական մշակութային դրսևորման համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծում:
- Հայ Առաքելական եկեղեցու հետ ակտիվորեն համագործակցություն՝ հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանման, մատաղ սերնդին անցանկալի ազդեցություններից զերծ պահելու և հայեցի դաստիարակության տալու նպատակով:
- Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանվածության ամրապնդում:
- Մշակույթի ոլորտում տեղեկատվական-հեռահաղորդակցական նոր տեխնոլոգիաների ներդրում:
- Մշակութային ժամանակակից ենթակառուցվածքների զարգացում՝ հայ արվեստի համար ստեղծելով միջազգային ասպարեզում ըստ արժանվույն գնահատվելու հնարավորություն և համաշխարհային մշակութային գործընթացներին ակտիվ մասնակցություն:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Երևանի բեռնաթափման համալիր ծրագրի իրականացում՝ պետական, նաև կրթական, մշակութային ու տնտեսական առանձին գործառնություններ բաշխելով հանրապետության մյուս տարածքներում, բարձրացնելով այլ քաղաքների դերակատարությունը հանրային գործընթացներում:

ա. Համայնքների խոշորացում

- Համայնքների խոշորացում՝ հատկապես սահմանամերձ բնակավայրերի զարգացման և ամրապնդման համար՝ կոնկրետ և չափելի ցուցանիշներով այդ համայնքներին տրամադրելով լրացուցիչ միջոցներ:
- Խոշոր, ռեսուրսային բավարար մակարդակ ունեցող փոքր թվով համայնքների պարագայում կառավարման արդյունավետության ապահովում, ինչպես հենց տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների, այնպես էլ վերջիններիս և պետական կառավարման համակարգի ներդաշնակ փոխգործունեության մասով:
- Միջազգային պրակտիկայում կիրառվող՝ տարածքային կազմակերպման բազմակենտրոն մոդելի ձևավորման համար նախադրյալների ստեղծում:

բ. Ավագանու դերի բարձրացում

- Ներկայացուցչական մարմինների դերակատարման բարձրացում:
- Համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների ու գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմների սահմանում և գործունեության թափանցիկության ավելացում:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում

Միջհամայնքային միավորումների ձևավորմամբ համայնքների կարողությունների հզորացում և արդյունավետ կառավարում:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում

Տեղական իշխանությունների իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև համապատասխանության ապահովում՝ հետևողականորեն ավելացնելով համայնքների ինքնակազմակերպման հնարավորությունները:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից

Համայնքներում հետևողականորեն ծառայությունների տեսականու ավելացում՝ միաժամանակ բարձրացնելով դրանց որակը:

զ. Մարզերի համաչափ զարգացում

- Սահմանամերձ և սոցիալապես խոցելի համայնքների համար հստակ օժանդակության ծրագրերի իրականացում:
- Հարկային քաղաքականությամբ ներդրումների ուղղորդում դեպի համայնքներ՝ նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Համայնքային նախաձեռնությունների խրախուսում:

է. Այլ

- Ողջ հանրապետությունում մեկ համայնքային ծառայությունների և դրանց մատուցման պայմանների որակի համադրելիության ապահովում:
- Արդյունավետ սեփականատիրության լավագույն նորմերի ներդրում՝ ապահովելով մեր ազգային հարստության և հատկապես հողի լիարժեք օգտագործումը:
- Օրենքով բացառում Երևանի կենտրոնում մայրաքաղաքի պատմությանն ու նկարագրին անհարիր կառուցապատումը:
- Գույքահարկի արդարացի համակարգի ներդրում՝ ապահովելով ավելի շատ զանձումներ բարձրարժեք գույքից:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.

Հասարակական միավորումների ու կառույցների գործունեությունը խրախուսող ծրագրերի իրականացում՝ քաղաքացիական հասարակության ամրապնդման և զարգացման համար նպաստավոր պայմաններ ապահովելու նպատակով:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Երկրի օրենսդրությունում և քաղաքական համակարգում արմատավորել իշխանության թևերի միջև հակակշիռների ու զսպումների լիարժեք համակարգ ձևավորելու սահմանադրական երաշխիքները: Հարկավոր է ընդլայնել պետական կառավարման համակարգի նկատմամբ քաղաքացիական հասարակության ինստիտուտների վերահսկողական գործառնությունները:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Հարկավոր է իրական քայլեր ձեռնարկել Միջազգային կոնվենցիաներով և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված խոսքի և տեղեկատվության ազատության մասին հիմնարար դրույթները քաղաքական և հասարակական հարաբերություններում կիրարկելու ուղղությամբ:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Պետությունը պետք է ապահովի մեր Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը: Այս նպատակով կարևորվում է Օմբուդսմենի ինստիտուտի, Սահմանադրական դատարանի և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

դ. Դատախրավական համակարգի բարեփոխում

- Դատավորների և դատախազների մասնագիտական պատրաստմանը և դրա կազմակերպմանն առավել խիստ պահանջների առաջադրում՝ ապահովելով դատական իշխանության կադրերի համալրման օբյեկտիվ ու թափանցիկ ընթացակարգեր՝ անձի ոչ միայն մասնագիտական գիտելիքների գնահատման, այլև, որպես դատավոր կամ դատախազ գործելու ունակության և բարոյական հատկանիշների հաշվառման հիման վրա:
- Դատավորների վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության խստացում:
- Դատավորների կարգապահական պատասխանատվության ընթացակարգերի արդյունավետության ու թափանցիկության բարձրացում:
- Դատավորների գնահատման ու առաջխաղացման օբյեկտիվ չափանիշների և ընթացակարգերի ներդրում:
- Դատարանների կողմից գործերի քննության ժամկետների կրճատում:
- Արտադատական կարգով վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի խթանում:

ե. Հետաքննության համակարգի բարելավում

Կարևորելով ընտրությունների դերը ժողովրդավարության զարգացման և ամրապնդման գործում՝ պետությունը պետք է բավարար պայմաններ ստեղծի ընտրական գործընթացներում ընտրական օրենսգրքի դրույթների անխափան կիրարկման համար:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետությունը պետք է աջակցի իրական քաղաքական մրցակցություն ապահովող լիարժեք բազմակուսակցական համակարգի կայացմանը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի և հասարակության վստահության ապահովման գլխավոր նախապայման:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում

- Հասարակական կազմակերպություններին, արհմիություններին պետական աջակցության ցուցաբերում:
- Հասարակական կազմակերպությունների ներգրավվածության բարձրացում բաց կառավարման գործընթացում:
- Հասարակական կազմակերպությունների արդյունավետ գործունեության համար «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենսդրության կատարելագործում:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

- Ազգային և տարածաշրջանային մակարդակներում հասարակական-քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում քաղաքականության մշակման մեջ և քաղաքական պրակտիկայում գենդերային բաղադրիչի ներառում:
- Գենդերային հավասարության քաղաքականության մշակման և իրականացման ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմներ ներառող միասնական համակարգի ձևավորում:
- Գենդերային հավասարության քաղաքականության մշակման և դրա իրականացման ընթացքի մշտադիտարկման կազմակերպչական միջոցառումների ապահովում:
- Գենդերային բռնության կանխարգելման, գենդերային բռնության ենթարկված անձանց պաշտպանության, գենդերային բռնություն կիրառողների հետապնդմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- ՀՀ ամբողջ տարածքում գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդման և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

- Օրենսդրական գործընթացներում հրապարակայնության, մատչելիության և թափանցիկության ապահովում:
- Իրավաստեղծ աշխատանքներում հասարակության մասնակցության մակարդակի բարձրացում՝ հանրային կարծիքի բացահայտման, առաջարկությունների ներկայացման և քննարկման միջոցով:

ժ. Այլ

Արդարադատության ոլորտի ծառայությունների մատուցում «մեկ պատուհանի» սկզբունքով (զալիք հինգ տարիների ընթացքում միասնական սպասարկման կենտրոնների միջոցով կամ առցանց «մեկ կանգառ» սկզբունքով արդարադատության ոլորտի ծառայությունների առնվազն 80 տոկոսի տրամադրում պետության կողմից):

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետական, քաղաքական և հասարակական բոլոր կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ՝ պետք է իրականացնել ազգային անվտանգության ռազմավարության շրջանակներում նշված արտաքին և ներքին սպառնալիքների չեզոքացմանն ուղղված համալիր ծրագրեր:

- Հայոց բանակի մարտունակության շարունակական բորձրացում և սպառազինում:
- Պաշտպանական ներուժի համապատասխանեցում արհեստավարժության, կարգապահության, թափանցիկության և վերահսկելիության արդիական չափանիշներին:
- Հասարակության մեջ զինվորական պարտադիր ծառայության ինստիտուտի նկատմամբ վստահության ամրապնդում՝ սոցիալական և կրթական պայմանների շարունակական բարելավման միջոցով:
- Զորացրվողների համար ուսման և աշխատանքի արտոնյալ հնարավորությունների ապահովում:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հայ հասարակության հիմքն ավանդական ընտանիքն է: Ամուր և առողջ ընտանիքների ձևավորումը, ընտանիքում ազգային-ավանդական արժեքների պահպանումն ու զարգացումը պետք է լինեն պետության կարևորագույն խնդիրներից մեկը: Երկրից արտագաղթի տեմպերը նվազեցնելու համար, հարկավոր է շարունակել պահպանել տնտեսական աճի տեմպերը, շարունակաբար ավելացնել բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղվող միջոցները: Կարևոր է նաև երկրում բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտի ձևավորումը, որի պայմաններում Հայ մարդն իր և իր երեխաների ապագան կտեսնի Հայրենիքում: Պետությունը պետք է արդյունավետ միջոցառումներ իրականացնի իր քաղաքացիների կենսապահովման պայմանների բավարարման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելու ուղղությամբ, ըստ արժանվույն գնահատի նրանց վաստակը Հայրենիքի առջև: Պետք է արունակաբար ավելացնել երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդին պետական աջակցության ծրագրերի ծավալները:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

- Պետության վերահսկողության ուժեղացում շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ՝ օդի, ջրի որակի, կանաչ տարածքների, աղբամշակման բարձր չափանիշների սահմանմամբ:
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության շարունակական վերականգնում և պահպանություն:
- Կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանների հիմնանորոգում և կառուցում:
- Բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ընդլայնում և դրանց կառավարման մեխանիզմների կատարելագործում:
- Հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացման և էկոլոգիական կրթության ու դաստիարակության հարցերում ներ մոտեցումների կիրառում:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կիրառել հատուկ քաղաքականություն, որն ուղղված կլինի այնպիսի տիպարների ձևավորմանն ու լայն ներկայացմանը, որոնք կօգնեն մեզ հանրային ուղեցույց դարձնել բարոյական չափանիշները, հայրենասիրությունը, համերաշխությունը, աշխատանքին և սեփական ուժերին ապավինումը, փոխադարձ վստահությունը:

4.15. Այլ (Եկեղեցի)

Բարձր գնահատելով Հայ Առաքելական եկեղեցու դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, հայոց լեզվի ու մշակույթի, դրանով իսկ՝ հայության միասնության պահպանման գործում: ՀՀԿ-ն Հայ Առաքելական եկեղեցին համարում է հայ ինքնության անբաժան մաս և ազգային աշխարհասփյուռ կառույց, որն իր դավանաբանությամբ, նվիրապետությամբ կոչված է ծառայելու Աստծուն և Ազգին:

8. «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՄՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, ՀԱԹ, Լույսնայա Բ., բն. 35
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 27-97-54, 40-76-02, (+37499) 62-81-43
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ miavorvac-hayer@mail.ru
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.mhk.am, www.mhktert.am,
- Հիմնադրման տարեթիվը՝ 27.05.2000թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 15.06.2000թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 09.10.2003թ.
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝ 15.06.2000թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 15.10.2011թ., արտահերթ համագումարի ամսաթիվը՝ 25.03.2012թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝
«Միավորված հայեր» շաբաթաթերթ. 07 (91) 24.02.2012թ. և 08 (92) 01.03.2012թ. համարներում
Էլեկտրոնային կայքերում՝ www.mhk.am, www.mhktert.am
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝ «Միավորված հայեր» պաշտոնաթերթ
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 48
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 4364, որից
 - Կանայք՝ 33%,
 - Երիտասարդներ՝ 44%,
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ չի մասնակցել:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 32 անդամ,
- Վարչություն՝ 15 անդամ,
- Քաղաքական խորհրդի և վարչության նախագահ՝ Ռուբեն Հովսեփի Ավագյան,
- Քաղաքական խորհրդի նախագահի տեղակալ՝ Հրաչիկ Արամայիսի Հակոբջանյան,
- Վարչության նախագահի տեղակալներ՝ Հովհաննես Թալիշի Հովհաննիսյան, Անդրանիկ Հայկի Ոսկանյան:

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամակցության կարգը որոշվում է սկզբնական կազմակերպության ժողովում անդամագրվողի դիմումի համաձայն: Սկզբնական կազմակերպության բացակայության դեպքում՝ տարածքային կամ մարզային կազմակերպության, կամ Քաղաքական խորհրդի որոշման համաձայն:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցությունն առաջնորդվում է ազգային գաղափարախոսությամբ, որի հիմքն է համազգային սթափ մտածողությունը, որը համամարդկային արժեքներն ընդունելով հանդերձ, ենթադրում է առաջնորդվել ազգային շահերով: Ազգային գաղափարախոսությունը վեր է կանգնած հասարակական խավերից, կուսակցություններից և անհատական շահերից: Դրա հիմքում պետք է լինեն սոցիալ-իրավական արդարությունն ու բարոյականությունը, որոնք առաջնորդելու են հայ ժողովրդին դեպի հասարակական համերաշխություն: Կուսակցության նպատակը Հայաստանում ճշմարիտ սոցիալ-իրավական և ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծումն է, որտեղ կգործի օրենքի գերակայությունը, բոլորը հավասար կլինեն օրենքի առջև, և որտեղ կպաշտպանվեն մարդու իրավունքները:

3.2. Նպատակները և խնդիրները

Կուսակցությունը ձգտում է սոցիալական արդարության, արժանապատվության, օրինականության և բարոյականության համամարդկային արժեքներին համապատասխանող իրավական հասարակության կայացմանը, որը կհանդիսանա ազգային միասնության ամուր երաշխիք:

Կուսակցության խնդիրներն են նպաստել Հայաստանի պետականության ամրապնդմանը, գիտական, տնտեսական և հոգևոր ներուժի զորացմանը, ժողովրդի համակողմանի զարգացմանն ու բարգավաճմանը, քաղաքական կայունացմանը, քաղաքացիական հասարակության կառուցմանը,

արտագաղթի կանխմանը, աշխարհասփյուռ հայության՝ մայր Հայրենիքի շուրջ համախմբմանը, ՀՀ Սահմանադրության շրջանակներում ժողովրդավարական իշխանությունների կազմավորմանը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և Հայ դատի ու Ղարաբաղյան հիմնահարցի արդյունավետ լուծմանը:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Կուսակցությունը հանդես է գալիս որպես ազգային-հայրենասիրական, կենտրոնաձիգ, հզոր և կայուն պետականության կողմնակից երրորդ ուժ:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՂԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հարգանք այլ ազգերի, ժողովուրդների բարքերի ու սովորույթների նկատմամբ, անզիջում պայքար ՀՀ քաղաքացիների ու հայ ժողովրդի զավակների նկատմամբ աշխարհի ցանկացած երկրում կրոնական, ազգայնամոլական դրսևորումների դեմ:
2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, 1921թ. Մոսկվայի և Ղարսի պայմանագրերի վերանայում որպես միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարման փաստի:
3. Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորում՝ Արցախի, որպես բանակցային գործընթացի իրավահավասար կողմի սատարում, ԼՂՀ միջազգային ճանաչման աջակցում, հակառակ դեպքում Արցախի անկախության ճանաչումը ՀՀ-ի կողմից:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում.

Արտաքին քաղաքականության հիմնադրույթներն են.

- Հայաստանի արտաքին քաղաքականության ասպարեզում ճկուն, կոմպլիմենտար մոտեցման հետևում:
- Հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների զարգացում:
- Հայ ժողովրդի ինտերնացիոնալիստական դրսևորմանը սատարում:

ա. Եվրաինտեգրում

Տարածաշրջանում կայունության և տնտեսական զարգացման հասնելու ուղին Հայաստանի Եվրամիության ինտեգրվելն է, որով կապահովվի ժողովրդավարական միջազգային չափանիշների իրական ներդրումը երկրում:

բ. ԱՊՀ

Ելնելով ՀՀ ռազմավարական շահերից՝ կարևոր է Հայաստանի ակտիվ համագործակցությունն ԱՊՀ երկրների հետ:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի հուսալի անվտանգության ապահովման և տարածաշրջանում խաղաղության պահպանման նպատակով պետք է շարունակել համագործակցությունն ու հավասարակշռված հարաբերությունների իրականացումը՝ բացառելով այլ պետության կցորդ դառնալու վտանգը:

դ. ՀԱԴԿ (NATO)

ՀՀ ռազմավարական ծախսերից է բխում նաև հեռանկարային ծրագրերի մշակումը, դինվաժ ուժերի արդիականացման ուղղությամբ ՀԱԴԿ (ՆԱՏՕ) փոխհամագործակցությունը՝ չհակադրվելով ՌԴ ռազմաքաղաքական շահերին:

ե. ԱՄՆ

Պետք է փոխշահավետության հիման վրա զարգացնել և խորացնել հավասարակշռված և գործընկերային փոխհարաբերությունները ԱՄՆ-ի հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Համակովկասյան կայունացման սերտ համագործակցության նպատակով պետք է շարունակել դիտել ՌԴ-ն որպես ավանդական դաշնակից և խորացնել ու զարգացնել փոխշահավետ տնտեսական համագործակցությունը ՌԴ-ի հետ:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ

Կուսակցությունը կարևորում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և հայերին հասցրած վնասի վերականգնումը՝ սկսած 1915թ.:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ

Պետք է Արցախը դիտել որպես բանակցային իրավահավասար կողմ: Կուսակցությունն առաջնային է համարում Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորումը և ԼՂՀ-ի միջազգային ճանաչումը, հակառակ դեպքում ՀՀ-ն պետք է ճանաչի Արցախի անկախությունը: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում միջազգային կառույցներին ԼՂՀ-ի ինտեգրմանը նպաստելը՝ որպես Արցախի ինքնորոշման և անվտանգության գրավական: Կուսակցությունը կարևորում է համակովկասյան կայունացման նպատակով համագործակցությունը Ադրբեջանի հետ:

թ. Իրան

Կարևոր է հարաբերությունների զարգացումը և խորացումն Իրանի հետ՝ փոխշահավետության հիման վրա, մանավանդ, որ տարածաշրջանային իրավափոխհարաբերություններում գնալով մեծանում է Հայաստան-Իրան գործընկերության դերը:

ժ. Վրաստան, այդ թվում ջավախահայության հիմնախնդիրներ

Մերտ համագործակցության և համակովկասյան կայունացման նպատակով պետք է իրականացնել փոխշահավետ տնտեսական քաղաքականություն Վրաստանի հետ՝ հատկապես տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում: Կուսակցությունն անթույլատրելի է համարում Վրաստանում գլուխ բարձրացրած ազգայնամոլական քաղաքականության իրականացումը, ազգային փոքրամասնությունների՝ այդ թվում վիրահայության՝ հատկապես Ջավախքի նկատմամբ: Կուսակցությունը միանշանակ պաշտպանում է ջավախահայության շահերը և իր ծրագրային ազգապահպան քաղաքականությունից ելնելով՝ ձեռք է առնելու բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի Մերձավոր Սփյուռքի հայը, այդ թվում և ջավախեցին, պետության մասշտաբով չօտարվի իր հայրենի վայրերից, ավելի խոր արմատներով ամրանա:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Պետք է ստեղծել հայրենիքի և Սփյուռքի միասնական գաղափարախոսություն, «Հայե՛ր, միացե՛ք իրավական երկրում» կարգախոսը դիտել որպես համազգային խնդիր, և ստեղծել մշտական գործող մեխանիզմ՝ Հայրենիքի և Սփյուռքի միասնության խորհուրդ հասարակական, քաղաքական կազմակերպություն: Անհրաժեշտ է ստեղծել սերտ համագործակցություն Հայրենիքի և Սփյուռքի գիտության ու մշակույթի, հոգևոր գործիչների, հասարակական, քաղաքական կազմակերպությունների և ԶԼՄ-ի միջև:

լ. Այլ (Հայ Առաքելական եկեղեցի)

Պետք է ամենուր նպաստել Հայ Առաքելական եկեղեցու գործունեությանը և «մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ կրոն» կոչն ընդունել որպես միասնության նշանաբան՝ հաշվի առնելով հայ ժողովրդի միասնության ու համախմբման գործում կրոնական տարբեր աղանդների վնասակար ազդեցությունը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ազգային պետականության ամրապնդում,
2. պետական ապարատի անհարկի ուռճացման, նրա աշխատավարձերի և ֆինանսական միջոցների անիրատես շռայլման կասեցում,
3. անողորք պայքարի իրականացում վարչական մարմինների պաշտոնատար անձանց կաշառակերության, չարաշահումների դեմ,

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում.⁵

Անհրաժեշտ է արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի համակողմանի զարգացումը, որը հնարավորություն կընձեռի Հայաստանում ավելի մեծ թվով հայրենակիցների բնակեցմանը, միջին խավի ձևավորմանը:

ա. Դրամավարկային քաղաքականություն

Կարևոր է վարկային և դրամական գործառնությունների հստակեցումը և նպատակային դրամավարկային տնտեսական հիմնահարցերի կարգավորումը:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք

Կարևոր է բյուջեի և նրա իրացման համաժողովրդական քննարկումը, նրա ընդունման գործընթացի հրապարակայնացումը և բյուջետային մասնահանումների վրա հասարակական վերահսկողության իրականացումը:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ

Կարևոր է հարկային կայուն օրինական դաշտի կյանքի կոչումը, հարկային դաշտի առջև բոլորի հավասարությունը, հարկային օրենսդրության հաճախակի փոփոխության բացառումը: Պետք է ստեղծել հարկային այնպիսի պայմաններ, որոնք կխթանեն ներդրումներին:

դ. Արդյունաբերության զարգացում

Պետք է խթանել արդյունաբերության այնպիսի ճյուղերի առաջացմանը և զարգացմանը, որոնք հիմնված են ժամանակակից տեխնոլոգիաների վրա և հումքատար չեն, բոլոր միջոցներով պաշտպանել ազգային արդյունաբերողի շահերը:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Կարևոր է պետական իրական հովանավորությամբ գյուղատնտեսության զարգացմանն աջակցումը (ոռոգման ջրի ու պարարտանյութերի անվճար տրամադրում, անտոկոս երկարաժամկետ վարկերի տրամադրում, հողի հարկի դրույքաչափերի իջեցում, հարկային արտոնությունների վերանայում, գյուղմթերքների շուկայի անմիջնորդ վերադարձ գյուղացուն, մշակաբույսերի և գյուղի արտադրանքի ապահովագրում և այլն):

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում

Կուսակցությունը ՀՀ զարգացման հիմնական ուղին տեսնում է բարձր տեխնոլոգիաների և ինովացիոն զարգացման շուտափույթ ներդրման միջոցով՝ հաշվի առնելով հայ ժողովրդի բնատուր ինտելեկտուալ բարձր մակարդակը:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում

Անհրաժեշտ է ապահովել տնտեսության տարբեր ճյուղերի էներգետիկ անվտանգությունը և տնտեսական երաշխիքները, ստեղծել էներգետիկ նոր հզորություններ ու էներգիայի նոր այլընտրանքային աղբյուրներ:

ը. Զբոսաշրջության զարգացում

ՀՀ-ն իր ողջ տարածքով լինելով թանգարան բաց երկնքի տակ, իր պատմության ակունքները վերցնելով Արատտա-շումերական «Սրբազան ծեսերի երկրից», հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն համայն աշխարհով սփռված հայության, այլև այլ ազգերի համար: Այդ նպատակով Հայաստանը պարտավոր է ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները զբոսաշրջության զարգացման համար:

թ. Ներդրումների խթանում

Միջպետական և մասնավոր ներդրումների համար բարենպաստ դաշտի ստեղծում: Ներդրողների պաշտպանությունը կոռուպացված տարրերից, իշխանության հանդեպ արտասահմանյան և տեղացի ներդրողների վստահության վերականգնում:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

Անհրաժեշտ է արդյունավետ և գործուն իրավական դաշտի ստեղծումը, որով աջակցություն ցույց կտրվի փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, միջին խավի ձևավորմանը և ամրապնդմանը, որպես երկրի տնտեսական հիմքի և բարեկեցության ապահովողի:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Կարևոր է օլիգարխների գործունեության դուրս հանումը ստվերից և բերումը իրավական դաշտ: Պետք չէ հանդուրժել ստվերային տնտեսությունը:

լ. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի հաղթահարման ուղիները Սահմանադրական փոփոխություններն են, որոնք պետք է իրականացվեն հետևյալ ուղղություններով.

- օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ֆունկցիաների տարանջատում,
- դատաիրավական համակարգի բարեփոխումներ,
- ընտրակաշառքների բացառում,
- կադրային ճիշտ քաղաքականության վարում,
- բարձր պրոֆեսիոնալիզմի հիման վրա կադրային քաղաքականության իրականացում:

Կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն ձևը իրավունքի գերակայությունն է և բոլորի իրավահավասարությունը:

խ. Այլ (օրենսդրության վերանայում)

Անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության վերանայումը, որի շրջանակներում ցանկանում է. արգելել քաղաական կուսակցություններին զբաղվել բարեգործական գործունեությամբ, իրագործել սահմանադրական փոփոխություններ՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործառնությունների հստակ տարանջատում, նվազեցնել ԱԺ. պատգամավորների թվաքանակը մինչև 50 տոկոս, վերացնել անձեռնմխելիության ինստիտուտը և կանոնակարգել պատգամավորի հետևանքները, վերացնել ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգը, և հանել համամասնական ընտրակարգով նախատեսված գրավը: Իջեցնել ԱԺ-ի համամասնական ընտրակարգով նախատեսված մանդատների համար 5 և 7 տոկոս անցողիկ սահմանագիծը՝ համապատասխանաբար 3 և 5 տոկոսի:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրությունները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում.

ա. Աղքատության հաղթահարում

Պետք է պայքարել ժողովրդին աղքատության եզրին հասցրած անարդարության, կաշառակերության, գործազրկության և այլ բացասական երևույթների դեմ: Արժանապատիվ կյանք և ապահով ապագա կերտելու համար կուսակցությունը նախատեսում է ծրագրերի մշակում, դոտացիոն համակարգի կատարելագործում, ընտանիքի կենսամակարդակի բարձրացում, անապահով խավերի բժշկական և կրթական խնդիրների լուծում, ժողովրդագրական վիճակի բարելավում:

բ. Հասարակության շերտերի բնեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

Անհրաժեշտ է ՀՀ-ում սոցիալական արդարության հաստատում և սոցիալ-տնտեսական կայունության ապահովում:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Կարևոր է թրաֆիքինգի դեմ անգիջում պայքարը, ներդրողների պաշտպանությունը կոռումպացված տարրերից, իշխանության հանդեպ արտասահմանյան և տեղացի ներդրողների վստահության վերականգնումը, որի արդյունքում կստեղծվեն աշխատատեղեր:

դ. Առողջապահական համակարգի բարելավում

Նպատակահարմար է ազգաբնակչության և առաջին հերթին՝ չունևոր խավի համար բժշկական ծառայության մատչելիության ապահովումը: Պետպատվերի աստիճանական ընդլայնումը բնակչության տարբեր խավերի և բժշկական սպասարկման շրջանակների համար:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը ՀՀ հասարակությանն արժանապատիվ կյանք և ապահով ապագա կերտելու համար նախատեսում է համապատասխան ծրագրերի մշակում:

զ. Այլ (ժողովրդագրական հիմնախնդիրներ)

Պարտադիր պայման է երկրի անվտանգության համար ժողովրդագրական վիճակի բարելավումը, այդ թվում՝ արտագաղթի կասեցումը, ներգաղթի կազմակերպումը, միայնակ մայրերի և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի մակարդակի կտրուկ բարձրացումը:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում

Երկրի ստրատեգիական զարգացման համար կարևոր նախապայման են կրթական համակարգի բարեփոխումները: Ուսման վարձը պետք է սահմանվի կրթության ինքնարժեքի և ազգաբնակչության տնտեսական վիճակի հաշվառումով: Կուսակցությունը կարևորում է անապահով խավերի կրթական խնդիրների լուծումը՝ արդյունաբերության զարգացումը հստակորեն կապելով կրթության զարգացման հետ: Արտադրությունը պետք է մասնագետների պատրաստման պատվիրատու դառնա և վճարի դրա դիմաց: Անհրաժեշտ է ստեղծել հատուկ կրթական հիմնադրամներ, որոնք թույլ կտան ընդունակ երեխաներին որակյալ կրթություն ստանալ, ինչպես նաև գիտական և կրթական ծրագրերին զուգահեռ բարձրագույն ուսումնական հաստատություններում ազգաբնակչությանը մասնագիտական, սոցիալական և մշակութային ծառայություններ մատուցող կենտրոններ հիմնել: Մասնագիտական կրթության կազմակերպման գործում աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջների մշտական հաշվառում, մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության ոլորտի զարգացման պետական հովանավորություն՝ անդրագոգիկայի սկզբունքներին համապատասխան:

4.7. Գիտության զարգացում

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել գիտության այն բնագավառներին, որոնց կենտրոնն է համարվում Հայաստանը, իսկ կրողը՝ հայ ժողովուրդը: Կուսակցությունը կարևորում է գիտության և կրթության բնագավառում ընդգրկված մտավորականության հասարակական դերի բարձրացումը, սոցիալ-տնտեսական խնդիրների արժանապատիվ լուծումը, որակավորման բարձրացման և սերնդափոխության ճիշտ քաղաքականության մշակումը և ներդրումը:

4.8. Մշակույթ և սպորտ

Հայաստանի մշակութային ամբողջ ժառանգությունը պետք է համարել հայ ժողովրդի համընդհանուր սեփականությունը՝ անկախ դրա ստեղծման ժամանակից, վայրից, հեղինակների կրոնական և քաղաքական հայացքներից:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են իրենց գործունեության մեջ ղեկավարվելու ազգաբնակչության շահի գերակայության սկզբունքով: Հստակորեն պետք է գիտակցեն, որ իրենց ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի իրավունքի ապահովմանը և գտնվի ժողովրդի ամենօրյա հսկողության ներքո: Պետությունը պարտավոր է անհրաժեշտ պայմաններ ստեղծել, որպեսզի ոչ ոք տեղերում թույլ չտա պաշտոնեական դիրքի չարաշահում:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում

ՀՀ-ը տնտեսապես զարգացած պետություն չլինելու պատճառով չի կարող ապահովել համայնքների արդյունավետ զարգացումը: Կուսակցությունը ստեղծված պայմաններում նպատակահարմար է գտնում միջհամայնքային սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ տեխնիկական սպասարկման արտադրական միավորումների ստեղծումը, որոնք ի գործ կլինեն նպաստելու համայնքների զարգացմանը:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում

Համայնքները պետք է օժտված լինեն օրենսդրական այնպիսի լիազորություններով, որոնք հնարավորություն կընձեռեն նրանց ինքնուրույն իրականացնելու բնակչության ղեկավարումը, նրա սոցիալական, այդ թվում նաև կենցաղային ծառայությունների մատուցումը, որոնց հաջողության համար համայնքը պետք է ունենա անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից

Ժողովրդավարական պետության զարգացման հաջողությունը կախված է նրա առանձին համայնքների ունեցած հնարավորություններից, առաջին հերթին՝ ֆինանսական և տնտեսական ռեսուրսներով համայնքների ապահովվածությունից, որոնք պետք է հստակորեն երևան համայնքի ռազմավարական զարգացման ծրագրերում ու պլաններում: Պետությունը պարտավոր է այդ ծրագրերի կենսագործման ուղղությամբ համայնքներին օժտել համապատասխան լիազորություններով:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Անկախ իրենց տեղաբաշխման վայրից՝ ՀՀ մարզերը պետք է համաչափ զարգացում ունենան հաշվի առնելով իրենց բնակլիմայական պայմանները և հեռավորությունը կենտրոնից: Այդ նպատակով անհրաժեշտ է մարզերում ստեղծել պայմաններ կադրային և տեխնիկական ներուժի վերականգնման համար:

է. Այլ (Պետական հսկողություն)

Պետությունը պարտավոր է պետական ապարտի միջոցով մշտական հսկողության տակ պահել տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման վիճակը: Հնարավորություն ընձեռի հասարակության լայն խավերին մասնակցելու համայնքների գործունեությանը և տեղ գտած թերությունների վերացմանը: Ապահովել մարզերի ֆինանսատնտեսական, սոցիալ-իրավական զարգացումը:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

ՄՀԿ նպատակը Հայաստանում ճշմարիտ սոցիալ-իրավական և ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծումն է, որտեղ կգործի իրավունքի գերակայությունը, բոլորը հավասար կլինեն օրենքի առջև, և որտեղ կպաշտպանվեն մարդու իրավունքները:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունը կարևորում է օրենսդրական դաշտի կատարելագործումը: Պետք է ստեղծել գործուն մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն իրական ժողովրդավարության կայացման գործում խոսքի և տեղեկատվության ազատության դեմ ուղղված ցանկացած ընդվզման կանխմանը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում⁴

Կուսակցությունը կարևորում է օրենքի առջև բոլոր քաղաքացիների իրական հավասարության արմատավորումը, մարդու իրավունքների լիարժեք իրացումը, մարդու սահմանադրական իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք իրացումը, որի համար անհրաժեշտ է համարում, առաջին հերթին, ՀՀ օրենսդրական դաշտի համապատասխանեցումը Սահմանադրությանը և երկրորդ՝ Սահմանադրությանը համապատասխան օրենքների ընդունումը, որոնք լայնորեն կպաշտպանեն ՀՀ քաղաքացու և մարդու իրավունքները և շահերը ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտերկրում:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Իրագործել սահմանադրական փոփոխություններ՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործառնությունների հստակ տարանջատում: Իրագործել դատաիրավական համակարգի բարեփոխումներ. եղած բարեփոխումները ցանկալի արդյունք չեն տալիս, քանի որ այդ ոլորտի կառույցներն իրենք են հաճախ գտնվում կոռումպացված հարաբերությունների ցանցում: Դատավորները պետք է ընտրվեն, այլ ոչ թե՝ նշանակվեն: Պետք է գործի նաև նրանց հետևանքման ինստիտուտը,

ե. Հնտրական համակարգի բարելավում

- Նվազեցնել Ազգային ժողովի պատգամավորների թվաքանակը մինչև 50 տոկոս, վերացնել անձեռնմխելիության ինստիտուտը և կանոնակարգել պատգամավորի հետևանքում,
- վերացնել Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգը, և հանել համամասնական ընտրակարգով նախատեսված գրավը,
- իջեցնել Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով նախատեսված մանդատների համար 5 և 7 տոկոս անցողիկ սահմանագիծը (շեմը)՝ համապատասխանաբար՝ 3 և 5 տոկոսի:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետք է նպաստել ՀՀ-ում իրական ժողովրդավարության հաստատմանը, այդ թվում՝ կուսակցությունների կայացմանը, քաղաքական հայացքների ու գաղափարախոսությունների ազատականացմանը:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում

Հասարակական կազմակերպությունները՝ ի տարբերություն կուսակցությունների, որոնք արտահայտում են քաղաքական հայացքներ, կոչված են կամավորության հիմունքների վրա կազմավորվել և նպաստել լուծելու պետության և ժողովրդի առջև ծառացած բազմաբնույթ սոցիալ-քաղաքական հարցեր: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքական իրավիճակը՝ կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների համար ստեղծել բոլոր պայմանները, ազատորեն արտահայտելու իրենց լիազորությունները:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

Միայնակ մայրերի և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ բարելավում, որով հնարավորություն կընձեռվի երկրում ծնելիության՝ որպես վերարտադրողության ստրատեգիական ռեսուրսի մակարդակի բարձրացման, թրաֆիքինգի դեմ անցկացնելու պայքարի՝ որպես ժամանակակից ստրկության ձևի, իրականացում: Պետական և հասարակական-քաղաքական կառույցներում կնոջ դերի բարձրացում և կարևորագույն գործընթացներում նրա համակողմանի ընդգրկում:

ՄՀԿ-ն սատարելու է Հայաստանի Հանրապետությանը՝ անցկացնելու պայքար մղելու աշխարհի ցանկացած երկրում ՀՀ քաղաքացիների և հայ ժողովրդի գավակների նկատմամբ կրոնական, ազգայնամոլական և սքինհեդական, ինչ ձևով որ այն արտահայտվի՝ ռուսական, վրացական, թուրքական կամ գերմանական, հնարավոր դրսևորումների դեմ:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն⁵

Ժողովրդավարական պետությունը պայմաններ է ստեղծելու ապահովելու իր քաղաքացիների իրական մասնակցությունը երկրում օրինաստեղծ գործունեությանը: Այդ նպատակով կուսակցությունը անթույլատրելի է համարում ԱԺ համալրումը հակասահմանադրական միջոցներով, այդ թվում՝ օլիգարխներով: Անհրաժեշտ է, որ խորհրդարան ընտրվեն իրավաբանական և տնտեսագիտական կրթություն և փորձ ունեցող մասնագետներ, որոնք կբարեփոխեն ՀՀ օրենսդրությունը և իրական պայմաններ կստեղծեն ապահովելու ժողովրդական լայն զանգվածների մասնակցությունը օրենսդրական գործընթացներում:

ժ. Այլ (ՀՀ օրենսդրական դաշտի բարելավում)⁴

Ցանկացած խոչընդոտ ժողովրդական իշխանության իրականացմանը վտանգ է ՀՀ համար: Այդ նպատակով անհրաժեշտ է բոլոր հնարավոր միջոցները օգտագործել բարելավելու նախ՝ ՀՀ օրենսդրական դաշտը՝ սկսած Սահմանադրությունից և վերջացրած նորմատիվ-իրավական ակտերը: Եվ երկրորդ՝ պետությունը պետք է քաղաքական կամք դրսևորի՝ ապահովելու բնակչության մասնակցությունը երկրի կառավարման գործում:

ժ. Այլ (ՀՀ օրենսդրական դաշտի բարելավում)

Կուսակցությունը կարևորում է օրենսդրական դաշտի կատարելագործումը: Պետք է ստեղծել գործուն մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն իրական ժողովրդավարության կայացմանը: Ծառացած խնդիրների լուծման հարցում, որպես երրորդ ուժ, ՄՀԿ-ն կարևորում է համագործակցությունն իշխանամետ, ընդդիմադիր և պետականամետ ուժերի հետ: Պետք է սատար կանգնել օրենքին ծառայող իշխանություններին, բայց ոչ իշխանամետներին: Պետք է ներկայի և ապագայի համար պատասխանատու լինել ժողովրդի առջև:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Հայ ժողովուրդը միշտ եղել է ինտերնացիոնալիստ, հարգել և հարգում է այլ ազգերի, ժողովուրդների բարքերը, սովորույթները: ՄՀԿ-ն սատարելու է Հայաստանի Հանրապետությանը՝ անգիջում պայքար մղելու աշխարհի ցանկացած երկրում ՀՀ քաղաքացիների և հայ ժողովրդի զավակների նկատմամբ կրոնական, ազգայնամոլական և սքինհեդական, ինչ ձևով որ այն արտահայտվի՝ ռուսական, վրացական, թուրքական կամ գերմանական, հնարավոր դրսևորումների դեմ:

Կուսակցությունը կարևոր է համարում զինված ուժերի և քաղաքացիական պաշտպանության համակարգի արդիականացումը, արտաքին լուրջ սպառնալիքներին դիմակայումը և ՀՀ անվտանգության հուսալի ապահովումը: Նպաստել տարածաշրջանում և աշխարհում ՀՀ դիրքի ամրապնդմանն ուղղված անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը կարևորում է երկրի ժողովրդագրական վիճակի բարելավումը, արտագաղթի կասեցումը, ներգաղթի կազմակերպումը, տնտեսության զարգացմամբ աշխատատեղերի ստեղծումը:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը կարևոր է համարում ազգաբնակչության բնապահպանական կուլտուրայի դաստիարակումը, էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու ուղղությամբ պետական հոգատարության հստակեցումը և բնապահպանական ծրագրերի իրականացումը:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Կուսակցությունն իր ուշադրության կենտրոնում է պահում երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության հիմնախնդիրները: Իր գործունեության մեջ հետամուտ է այդ ոլորտի բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանը և կարևորում է բացասական ազդեցություն ունեցող գործոնների դեմ պայքարը, երիտասարդ սերնդի բազմակողմանի, ներդաշնակ դաստիարակություն, ավանդականի և նորի ստեղծագործական իմաստավորումը:

4.15. Այլ (ՄՀԿ համագործակցությունը բոլոր ուժերի հետ)

Ծառացած խնդիրների լուծման հարցում, որպես երրորդ ուժ, ՄՀԿ-ն կարևորում է համագործակցությունն իշխանամետ, ընդդիմադիր և պետականամետ ուժերի հետ: Պետք է սատար կանգնել օրենքին ծառայող իշխանություններին, բայց ոչ իշխանամետներին: Պետք է ներկայի և ապագայի համար պատասխանատու լինել ժողովրդի առջև:

9. «ՕՐԻՆԱՅ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՕԵԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 43
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝ (+37410) 56-91-11, (+374 10) 56-65-05, ֆաքս՝ (+374 10) 56 -99- 69
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝ info@oek.am
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.oek.am
- Հիմնադրման տարեթիվը՝ 1997թ.
- Պետական գրանցման ամսաթիվը՝ 20.03.1998թ.
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝ 18.11.2003թ.
- Վերջին համագումարի ամսաթիվը՝ 03.03.2012թ.
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝ 2009թ.
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝ «Օրինաց երկիր» պաշտոնաթերթ
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝ 350,
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 150.000, որից
 - Կանայք՝ 60%
 - Երիտասարդներ՝ 30%
- Կուսակցության մասնակցությունը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին՝ մասնակցել է:
- Պատգամորդների թիվը IV գումարման Ազգային ժողովում՝ 8 պատգամավոր:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները, դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ
- Վարչություն
- Կուսակցության նախագահ՝ Արթուր Բաղդասարյան

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

Կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, որն ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, իր գործունեությամբ նպաստում է կուսակցության ծրագրերի իրականացմանը և մուծում անդամավճար: Կուսակցության անդամակցումը կատարվում է քաղաքացու անձնական դիմումի համաձայն, կուսակցության երկու անդամի գրավոր երաշխավորության առկայության դեպքում:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ⁴

3.1. Գաղափարախոսությունը

Կուսակցության գաղափարախոսության և ուշադրության կենտրոնում մարդն է, նրա ազատությունն ու իրավունքները, ազգային էության և նկարագրի արժեքները:

Կուսակցության գաղափարախոսությունը հենվում է հետևյալ դրույթների վրա.

- հույսի, այլ ոչ թե հուսալքության հասարակության ստեղծում,
- ազգային ոգու բարձրացում,
- տարածաշրջանում և աշխարհում մրցունակ և հեղինակություն վայելող երկրի կառուցում:

3.2. Նպատակները և խնդիրները

Կուսակցությունը, հիմք ընդունելով համազգային նպատակները և հայոց հիմնարար սկզբունքները, միտված է իր գործունեությունը նպատակաուղղել մեր ժողովրդի մտավոր, գործնական և ոգեղեն ներուժի համախմբմանը:

Կուսակցության գործունեության նպատակներն են.

- Հայաստանի Հանրապետությունը դարձնել օրենքների երկիր,
- օրենքները պետք է ընդունվեն՝ ելնելով ազգային երկարաժամկետ ծրագրերից, ծառայեն երկրի ու ժողովրդի զարգացմանը,
- օրենքը չպետք է անգոր լինի և օրենքի առջև արտոնյալներ չպետք է լինեն,
- օրենքները պետք է կիրառվեն:

3.3. Կուսակցության տեսակը (ըստ կուսակցության կարծիքի)

Լիբերալ

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները⁵

1. Եվրոպական կառույցներին ակտիվ ներգրավում՝ գլխավոր նպատակ ունենալով անդամակցել Եվրամիությանը:
2. Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների հետևողական զարգացում:
3. ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրությունները, այդ թվում⁴.

Աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացիայի գործընթացը և պետությունների միջև խիստ բաժանարար սահմանների վերացումը բազմաթիվ ազգերի ավելի ակտիվ է ներքաշում միջազգային կյանք, ինչն ուղեկցվում է համաշխարհային հասարակության ձևավորմամբ: Այս պայմաններում յուրաքանչյուր ազգի զարգացումը պահանջում է առավել մեծ ներգրավում համաշխարհային զարգացման ընդհանուր գործընթացում՝ միաժամանակ ապահովելով սեփական ինքնության և պետական ինքնիշխանության պաշտպանությունը, որը կարող է իրականություն դառնալ յուրաքանչյուր պետության սահմաններում գործող և միջազգային կյանքը կանոնակարգող իրավական համակարգերի օրգանական համապատասխանեցման միջոցով:

ա. Եվրաինտեգրում⁵

Եվրաինտեգրումը գերակա է ՀՀ արտաքին քաղաքականության համար:

բ. ԱՊՀ⁵

ԱՊՀ երկրների հետ համագործակցությունը ՀՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից է: Հատկապես կարևոր են համագործակցության քաղաքական, տնտեսական, մշակութային և հումանիտար ուղղությունները:

գ. Հանրապետական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)⁵

ՀԱՊԿ շրջանակներում համագործակցությունը ՀՀ անվտանգության ապահովման կարևոր բաղկացուցիչներից է: ՀՀ-ն շահագրգռված է ՀԱՊԿ-ի հետ համագործակցության հետագա զարգացմամբ և խորացմամբ:

դ. ՀԱՂԿ (NATO)⁵

ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը կնպաստի ՀՀ անվտանգության ապահովման համապարփակ համակարգի ստեղծմանը և անվտանգության ապահովման ուղղությունների դիվերսիֆիկացիային: Այն կարևոր է նաև զինված ուժերի բարեփոխումներում ՆԱՏՕ-ի լավագույն փորձին ծանոթանալու և այն ՀՀ զինված ուժերում կիրառելու համար:

ե. ԱՄՆ⁵

ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացում:

զ. Ռուսաստանի Դաշնություն⁵

Հայաստան-Ռուսաստան ռազմավարական՝ գործընկերային, իրավահավասարության, բարեկամության և փոխադարձ շահերի վրա հենված հարաբերությունների զարգացում:

է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ⁵

Ցեղասպանության իրողությունն անմիջապես փաստ է և պետք է մնա ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում: ՀՀ համար կարևոր է հարևան բոլոր պետությունների, այդ թվում՝ Թուրքիայի հետ բարիդրացիական և առանց նախապայմանների հարաբերությունների հաստատումը: Այդ ձգտումը պետք է լինի երկկողմ և դադարեցվի Թուրքիայի կողմից Հայաստանի ապօրինի շրջափակումը:

ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ⁴

Ղարաբաղյան խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի: Նրա լուծումը պետք է ապահովի Արցախի ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի լիակատար իրացումը, իսկ Ղարաբաղի «Դե յուրե» կարգավիճակը չպետք է ցածր լինի ներկայում գոյություն ունեցող «Դե ֆակտո» կարգավիճակից:

թ. Իրան⁵

Իրանի հետ հարաբերությունները բավականին կարևոր են, հատկապես՝ հաշվի առնելով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը: Այդ առումով, Իրանը հանդիսանում է Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող կարևոր օղակ: Հայաստան-Իրան հարաբերություններում կարևորվում է նաև Իրանում մեծաթիվ հայկական սփյուռքի առկայությունը:

ժ. Վրաստան, այդ թվում ջալախահայության հիմնախնդիրներ⁵

Վրաստանի հետ ավանդական բարիդրացիական հարաբերությունների զարգացումը ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից է: Այդ հարաբերությունները կարևոր են նաև Վրաստանում ապրող ջալախահայերի խնդիրների լուծման, ինչպես նաև Վրաստանում առկա հայկական մշակութային ժառանգության պահպանման տեսանկյունից:

ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում⁴

- Սփյուռքի ներուժի արդյունավետ օգտագործում:
- Սփյուռքահայ ներդրողների համար բարենպաստ պայմանների ստեղծում:
- Սփյուռքում հայապահպանության գործին աջակցության ցուցաբերում:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթություններ⁵

1. Պետաիրավական բարեփոխումներ:
2. Տնտեսության ազատականացում:
3. Սոցիալական արդարություն:

4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական կայուն զարգացման առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, այդ թվում⁴.

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է ազատ շուկայական տնտեսության սկզբունքների, ներդրումների հուսալի իրավական պաշտպանության վրա խարսխված, սեփականության բազմաձևության և բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանվածության վրա հիմնված տնտեսական արդյունավետ համակարգի ստեղծում՝ բացառելով օլիգոպոլ շուկայի ձևավորումը:

ա. Դրամավարկային քաղաքականություն⁵

- Արտահանմանն ուղղված դրամավարկային քաղաքականության մշակում և իրականացում:
- Ավանդների վերադարձի շարունակություն և առկա անարդարությունների վերացում:
- Բնակչության բանկային ավանդների ապահովագրման ծավալների մեծացում:
- Բանկային համակարգում կարճաժամկետ վարկավորումից անցում երկարաժամկետ վարկային ծրագրերի:
- Բանկային տոկոսադրույթների իջեցում, բարձր ռիսկայնություն պարունակող վարկավորման համար պետական երաշխավորության մեխանիզմների ստեղծում:
- Բանկային հանցագործությունների համար նախատեսվող պատասխանատվության խստացում և ավանդների պաշտպանություն:

բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք⁵

Բյուջեն պետք է լինի ոչ միայն սոցիալական, այլև երկրի տնտեսության ռազմավարական զարգացումը ապահովող ֆինանսատնտեսական փաստաթուղթ: ՀՆԱ-Պետական պարտք հարաբերակցությունը պետք է գտնվի ոչ ռիսկային հավասարակշռության մակարդակում:

գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ⁵

- Հարկերի նվազեցում:
- Սպասարկման ոլորտում մեկ համակցված հարկատեսակի կիրառում:
- Նոր աշխատատեղեր ստեղծող գործարարներին հարկային արտոնությունների տրամադրում:
- Մաքսերի նվազեցում և պայքար այս ոլորտում մեծ չափերի հասնող կոռուպցիայի դեմ:
- Հարկային և մաքսային վարչարարության դյուրացում:

դ. Արդյունաբերության զարգացում

Կուսակցության խնդիրներից է արդյունաբերության վերականգնումը և վերագործարկումը բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված, արտահանողական ուղղվածությամբ, նոր աշխատատեղեր ապահովող արդյունաբերության ստեղծումը և կայուն զարգացումը, գյուղատնտեսության նկատմամբ պետական հոգածության բարձրացումը:

ե. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցության խնդիրներից է նպաստել Հայաստանի Հանրապետությունում արտահանող ուղղվածության արդյունաբերության և գյուղատնտեսության, միջազգային մակարդակով ճանաչում գտնելու ընդունակ ինտելեկտուալ ծառայությունների զարգացմանը:

զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում⁵

ՀՀ աշխարհաքաղաքական դիրքով պայմանավորված՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և տնտեսության մեջ ինովացիոն մոտեցումների ներդրումն այլընտրանք չունի:

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում⁵

ՀՀ-ին անհրաժեշտ է էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացիա: Կուսակցությունը կարևորում է Իրան-Հայաստան երկրորդ գազամուղի կառուցումը և Հայաստանի տարածքով իրանական գազի արտահանումը դեպի միջազգային շուկաներ: Կուսակցությունը կարևորում է նաև Հայաստանում նոր ատոմակայանի կառուցումը:

ը. Զբոսաշրջության զարգացում⁵

Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը, բնակլիմայական պայմանները, ազգային առանձնահատկությունները բավականին լավ պայմաններ են ստեղծում տուրիզմի զարգացման և տնտեսության մեջ զբոսաշրջության տեսակարար կշռի ավելացման համար:

թ. Ներդրումների խթանում⁴

Կուսակցությունը կարևորում է օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքի ավելացումը:

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում⁵

Անհրաժեշտ է պետական աջակցություն ցուցաբերել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը:

ի. Ստվերային տնտեսության կրճատում

Անհրաժեշտ է անգիջում պայքարել տնտեսության մեջ ստվերայնության, կլանների, պետական կառավարման ապարատում կոռուպցիայի և Հայաստանի զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների դեմ:

լ. Կոռուպցիայի հաղթահարում⁴

Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է համակարգային բնույթ կրի:

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում⁴.

Սոցիալական անարդարության վերացում:

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցության խնդիրներից է օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների ճանապարհով սոցիալապես անապահով խավերի և անաշխատունակ խմբերի անհրաժեշտ կենսամակարդակի ապահովման համար պայմանների ստեղծումը և պայքարը սոցիալական բեռնացման դեմ:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում⁴

Սոցիալական բևեռացման պայմաններում մարդու ինքնաբացահայտման համար հնարավորությունների ընձեռումը սերտորեն փոխկապակցված է տնտեսության առաջընթացի և սոցիալական պաշտպանվածության արդյունավետ համակարգերի ստեղծման ու ներդրման հետ՝ համակարգեր, որոնք զարգացած օրենսդրության և արդյունավետ մեխանիզմների գոյության պայմաններում կարող են խթան հանդիսանալ հասարակական զարգացումների համար: Զարգացած տնտեսություն ունեցող սոցիալական պետության ձևավորումը բխում է հասարակության անդամների շահերից, իսկ սոցիալական պաշտպանվածության արդյունավետ համակարգերի ստեղծումը կնպաստի, հիրավի, սոցիալական համերաշխության և սոցիալական գործընկերության սկզբունքների հետագա արմատավորմանը, որը և հանդիսանում է կուսակցության կարևորագույն նպատակներից մեկը:

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

Աշխատանքի ազատ ընտրության հնարավորությունը մարդու և քաղաքացու կարևորագույն սոցիալական իրավունքներից է, իսկ երաշխավորված աշխատանքի ու արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը՝ յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից մեկը: Պետությունը պարտավոր է մասնակցել աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև հարկային արտոնություններ տրամադրել նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններին և արժանապատիվ կենսամակարդակ ապահովող աշխատավարձի ապահովմանը:

դ. Առողջապահական համակարգի բարելավում⁵

Առողջապահության ոլորտում կուսակցությունը կարևորում է.

- Պարտադիր պետական բժշկական ապահովագրություն՝ որոշակի հիվանդությունների համար:
- Կամավոր բժշկական ապահովագրության համակարգի ներդրում:
- Առողջապահության ոլորտում բարեփոխումների խորացում:
- Առողջապահության ոլորտը կարգավորող օրենսգրքի ընդունում:

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում⁴

- Նվազագույն կենսամակարդակով կենսաթոշակի և նվազագույն աշխատավարձի ապահովում:
- Ընտանեկան նպաստի համակարգի հիմնովին վերանայում:
- Սոցիալապես անապահով խավերի պետական հասցեական օժանդակության հատկացում (ծերեր, հաշմանդամներ, փախստականներ և այլն):
- Սոցիալական ապահովությունից սոցիալական ապահովագրության համակարգի անցնելու գործուն մեխանիզմների կիրառում:

4.6. Կրթական համակարգի բարեփոխում և զարգացում⁵

Կրթության ոլորտում կուսակցությունն առաջարկում է.

- Կրթօջախների մասնավորեցման արգելում, դպրոցների դերի և ինքնավարության մեծացումը:
- Կրթական ոլորտի աշխատողների աշխատավարձերի շարունակական աճ և իրավական պաշտպանվածությունը:
- Առաջին դասարանից հանրապետության բոլոր դպրոցներում երկու օտար լեզվի և համակարգչային գիտելիքների ուսուցումը:
- Բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողներին ուսումնական երկարաժամկետ և ցածր տոկոսադրույթներով վարկերի տրամադրումը:
- Ընդունելության քննությունների աստիճանական վերացումը:

4.7. Գիտության զարգացում⁵

Անհրաժեշտ է իրականացնել գիտության համակարգի արդիականացում, բյուջետային հատկացումների ավելացում՝ Հայաստանը տարածաշրջանում գիտական զարգացումների առաջատար երկիր դարձնելու նպատակով: Անհրաժեշտ է նորարարական նախաձեռնությունների, հետազոտությունների աջակցություն, ներդրման և համագործակցային դաշտի ապահովում: Պետությունը պարտավոր է աջակցել երիտասարդ գիտնականներին:

4.8. Մշակույթ և սպորտ⁴

Անհրաժեշտ է.

- աջակցել պատմամշակութային ժառանգության պահպանմանը,
- նպաստել արդի, ժողովրդական և կիրառական արվեստների ներդաշնակ զարգացմանը,
- խրախուսել մշակութային նշանակալի նվաճումների հեղինակներին,
- խորացնել արտերկրի և Սփյուռքի հետ մշակութային համագործակցությունը,
- հայկական մշակույթն արժանավայել ներկայացնել արտասահմանում:

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում⁴

Տարածքային և տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում և արդյունավետության բարձրացում:

ա. Համայնքների խոշորացում

Համայնքների խոշորացումը կնպաստի համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

բ. Ավագանու դերի բարձրացում⁵

Ավագանու դերի բարձրացումը կնվազեցնի համայնքի ղեկավարի կողմից միակողմանի և ոչ օբյեկտիվ որոշումների կայացումը՝ մեծացնելով համայնքի կառավարման արդյունավետությունը:

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում⁵

Միջհամայնքային միավորումների ստեղծումը կնպաստի համայնքների միջև փոքրի փոխանակման և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում⁵

Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացումը կնպաստի համայնքի կողմից սեփական խնդիրները ավելի արագ և արդյունավետ լուծմանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ստեղծել համայնքների ֆինանսական ծախսերի վերահսկման գործուն մեխանիզմներ:

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից⁵

Համայնքներին լրացուցիչ լիազորությունների տրամադրումը կարող է նպաստել համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

զ. Մարզերի համաչափ զարգացում⁵

Մարզերի համաչափ զարգացումը կնպաստի մայրաքաղաքից դուրս պետության սոցիալ տնտեսական կյանքի աշխուժացմանը և մարզերում բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում.⁴

Ժամանակակից ժողովրդավարական հասարակարգերի կայացման և զարգացման կարևոր գրավական է հանդիսանում կայացած քաղաքացիական հասարակության առկայությունը և զարգացումը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը կարևորում է օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը, ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումն ու կայացումը: ՀՀ զարգացումը և անվտանգությունն այսօր մեծ չափով պայմանավորված են մեր երկրի ժողովրդավարացմամբ:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցության խնդիրներից է ՁԼՄ-ի՝ որպես հանրային իշխանության միջոցի ազատ զարգացմանն աջակցությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Զարգացած հասարակություններում մարդու և քաղաքացու ազատությունների պաշտպանությունը պետության հասարակական և քաղաքական համակարգերի կարևորագույն խնդիրներից է: ՀՀ-ում պետք է երաշխավորվեն մարդու և քաղաքացու ազատ ապրելու և ազատ արարելու հնարավորությունները:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը կարևորում է դատաիրավական համակարգի անկախության ապահովումը և դերի բարձրացումը, արդարության իրականացման համար հաստատուն երաշխիքների ստեղծումը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Առանց կայացած ընտրական համակարգի չի կարող լինել նորմալ ժողովրդավարություն, ուստի անհրժեշտ է համարում ընտրական համակարգի մշտական բարելավումը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Կուսակցությունների և կուսակցական համակարգի կայացումը կնպաստի ամբողջ քաղաքական համակարգի կայացմանը և ամրապնդմանը:

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում⁵

Հասարակական կազմակերպությունների կայացումը կնպաստի ՀՀ-ում քաղաքացիական հասարակության զարգացմանը:

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար⁴

Հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում կանանց ինտեգրումը կնպաստի ինչպես հասարակության կայուն զարգացմանը, այնպես էլ կրթարձացնի կանանց իրավունքների պաշտպանության մակարդակը:

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

Օրենսդրական նախաձեռնություններին հանրային լայն քննարկումների և մասնակցության ապահովումը կնպաստի օրենքների արդյունավետության բարձրացմանը և կապահովի հանրային լայն աջակցություն:

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁴

Ազգի, ժողովրդի, պետության, քաղաքացու և, ի վերջո, անհատի ինքնիշխանությունն ազատության առիավատյան են: Հայ ժողովուրդն իր հազարամյա պատմության ընթացքում միշտ ձգտել է ազգային ինքնիշխանության՝ հայկական անկախ պետականություն ստեղծելու միջոցով, դրանում տեսնելով ազգի անվտանգության ապահովման գրավականն ազգապահպանության, հոգևոր և սոցիալական բնագավառներում: Եվ այդ անվտանգության առաջին պայմանը կուսակցությունն ինքնապաշտպանական գաղափարական իմունահամակարգի ստեղծումն է համարում, որը կբացառի օտարածին ներթափանցումները պետական և ազգային միջավայր:

4.12. Ազգագրական, այդ թվում նաև արտագաղթի և ծնելիության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Կուսակցությունը գտնում է, որ պետությունը պարտավոր է աջակցել բազմազավակ ընտանիքներին, ինչպես նաև խթանել ծնելիությունը՝ յուրաքանչյուր ծնվող երեխային հատկացնելով միանվագ ֆինանսական օգնություն՝ առաջին երեխային՝ 150 հազ. դրամ, երկրորդ երեխային՝ 250 հազ. դրամ, երրորդ երեխային՝ 400 հազ. դրամ:

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

Հայաստանի Հանրապետությունը ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում կանգնած է լուրջ բնապահպանական հիմնախնդիրների առջև, որոնց լուծման համարա անհրաժեշտ է.

- աջակցել Սևանա լճի պահպանությանը և էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը, (ապագայում անհրաժեշտ է ֆինանսներ հայթայթել Սևանի կոլեկտորի կառուցման համար),
- աջակցել Որոտանի հիդրոհանգույցի շահագործման խնդրի լուծմանը,
- կարևորել անտառների պահպանության, օգտագործման և վերականգնման ծրագրերի իրականացումը,
- արգելել ապօրինի ծառահատումները:
- նպաստել ՀՀ-ում թափոնների վերամշակման ձեռնարկությունների ստեղծմանը՝ բնապահպանական տեխնոլոգիաների կիրառմամբ,
- որպես գերակայություն՝ դիտարկել հանքավայրերի օգտագործման և արդյունավետության բարձրացումը նոր տեխնոլոգիաների ներդրմամբ,
- խստացնել պատասխանատվությունն ընդերքի անխնա օգտագործման, կանաչ տարածքների անտառածածկույթով հարուստ վայրերի օգտագործման համար:

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները⁵

- Հավասար մեկնարկային պայմաններ երիտասարդությանը:
- Շնորհալի երիտասարդներին և երիտասարդ գիտնականներին պետական աջակցության ապահովում:
- Նորաստեղծ երիտասարդ ընտանիքներին սոցիալական աջակցության նպատակային ծրագրի մշակում և իրականացում:
- Երիտասարդ նոր կազմավորվող ընտանիքներին աջակցության միանվագ գումարի տրամադրում՝ մինչև 400 հազար դրամի չափով:
- Երիտասարդների ակտիվ ներգրավումը հասարակական քաղաքական, ռազմահայրենասիրական, սպորտային, ստեղծագործական գործունեության և պետական կառավարման համակարգում:

**ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՐՑԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դիրքորոշումների պաշտոնական կարգավիճակի տարբերանշաններ	ՔՄՁՀ-ի հարցաթերթիկում ներառված հարցերի վերաբերյալ կուսակցությունների արտահայտած դիրքորոշումների պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ մեկնաբանություն
1	Լրացված է կուսակցության կողմից, սակայն Հիմնադրամի կողմից ստուգված չէ՝ կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերի (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր) անհասանելիության (կուսակցության կողմից հրապարակային աղբյուրների չնշման) և Հիմնադրամին տրամադրված չլինելու պատճառով:
2	Լրացված է Հիմնադրամի կողմից ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կայքէջից (www.e-register.am) և Հիմնադրամի տեղեկատվական բազայից վերցված տվյալների հիման վրա՝ համապատասխան հարցերին կուսակցության պատասխաններ չտալու պատճառով:
3	Լրացված է Հիմնադրամի կողմից ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կայքէջից (www.e-register.am) և Հիմնադրամի տեղեկատվական բազայից վերցված տվյալների հիման վրա՝ կուսակցության իր իրավաբանական և կենտրոնական գրասենյակի հասցեներով հարցմանը մասնակից դարձնելը հնարավոր չլինելու պատճառով:
4	Լրացված է կուսակցության կողմից, սակայն մասնակիորեն է ներառված (մասնակիորեն է համապատասխանում) կուսակցության կողմից հրապարակված և/կամ Հիմնադրամին տրամադրված կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերում (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր):
5	Լրացված է կուսակցության կողմից, սակայն ներառված չէ (բացակայում է) կուսակցության կողմից հրապարակված և/կամ Հիմնադրամին տրամադրված կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերում (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր):
6	Լրացված է կուսակցության կողմից, սակայն ամբողջովին կամ մասնակիորեն հակասում է կուսակցության կողմից հրապարակված և/կամ Հիմնադրամին տրամադրված կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերում (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր) տվյալ հարցի վերաբերյալ ամրագրված դիրքորոշմանը (Այսինքն՝ առկա է այլ դիրքորոշում, որը համահունչ չէ լրացված պատասխանի հետ):

Ուղեցույցում ներառված հարցերի վերաբերյալ կուսակցությունների դիրքորոշումների պաշտոնական կարգավիճակի մեկնաբանությունների ընդգրկման վերաբերյալ

Բացարտությունների տարբերակներ	Տարբերանշանների տեղադրման դիրքը	Բացատրություն
ա.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի մոտ:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերվում է համապատասխանաբար տվյալ բաժնի, հարցախմբի, հարցի, կամ ենթահարցի ամբողջ պատասխանին:
բ.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի պատասխանի որևէ պարբերության կամ նախադասության վերջում:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերվում է միայն տվյալ պարբերությանը կամ նախադասությանը:
գ.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի պատասխանում առկա թվարկումները ներկայացնող տեքստի վերջում:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերվում է տվյալ տեքստին և նրան հաջորդող թվարկումներին:
դ.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի պատասխանում ներառված թվարկումներից որևէ մեկից հետո:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերվում է միայն թվարկվող տվյալ դրույթին:
ե.	Տարբերանշանը տեղադրված է հարցի համարի մոտ:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերվում է ամբողջ հարցին, ներառյալ ենթահարցերը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կուսակցության պաշտոնական անվանումը և հապավումը՝
- Իրավաբանական հասցեն՝
- Կենտրոնական գրասենյակի հասցեն՝
- Հեռախոսի և ֆաքսի համարները՝
- Էլեկտրոնային փոստի հասցեն՝
- Էլեկտրոնային կայքի հասցեն՝
- Հիմնադրման տարեթիվը՝
- Պետական գրանցման ամսաթիվը՝
- Պետական վերագրանցման ամսաթիվը՝
- Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝
- Վերջին համագումարի ամսաթիվը՝
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի վերջին հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցները՝
- Կուսակցության պաշտոնական մամուլը՝
- Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը՝
- Կուսակցության անդամների թվաքանակը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ , որից
 - Կանայք՝ %
 - Երիտասարդներ՝ %

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

2.1. Կուսակցության ղեկավար մարմինների անվանումները և դրանցում ներգրավված անդամների թվաքանակը և կուսակցության նախագահը՝

-
-
-
- Կուսակցության նախագահ՝

2.2. Կուսակցության անդամակցության կարգը, այդ թվում նաև անդամավճարների մեծությունը և դրանց վճարման առանձնահատկությունները

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Գաղափարախոսությունը՝

3.2. Նպատակները և խնդիրները՝

3.3. Կուսակցության տեսակը՝ աջակողմյան, ձախակողմյան, կենտրոնամետ, սոցիալիստական, լիբերալ, ազգային, պահպանողական, կրոնական, ազգայնական (ըստ կուսակցության կարծիքի)՝

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՑԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1.
2.

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրաինտեգրում

բ. ԱՊՀ	
գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)	
դ. ՀԱԴԿ (NATO)	
ե. ԱՄՆ	
զ. Ռուսաստանի Դաշնություն	
է. Ցեղասպանության ճանաչում և հայ-թուրքական հարաբերություններ	
ը. Ղարաբաղյան հիմնախնդիր և հայ-ադրբեջանական հարաբերություններ	
թ. Իրան	
ժ. Վրաստան (ջավախահայության խնդիրներ)	
ի. Հայաստան-Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում	
լ. Այլ (նշել)	
4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները	
4.4. Ֆինանսատնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիներ, այդ թվում՝	
ա. Դրամավարկային քաղաքականություն	
բ. Բյուջետային քաղաքականություն և պետական պարտք	
գ. Հարկային և մաքսային բարեփոխումներ	
դ. Արդյունաբերություն զարգացում	
ե. Գյուղատնտեսություն զարգացում	
զ. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինովացիոն զարգացում	

է. Էներգետիկա և էներգետիկ անվտանգության ապահովում

ը. Զբոսաշրջության զարգացում

թ. Ներդրումների խթանում

ժ. Բիզնես միջավայրի բարելավում և փոքր և միջին բիզնեսի զարգացում

ի. Ստվերային տնտեսության կրճատում

լ. Կոռուպցիայի հաղթահարում

խ. Այլ (նշել)

4.5. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում

ա. Աղքատության հաղթահարում

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում և սոցիալական արդարության բարելավում

գ. Զբաղվածության ապահովում և գործազրկության նվազեցում

դ. Առողջապահական համակարգի բարելավում

ե. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

զ. Այլ (նշել)

4.6. Կրթական համակարգի բարեփոխում

4.7. Գիտության զարգացում

4.8. Մշակույթ և սպորտ

4.9. Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

ա. Համայնքների խոշորացում

բ. Ավագանու դերի բարձրացում

գ. Միջհամայնքային միավորումների ստեղծում և օրենսդրության հստակեցում

դ. Համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում

ե. Համայնքներին լրացուցիչ լիազորությունների փոխանցում պետության կողմից

զ. Մարզերի համաչափ զարգացում

է. Այլ (նշել)

4.10. Քաղաքացիական հասարակության զարգացում և քաղաքացիական շահերի պաշտպանություն, այդ թվում

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

ե. Ընտրական համակարգի բարելավում

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

է. Հասարակական կազմակերպությունների կայացում և ոլորտի օրենսդրական կարգավորում

ը. Կանանց շահերի պաշտպանություն և կանանց նկատմամբ բռնությունների դեմ պայքար

թ. Օրենսդրական գործընթացներում հանրության մասնակցություն

ժ. Այլ (նշել)

4.11. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

4.12. Ազգագրական (դեմոգրաֆիկ), այդ թվում նաև արտագաղթի, ծնելիության և այլ հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները

4.13. Բնապահպանական հիմնախնդիրները, դրանց պատճառները և լուծման ուղիները

4.14. Բարոյահոգեբանական մթնոլորտի և երիտասարդության դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

4.15. Այլ (նշել)

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- 1995թ. ընտրություններ՝
համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
- 1999թ. ընտրություններ՝
համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
- 2003թ. ընտրություններ՝
համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
- 2007թ. ընտրություններ՝
համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
- Մասնակցելու է արդյո՞ք 2012թ. ընտրություններին ☐ այո ☐ ոչ
Եթե այո, ապա ☐ միայնակ ☐ դաշինքով/ եթե դաշինքով, ապա՝
 - Դաշինքի անդամները՝
 - Դաշինք կազմելու նպատակը և հիմքերը /գաղափարական և այլն/՝
- Եր՞բ և զանգվածային ո՞ր լրատվամիջոցներով է հրապարակված կամ հրապարակվելու կուսակցության նախընտրական ծրագիրը՝

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- 1991թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 1996թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 1998թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 2003թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 2008թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- Մասնակցելու է արդյո՞ք կուսակցությունը 2013թ. նախագահական ընտրություններին ☐ այո ☐ ոչ

5.3. Կուսակցության մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին

- 1996թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 1999թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 2002թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 2005թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- 2008թ. ընտրություններ՝ ☐ այո ☐ ոչ
- Մասնակցելու ե՞ք արդյո՞ք 2012թ. ՏԻՄ ընտրություններին ☐ այո ☐ ոչ
- Նախորդ ընտրություններում քանի՞ համայնքներում են առաջադրվել կուսակցության անդամները/ներկայացուցիչները օրենքով սահմանված կարգով: Թվաքանակ _____
- Արդյո՞ք կուսակցությունը սատարել է այլ կուսակցությունների ներկայացուցիչների ☐ այո ☐ ոչ

6. ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ.
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

©«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» Ընտրողի
նախնական տպագրման, հրապարակման, բազմացման և էլեկտրոնային կամ թղթային
կրիչների միջոցով տարածման իրավունքը պատկանում է «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ոչ առևտրային կազմակերպությանը:

Ցանկացած բնույթի թղթային և էլեկտրոնային բազմացումն ու տարածումը խնդրում ենք
համաձայնեցնել «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ոչ
առևտրային կազմակերպության հետ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝ ք. Երևան, Թոթովենցի փ., 13 շ., բն. 24,
Էլ. հասցե՝ info.fcscd@gmail.com, info@fcscd.am
Էլ. էջ՝ www.fcscd.am,
Հեռ. (+37491) 20-68-42, 20-68-43



ՀԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ՀԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am

Տպաքանակ՝ 6000

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի ընթերցող

Դուք ծանոթացաք «ՀՀ Ազգային Ժողովի 2012թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններ» Ընտրողի ուղեցույցին, որը մշակվել է Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամի կողմից՝ հանրությանը ՀՀ Ազգային Ժողովի 2012թ. ընտրությունների նախօրեին կուսակցությունների գաղափարախոսական առանձնահատկությունների, նպատակների, խնդիրների, գործունեության և ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ ամփոփ, անաչառ և համադրելի տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

Մեզ համար խիստ անհրաժեշտ և գնահատելի է Ձեր կարծիքը սույն ուղեցույցի վերաբերյալ՝ հնարավոր թերությունների վերացման և մեր գործունեության հետագա բարելավման համար: Խորապես շնորհակալ կլինենք Ձեր առաջարկությունների և դիտողությունների համար: Այդ նպատակով, մասնավորապես, խնդրում ենք լրացնել և մեզ ուղարկել սույն հարցաթերթիկը:

Շնորհակալություն

«ՀՀ Ազգային Ժողովի 2012թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններ» Ընտրողի ուղեցույցի գնահատման թերթիկ

1. Լրացնողի տվյալները և հասցեն (կարող եք լրացնել ըստ ցանկության)

2. Լրացնողի գործունեության հիմնական ոլորտը և զբաղմունքը

- | | |
|--|--|
| ☐ Պետական ծառայություն | ☐ Մասնավոր հատվածի վարձու աշխատող |
| ☐ Անհատ ձեռներեցություն | ☐ Գիտամանկավարժական գործունեություն |
| ☐ Հասարակական գործունեություն | ☐ Կուսակցակցական գործունեություն |
| ☐ Զանգվածային լրատվություն | ☐ Ուսանող |
| ☐ Թոշակառու | ☐ Այլ /նշել |

3. Ձեր ընդհանուր գնահատականը Ուղեցույցի մասին:

- | | |
|-----------------------------------|----------------------------------|
| ☐ Գերազանց | ☐ Բավարար |
| ☐ Լավ | ☐ Վատ |

4. Որքանո՞վ է օգտակար Ուղեցույցը Ձեզ համար:

- | | |
|--------------------------------------|-------------------------------------|
| ☐ Շատ օգտակար | ☐ Օգտակար |
| ☐ Ոչ այնքան | ☐ Ոչ օգտակար |

5. Խնդրում ենք նշել Ուղեցույցի երեք լավագույն հատկանիշները:

6. Խնդրում ենք նշել Ուղեցույցի երեք հիմնական թերությունները:

7. Խնդրում ենք նշել Ձեր առաջարկությունները:

8. Կարևորո՞ւմ եք արդյոք Ուղեցույցի վերահրատարակումը հետագայում:

- | | |
|------------------------------|-----------------------------|
| ☐ Այո | ☐ Ոչ |
|------------------------------|-----------------------------|

9. Ցանկանո՞ւմ եք արդյոք ստանալ Ուղեցույցի լրացուցի



«ՀՀ Ազգային Ժողովի 2012թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող
կուսակցություններ» Ընտրողի ուղեցույցի գնահատման թերթիկ

Անուն՝
Ազգանուն՝

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հասցե՝ ք. Երևան, Թոթովենցի փ., 13 շ., բն. 24
Էլ. հասցե՝ info.fcsd@gmail.com, info@fcsd.am
Էլ. էջ՝ www.fcsd.am
Հեռ. (+374 91) 20-68-42, 20-68-43

